




Empowered lives.
Resilient nations.



Համընդգրկուն ընտրական գործընթացներ


Գենդերային հավասարության և կանանց մասնակցության խթանման վերաբերյալ ձեռնարկ ընտրական մարմինների համար







Empowered lives.
Resilient nations.



Համընդգրկուն ընտրական գործընթացներ

Գեներացիոն հավասարության
և կանանց մասնակցության
խթանման վերաբերյալ
ձեռնարկ ընտրական
մարմինների համար



Համընդգրկուն ընտրական գործընթացներ

Գերեզային հավասարության և կանանց մասնակցության իրականացման միջազգային մեխանիզմների ընտրական մասիների համար



Հիմնական հեղինակներ

Ջուլի Բալինգթոն,
Գաբրիել Բարդալ,
Սոնյա Պալմերի,
Քեյթ Սալիվան

Երախտիքի խոսք

Այս զեկույցը պարունակում է ընտրական գործընթացների աջակցության և կանանց քաղաքական մասնակցության խթանման ոլորտում աշխատող բազմաթիվ անհատների հեղինակային գաղափարներ, առաջարկություններ, փորձառություն և գիտելիքներ:

Այս հրատարակության միտքն ի սկզբանե առաջ է քաշել է Ջուլի Բալինգթոնը՝ ՄԱԶԾ Ընտրական շրջափուլի աջակցության գլոբալ ծրագրի շրջանակներում: Հրատարակությունը հնարավոր է դարձել շնորհիվ մի շարք անհատների, ովքեր մտահղացել են սկզբնական գաղափարը և շարադրել տեքստի նախնական տարբերակը: Այդ անհատներն են՝ Ջուլի Բալինգթոնը, Գաբրիել Բարդալը, Հելենա Քաթը, Ալեիդա Ֆերեյրան, Ջուլիա Քյոթզենը, Նիլլ Մաքքենը, Սոնյա Պալմերին, Մանուելա Պոպովիցին և Քեյթ Սալիվանը:

Տեքստում տեղ են գտել նաև հետևյալ անձնանց մեկնաբանություններն ու արձանագանքները. Խոսե Մարիա Արանագ, Սուկի Բիվերս, Աննա Քոլլինս Ֆալք, Անդրես դել Կաստիլո, Ֆրանցիսկո Կորոս, Ռանդի Դեյվիս, Ջորջիա Դեպաուլի, Ռիքարդո դե Գիմարանս Պինտո, Իրենա Հաժիաբդիչ, Ալիս Հարդինգ Շաքլեֆոլդ, Լեոն Հեթթենբերգ, Սարա Մայա Նուգերա, Ժոզեֆին Օդերա, Նիլսեն Պերեզ, Դեյվիդ Փոթթի, Օլգա Ռեբեյդ, Յորամ Ռուկամբե, Էլմարս Սվեկիս, Լյուսինե Տուլու, ՄԱԿ-Կանայք կառույցի պակիստանյան գրասենյակ:

Ընտրական մարմիններում գենդերային քաղաքիչի ներառման վերաբերյալ հետազոտության իրականացման հարցում աջակցության համար շնորհակալություն ենք հայտնում նաև տարբեր երկրների գրասենյակների մեր գործընկերներին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում Ջուլի Բալինգթոնին, Ալեիդա Ֆերեյրային, Մարթա Վալին և Լեա Ջորիչին սույն զեկույցը հրատարակելու և Լենա Վ.Գարմերին՝ զեկույցի տեքստը խմբագրելու համար:

ՄԱԶԾ և ՄԱԿ-Կանայք կառույցը հատուկ շնորհակալություն են հայտնում ՄԱԿ-ի մյուս կառույցների և այլ երկրների գրասենյակների գործընկերներին և ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության միջկառույցային համակարգման մեխանիզմի անդամ գործընկերներին՝ կարևոր տեսակետների և աջակցության համար:

Սույն ուսումնասիրությունն իրագործելի դարձավ շնորհիվ Իսպանիայի կառավարության ֆինանսական աջակցությանը ՄԱԶԾ Ընտրական շրջափուլի աջակցության գլոբալ ծրագրին և Շվեդական միջազգային զարգացման և համագործակցության գործակալության ֆինանսական աջակցությանը ՄԱԿ-Կանայք կառույցի ռազմավարական ծրագրային շրջանակին:

© 2014 ՄԱԿ Կանայք և ՄԱԶԾ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Սույն հրատարակության մեջ արտահայտված տեսակետները հեղինակի (հեղինակների) տեսակետներն են և կարող են չհամընկնել ՄԱԿ-Կանայք կառույցի, ՄԱԶԾ կամ ՄԱԿ-ի անդամ պետությունների տեսակետների հետ:

Սույն հրատարակությունը կարող է ազատորեն օգտագործվել ոչ առևտրային, բարեխիղճ նպատակներով՝ հղում կատարելով ՄԱԿ-Կանայք կառույցին և ՄԱԿ-ի զարգացման ծրագրին: Ցանկացած այլ նպատակով օգտագործումը պետք է նախապես գրավոր կերպով համաձայնեցվի ՄԱԿ-Կանայք կառույցի հետ: Զեկույցի բովանդակության ցանկացած ամբողջական կամ մասնակի գործածման դեպքում, այդ թվում՝ փոխգիր, էլեկտրոնային փոքրերակով կամ առցանց, պետք է կատարվի հղում ՄԱԿ-Կանայք կառույցին և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին:

Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ ՄԱՉԾ ԵՎ ՄԱԿ-ԿԱՆԱՅՔ ԿԱՌՈՒՅՑԻ ԿՈՂՄԻՑ	5
Ներածություն	7
i. Ձեռնարկի նպատակը և կառուցվածքը	8
ii. Տերմինաբանություն	12
iii. Նորմատիվային շրջանակ	13
iv. ՄԱԿ-ի համակարգի գենդերային հավասարության և ընտրական գործընթացների աջակցության շրջանակները	14
Մաս Ա: Համընդգրկուն ընտրական մարմիններ	19
1. Գենդերային զգայուն ընտրական մարմիններ	21
2. Ընտրական մարմինների գենդերային քարտեզագրում	23
2.1. Գենդերային գնահատում կամ քարտեզագրում	23
2.2. Գենդերային բաղադրիչի ներառումը հետընտրական գնահատումներում	25
2.3. Գենդերային հավասարության գործողությունների ծրագիր	26
2.4. Իրավական կարգավորումների վերանայում հետընտրական շրջանում	26
3. Գենդերային հավասարության հանձնառությունը	31
3.1. Քաղաքականություններ, ծրագրեր և առաքելություն	31
3.2. Գենդերային քաղաքականություն	32
3.3. Գենդերային բաղադրիչի ներառման ինստիտուցիոնալացում. Գենդերային հարցերը համակարգող անձինք, միավորներ և հանձնաժողովներ	32
4. Գենդերային հավասարակշռությունը ընտրական մարմնում.	37
Խորհուրդ և աշխատակազմ	37
4.1. Ընտրական մարմնի խորհրդի կամ հանձնաժողովի կազմը	37
4.2. Ընտրական մարմինների քարտուղարություն և աշխատակազմ	39
4.3. Կանայք որպես ժամանակավոր և/կամ տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատակիցներ	43
5. Ընտրական մարմնում գենդերային զգայուն աշխատանքային մշակույթի ստեղծումը	45
5.1 Աշխատանքի և կյանքի միջև հավասարակշռություն	45
5.2 Ընտրականության, ուսնագությունների և ծաղրանքի բացառումը	47
6. Գենդերային հավասարության ապահովման կարողությունների զարգացումը վերապատրաստման միջոցով	49
6.1. Պարտադիր վերապատրաստում բոլոր աշխատակիցների համար	50
6.2. Գենդերային բաղադրիչի ներառումը ընտրական մարմինների բոլոր դասընթացներում	51
6.3. Հատուկ պարտականություններ ունեցող անձնակազմի վերապատրաստումը	52
6.4. Կանանց կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստում	52
7. Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը	55
7.1. Ընտրողների գրանցման տվյալները	56
7.2. Ընտրողների մասնակցության վերաբերյալ տվյալներ	56
7.3. Թեկնածուի գրանցման տվյալները	59
7.4. Մարդկային ռեսուրսների վերաբերյալ տվյալները	59

Մաս Բ. Անդրադարձ գենդերային անհավասարություններին ընտրական գործընթացներում և միջոցառումներում	63
8. Ընտրական միջոցառումների ներառում	65
9. Ընտրողների գրանցում	67
9.1. Գրանցման գործընթացում գենդերային հավասարության հիմնահարցերը հասցեագրող մոտեցումներ	69
9.2. Գենդերային ուղղվածության միջամտություններ ընտրողների գրանցման ժամանակ	74
10. Թեկնածուների և քաղաքական կուսակցությունների առաջադրումն ու գրանցումը	77
10.1. Թեկնածուների առաջադրման կանոնների կիրառումն ըստ քվոտայի	78
10.2. Քարոզարշավի ֆինանսավորման կանոնների կիրառումը	82
11. Քվեարկությունը	85
11.1. Կանանց քվեի գաղտնիության իրավունքի ապահովումը	86
11.2. Գենդերային հավասարության ապահովումն ընտրական գործընթացում	88
11.3. Կանանց քվեարկությանը նպաստող գենդերային ուղղվածությամբ միջոցառումներ	90
12. Անվտանգության ապահովումն ընտրական գործընթացում	93
12.1. Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի գնահատում և մոնիտորինգ	93
12.2. Ընտրական մարմինների կողմից իրականացվող կանխարգելման և մեղմացման միջոցառումներ	95
12.3. Անվտանգության ոլորտի համակարգում	99
13. Աշխատանք ընտրական գործընթացի շահառուների հետ	101
13.1. Աշխատանք քաղաքական կուսակցությունների հետ	101
13.2. Աշխատանք գանգվածային լրատվության միջոցների (ՉԼՄ) հետ	103
13.3. Աշխատանք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԶԻԿ) հետ	104
14. Ընտրողների իրազեկումը	107
14.1. Իրազեկման ռազմավարությունն ու քաղաքականությունը	107
14.2. Ուղերձների ձևակերպումը	109
14.3. Թիրախային լսարանները	112
14.4. Տեղեկատվության տարածման մեթոդները	115
Եզրակացություն	118
Հավելված Ա. Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մասնակից կառույցների ցանկ	119
Հավելված Բ. Նեպալում ընտրողների մասնակցության տվյալները հավաքագրելու օրինակելի ձև	120
Հավելված Գ. Ընտրությունների գենդերային քարտեզագրման շրջանակ	121

Նախաբան ՄԱԶԾ և ՄԱԿ-կանայք կառույցի կողմից

Կանանց լիարժեք և հավասար մասնակցությունը քաղաքական և ընտրական գործընթացներում կարող է դիտարկվել որպես կանանց հզորացման և գենդերային հավասարության ապահովման գործընթացի «լակմուսի թղթով» փորձարկում: Մասնակցելով ընտրություններին որպես ընտրողներ կամ թեկնածուներ, ընտրական գործընթացներում վարչարարական աշխատանքներ կատարողներ կամ կուսակցության աջակիցներ՝ կանայք ներկայացնում են իրենց սեփական կարիքները և շահերը, և կայացված որոշումներն ավելի լավ են արտացոլում ընտրագանգվածի կարիքները: Քաղաքական գործընթացները դառնում են ավելի ընդգրկուն և ամրապնդվում է ժողովրդավարությունը:

Մինչդեռ ընտրական գործընթացներում կանանց քաղաքական մասնակցությունն ուշադրության կենտրոնում է, ընտրությունների վարչարարություն իրականացնող մարմինները, որոնք հայտնի են որպես «ընտրական մարմիններ» (ԸՄ), ինչպես նաև կանանց մասնակցությունը խրախուսելու մասով դրանց դերակատարումը կարծես բավարար ուշադրության չի արժանանում: Եվ առ տեղի է ունենում անկախ այն փաստից, որ ընտրական մարմիններն ունեն կանանց մասնակցությունը խրախուսելու համար բազմաթիվ նախադրյալներ ընտրական շրջափուլի ողջ ընթացքում՝ սկսած ընտրողների գրանցումից և ընտրողների կրթությունից, մինչև թեկնածուների գրանցումը և ընտրությունների օրը տեղամասային կենտրոններ կանանց մուտքի ապահովումը:

Ինչպես ներկայացվում է սույն ձեռնարկում ընտրական մարմինների լրացուցիչ և ոչ պակաս կարևոր ներդրում կարող է լինել իրենց սեփական գործընթացների և գործելակերպերի գենդերային զգայունության ապահովումը: Սա ընդգրկում է գենդերային հավասարության ապահովման հստակ հանձնառումը գենդերային քաղաքականության միջոցով կամ

ռազմավարական ծրագրերում գենդերային զգայուն տարրեր ընդգրկելով, ապահովելով կանանց ներկայացվածությունը հաստատության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ դեկավար դերերում, ողջ անձնակազմի համար իրականացնելով գենդերային զգայուն վերապատրաստման դասընթացներ և ապահովելով ընտրական գործընթացին առնչվող բոլոր վիճակագրական տվյալների ըստ սեռի տարանջատում: Որդեգրելով այս գործելակերպերը՝ ընտրական մարմինները դառնում են գենդերային զգայուն դերային մոդել հանդիսացող հաստատություններ և ուղի են հարթում մյուսների հաստատությունների համար:

ՄԱԶԾ-ի և ՄԱԿ-Կանայք կառույցի համար գենդերային հավասարությունը և քաղաքական և ընտրական գործընթացներում կանանց հզորացումը հանդիսանում է գերակա ուղղություն: Բոլոր տարածաշրջաններում շատ երկրի գրասենյակներ իրականացնում են այնպիսի ծրագրեր, որոնք ուղղված են ընտրական մարմինների կարողությունների զարգացմանը՝ կանանց քաղաքական մասնակցությունը խթանելու նպատակով: Սույն ձեռնարկը նկարագրում է ՄԱԿ-ի և ընտրական մարմինների կողմից իրականացվող աշխատանքները, առաջարկելով կոնկրետ քայլերի օրինակներ, որոնք միտված են վերացնելու կանանց ինքնաարտահայտմանը խոչընդոտող գործոնները:

Սույն ձեռնարկը ներկայացնում է նորարար և արդյունավետ ծրագրային միջամտություններ, որոնց միջոցով կազմակերպությունները շարունակելու են աջակցել կանանց քաղաքական հզորացմանը: Այն արտացոլում է բարձր գործընկերական հարաբերությունները ՄԱԶԾ-ի և ՄԱԿ-Կանայք կազմակերպության միջև կանանց քաղաքական և ընտրական մասնակցության հարցերի շուրջ և ներկայացնում է ընտրական մարմինների հետ հարաբերությունների

ամրապնդման լավագույն փորձի օրինակներ: Նման ռազմավարական գործընկերության խթանումը շատ կարևոր է կանանց համար որակյալ արդյունքներ ապահովելու իմաստով:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր մեծահոգաբար տրամադրել են իրենց ժամանակը ողջ աշխարհում ընտրական մարմինների կողմից իրականացվող աշխատանքների վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու համար և հույս ենք հայտնում, որ այս հրատարակությունը

կծառայի որպես օգտակար ռեսուրս նման մասնագետների և փորձարարների համար:



Հելեն Զլարկ
Ղեկավար
Միավորված ազգերի
գարգացման ծրագիր



**Ֆունգիլե-Մլամբո
Նգկուկա**
Գործադիր տնօրեն
ՄԱԿ-ի Գենդերային
հավասարության և կանանց
հզորացման կառույց



Ներածություն

Համընդգրկուն ընտրությունները, որտեղ ընտրելու և ընտրվելու իրավունք ունեցող բոլոր անհատներն ունեն քվեարկելու և իրենց ներկայացուցիչներին ընտրելու հնարավորություն, ժողովրդավարության առանցքային նախապայման են: Համընդգրկուն ընտրություններ անցկացնելու համար կարևոր է ապահովել կանանց և տղամարդկանց մասնակցությունն առանց անարդար խզընդոտների: Սույն ձեռնարկը ներկայացնում է ընտրությունների վարչարարության մեջ և կազմակերպմամբ զբաղվող ընտրական մարմինների կողմից կատարվող արդյունավետ աշխատանքը, որն ուղղված է ապահովելու կանանց առանցքային դերակատարումն այս մարմիններում, ինչպես նաև առավել ընդգրկուն մասնակցությունն ընտրությունների անցկացման և բուն ընտրական գործընթացներում:

Թեև սա լայնորեն ընդունված տեսակետ չէ, ընտրական և քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության խթանման հարցում ընտրական մարմիններն ունեն առանցքային դերակատարում: Անկախ գոյություն ունեցող տարբեր մոդելներից՝ ընտրական մարմինները պատասխանատու են ինչպես բուն ընտրությունների անցկացման, այնպես էլ նախընտրական բոլոր փուլերի կազմակերպման համար, այդ թվում՝ ընտրողների և թեկնածուների գրանցումը, քվեարկության նախապատրաստումը, ընտրողների կրթությունը և իրազեկումը: Այս մարմինների աշխատակիցներն առաջնորդվում են այնպիսի ծառայողական սկզբունքներով, ինչպիսիք են՝ անկողմնակալությունը, անկաշառությունը, հաշտվողականությունը և էթիկայի բարձրագույն չափանիշները: Ընտրությունների արդյունքների նկատմամբ վստահությունը մեծապես կախված է ընտրական մարմնի մասնագիտական հմտությունից, թափանցիկությունից, ազնվությունից և վստահելիությունից, ինչպես նաև ընտրական վարչարարության ձևից:

Շատ երկրներում այս հաստատությունները կարևոր դեր են կատարում ընտրական ընթացակարգերի մշակման և/կամ կիրարկման հարցում: Ընտրական օրենսդրության իրենց խորքային իմացության շնորհիվ ընտրական մարմիններն ունեն գենդերային հավասարությունը և կանանց մասնակցությունը խթանելու բացառիկ հնարավորություն: Ընտրական մարմինների կազմակերպական կառուցվածքի, ընթացակարգերի, կանոնների և նորմերի մանրագնահիտ ուսումնասիրությունը թույլ կտա նախանշել կանանց մասնակցության խթանման

միջոցները և ճանապարհները: Կանանց մասնակցության պոտենցիալ խոչընդոտների վերլուծության համար անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչպես են կազմակերպական կառուցվածքը, ընթացակարգերը, կանոնները և նորմերը նպաստում դրանց հարատևմանը:

Գենդերային հավասարության և կանանց հզորացմանն առաջնահերթություն տվող ընտրական մարմիններին հաջողվել է կանխագիշ կերպով ստեղծել կանանց մասնակցությունը խթանող միջավայր: Այնուամենայնիվ, անգամ այսպիսի բարի կամքի դրսևորման պարագայում շատերը չունեն համապատասխան գործնական գիտելիքներ կամ մշակած ռազմավարություն և ծրագիր այդ կամքը գործնականում կիրառելու համար: Նախադեպերը, որոնցով ընտրական մարմինները կարող են առաջնորդվել ընտրական գործընթացներում կանանց հավասար և արդյունավետ մասնակցությունն ապահովելու համար, և ընտրական վարչարարության ոլորտում կանանց հզորացմանը միտված նախաձեռնությունները, ցավոք, չեն փաստաթղթավորվել:

Գենդերային հավասարության հասնելու տարբեր եղանակներ կան, այդ թվում՝ (ա) գենդերային բաղադրիչի ներառումը բոլոր պատասխանատու հաստատություններում և նրանց գործունեության բոլոր ոլորտներում, հաշվի առնելով իրականացվող աշխատանքների բոլոր հայեցակետերի դիֆերենցիալ ազդեցությունը կանանց և տղամարդկանց վրա, և (բ) կոնկրետ ոլորտներում առկա խնդիրները լուծելու համար գենդերային առանձնահատկություններով պայմանավորված կամ գենդերային թիրա-

խավորմամբ միջոցառումների, այդ թվում՝ դրական խտրականության կիրառումը: Արդյունավետ գենդերային քաղաքականությունը պետք է ներառի վերոնշյալ երկու կետերի համադրությունը:

i. Ձեռնարկի նպատակը և կառուցվածքը

Ձեռնարկի նպատակն է աջակցել նրանց, ովքեր գրավում են ընտրական գործընթացներում և ընտրական վարչարարության ոլորտում կանանց մասնակցության խթանման հարցերով: Բազմաթիվ երկրներում կանայք շարունակում են լինել ընտրական և քաղաքական գործընթացներից մարգինալացված ամենախոշոր խումբը, թեև կանայք որպես խումբ միատարր չեն (առկա բազմաթիվ տարբերակումներից են տարիքային, դասակարգային, կաստային, ռասսայական, հաշմանդամության, էթնիկ, տնտեսական և սոցիալական տարբերությունները): Սույն ձեռնարկում անդրադարձ է արվում գոյություն ունեցող պրակտիկաներին և բարեփոխումներին, որոնք կարող են կիրառվել ընտրական մարմինների կողմից, ինչպես նաև այն կազմակերպություններին, որոնք կարող են աջակցել վերջիններիս իրենց աշխատանքում, ինչպիսիք են՝ ՄԱԶԾ, ՄԱԿ-Կանայք կառույցը և ՄԱԿ-ի մյուս կառույցները:

Կանանց մասնակցությունը խթանող ելակետային միջոցառումների առաջնային կատարողներն ընտրական մարմիններն են, այդ իսկ պատճառով նրանք հանդիսանում են սույն ձեռնարկի առաջնային լսարանը: Բազմաթիվ զարգացող և անցումային ժողովրդավարություններում միջազգային կազմակերպություններն աջակցում են ընտրական մարմիններին՝ վերջիններիս գործունեության ինստիտուցիոնալացման և զարգացման հարցում: Սույն ձեռնարկը նույնպես նպատակ ունի

աջակցել վերոնշյալ դերակատարներին գենդերային զգայուն ընտրությունների անցկացմանը միտված միջոցառումների մշակման և իրագործման հարցում:

Ընտրական մարմինները հաճախ համարվում են ընտրությունների անաչառ իրավարարներ: Որպես այդպիսին, այս մարմինները պատասխանատվություն չեն կրում քաղաքական թեկնածուների հավաքագրման, վերապատրաստման կամ ֆինանսավորման համար՝ անկախ վերջիններիս սեռից: Չնայած կանայք շարունակում են թերներկայացված լինել ընտրական և քաղաքական գործընթացներում, իրավիճակի շտկմանը միտված միջոցառումները, այդ թվում՝ շրտարական բարեփոխումները (ներառյալ ժամանակավոր հատուկ միջոցները/ԺՀՄ) և քարոզարշավի ֆինանսավորման բարեփոխումները, ինչպես նաև կին թեկնածուների վերապատրաստումը, ընդհանուր առմամբ դուրս են ընտրական մարմինների գործառնությունների շրջանակից և լայնորեն լուսաբանվում են այլ հրատարակումներում: Սույն ձեռնարկում անդրադարձ է արվում թե՛ ընտրական մարմինների, թե՛ ընտրական գործընթացում ներգրավված այլ մարմինների աշխատանքին:

Փոփոխությունների հասնելու համար հարկավոր է ուսումնասիրել այլոց կողմից արդեն իսկ ձեռնարկված քայլերը: Սույն ձեռնարկում ներկայացվում են տարբեր տարածաշրջանների ընտրական մարմինների կողմից ձեռնարկված քայլերը՝ ընտրական գործընթացներում կանանց մասնակցության խթանման և հաստատության գործունեության բոլոր ոլորտներում գենդերային բաղադրիչի ներառման ուղղությամբ: Սույն ձեռնարկը չի հանդիսանում վերոնշյալ քայլերի սպառիչ ցանկ, սակայն այստեղ միատեղված են իրական փորձի օրինակներ՝ տեսական գաղափարների և սկզբունքների գործնական կիրառումը ցույց տալու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ խնդիրները և լուծումները կարող են տարբեր լինել, գեկույցում փորձ չի արվում սահմանել որոշակի մոտեցում: Որոշակի վայրում կամ ժամանակահատվածում արդյունավետ կերպով կիրառված միջոցառումը կարող է կիրառելի չլինել մյուս մեկ այլ երկրի համատեքստում, սակայն կարող է հուշել այդ համատեքստներում կիրառելի քայլերի գաղափարներ: Նյութը կարող է հետաքրքրական և օգտակար լինել նաև այլ շահառուների համար, ում գործունեությունն առնչվում է վստահելի և համընդգրկուն ընտրական գործընթացների աջակցությանը և ընտրական մարմինների գործունեության բարելավմանը: Այսպիսի շահառուներ են քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ԲՀԿ), կուսակցությունները և լրատվամիջոցները: Չնայած այս ոլորտի նախաձեռնությունների պատշաճ փաստաթղթավորում չի կատարվել, սույն ձեռնարկում ներկայացված են օրինակներ



© Տոնի Բալիսգոն

ավելի քան 50 երկրներից: Հուսով ենք, որ այս ձեռնարկը խթան կհանդիսանա այս ոլորտում նոր նախաձեռնությունների և ավելի հետևողական աշխատանքների իրականացման համար:

Ձեռնարկը բաղկացած է երկու մասից: Առաջին բաժինը վերաբերում է ընտրական մարմիններին և վերջիններիս ներքին քաղաքականության և գործընթացների գենդերային զգայունության բարձրացմանը միտված համալիր ռազմավարական միջոցառումներին: Այսպիսի միջոցառումների շարքին է պատկանում կանանց ներգրավումը հաստատության բոլոր մակարդակներում, այդ թվում՝ դեկավար պաշտոններում: Այնուամենայնիվ, հաստատության ներսում գենդերային զգայուն միջավայր ապահովելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել վերջինիս ներքին քաղաքականությունները և աշխատանքային մեթոդները: ՄԱՍ «Ա»-ում խոսվում է այն մասին, թե ինչպիսիսն պետք է լինեն ընտրական մարմին ներքին կառուցվածքը և կազմակերպական ընթացակարգերը, որպեսզի ընտրությունների անցկացման և առօրյա աշխատանքների ընթացքում այն ունենա անհրաժեշտ կարողությունները և ռեսուրսները իր գործունեության բոլոր փուլերում գենդերային բաղադրիչի ներառումն ապահովելու, ինչպես նաև իր գործունեությամբ կանանց հանդեպ ոչ միտումնավոր խտրականությունը բացառելու համար:

«ՄՍՍ Բ-ում» մանրամասն անդրադարձ է կատարվում ընտրական մարմինների աշխատանքին և գործունեությանը և ընտրական և քաղաքական գործընթացներում կանանց մասնակցությունը խթանող հնարավոր ելակետային միջոցառումներին: Շատ առումներով ընտրական մարմինները հանդիսանում են ընտրական գործընթացը կանոնակարգող օրենքների և կարգավորումների անաչառ կիրառողները: Լինելով սերտորեն ներգրավված այս կանոնների կիրառման գործում, ընտրական մարմինները նշանակալի դեր են կատարում նաև դրանց մշակման և բարեփոխման մեջ: «ՄԱՍ Բ»-ի սկզբում խոսվում է իրավական շրջանակի կիրառման գործում ընտրական մարմինների դերի մասին, ապա անցում է կատարվում ընտրական գործընթացի մի շարք մեխանիզմների՝ սկսած ընտրողների գրանցումից և թեկնածուների առաջադրումից, մինչև քվեարկությունը և ընտրական շրջանում կանանց անվտանգության ապահովումը: Բաժինը եզրափակվում է կանանց ընտրելու և ընտրվելու իրավունքի վերաբերյալ ընտրազանգվածի իրազեկմանն ուղղված ընտրական մարմինների կողմից իրականացվող աշխատանքների ուսումնասիրությամբ:

Մեթոդաբանությունը

Ձեռնարկում տեղ գտած տեղեկատվությունը ստացվել է ՄԱԶԾ երկու հետազոտությունների արդյունքում: 25 հարցերից բաղկացած առաջին հետազոտության միջո-

ցով փորձ է արվել պարզել, թե գենդերային բաղադրիչի ներառման ինչ պրակտիկաներ են կիրառում աշխարհի տարբեր տարածաշրջանների ընտրական մարմինները: Թվով 30 երկրների ընտրական մարմինները տրամադրել են տեղեկատվություն իրենց համապատասխան գործունեության մասին, իսկ 5 այլ երկրներում հետազոտության շրջանակներում իրականացված հարցմանը մասնակցել են ՄԱԶԾ երկրի գրասենյակները՝ ընտրական մարմինների անունից: Այսպիսով, հարցումներին մասնակցել են ընտհանուր թվով 35 երկրներ: «Ընտրական մարմինների շրջանում անկացված հետազոտության» շրջանակներում կատարվել են հարցադրումներ այն մասին, թե ինչ միջոցառումներ են ձեռնարկվում կանանց գրանցումն ու քվեարկությունը խրախուսելու համար, ինչպես նաև հաստատության ներքին գործելակերպի և կադրային քաղաքականության մեջ գենդերային բաղադրիչի ներառման վերաբերյալ: Հարցմանը մասնակցած 35 պետությունների ցանկը ներկայացված է զեկույցի վերջում (տե՛ս Հավելված Ա):

Երկրորդ հետազոտության նպատակն է եղել տարբեր երկրների գրասենյակների միջոցով ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող ընտրական գործընթացների աջակցության ծրագրերի մասին տեղեկությունների հավաքագրումը: «ՄԱԶԾ հետազոտության» շրջանակներում հարցմանը մասնակցել են 51 երկրի գրասենյակներ: Հարցման միջոցով ստացվել է տեղեկատվություն այն մասին, թե արդյոք ընտրական գործընթացների աջակցությանն ուղղված միջոցառումները թիրախավորում են կանանց հզորացումը, և եթե այո, ապա ինչպես: ՄԱԾԶ և ՄԱԿ-Կանայք կառույցի կողմից իրականացված միջոցառումների մասին հավելյալ տեղեկատվությունը ստացվել է ծրագրերի արդյունքներն ամփոփող ստանդարտ տարեկան զեկույցներից: Հնարավոր է, որ մասնակից երկրներում հետազոտության արդյունքների շրջանառությունից հետո ձեռնարկվել հետագա այլ միջոցառումներ:

Գրասենյակային պայմաններում ուսումնասիրվել են նաև այլ միջազգային կազմակերպությունների կողմից իրականացված միջոցառումները: Բացի տեղական և միջազգային ընտրական դիտորդների զեկույցներից, ընտրական մարմինների կայքերից և ընտրական մարմինների հետ հաղորդակցության միջոցով ստացված տեղեկատվությունից, օգտագործվել են նաև այնպիսի առցանց աղբյուրներ և ցանցեր, ինչպիսիք են՝ ԸՎԾ Ընտրական գիտելիքների ցանցը (ACE Electoral Knowledge Network) և iKNOWPolitics-ը: Զեկույցում ներառված չեն բոլոր ընտրությունները և բոլոր ընտրական մարմինների աշխատանքը, և կարող են լինել կանանց մասնակցությունը խրախուսելու և ընտրական մարմինների գործունեության մեջ գենդերային բաղադրիչը ներառելու ուղղությամբ ձեռնարկված այլ նորարարական կամ արդյունավետ միջոցառումներ, որոնք ներ-

կայացված չեն սույն զեկույցում:

Ընտրական շրջափուլի մեթոդը

Ընտրական մարմնի գործունեության տարբեր բաղադրիչներին հետևելու համար սույն ձեռնարկում կիրառվում է ընտրական շրջափուլի մոտեցումը, այսինքն՝ ուսումնասիրվում է պետական մարմնի (որպես կանոն՝ համազգային) մեկ ընտրությունից մինչև այդ նույն մարմնի հաջորդ ընտրությունն ընկած ողջ ժամանակահատվածը: Այս մոտեցումը մշակվել է վերջին տարիների ընթացքում՝ ընտրական գործընթացների աջակցության պլանավորման և կիրառման դյուրացման համար՝ հաշվի առնելով ընտրական ոլորտի բարդ և անկայն բնույթը:

Զեկույցում քննարկվող ընտրական շրջափուլին վերաբերող բոլոր գործողությունները աղյուսակի տեսքով ներկայացված են ձեռնարկի ամփոփման բաժնում: Քանի որ ընտրական մարմնի գործունեությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն ընգրկում է ողջ ընտրական շրջափուլը, վերոնշյալ ամփոփիչ աղյուսակում ներկայացված են գործնական քայլեր, որոնք կարող են արդյունավետ կերպով ձեռնարկվել ընտրական մարմնի կողմից ընտրական շրջափուլի համապատասխան շրջանում: Ամբողջական ընտրական շրջափուլը բաղկացած է նախընտրական, ընտրական, հետընտրական շրջաններից և ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածից:

Ընտրական շրջափուլի պլանավորման ընթացքում կարևոր է հաշվի առնել, որ չնայած որոշ քայլեր վերաբերում են կոնկրետ շրջանների, օրինակ՝ քվեարկությունը տեղի է ունենում ընտրական շրջանում, այդ քայլերի հետ կապված որոշումների կայացումը և պլանավորումը տեղի է ունենում ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում կամ նախընտրական շրջանում: Մասնավորապես, կին ընտրողների կամ ընտրական մարմիններում ներգրավված կանանց վրա ազդեցություն ունեցող բազմաթիվ գործընթացներ կանոնակարգվում են որոշակի իրավական շրջանակներով: Գենդերային անհավասարության ամբողջական գնահատման և դիտարկման, ինչպես նաև համապատասխան լուծումների ձևակերպման տեսանկյունից, զեկույցում առաջարկվող միջոցառումների մեծ մասի կիրառումն առավել արդյունավետ կարող է լինել հետընտրական շրջանում կամ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Օրինակ, այնպիսի մշակույթներում, որտեղ կանայք չեն մասնակցում ընտրական գործընթացներին, փոփոխություններ կատարելու համար անհրաժեշտ է իրականացնել ընտրողների իրազեկման արշավներ,

Նկար 1:

ԸՆՏՐԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐՔԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Նախընտրական շրջան

(հետընտրական շրջանի և հաջորդ ընտրությունների հայտարարման միջև ընկած ժամանակահատված)

ԳՐԱՆՑՈՒՄ

- Իրականացնել գրանցման ընթացակարգերի քարտեզավորում
- Ապահովել ըստ սեռի տարանջատված տվյալների տրամադրում
- Համոզվել, որ ինքնությունը հաստատելու պահանջը արգելք չի հանդիսանում
- Դիտարկել տարահաված անձանց համար ճկուն կարգավորումներ սահմանելու հնարավորությունը
- Դիտարկել շրջիկ արկղով քվեարկության համար գրանցում իրականացնելու հնարավորությունը
- Դիտարկել միայն կանանցից բաղկացած գրանցում իրականացնող անձնակազմերի ձևավորումը
- Աշտանբային բնութագրում, ստուգացնելներում և դառնթացնելում անդրադարձ կատարել կանանց հատուկ կարիքների առնչվող իրավիճակներում ձեռնարկվող գործողություններին:
- Ըստ ահրաժեշտության, իրականացնել իրազեկում կանանց հատուկ կարիքները հաշվի առնող գրանցման ընթացակարգերի վերաբերյալ:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ և ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

- Երաշխավորել առաջարկող կին թեկնածուների քանակն ապահովող կարգավորումների կիրառումը:
- Ապահովել քարոզարշավի ֆինանսավորման այն կարգավորումների կիրառումը, որոնք վերաբերում են տղամարդկանց և կանանց հավասարության ապահովմանը:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒ

- Կազմել ընտրողների իրազեկման ծրագրեր: Համապատասխան ուղերձը, լսարանը և մատուցման մեթոդը սահմանելիս հաշվի առնել կանանց հատուկ կարիքները:
- Իրականացնել կանանց իրազեկման արշավներ՝ կիրառելով մատուցման լավագույն մեթոդները:
- Աշխատել ՉԼՄ-ների հետ կանանց հատուկ կարիքների վերաբերյալ իրազեկում և լուսաբանում իրականացնել ուղղությամբ:
- Աշխատել քաղաքացիական հասարակական կազմակերպությունների հետ կանանց կարիքների վերաբերյալ իրազեկում իրականացնելու ուղղությամբ:

Ներքին ՄԿԳ Կազմակերպություն

- Իրականացնել կարիքների գնահատում կանանց մասնակցության վերլուծության կամ քարտեզավորման միջոցով:
- Խրախուսել կանանց և տղամարդկանց միջև հավասարության խթանմանը քաղաքականության կամ գործողությունների ծրագրի մշակման միջոցով:
- Կադրերի հավաքագրման և պաշտոնի բարձրացման միջոցով ապահովել հավասարակշռություն կանանց և տղամարդկանց միջև բոլոր մակարդակներում:
- Դիտարկել պատասխանատու անձի կամ մարմնի նշանակման հնարավորությունը կանանց մասնակցությունը խթանելու համար:
- Որոշեցրել ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման գործընթաց:
- Վիճակագրական տվյալների ըստ սեռի տարանջատումը ներառել տվյալների վերլուծության գործընթացում:
- Անցկացնել վերապատրաստման դասընթացներ ողջ անձնակազմի համար Նոր ընթացակարգերի և կանանց մասնակցության վերաբերյալ իրազեկման թեմաներով:

Ընտրական շրջան

(ընտրությունների հայտարարումից մինչև արդյունքների հայտարարումը ընկած ժամանակահատված)

Հետընտրական շրջան

(ընտրությունների արդյունքների հայտարարումը հաջորդող ժամանակահատված)

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԿԱ ՊԼԱՆԿՈՐՈՒՄ

- Կատարել ընտրական ընթացակարգերի քարտեզավորում:
- Հաշվի առնել տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը և սարքավորումների տրամադրումը:
- Հաշվի առնել միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնների կամ քվեախցիկների և/կամ շրջիկ արկղերի կարիքը:
- Պլանավորել տեղամասային կենտրոններում աշխատող կանանց և տղամարդկանց հավաքագրումը:
- Դիտարկել տեղամասային ընտրական անձնաժողովների անդամների համար կանանց մասնակցության վերաբերյալ դասընթացների կազմակերպման հնարավորությունը:
- Ներառել կանանց մասնակցության թեման մասնակիցների գործառույթների նկարագրերում և ստուգացանկերում:
- Ապահովել քվեաթերթիկների և ուղեցույցերի հասանելիությունը ոչ գրագետ (կարդալ չիմացող) անձանց համար:
- Դիտարկել հաշմանդամների համար ճկուն կարգավորումների կիրառման հնարավորությունը:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

- Ձեռնարկել պատշաճ միջոցներ տեղամասային կենտրոններում աշխատակիցների և ընտրողների անվտանգությունն ապահովելու համար:
- Կանանց և մայրերին սպասարկել առանց հերթի:
- Կազմակերպել միայն կանանցից բաղկացած հերթեր և/կամ ընտրական տեղամասեր կամ քվեախցիկներ (ըստ անհրաժեշտության)
- Ապահովել շրջիկ արկղ (ըստ անհրաժեշտության)
- Դիտարկել ըստ սեռի տարանջատված տվյալների հավաքագրման հնարավորությունը:

ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՅՈՒՄ

- Իրականացնել ընտրողների իրազեկում ընտրության օրվա վերաբերյալ: (պլանավորել և մշակվել նախընտրական շրջանում)
- Դիտարկել մատուցման լավագույն մեթոդները:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

- Ներառել կանանց մասնակցությանը վերաբերող խնդիրները անցած ընտրությունները գնահատող զեկույցներում:
- Վերանայել գործառնական ձեռնարկները և իրազեկման նյութերը կանանց մասնակցության խթանման տեսանկյունից:
- Տվյալների վերլուծության ընթացքում իրականացնել տվյալների տարանջատում ըստ սեռի:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՂ ԾՐՁԱՆԱԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

- Գնահատել վերանայման ենթական կարգավորումները, ապահովել դրանց կիրառումը: (օր.՝ թեկնածուների քվոտան)
- Գնահատել կարգավորումների վերանայման անհրաժեշտությունն ըստ սեռի տարանջատված տվյալներ ստանալու համար:

ՈԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆ և ՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

- Իրականացնել ընտրական մարմինների քաղաքականության և ընթացակարգերի քարտեզավորում, կանանց և տղամարդկանց միջև առկա անհավասարությունները նախանշելու համար:
- Սահմանել նպատակներ՝ միտված կանանց մասնակցությունը խթանմանը գրանցման և քվեարկության գործընթացներում:
- Սահմանել ընտրողների իրազեկման քաղաքականություն և նպատակներ:
- Ներառել կանանց մասնակցության խթանմանը միտված ներքին նպատակներ:
- Դիտարկել կանանց մասնակցության խթանման ուղղությամբ աշխատող պատասխանատու անձանց կամ մարմինների նշանակման հնարավորությունը:

որոնք պետք է պատշաճ կերպով պլանավորվեն նախքան ընտրական շրջանը և հնարավորության դեպքում իրականացվեն նախընտրական շրջանում:

ii. Տերմինաբանություն

Ընտրական գործընթացների աջակցությունը վերաբերում է բոլոր այն նախաձեռնություններին, որոնց նպատակն է բարելավել գործընկեր երկրներում ընտրական գործընթացների և ընտրական մարմինների գործունեության որակը:¹ Ընտրական գործընթացների աջակցությունը շեշտադրում է մասնագիտական հմտությունների, գործառնական գիտելիքների փոխանցումը, ընտրական գործընթացների առանցքային շահառուների ինստիտուցիոնալ և կարողությունների երկարաժամկետ զարգացումը:²

ՄԱԿ-ի տեխնիկական աջակցությունն ընտրությունների մատվ ներառում է իրավական, գործառնական և լոգիստիկ աջակցություն ընտրական գործընթացների, հաստատությունների, օրենքների զարգացման կամ բարելավման հարցում: ՄԱԿ-ի տեխնիկական աջակցության կենտրոնում ընտրական վարչարարությունն է և այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են՝ ընտրական մարմինները, և ՄԱԿ-ը պարտավոր է համակարգված կերպով հաշվի առնել գենդերային հիմնահարցերը ընտրական գործընթացների տեխնիկական աջակցության բոլոր հայեցակետերում:³

Ընտրական մարմիններն (ԸՄ) ընտրությունների պլանավորման և վարչարարության շրջանակներում իրականացվող բազմաթիվ գործողությունների իրականացման համար պատասխանատու կառույցները և անհատներն են: Չնայած այս գործողությունների մեծամասնության համար կարող է պատասխանատու լինել մեկ մարմին, տարածված պրակտիկա է բաժանել ընտրական վարչարարության հետ կապված գործողությունները մի շարք մարմինների միջև:⁴ Որոշ համատեքստերում, ընտրական վարչարարությանն առնչվող այնպիսի գործողություններ, ինչպիսիք են՝ ընտրողների գրանցումն ու լրատվամիջոցների աշխատանքի կանոնակարգումը, իրականացվում են տարբեր նախարարությունների կողմից:

Գենդերային հավասարակշռությունը վերաբերում է կանանց և տղամարդկանց գույակշոված ներգրավվածությանը որոշակի գործընթացներում կամ կազմակերպություններում: Որպես օրինակ կարելի է դիտարկել այս երկու սեռերի ներկայացվածությունը հանձնաժողովներում, որոշումներ կայացնող մարմիններում կամ աշխատակազմներում:

Գենդերային հավասարություն նշանակում է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների հավասար հնարավորություններ, իրավունքներ և պարտականու-

թյուններ: Հավասարություն չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ նույնն են, այլ նշանակում է, որ կանայք և տղամարդիկ ունեն նույն հնարավորությունները, իրավունքները և պարտականությունները՝ անկախ նրանց պատկանելությանը իգական կամ արական սեռին: Մա նշանակում է, որ հարկավոր է հաշվի առնել թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց հետաքրքրությունները, կարիքները և առաջնահերթությունները:⁵

Գենդերային բաղադրիչի ներառումը ցանկացած ոլորտում և ցանկացած մակարդակում, ցանկացած ծրագրավորված գործողության, այդ թվում՝ օրենսդրության, քաղաքականության կամ ծրագրերի՝ կանանց և տղամարդկանց վրա ազդեցությունների գնահատման գործընթացն է:⁶ Գենդերային բաղադրիչի ներառումը ընտրական մարմիններում ապահովում է թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց մտահոգությունների, կարիքների և փորձի դիտարկումը բոլոր գործողությունների նախագծման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման փուլերում: Այս գործընթացի միջոցով ընտրական մարմինը փորձում է լրացնել բացերը կանանց և տղամարդկանց զարգացման հնարավորությունների առումով, աշխատում է կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը դարձնել կազմակերպության ռազմավարության, քաղաքականության և գործառնությունների անբաժանելի մասը և պահել այս հարցը կատարելագործմանն ուղղված մշտական ջանքերի կենտրոնում:⁷ Որոշ համատեքստերում կիրառվում է նաև գենդերային բաղադրիչի ինտեգրում տերմինը:

Գենդերային զգայուն, երբ հաշվի է առնվում կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի, նրանց կոնկրետ գործունեությունների և նրանց կողմից առերեսվող մարտահրավերների բազմազանությունը:⁸

Գենդերային առանձնահատկություններով պայմանավորված կամ գենդերային թիրախավորմամբ միջամտություններն իրականացվում են այն ոլորտներում, որտեղ կանայք թերներկայացված են կամ խոցելի և հանդիսանում են գենդերային բաղադրիչի ներառման համապարփակ մտեցման մաս: Նման միջամտություն է նաև ժամանակավոր հատուկ միջոցների որդեգրումը:

Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալները հավաքագրվում և աղյուսակավորվում են առանձին տղամարդկանց և կանանց համար: Թույլ են տալիս իրականացնել տղամարդկանց և կանանց միջև առկա տարբերությունների չափում տարբեր սոցիալական և տնտեսական հարթություններում:⁹

Ժամանակավոր հատուկ միջոցները (ԺՀՄ) քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային, քաղաքացիական կամ այլ բնագավառներում կանանց հավասար մասնակցությունն արագացնելու համար ձեռնարկ-

ված կոնկրետ նպատակային միջոցներն են: Չնայած կանանց և տղամարդկանց միջև ճիշտ ժամանակին դե ֆակտո կամ առարկայական հավասարության հասնելու պետությունների իրավական հանձնառությանը, ընտրական և քաղաքական գործընթացներում կանանց մասնակցությունը խթանելու համար կարող է անհրաժեշտ լինել ժամանակավոր հատուկ միջոցների կիրառում: ¹⁰

iii. Նորմատիվային շրջանակ

Վերջին երեք տասնամյակների ընթացքում մեծ ուշադրություն է հատկացվել հասարակական կյանքում կանանց մասնակցության խթանմանը: Ընտրական և քաղաքական գործընթացներում կանանց մասնակցությանն առնչվող իրավակարգավորիչ շրջանակը սահմանվում է մարդու իրավունքների և քաղաքական իրավունքների հայտարարագրերում, դաշնագրերում և կոնվենցիաներում, ՄԱԿ-ի գեկոյցներում, բանաձևերում և գործողությունների ծրագրերում և ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության և գենդերային հավասարության քաղաքականություններում: ¹¹

Քաղաքական և ընտրական գործընթացներում կանանց լիակատար մասնակցության համար հիմք են հանդիսացել 1948 թվականին ընդունված ՄԱԿ-ի մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի առանց խտրականության և հավասար ընտրական իրավունքի սկզբունքները, 1952 թվականին ընդունված Կանանց քաղաքական իրավունքների մասին կոնվենցիան և այլ տարածաշրջանային կոնվենցիաներ, որոնցում հստակորեն նշվում է, որ վերոնշյալ իրավունքների իրացումը չպետք է կախված լինի որևէ տարբերակումից այդ թվում՝ ըստ սեռի կամ գենդերային հիմքով: ¹² Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ, 1996) հոդված 25-ը սահմանում է ոչ միայն քաղաքացիների իրավունքը մասնակցելու պետական գործերի վարմանը, այլ նաև իրավունքն «ընտրելու և ընտրվելու իրական պարբերական ընտրություններում, որոնք անցկացվում են համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ և երաշխավորում են ընտրողների կամքի ազատ արտահայտումը», ինչպես նաև «իր երկրում հավասարության ընդհանուր պայմաններով պետական ծառայության մտնելու» իրավունքը:

1979 թվականին ընդունված Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան վերահաստատում է կանանց իրավունքը «կառավարման բոլոր մակարդակներով զբաղեցնելու պետական պաշտոններ և իրականացնելու բոլոր պետական գործառնությունները» Մասնավորապես, Հոդված 7-ը սահմանում է, որ.

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ

մամբ խտրականությունը երկրի քաղաքական ու հասարակական կյանքում՝ ապահովելով հետևյալ հավասար իրավունքները կանանց և տղամարդկանց համար.

- (ա) քվեարկելու բոլոր ընտրություններում և հանրաքվեներում, ընտրվելու բոլոր պետական ընտրովի մարմիններում,
- (բ) մասնակցելու կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը և կառավարման բոլոր մակարդակներով զբաղեցնելու պետական պաշտոններ և իրականացնելու բոլոր պետական գործառնությունները: ¹³

ՔՔԻՄԴ-ում հստակորեն նշվում է, որ ընտրելու իրավունքի իրացմանը և հասարակական կյանքին մասնակցելու իրավունքի իրացմանը խոչընդոտող սեռով պայմանավորված ցանկացած խտրականություն անթույլատրելի է, իսկ Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին կոնվենցիան անդամ պետություններին պարտավորեցնում է ձեռնարկել քայլեր ցանկացած նմանօրինակ խտրականությունը վերացնելու ուղղությամբ: Ընդ որում, Կանանց նկատմամբ բոլոր տեսակի խտրականությունների վերացման մասին կոնվենցիայի Հոդված 4-ը խրախուսում է ԺՀՄ կիրառումը՝ Հոդված 7-ին համապատասխանության ապահովման գործընթացի արագացման համար: Թեև ԺՀՄ-ները հաճախ դիտարկվում են ընտրովի պաշտոններում կանանց ներկայացվածությունը բարձրացնելու համար, դրանք կարող են կիրառվել նաև ընտրական գործընթացներին և ընթացակարգերին, ինչպես նաև ընտրական մարմինների կադրային նշանակումներին և կազմությանը վերաբերող Հոդված 7-ի լիարժեք կիրառումն ապահովելու համար:

Կանանց՝ հասարակական կյանքի բոլոր բնագավառներում լիարժեք մասնակցելու իրավունքը շարունակում է մնալ ՄԱԿ-ի բանաձևերի և արձանագրությունների անկյունաքարը:



© ՄԱԿ-ի նկար / Մարտին Պերե

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը (E/RES/1990/15), Պեկինի հռչակագրը և գործողությունների ծրագիրը (1995թ.), 2006 թվականի Կանանց կարգավիճակի վերաբերյալ հանձնաժողովի համաձայնեցված եզրակացությունը (E/2006/27-E/CN.6/2006/15) և ՄԱԿ-ի Ընդհանուր վեհաժողովի «Կանանց և քաղաքական մասնակցության վերաբերյալ» թիվ 66/130 բանաձևը (2011) պարտավորեցնում են կառավարություններին հետևողականորեն ձեռնարկել բոլոր մակարդակների ընտրովի և նշանակվող պետական պաշտոններում և գործառույթներում կանանց թվի ավելացմանն ուղղված միջոցառումներ, հարկ եղած դեպքում դրական խտրականության սկզբունքով, բոլոր հանրային և պետական մարմիններում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածության հասնելու համար:¹⁴

Միջազգային կոնվենցիաների մասնակից պետությունները պատասխանատվություն են կրում մի շարք հաստատություններում այդ պարտավորությունների իրականացմանը հետամուտ լինելու համար: Ընտրական մարմինները պարտավոր են ապահովել իրենց գործողությունների և որոշումների համապատասխանությունը վերոնշյալ միջազգային պարտավորություններին, ինչը կարող է պահանջել հավելյալ ռեսուրսներ:

iv. ՄԱԿ-ի համակարգի գենդերային հավասարության և ընտրական գործընթացների աջակցության շրջանակները

Աջակցությունը համընդգրկուն քաղաքական գործընթացների ապահովման և կանանց քաղաքական մասնակցության խթանման ուղղությամբ անդամ պետությունների ազգային ջանքերին ՄԱԿ-ի համակարգի

ՄԱԿ-Կանայք կառույցի և ՄԱԿ-ի 2արգացման ծրագրի (ՄԱ2Ճ) գենդերային հավասարության ապահովման միջոցառումների ռազմավարական ծրագրեր:

2014-2017թթ. ՄԱԶԾ ռազմավարական ծրագիրով¹⁵ և Գենդերային հավասարության ռազմավարությամբ¹⁶ սահմանում է հստակ պահանջ կազմակերպության համար ապահովել գենդերային հավասարություն և ինտեգրել կանանց հզորացումը կազմակերպության աշխատանքի բոլոր հայեցակետերում, այդ թվում՝ ընտրական գործընթացների աջակցության ծրագրերում:

ՄԱԶԾ-ն աջակցում է պետության բոլոր ճյուղերում որոշումների կայացման գործընթացներում կանանց, այդ թվում՝ երիտասարդ կանանց և մարգինալացված խմբերի հավասար մասնակցության խթանման քարոզչությանը, քաղաքականության մշակմանը և օրենսդրական բարեփոխումներին՝ թիրախավորելով կանանց որպես ընտրողների և թեկնածուների ակտիվ մասնակցությունը պետական կառավարման մարմիններում, ընտրական մարմիններում, սահմանադրական հանձնաժողովներում, խորհրդարաններում, հանրային կառավարման մարմիններում և դատական համակարգում: ՄԱԶԾ տեխնիկական աջակցություն է ցուցաբերում ընտրական և կառավարման գործընթացներում գենդերային հավասարության և կանանց հզորացման խթանման մեխանիզմների ստեղծմանը և ամրացմանը, այդ թվում՝ ուղղակիորեն



© ՄԱԿ-ի նկար / Մարկո Դոմինո

աջակցելով գենդերային բաղադրիչի ներառմանը ընտրական մարմիններում, գենդերային հարցերը համակարգող բաժիններում, հանձնաժողովներում և կոմիտեներում, ինչպես նաև ներկուսակցական խմբավորումներում և ցանցերում:

ՄԱԿ-Կանայք կառույցի ռազմավարական ծրագիրն (2014-17թթ.) ուղղորդում է կառույցի աշխատանքը վեց հիմնական ոլորտներում, որոնցից մեկը որոշումների կայացման գործընթացներում կանանց մասնակցության և առաջնորդության խթանումն է: Փաստաթղթում սահմանված Արդյունք 1-ի մասով՝ «կանայք մասնակցում և առաջնորդում են իրենց կյանքերի վրա ազդեցություն ունեցող որոշումների կայացման գործընթացը», կառույցը հանձն է առնում իրականացնել գենդերային փորձաքննություն, կարողությունների գարգացում և աջակցել կանանց քաղաքական հզորացմանն ուղղված քաղաքականությունների մշակմանը, այդ թվում՝ տրամադրել խորհրդատվություն մի շարք այնպիսի հարցերում, ինչպիսիք են՝ ժամանակավոր հատուկ միջոցները (ԺՀՄ) և տարբեր շահառուների հետ իրականացվող աշխատանքների արդյունավետ կազմակերպումը: ՄԱԿ-Կանայք կառույցի գործունեությունն ուղղված է խթանելու կանանց առաջնորդությունը և քաղաքական մասնակցությունը, նախ և առաջ՝

- ներառելով գենդերային հավասարության հիմնահարցերը քաղաքական և ընտրական գործընթացներում,
- գարգացնելով կանանց՝ որպես ընտրողների և թեկնածուների կարողությունները,
- աջակցելով այն նախաձեռնություններին, որոնք միտված են պատգամավորական մանդատներում և ընտրովի պաշտոններում կանանց ներկայացվածության բարձացմանը՝ իրավական բարեփոխումների գործընթացի, ինչպես նաև օրենսդրական և ընտրական բարեփոխումների վերաբերյալ բանավեճերի վրա ազդելու նպատակով,
- աջակցելով կանանց՝ որպես ընտրական գործընթացի ակտիվ մասնակիցների ինքնակազմակերպման հարցում:

օրակարգային առաջնահերթություններից է (տե՛ս մեջբերումը): ՄԱԿ-ի կառույցները և անձնակազմը պարտավոր են հարգել և ապահովել ՄԱԿ-ի գենդերային հավասարության նորմատիվային շրջանակում ամրագրված իրավունքներն և չափանիշները:

1997 թվականի ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը (ECOSOC) ընդունել է «ՄԱԿ-ի համակարգի բոլոր քաղաքականություններում և ծրագրերում գենդերային բաղադրիչի ներառման» ռազմավարությունը՝ «բոլոր ոլորտներում և մակարդակներում նախատեսվող գործողությունների, այդ թվում՝ օրենսդրության, քաղաքականությունների կամ ծրագրերի՝ կանանց և տղամարդկանց վրա ազդեցության գնահատման միջոցով»: ՄԱԿ-ի համակարգի գենդերային հավասարության և կանանց հզորացման համընդհանուր քաղաքականությունը հաստատվել է 2012 թվականի ապրիլին ՄԱԿ-ի համակարգի գործադիր ղեկավարների համակարգող խորհրդի կողմից, որպես ՄԱԿ-ի համակարգի քաղաքականությունների և ծրագրերի շրջանակներում գենդերային հավասարության և կանանց հզորացման նպատակի խթանման և Տնտեսական և սոցիալական խորհրդի 1997/2 համաձայնեցված եզրակացությունների իրականացման միջոց:

ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցությունը կանոնակարգվում է քաղաքականության շրջանակային փաստաթղթով, որը մշակվում, հրատարակվում և տարածվում է ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության հարցերով պատասխանատու անձի և Քաղաքական գործերի վարչություն (ԲԳՎ) գլխավոր քարտուղարի տեղակալի կողմից: Այս շրջանակային փաստաթղթի հիմքում ընկած է մարդու իրավունքների և քաղաքական իրավունքների նորմատիվային շրջանակը: Քաղաքականության շրջանակային փաստաթուղթը հանդիսանում է նորմատիվային ուղեցույց ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցություն իրականացնող բոլոր կառույցների համար: Ընտրական գործընթացների աջակցության ոլորտում ՄԱԿ-ի համակարգն առաջնորդվում է վերջերս ընդունված հետևյալ քաղաքական ուղենիշերով և սկզբունքներով.

- *ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության սկզբունքների և տեսակների վերաբերյալ շրջաբերական (2012), որը ոչ միայն ընդգծում է «ավանդականորեն մարզինալացված խմբերի, մասնավորապես կանանց և փոքրամասնությունների մասնակցության և ներկայացվածության» կարևորությունը, այլև նշադրում է, որ ի լրումն այլ հայեցակետերի, աջակցությունը պետք է ներառի նաև «կոնկրետ ուղղվածությամբ ընտրական միջոցառումներ, ժամանակավոր հարուկ միջոցներ և երկարաժամկետ ծրագրեր»:*
- *ՄԱԿ-ի ընտրական կարիքների գնահատման ուղեցույցը (2012), որը ծառայում է որպես հիմք, որոշելու համար, արդյոք ՄԱԿ-ը պետք է տրամադրի ընտրական*

գործընթացների աջակցություն, և եթե այո, ապա ինչպես: Այս գնահատումները պետք է ներառեն վերլուծություններ և առաջարկություններ՝ ուղղված «ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության շրջանակներում իրականացվող բոլոր գործողություններում գենդերային բաղադրիչի ներառման ապահովմանը, ինչպես նաև կանանց մասնակցության և ներկայացվածության խթանման առաջնահերթացմանը» (օր.՝ առաջարկությունների հիմքում ընկած տեղեկաբազային հավաքագրում արուսագանակի միջոցով):

- Ընտրական համակարգի նախագծման և բարեփոխումների ՄԱԿ-ի աջակցության շրջաբերական (2013), որը սահմանում է ընտրական համակարգերի նախագծման և բարեփոխումների համար ՄԱԿ-ի քաղաքականությունը:
- ՄԱԿ-ի ընտրական աջակցության շրջանակներում ընտրական և քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության խթանման քաղաքականության շրջաբերական (2013), որում սահմանվում են ընտրական գործընթացների աջակցության ծրագրերում գենդերային բաղադրիչի ներառման հարակ ուղղվածություն և ելակետային միջոցառումներ (միջամերոսությունների շրջանակի համար տես Բաժին 2.1.5):¹⁵

Գենդերային բաղադրիչի ներառման ՄԱԿ-ի համակարգի համընդհանուր մանդատների շրջանակներում սույն ուղեցույցերն ու փաստաթղթերը սահմանում են ՄԱԿ-ի՝ ընտրական գործընթացների աջակցությամբ զբաղվող կառույցների պարտավորությունը ազգային շահառուների հետ համագործակցության միջոցով խթանել գենդերային հավասարությունը և կանանց հզորացումը:

v. Ընտրական գործընթացների աջակցության միջոցով գենդերային անհավասարության հաղթահարումը

Ընտրական գործընթացների աջակցության ծրագրերում գենդերային բաղադրիչի ներառումը խթանող քաղաքականություններն, ընդհանուր առմամբ, համեմատաբար նոր են: Այս համատեքստում 2014 թվականի ՄԱԶԾ Ընտրական գործընթացների աջակցության ծրագրերից քաղված դասերը ցույց են տվել, որ գենդերային հավասարության հիմնահարցերը դեռևս սիստեմատիկորեն ընգրկված չեն եղել ընտրական աջակցության բոլոր ծրագրերում: Այսինքն, կարիք կար էլ ավելի հետևողական լինելու այն հարցում, թե արդյոք ընտրական գործընթացների աջակցության ծրագրերը սիստեմատիկորեն խթանում են կանանց հզորացումը, և եթե այո, ապա ինչպես: Ավելին, ծրագրերի մեծ մասում ներառված չեն գենդերային հավասարությանը վերաբերող հստակ սահմանված արդյունքներ, թեև փաստացիորեն որոշակի արդյունքներ, այնուամենայնիվ, գրանցվում էին:

Կանանց հավասար քաղաքական մասնակցության

ապահմանը միտված աշխատանքների շրջանակներում հնարավոր է էլ ավելի ընդլայնել ՄԱԿ-ի ընտրական աջակցության քաղաքականությունների կիրառումը և գենդերային բաղադրիչի ներառման ռազմավարությունը: ՄԱԿ-ի երկրների գրասենյակների ընտրական գործընթացների աջակցության ծրագրերը որպես կանոն ներառում են ինչպես երկարաժամկետ ինստիտուցիոնալ զարգացման նախագծեր, այնպես էլ բուն ընտրական շրջանում իրականացվող միջոցառումներ: Շատ դեպքերում ՄԱԶԾ-ն հանդիսանում է ընտրական գործընթացների աջակցության առումով առանցքային միջազգային դերակատար, որը պատասխանատու է միջազգային դոնորների դրամական ֆոնդերի տնօրինման և միջազգային հանրության անունից հանդիպումների համակարգման համար: Այլ դեպքերում, ՄԱԿ-Կանայք կառույցն իրականացնում է ինքնուրույն կամ (ՄԱԶԾ-ի հետ) համատեղ ծրագրեր ազգային գործընկերների հետ, որոնց նպատակն է ընտրական գործընթացներում կանանց մասնակցության խթանումը: Գենդերային հավասարության հիմնահարցերը կարող են ներառվել ընտրական գործընթացների աջակցության ծրագրերում հետևյալ եղանակներով՝

- ցերով զբաղվող կազմակերպությունների հետ քննարկումների կազմակերպում՝ ընտրական գործընթացներում կանանց մասնակցության խթանման և գենդերային բաղադրիչի ներառման ուղղությամբ կոնկրետ առաջարկություններ հավաքագրելու նպատակով:
- Ծրագրի շրջանակներում գենդերային բաղադրիչի ներառման ուղղված և գենդերային թիրախավորմամբ միջոցառումների նախատեսում:

Թեկնածուներին, ընտրողներին և ընտրական մարմիններին թիրախավորող միջոցառումների շարք պարունակող երկարաժամկետ աջակցության ծրագրերի մշակում:

vi. Ծրջանակային փաստաթղթերի կիրառումը ընտրական մարմնի նկատմամբ

Գենդերային բաղադրիչի ներառումը և ընտրական գործընթացների աջակցությունը կանոնակարգող նորմատիվային շրջանակը և ՄԱԿ-ի համակարգի քաղաքականությունները սահմանում են գենդերային հավասարության խթանման ուղղությամբ ընտրական մարմինների հետ համագործակցության հստակ մանդատ: Միջամտության ոլորտները նախանշվում են ըստարական կարիքների գնահատման փուլում և ձևակերպվում ծրագրերի նախագծային փաստաթղթերում: Սույն ձեռնարկում կներկայացվեն այն հարցերը, որոնց միջոցով կարելի է սահմանել գենդերային հավասարության խթանման ուղղված միջոցառումների նախագծման և իրականաց-

ման շրջանակն ընտրական մարմինների համար:

Ելակետային տվյալներ. Երկրի գրասենյակի թիմը պետք է տեղեկանա, արդյո՞ք ընտրական մարմինների կողմից իրականացվել է գենդերային քարտեզագրում կամ գենդերային աուդիտ: Եթե ոչ, ապա վերոնշյալի իրականացումը խրախուսվում է միջամտության նախնական գնահատման կամ մենկարկային փուլերում: Ո՞ր ընտրական վիճակագրական տվյալներին են տարանջատվել ըստ սեռի, և որքան՞ով է նման տարանջատումը համապատասխանում ազգային վիճակագրության վերաբերյալ ավելի լայն քաղաքականությանը:

Գործողությունների ծրագիր. Ինչպիսի՞ն է ընտրական մարմնի կողմից կիրառվող գենդերային բաղադրիչի ներառմանն ու ընտրական գործընթացների հավասար հասանելիության ապահովմանն ուղղված գործողությունների ծրագիրը: Արդյո՞ք ընտրական մարմինն ունի աջակցության կարիք իր գործողությունների ծրագրի որոշ դրույթների կամ ամբողջ ծրագրի իրականացման հարցում: Ինչպիսի՞ն է այլ շահառուների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակական խմբերի, պետական գերատեսչությունների, խորհրդարանի, լրատվամիջոցների և կուսակցությունների դերը վերոնշյալ գործողությունների ծրագրի իրականացման հարցում:

Ընտրական մարմինների կառուցվածքը և կազմը. Ի՞նչ օրենքներով է կանոնակարգվում ընտրական մարմնի ձևավորումը: Ի՞նչ ճանապարհով է ձևավորվում մարմինը, և ինչպե՞ս է ձևավորման գործընթացում կիրառվում գենդերային հավասարության սկզբունքը: Արդյո՞ք ընտրական մարմինն աջակցության կարիք ունի մարդկային ռեսուրսների կառավարման գենդերային զգայուն քաղաքականության մշակման հարցում: Արդյո՞ք ընտրական ոլորտում կա գենդերային փորձագիտական կարողությունների պակաս, կամ ընտրական գործընթացներում գենդերային հիմնահարցերի վերաբերյալ իրազեկության պակաս դեկավարության և անձնակազմի շրջանում:

Ընտրական գործընթացների աջակցություն. Եթե ընտրական մարմինը դիմում է ընտրական գործընթացներում աջակցություն ստանալու համար (ինչպիսիք են՝ ընտրողների գրանցումը, ընտրողների տեղեկացումը և կրթումը), կա՞ արդյոք այդ աջակցության ծրագրի գենդերային գնահատման որևէ վկայություն: Արդյո՞ք միջամտությունը կնպաստի կանանց և տղամարդկանց համար ընտրական գործընթացների հավասար հասանելիությանը, թե՛ այն անհամաչափ ազդեցություն կունենա սեռերից մեկի վրա: Եթե աջակցությունն առնչվում է օրենքների վերանայման գործընթացներին կամ այլ վերանայումներին, ապա ինչպե՞ս ներառել գենդերային բաղադրիչը վերանայման գործընթացում: Ինչպիսի՞ն է աջակցության ծրագրի գենդերային մասով հասանելի

փորձագիտական ներուժը:

Խորհրդատուներ և խորհրդականներ. Եթե երկրի գրասենյակը խորհրդականների և խորհրդատուների թիմ է հավաքագրում ընտրական մարմնին աջակցելու համար, ինչպիսի՞ն է թիմի գենդերային կազմը: Արդյո՞ք այն հավաքագրված է գենդերային հավասարակշռության սկզբունքով, և ինչպիսի՞ դեր են դրանում կատարում կանայք: Եթե միջամտությունը շարունակվելու է մի քանի տարի, և թիմի անդամները փոխվելու են, ապա ինչպե՞ս է պահպանվելու գենդերային հավասարակշռությունը: Ինչպիսի՞ն է թիմում գենդերային հիմնահարցերի շուրջ իրազեկվածության և փորձառության մակարդակը:

Քաղաքականության շրջանակային փաստաթուղթ. Արդյո՞ք կա ընտրական գործընթացներում գենդերային բաղադրիչի ներառումը կարգավորող ազգային իրավական շրջանակ կամ քաղաքականություն: Արդյո՞ք կա իրավական դրույթների կամ կարգավորումների վերանայման անհրաժեշտություն: Որո՞նք են քաղաքականության գործնականում կիրառման բացերը:

Միջամտությունների բյուջեն և զեկուցումը. Կարո՞ղ է արդյոք ընտրական մարմնի բյուջեի որոշակի տոկոսային բաժինը հատկացվել գենդերային բաղադրիչի ներառման և հավասար հասանելիության խթանմանը: Հնարավոր է արդյոք իրականացնել ողջ բյուջեի տեղաբաշխումն ըստ սեռի: Ինչպե՞ս է ներկայացվելու վիճակագրությունը զեկուցում:

Այս հարցերի լրջորեն դիտարկումը ցանկացած հաստատությունում պահանջում է կամք, կարողություններ և ռեսուրսներ: Ի պատասխան վերոնշյալ հարցերի, ձեռնարկի հաջորդ երկու բաժիններում ներկայացված են աշխարհի տարբեր երկրների ընտրական մարմինների առաջավոր փորձի օրինակներ:



© ՄԱԿ-ի նկար / Մարտին Պերե



Մաս Ա:




Համընդգրկուն ընտրական մարմիններ

1	Գենդերային զգայուն ընտրական մարմիններ	21	5	Ընտրական մարմնում գեն- դերային զգայուն աշխատան- քային մշակույթի ստեղծումը	45
2	Ընտրական մարմինների գենդերային քարտեզագրում	23	6	Գենդերային հավասարության ապահովման կարողությունների գարգացումը վերապատրաստ- ման միջոցով	49
3	Գենդերային հավասարության հանձնառությունը	31	7	Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը	55
4	Գենդերային հավասարակշռու- թյունը ընտրական մարմնում. Խորհուրդ և աշխատակազմ	37			

Համընդգրկուն, գենդերային զգայուն ընտրական
մարմիններն ունեն համապատասխան կարողություններ
գենդերային հավասարության ապահովման նպատակով
գենդերային բաղադրիչի ներառման և գենդերային
թիրախավորմամբ ուզմավարությունների կիրառման
համար:

”



1 Գենդերային զգայուն ընտրական մարմիններ

Գենդերային անհավասարության դրսևորումները վերացնելու համար, հարկավոր է ուշադրություն դարձնել, թե ինչպես են դրանք կառուցվածքային մակարդակով ներգրավված սոցիալական, մշակութային և քաղաքական նորմերում և հաստատություններում: Գենդերային բաղադրիչի ներառման և գնահատման գործընթացը նպատակաուղղված է բացահայտելու և վերացնելու այդ կառուցվածքային անհավասարությունները: Գենդերային բաղադրիչի ներառումը ռազմավարություն է, որն ուսումնասիրում է հաստատության յուրաքանչյուր գործընթաց, յուրաքանչյուր կառույց և յուրաքանչյուր արդյունք՝ կանանց և տղամարդկանց վրա հնարավոր տարբեր ազդեցությունների տեսանկյունից: Գենդերային բաղադրիչի ներառումը դասում է գենդերային հավասարության ձեռքբերումը և խտրական պրակտիկաների վերացումը հաստատության աշխատանքի և նպատակների կենտրոնում, այն ոչ թե մարզինալացնում, այլ կանոնակարգում է գենդերային հավասարության ձեռքբերումը: Մինևույն ժամանակ հաստատությունները կարող են մշակել և կիրառել գենդերային ուղղվածության և գենդերային թիրախավորմամբ միջամտություններ կոնկրետ ոլորտներում առկա խնդիրների լուծման համար՝ ներառյալ դրական խտրականության կիրառումը: Այս երկկողմանի մոտեցումը հաստատությունները դարձնում է ավելի համընդգրկուն և գենդերային զգայուն:

Գենդերային զգայուն է այն ընտրական մարմինը, որը հաշվի է առնում կանանց և տղամարդկանց կարիքները և հետաքրքրությունները իր քաղաքականություններում, գործառնություններում, ենթակառուցվածքներում և աշխատանքում:¹⁶ Ըստ սահմանման, համընդգրկուն, գենդերային զգայուն ընտրական մարմիններն ունեն համապատասխան կարողություններ գենդերային հավասարության ապահովման նպատակով գենդերային բաղադրիչի ներառման և գենդերային թիրախավորմամբ ռազմավարությունների կիրառման համար: Այսպիսի ընտրական մարմիններն ունեն անհրաժեշտ մարդկային, ֆինանսական և կառուցվածքային ռեսուրսներ ընտրական շրջափուլի ողջ ընթացքում գենդերային հավասարության խթանումն ապահովելու համար: Մասնավորապես, գենդերային զգայուն ընտրական մարմինը պետք է դիտարկի՝

հավասարության՝ որպես ռազմավարական նպատակի խթանումը:


- Ընտրական գործընթացի բոլոր փուլերում և ընտրական մարմնի առօրյա աշխատանքում գենդերային

- Քարտեզագրման կամ գնահատման իրականացումը, որոշելու համար, թե որքանով են արդյունավետ գենդերային հավասարության խթանմանն ուղղված աշխատանքները, և որ ոլորտներում կա բարելավման կարիք:
- Առկա ռազմավարական ծրագրի փոփոխումը կամ նոր ռազմավարական ծրագրի մշակումը՝ գենդերային հավասարությունը խթանող միջոցառումների և դրանց արդյունքների ներգրավմամբ:
- Գենդերային բաղադրիչի ներգրավման համար ռեսուրսների տրամադրումը կամ ենթակառուցվածքների ստեղծումը, ինչպես օրինակ՝ գենդերային հարցերով հանձնաժողովի կամ գենդերային հարցերը համակարգող անձանց ցանցի ստեղծումը:

- Գենդերային հավասարությունը բոլոր, այդ թվում՝ ղեկավար և առաջնորդ պաշտոններում, ինչպես նաև ընտրական շրջանի ժամանակավոր աշխատակիցների գենդերային զգայունության բարձրացմանն ուղղված համատեղ ջանքերի գործադրումը:
- Կադրային հավաքագրման այնպիսի քաղաքականության կիրառումը, որն ապահովում է հավասար պայմաններ կանանց և տղամարդկանց համար, ինչպես նաև վարձատրությունների և փոխհատուցումների այնպիսի համակարգ, որը հնարավոր կդարձնի աշխատակիցների ընտանեկան և աշխատանքային պարտավորությունների միջև հավասարակշռությունը:
- Գենդերային հավասարության և գենդերային բաղադրիչի ներառման վերաբերյալ մասնագիտական

զարգացման միջոցառումների և վերապատրաստումների կազմակերպումը բոլոր աշխատակիցների համար և գենդերային բաղադրիչի ներառումը աշխատակիցների վերապատրաստման ծրագրերում:

- Սկսած ընտրողների գրանցումից վերջացրած մասնակցության ցուցանիշով՝ ողջ ընտրական շրջափուլի վիճակագրական տվյալների ըստ սեռի տարանջատման համար անհրաժեշտ համակարգերի և գործընթացների ներմուծումը:
- Մաս Ա-ում մանրամասնորեն նկարագրվում են այս տարրերից յուրաքանչյուրը և ներկայացվում են համապատասխան առաջավոր փորձի օրինակներ:



2 Ընտրական մարմինների գենդերային քարտեզագրում

Գենդերային հավասարության և կանանց մասնակցության խթանման նպատակով գնահատում իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել հաստատության բոլոր քաղաքականությունները, որոշումները և գործողությունները գենդերային բաղադրիչի ներառման տեսանկյունից: Ընտրական մարմնի համար գենդերային հավասարության գնահատումը պետք է ներառի բոլոր ներքին կազմակերպչական աշխատանքները ինչպես նաև ընտրությունների անցկացման բոլոր տարրերը:

«Հիմնականում, գենդերային բաղադրիչի գործնական ներառում նշանակում է աչքի անցկացնել հարցերի արուգացանկը՝ համոզվելու համար, որ ոչինչ բաց չի թողնվել, ինչպես նաև նշանակում է րալ ճիշտ հարցեր՝ ռեսուրսները ճիշտ բաշխելու համար: Գենդերային բաղադրիչի ներառումն անհրաժեշտ գործընթաց է թե՛ գենդերային հավասարության և թե՛ քաղաքականությամբ սահմանված այլ նպատակների առավել արդյունավետ և նպատակահարմար իրագործման համար:»⁷

2.1. Գենդերային գնահատում կամ քարտեզագրում

Գենդերային գնահատման կամ քարտեզագրման ընթացքում սրանք ամենահաճախ տրվող հարցերն են: Քարտեզագրման միջոցով հնարավոր է ուսումնասիրել

ընտրական գործընթացներում կանանց մասնակցության ներկա իրավիճակը, սակայն առավել համապարփակ պատկեր ստանալու համար հարկավոր է նաև հաշվի առնել գենդերային հավասարությունն ընտրական մարմիններում: Լավ մշակված քարտեզագրման միջոցով հնարավոր է ստանալ իրավիճակի համընդգրկուն վերլուծություն և հիմքեր ապահովել նախանշված թերացումների շտկման համար:

Ընտրական մարմինը կարող է սկսել քարտեզագրման աշխատանքը նախ և առաջ ուսումնասիրելով իր ներքին կառուցվածքը և պրակտիկաները: Շատ երկրներում, որտեղ հանրային հատվածի այլ հաստատություններում արդեն կա իրականացված գենդերային գնահատում, այն կարող է ծառայել որպես օրինակ և մոդել: Բացի

2010 թվականին Նեպալի ընտրական հանձնաժողովը ՄԱԶԾ և ԸՅՄՀ աջակցությամբ իրականացրել է «Ընտրական ոլորտի գենդերային քարտեզագրում»: Քարտեզագրման ընթացքում ուսումնասիրվել է իրավական և ինստիտուցիոնալ շրջանակն ընտրական գործընթացներում կանանց մասնակցության մարտահրավերների և Նեպալի ընտրական հանձնաժողովում կանանց ներգրավվածության տեսանկյունից: Հանձնաժողովը հանձն է առել պատրաստել քարտեզագրման գեկույց, որում տեղ են գտել քարտեզագրման արդյունքում ստացված եզրակացությունները և համապատասխան առաջարկությունները: Տեղեկատվության մի մասը հավաքագրվել է ընտրական գործընթացներում ներգրավված շահառուների լայն խմբերի հետ հարցազրույցների և ֆոկլոր խմբային քննարկումների արդյունքում: Ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են համապարփակ առաջարկներ, այդ թվում՝ Ընտրական հանձնաժողովի ներսում գենդերային հարցերը համակարգող անձանց նշանակումը և հանձնաժողովի աշխատակիցների կարողությունների զարգացման ծրագրերի իրականացումը: Իրականացված գենդերային քարտեզագրմանը հետևել է պատասխանատու անձի նշանակումը, իսկ 2013 թվականին՝ գենդերային քաղաքականության ընդունումը և քաղաքականության իրականացման համար գործողությունների ծրագրի մշակումը: 2014 թվականի սկզբին ստեղծվել է Գենդերային հարցերով զբաղվող վարչություն:



այդ, կարող է լինել կանանց և գենդերային հավասարությամբ զբաղվող պետական կառույց, որը նույնպես կարող է ուղղորդել: Կարևոր է օգտվել արդեն իսկ գոյություն ունեցող ցանկացած ազգային փորձաքննությունից, նույնիսկ եթե ընտրական մարմնի կառուցվածքը տարբերվում է մյուս պետական մարմինների կառուցվածքից:

Քարտեզագրման աշխատանքները կարող են նախագծվել որպես գենդերային բաղադրիչի ինտեգրման ավելի լայն գործընթացի փաստառաջագրված փուլ:

Սա արդյունքների ամփոփման գործընթաց է, որի շնորհիվ նախանշվում են առկա առաջավոր պրակտիկաները և գործընթացները, ինչպես նաև բացերը: Այն թույլ է տալիս ստանալ կազմակերպության կառուցվածի, ղեկավարման և գործառույթների գենդերային ազդեցությունների, ինչպես նաև ընտրական վարչարարության գենդերային ազդեցության ընդհանուր պատկերը: Ստացված եզրակացությունների հիման վրա իրականացված գնահատումը հնարավորություն է տալիս մշակել առաջարկություններ հետագա փոփոխությունների և իրավիճակի բարելավման համար:

Գենդերային քարտեզագրումը կամ գնահատումը կարող է իրականացվել մի շարք հարցազրույցների կամ ֆոկուս խմբային քննարկումների միջոցով: Հավելված Գ-ում ներկայացված է գենդերային քարտեզագրման նմուշային գործիք, որի համար հիմք են ծառայել Նեպալում, Մոլդովայում, Լիբիայում և Լիբանանում իրականացված գենդերային քարտեզագրումները, և որը կարող է օգտակար լինել վերոնշյալ քննարկումների կառուցվածքը սահմանելու հարցում: Բոլոր դեպքերում հնարավորինս համապարփակ տեղեկատվություն ստանալու համար հարկավոր է լսել տարբեր շահառուների, այդ թվում՝ նաև ընտրական մարմինների աշխատակիցների և ղեկավար անձնակազմի տեսակետները և գաղափարները: Կանանց շահերի պաշտպանության խմբերը և ՔՀԿ-ները, որոնց գործունեության նպատակը կանանց ընտրական մասնակցության խթանումն է, դիտորդները, գիտակրթական ոլորտի ներկայացուցիչները, լրատվամիջոցները կարող են ծառայել որպես օգտակար տեղեկատվություն և գաղափարների աղբյուր: Տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատակիցները նույնպես կարող են ունենալ դիտարկումներ ընտրական գործընթացում կանանց կողմից առերեսվող խնդիրների վերաբերյալ:

Բոլոր այս աղբյուրները տալիս են համապարփակ տեղեկատվություն, որը կարող է օգտագործվել ընտրական մարմնի կողմից գենդերային հավասարության խթանման ռազմավարություններ մշակելիս:

Գենդերային գնահատումների օրինակներ

- Աֆղանստանի** ընտրական մարմնի գենդերային հարցերով զբաղվող վարչությունն իրականացրել է «Քաղված դասեր» թեմայով ամենամյա աշխատաժողովներ մի շարք շահագրգիռ կողմերի ներգրավմամբ: Աշխատաժողովների արդյունքում կազմված զեկույցներն ընտրական մարմնին օգտագործել է որպես գործիք հետագա փոփոխությունների համար: Գործընթացում խիստ կարևորություն է տրվել տարբեր շրջանակների կարծիքների հավաքագրմանը, ինչպես նաև իրականացվող գործողությունների արդյունավետության պարբերական գնահատմանը:²
- Մոլդովա.** 2011 թվականին Մոլդովայի ԿԸՀ-ն իր ռազմավարական ծրագրում հանձն է առել ներառել գենդերային բաղադրիչն իր գործունեության բոլոր ոլորտներում: BRIDGE ծրագրի «Գենդերային հավասարության և ընտրությունների թեմայով» աշխատաժողովին մասնակցելուց հետո, նրանք ստեղծել են ռեֆերենս խումբ՝ Մոլդովայի ընտրական գործընթացներում գենդերային աուդիտ իրականացնելու համար: Ռեֆերենս խմբի կազմն ընդգրկել է հանձնաժողովի անդամների, ՄԱԶԾ գործընկերների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների: Աուդիտը տեղեկություն է տվել այն ոլորտների մասին, որոնցում առկա գենդերային հավասարության խնդիրները կարող են հասցեագրվել ԿԸՀ քաղաքականություններում և ընթացակարգերում, ինչպես նաև այն ոլորտների մասին, որոնցում գենդերային հավասարություն ապահովելու համար անհրաժեշտ են իրավական շրջանակի փոփոխություններ:
- Պակիստան՝** ՄԱԿ-Կանայք կառույցը և ՄԱԶԾ-ն աջակցել են Պակիստանի Ընտրական հանձնաժողովին, տրամադրելով տեխնիկական փորձագիտական խորհրդատվություն և ուղղորդում ընտրությունների կառավարման և վարչարարության ռազմավարական շրջանակներում և փաստաթղթերում գենդերային բաղադրիչի ինտեգրման հարցում: 2013 թվականին իրականացված հետընտրական

գնահատումը թույլ տվեց մշակել կոնկրետ առաջարկություններ՝ կին ընտրողների մարզի-նալացման տեսանկյունից ընտրական բողոքների և վեճերի կառավարման համա-կարգում օրենսդրական բարեփոխումներ կատարելու ուղղությամբ:³

- **Տանզանիա՝** 2010 թվականին անցկացվել են երկու համաժողովներ կանանց ասոցիացի-աների, կրոնական հաստատություններում կանանց խմբերի, Համայնքի զարգացման, գենդերային հավասարության և երեխաների հարցերով նախարարության, լրատվամիջոց-ների, գիտակրթական հաստատությունների և զարգացման ոլորտի գործընկերների ներկայա-ցուցիչների մասնակցությամբ: Համաժողովների նպատակն էր նախանշել առկա խնդիրները և առաջարկել փոփոխություններ՝ ընտրու-թյուններում կանանց՝ որպես թեկնածուների, ընտրողների և տեղամասային աշխատակից-ների մասնակցությունը խթանելու համար:⁴ 2011 թվականի ընտրություններից հետո ՄԱԶԾ-ն աջակցել է ընտրական հանձնաժողովին քաղված դասեր թեմայով միջոցառումներ իրա-կանացնելու հարցում՝ մեկնարկելով չորս խոշոր ուսումնասիրություններ, որոնց նպատակն էր օբյեկտիվորեն բացատրել ցածր մասնակ-ցության, ընտրողների գրանցման ցածր ցուցանիշների և կանանց մասնակցության ցածր ցուցանիշների պատճառները:

2.2. Գենդերային բաղադրիչի ներառումը հե-տընտրական գնահատումներում

Բացի գենդերային քարտեզագրումից, գենդերային հավասարությունը պետք է ներառվի նաև մյուս բոլոր գնահատման աշխատանքներում: Ընտրական մար-մինների մեծ մասն իրականացնում են հետընտրական գնահատումներ, և ցանկալի է, որ այդ գնահատումե-րը ներառեն գենդերային բաղադրիչ: Մասնավորապես, քանի որ նման գնահատումները հաճախ շեշտադրում են առաջավոր փորձը և ընտրական ընթացակարգերի անհրաժեշտ բարեփոխումները, կարելի է ուսումնասի-րել նաև ցանկացած փոփոխության ազդեցությունը կին ընտրողների և ընտրական մարմիններում ներգրավ-ված կին աշխատակիցների վրա: Ընտրական մարմին-ների կողմից ներկայացվող ամենամյա ինստիտուցիո-նալ զեկույցը նաև հնարավորություն է տալիս վերլուծել կազմակերպական արդյունքները գենդերային տեսան-կյունից, ինչպես նաև ներկայացնել բոլոր վիճակագրա-կան տվյալները՝ տարանջատված ըստ սեռի (տես Բա-ժին 6-ը):

Ընտրական մարմինները կարող են իրենց հետընտրա-կան զեկույցներում և գնահատումներում նաև սահմա-նել կամ չափել կանանց մասնակցության խնդիրները՝ կատարելով համեմատություն ելակետային տվյալների հետ: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատ-վածը կարող է օգտագործվել ընտրական մարմինների գործունեությունը և ռազմավարությունները վերլուծելու և առավել արդյունավետ մոտեցումներ մշակելու հա-մար: Ընտրությունների միջև ընկած համեմատաբար հանգիստ ժամանակահատվածը հնարավորություն է տալիս վերանայել ներքին քաղաքականությունները, առաջարկել գենդերային հիմնահարցերին անդրադար-ձող թեմատիկ վերապատրաստումներ, ինչպես նաև ապահովել վերապատրաստման հավասար հնարա-վարություններ կին և տղամարդ աշխատակիցների հա-մար: Միջազգային և տեղական դիտորդների գենդե-րային վերլուծություն պարունակող զեկույցները կարող են ծառայել որպես տեղեկատվության կարևոր աղբյուր: Ստորև ներկայացված են ընտրական մարմինների՝ հե-տընտրական շրջանում և ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառում-ների որոշ օրինակներ՝

- **Բոսնիա և Հերցեգովինա.** Յուրաքանչյուր ըն-տրությունից հետո իրականացվում է հետընտրական վերլուծություն գենդերային բաղադրիչի ներառմամբ: Վերլուծությունը ներառում է կին թեկնածուների քանակի, ընտրված անդամների և ընտրություննե-րին մասնակցության վերաբերյալ վիճակագրական տվյալներ:¹⁸



© Գաբրիել Բարդալ

- **Կանադա.** Հետընտրական տարբեր գեկույցներում անդրադարձ է կատարվում գենդերային հավասարության խնդիրներին, այդ թվում՝ մասնակցության ցուցանիշներին, քվեարկությանը չմասնակցելու պատճառներին և որպես թեկնածու կանանց պատիվ մասնակցությանը:¹⁹
- **Հարավային Աֆրիկա.** Քվեարկության օրն անցկացվում են հարցումներ, պարզելու համար, թե որքանով են շահառուները գոհ ընտրության ընթացքից: Այս հարցումների նպատակն է ուսումնասիրել հատուկ խմբերի, այդ թվում՝ կանայք, երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունն ընտրական և քաղաքական գործընթացներում: Քանակական տվյալներն ամրագրվում են ֆոկուս խմբային քննարկումների արդյունքներում ստացված որակական տվյալներով: Այս ֆոկուս խմբերը մասնավորապես թիրախավորում են կանանց:²⁰

Քարտեզագրման կամ հետընտրական գնահատման արդյունքում ընտրական մարմինները և նրանց շահառուներն ու գործընկերները կարող են ավելի լավ պատկերացում կազմել առաջնահերթ գործողությունների ոլորտների մասին: Որպես կանոն, գենդերային քարտեզագրման արդյունավետությունը բարձրացնելու համար այն բաժանում են երկու մասի՝ ընտարական մարմինների ներսում գենդերային հավասարության տեսանկյունից ուշադրություն պահանջող ոլորտներ և երկրի ընտրական գործընթացներում գենդերային հավասարության տեսանկյունից ուշադրություն պահանջող ոլորտներ:

չող ոլորտներ:

2.3. Գենդերային հավասարության գործողությունների ծրագիր

Գենդերային քարտեզագրումից հետո, ընտրական մարմինները պետք է դիտարկեն գործողությունների ծրագրի մշակումը: Ինչպես բոլոր գործողությունների ծրագրերը, այս ծրագիրը նույնպես պետք է նախանշի կոնկրետ մարտահրավերներ, սահմանի հնարավոր գործողությունների ոլորտները, համապատասխան կատարողներին, առկա ռեսուրսները և ժամանակացույցը: Այս առումով, հնարավոր է, որ ընտրական մարմինը մեկ շրջափուլում չկարողանա հասցեագրել գործողությունների ծրագրում նախանշված բոլոր խնդիրները: Նման դեպքերում հարկավոր է հստակ սահմանել ծրագրի առաջնահերթ կետերը և վերադառնալ պակաս առաջնահերթ կետերին ընտրություններից հետո: Գործողությունների ծրագիրը կարող է ներառել նաև մշտադիտարկման մեխանիզմ: Աղյուսակ 2-ում ներկայացված են որոշակի նմուշային գործողություններ և թիրախներ, որոնք կարող են ընգրկվել Գործողությունների ծրագրում գենդերային անհավասարության դրսևորումները հասցեագրելու համար:

2.4. Իրավական կարգավորումների վերանայում հետընտրական շրջանում

Գենդերային հավասարության տեսանկյունից ընտրական գործընթացի համապարփակ ուսումնասիրության

Աղյուսակ 1: Ընտրական մարմնում գենդերային քարտեզագրման հնարավոր արդյունքներ

Ընտրական մարմնում գենդերային հավասարության նմուշային ցուցիչներ	Ընտրական գործընթացներում գենդերային հավասարության նմուշային ցուցիչներ
Կառավարման մարմնում, խորհրդում կամ հանձնաժողովում ներգրավված կանանց թիվը	Ընտրողների գրանցման ցուցանիշները չեն արտացոլում բնակչության կազմը:
Դեկավար պաշտոններում և առիտասարակ աշխատակազմում կանանց և տղամարդկանց թվային հարաբերակցությունը	Մասնակցության վիճակագրությունը ըստ սեռի տարանջատված է:
Վերապատրաստումների (ներառյալ ուսումնական այցերի և գործուղումների) մասնակցող կանանց և տղամարդկանց թվային հարաբերակցությունը	Ընտրողների գրանցում իրականացնող պաշտոնյաների շարքում կին և տղամարդ աշխատակիցների հարաբերակցությունը չի արտացոլում բնակչության կազմը:
Հավասար հնարավորությունների կամ գենդերային հավասարության պաշտոնական քաղաքականության բացակայություն	Քվեարկության ընթացակարգերը և կազմակերպումը գենդերային զգայուն չեն:
Ընտրական մարմինների գրասենյակներում հարմարությունների (սանհանգույցների, ընտանեկան սենյակների, աղոթասենյակների) բացակայություն	Հափումները ցույց են տալիս, որ մեկ սեռի թեկնածուների նկատմամբ ընտրական բռնության ցուցանիշները շարունակ բարձր են:
Բոլոր մակարդակներում ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների բացակայություն	Ընտրողների կրթման նյութերը գենդերային զգայուն չեն

Աղյուսակ2: Գենդերային հավասարության գործողության ծրագրի նմուշային ցուցիչներ⁷⁸

Քարտեզագրմամբ նախանշված անհավասարություն	Ձեռնարկվելիք քայլեր	Փոփոխությունների հասնելու համար թիրախային միջոցներ	Պատասխանատու անձինք
Գենդերային անհավասարակշռություն աշխատակազմի բոլոր մակարդակներում	<ul style="list-style-type: none"> ● Ավելացնել կանանց թիվը միջին և բարձր ղեկավար օղակներում ● Սահմանել, արդյո՞ք կա օրենսդրական բարեփոխումների կարիք 	<ul style="list-style-type: none"> ● Սահմանել միջին և բարձր ղեկավար օղակներում կանանց կողմից զբաղեցվող պաշտոնների թիրախային հարաբերակցություն (օրինակ՝ գենդերային հավասարակշռություն առաջիկա հինգ տարիների ընթացքում) ● Միջին օղակի կին աշխատակիցների համար կազմակերպել կառավարման և առաջնորդության դասընթացներ որոշակի սահմանված ժամանակահատվածում: ● Ընտրական մարմնի ներսում ստեղծել թիրախային գործընթացի մշտադիտարկում իրականացնող խումբ: 	<ul style="list-style-type: none"> ● Ընտրական մարմինների ղեկավար անձնակազմ ● Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին ● Դասընթացների և վերապատրաստումների բաժին և/կամ հանրային ծառայության նախարարություն կամ համարժեք մարմին
Հավասար հնարավորությունների ապահովման, խտրականության և սեռական հետապնդումների կանխարգելմանն ուղղված պաշտոնական քաղաքականության բացակայություն:	<ul style="list-style-type: none"> ● Մշակել հավասար հնարավորությունների ապահովման, խտրականության կամ սեռական հետապնդումների կանխարգելմանն ուղղված քաղաքականություններ: 	<ul style="list-style-type: none"> ● Վերանայել բոլոր գոյություն ունեցող քաղաքականությունները և ընթացակարգերը գենդերային հավասարության տեսանկյունից: ● Աշխատակիցների շրջանում իրականացնել հարցումներ աշխատակիցների հավաքագրման գործընթացի և աշխատավայրում իրենց փորձի վերաբերյալ: ● Ընդունել նոր քաղաքականություն կամ վերանայել գոյություն ունեցող քաղաքականությունները: 	<ul style="list-style-type: none"> ● Ընտրական մարմինների ղեկավար անձնակազմ ● Մարդկային ռեսուրսների կառավարման բաժին ● Գենդերային հարցերով պատասխանատու անձինք ● Հարցմանը մասնակցած աշխատակիցներ
Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների պակաս	<ul style="list-style-type: none"> ● Ապահովել ընտրական մարմինների կողմից ընտրողների մասնակցության տվյալների հավաքագրումը և տարանջատումն ըստ սեռի: 	<ul style="list-style-type: none"> ● Վերանայել գործող օրենքները և իրավական կարգավորումները և փոփոխություններ մտցնել բոլոր այն դրույթներում, որոնք կարող են խոչընդոտել ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրմանը: ● Վերանայել տվյալների հավաքագրման բոլոր մեթոդները և օրինակելի ձևերը: Անհրաժեշտության դեպքում ավելացնել «սեռը» որպես տվյալի դաշտ, ընտրողների գրանցմանը և մասնակցությանը վերաբերող տվյալների էլեկտրոնային շտեմարանում: ● Ապահովել ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրմանը վերաբերող ցուցումների ներառումը տեղամասային կենտրոնների աշխատակիցների համար նախատեսված ուղեցույցերում և հրահանգավորումներում: 	<ul style="list-style-type: none"> ● Ընտրական մարմինների ղեկավար անձնակազմ ● Խորհրդարան ● Ընտրական գործառնության բաժին ● Դասընթացների և վերապատրաստումների բաժին ● Ընտրողների իրազեկման բաժին

համար անհրաժեշտ է նաև համապատասխան օրենքների և կանոնակարգերի գեներային քարտեզագրում: Եթե օրենքում կան կանանց մասնակցությունը խոչընդոտող դրույթներ, ապա միակ հնարավոր միջոցը օրենքի փոփոխությունն է: Այս առումով հատկանշական է Աֆղանստանի օրինակը:

Աֆղանստանի Անկախ ընտրական հանձնաժողովի հետընտրական ուսումնասիրությունը նախանշել է առնվազն երեք օրենսդրական կարգավորման փոփոխության անհրաժեշտություն կանանց մասնակցությունը խթանելու համար: Առաջարկվում էր՝ խստացնել գեներային քվոտան ապահովող դրույթները, վերանայել կարգավորումը, համաձայն որի հանրային ծառայություն իրականացնող անձինք պետք է հրաժարվեն իրենց ծառայությունից որպեսզի կարողանան առաջադրել իրենց թեկնածությունը և թույլ տալ կին ընտրողներին միջազգային դոնորներից ընդունել ոչ դրամական օգնություն՝ իրենց նախընտրական քարոզարշավը կազմակերպելու նպատակով:²¹



ԱՄՓՈՓՈՒՄ:

- Գեներային գնահատումը կամ քարտեզագրումը կարող է արդյունավետ մեկնարկային քայլ լինել ընտրական մարմնի գեներային ընգրկունությունը գնահատելու գործընթացում:
- Գնահատմանը կամ քարտեզագրմանը կարող են մասնակցել ինչպես ընտրական մարմինների աշխատակիցները և ղեկավար անձնակազմը, այնպես էլ ընտրական մարմինների հետ առնչվող այլ շահառուներ, ինչպիսիք են՝ կուսակցությունները, անկախ թեկնածուները, պատգամավորները, լրատվամիջոցների ներկայացուցիչները, գեներային հավասարության ջատագովները և գիտակրթական ոլորտի մասնագետները:
- Գեներային քարտեզագրման արդյունքները կարող են արտացոլել ընտրական մարմնի կազմակերպական կառուցվածքը և մշակույթը, ինչպես նաև ընտրությունների վարչարարության և կազմակերպման ուղղությամբ ընտրական մարմնի կողմից ձեռնարկվող գործողությունները:
- Ցանկալի է, որպեսզի գնահատման արդյունքում մշակվի գործողությունների ծրագիր, որում սահմանված կլինեն առանցքային թիրախները և դրանց իրականացման ժամանակացույցը:

Խորհրդարանների դերն ընտրական գործընթացների վերանայման հարցում


Խորհրդարանականները ընտրական գործընթացի առաջնային շահառուներն են և կարող են նշանակալի ժամանակ և ռեսուրսներ ներդնել ընտրությունների վարչարարության կամ ընտրական գործընթացի կոնկրետ հայեցակետերի վերանայման համար: Որոշ խորհրդարաններում վերոնշյալ վերանայումն իրականացնելու համար նշանակվում է հատուկ հանձնաժողով: **Ավստրալիայում** գործում է Ընտրությունների հարցերով մշտական համատեղ հանձնաժողով (ԸՀՄՀՀ), որն իրականացնում է բոլոր դաշնային ընտրությունների արդյունքների վերլուծություն՝ հաշվի առնելով բոլոր շահառուների նկատառումները: Ավստրալիայի ընտրական հանձնաժողովը ԸՀՄՀՀ-ին ներկայացնում է մանրամասն գեկույց, որը ներառում է նաև օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկներ: Ինչպես նաև Ընտրական հանձնաժողովի անդամները մասնակցում են ԸՀՄՀՀ նիստերին առնվազն երկու անգամ՝ փաստաթղթի դիտարկման սկզբում և վերջում՝ այլ շահառուների կողմից ԸՀՄՀՀ-ին ներկայացված դիտարկումներին պատասխանելու համար: Նմանատիպ խորհրդարանային վերլուծությունների իրականացման պրակտիկա է կիրառվում նաև **Նոր Զելանդիայում** (Արդարադատության և ընտրական հանձնաժողովի կողմից), **Կանադայում** (Իրավական

և սահմանադրական հարցերով հանձնաժողովի կողմից) և **Իրաքում** (Ներկայացուցիչների խորհրդի իրավաբանական հանձնաժողովի կողմից): Թեև այսպիսի մասնագիտացված խորհրդարանական հանձնաժողովների գործունեությունը կարող է կիրառելի չլինել բոլոր համատեքստերում, այս մարմինները կարող են իրականացնել վերահսկողության կարևոր գործառույթ:

Այս գործընթացը ևս մեկ անգամ մատնանշում է բոլոր խորհրդարանական հանձնաժողովներում կին պատգամավորների ներգրավվածության կարևորությունը, այդ թվում՝ ընտրական գործընթացների վերլուծությանը և վերանայմամբ զբաղվող հանձնաժողովներում: Կին պատգամավորները կարող են մասնակցել նման փաստաթղթերի դիտարկմանը և բարձրացնել հարցեր, որոնք կարող են ազդեցություն ունենալ ինչպես իրենց, այնպես էլ ընտրություններին մասնակցող այլ կին թեկնածուների վրա: Վերոնշյալ փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Խորհրդարանական հանձնաժողովը բազմաթիվ առաջարկներ է ներկայացնում գործող կառավարությանը: 2010 թվականի դաշնային ընտրություններից հետո Ավստրալիայի ԸՀՄՀՀ-ն կառավարությանը ներկայացրել է 37 առաջարկություն: Թեև առաջարկությունները պարտադիր կերպով զենդերային զգայուն չէին, այնուամենայնիվ դրանցից 35-ը վերաբերում էին ընտրական օրենսդրության տարբեր բաժինների վերանայմանը կամ չեղարկմանը:²²

Գենդերային քարտեզագրման արդյունքները կարող են արտացոլել ընտրական մարմնի կազմակերպական կառուցվածքը և մշակույթը, ինչպես նաև ընտրությունների վարչարարության և կազմակերպման ուղղությամբ գործողությունների իրականացման համար:

”



3 Գենդերային հավասարության հանձնառությունը

Ընտրական մարմնի ներսում գենդերային անհավասարության հասցեագրումը պետք է սկսել պլանավորման ամենաբարձր մակարդակից՝ դարձնելով գենդերային հավասարության ապահովումը հաստատության տեսլականի և առաքելության մի մաս:

Գենդերային հիմնահարցերի ինտեգրումը հաստատության բոլոր ռազմավարական և գործողությունների ծրագրերում ապահովում է տեսլականում ամրագրված սկզբունքների գործնական կիրառումը հաստատության աշխատանքներում: Հատուկ գենդերային քաղաքականության մշակումը գենդերային հիմնահարցերի ուղղությամբ իրականացվող միջոցառումները նախանշելու ամենաարդյունավետ միջոցն է: Իսկ գենդերային բաղադրիչի ինտեգրումը ռազմավարական ծրագրերում և մյուս քաղաքականություններում լավագույն միջոցն է հաստատության գործունեության բոլոր ոլորտներում գենդերային հավասարությունը խթանելու և յուրաքանչյուր աշխատակցի գործունեության բաղկացուցիչ մասը դարձնելու համար:

3.1. Քաղաքականություններ, ծրագրեր և առաքելություն

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 8-ը (23%-ը) նշել են, որ իրենց ռազմավարական/գործողությունների ծրագրերում ներառված են գենդերային ուղղվածությամբ նպատակներ և թիրախներ: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Կանադան, Կոստա Ռիկան, Եթովպիան, Ղազախստանը, Ղրղզստանը, Հարավաֆրիկյան Հանրապետությունը և Տանզանիան:

Ուղղորդող սկզբունքներում և արժեքներում գենդերային հավասարության ներառման օրինակներ

● **Աֆղանստան.** Ընտրական վարչարարության ուղղորդող սկզբունքներն են չեզոքությունը և

անկողմնակալությունը, թափանցիկությունը, մասնագիտական պատրաստվածությունը, պատասխանատվությունը և հաշվետվողականությունը:²³ Վերոնշյալ սկզբունքներից յուրաքանչյուրում անդրադարձ է արվում ընտրական գործընթացներում որպես ընտրողներ, թեկնածուներ և ընտրական մարմինների աշխատակիցներ մասնակցող կանանց կարիքներին: 2006-2009թթ. ռազմավարական ծրագրում նշվում է, որ «հարկավոր է գործադրել հատուկ ջանքեր կանանց և հաշմանդամություն ունեցող անձանց ներգրավվածությունը խթանելու ուղղությամբ»: Նախանշված նպատակներից մեկ է՝ «առաջիկա տարիների ընթացքում Ընտրական հանձնաժողովը պետք է ջանքեր գործադրի ընտրական գործընթացներում կանանց մասնակցության դյուրացման և խթանման, ինչպես նաև ընտրական գործընթացներում որպես թեկնածուներ, ընտրողներ և ընտրական մարմինների աշխատակիցներ մասնակցող կանանց կողմից առերեսվող խնդիրների հասցեագրման ուղղությամբ»:²⁴

● **Կոստա Ռիկաի** Գերագույն ընտրական դատարանն ունի Գենդերային հավասարության ներքին քաղաքականություն, իսկ գործողությունների ծրագիրը հանդիսանում է հաստատության տարեկան աշխատանքային ծրագրի մի մասը, որը ներառում է կոնկրետ պարտականությունների սահմանում և ներքին քաղաքականության և գործողությունների ծրագրի իրագործման նպատակով ռեսուրսների բաշխում: Վերոնշյալ ընտրական մարմինը ստանձնել է նաև Գենդերային հավասարության ազգային քաղաքականության գործողությունների ծրագրերում սահմանված որոշակի պարտավորություններ:²⁵

- **Նեպալ.** Նեպալի ընտրական հանձնաժողովն իր 2008-2013թթ. ռազմավարական ծրագրում ներառել է գենդերային հավասարության և սոցիալական ներառականության սկզբունքները: Հաջորդ՝ 2015-2019թթ. ռազմավարական ծրագրում նույնպես ներառված են գենդերային հավասարության և սոցիալական ներառականության խթանմանը վերաբերող որոշակի սկզբունքներ, նպատակներ և միջոցառումներ:
- **Պակիստան.** Պակիստանի ընտրական հանձնաժողովն իր 2010-2014թթ. հնգամյա ռազմավարական ծրագրում ընդգծել է գենդերային քաղաքիչի ներառման անհրաժեշտությունը՝ «Պակիստանի ընտրական հանձնաժողովը ձգտելու է իր շարքերում գենդերային հավասարություն հաստատել՝ կանանց համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ ստեղծելով»: Ռազմավարական ծրագրում նաև սահմանվում է, «Ընդունել օրենքներ և խստորեն հետամուտ լինել դրանց կիրառմանը, որպեսզի մարզինալացված խմբերը, այդ թվում՝ կանայք, փոքրամասնությունները և հաշմանդամություն ունեցող անձինք ունենան ընտրական և քաղաքական գործընթացներին մասնակցելու հնարավորություն»:²⁶
- **Միերա Լեոն.** Ռազմավարական ծրագրում ամրագրված են աշխատակազմում գենդերային հավասարակշռությանը վերաբերող կոնկրետ նպատակներ: Մարդկային ռեսուրսների վերաբերյալ բաժնում նշվում է, որ «առկա մարդկային ռեսուրսների կարողությունները պետք է ընդլայնվեն տարբեր ճանապարհներով, հատուկ ուշադրություն դարձնելով կանանց ներգրավվածությանը»:
- Ծրագրում ամրագրված մեկ այլ նպատակում ասվում է «տեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատակիցների հավաքագրումը և վերապատրաստումը պետք է իրականացվի հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և հաշմանդամների ներգրավմանը»:²⁷
- **Հարավաֆրիկյան հանրապետություն.** Ռազմավարական ծրագրում ներառված կազմակերպական արժեքներից է «ռասսայական, մշակութային, լեզվական, կրոնական և գենդերային պատկանելության, ինչպես նաև հաշմանդամության հանդեպ զգայունությունը», ինչը ենթադրում է «հաշվի առնել փորձի և կարողությունների բազմազանությունը» և «այլոց հանդեպ հարգանք և հոգատարություն ցուցաբերել»:²⁸ Հանձնաժողովը փորձում է հետամուտ լինել Սահմանադրության (Իրավունքների օրինագծի) Գլուխ 2-ի կիրառմանը՝ ապահովելով ընտրողների հանդեպ հավասար վերաբերմունք անկախ սեռից, հաշմանդամությունից, ռասսայական կամ

էթնիկ պատկանելությունից, լեզվական, կրոնական պատկանելությունից, գյուղաբնակ/քաղաքաբնակ բաժանումից: Հանձնաժողովը համագործակցում է այլ սահմանադրական հաստատությունների, այդ թվում՝ Գենդերային հավասարության հանձնաժողովի (ԳՀՀ) հետ: ԳՀՀ-ն իրականացնում է ընտրությունների դիտարկում՝ գնահատելու համար, թե որքանով է ընտրական գործընթացներում խթանվում գենդերային հավասարությունը:

3.2. Գենդերային քաղաքականություն

Ցանկացած հաստատության ներսում գենդերային քաղաքականության ապահովումը պահանջում է քաղաքական կամք: Այդ կամքի ուղղակի դրսևորումը գենդերային քաղաքականությունն է: Գենդերային քաղաքականությունը հստակորեն սահմանում է գենդերային հավասարության տեղը ընտրական մարմնի աշխատանքային պրակտիկաներում, գործընթացներում և աշխատանքի արդյունքներում: Գենդերային քաղաքականությունը կարող է ուղեկցվել գործողությունների ծրագրով, որը հնարավոր կդարձնի բոլոր առաջնային ոլորներում գենդերային հավասարության ապահովումը, մշտադիտարկումը և գնահատումը:

Գենդերային քաղաքականությունը չպետք է շփոթվի սահմանադրական որևէ ընդհանուր դրույթի, այդ թվում՝ օրենքի առջև կանանց և տղամարդկանց հավասարության մասին դրույթի հետ, ինչպես նաև ազգային գենդերային քաղաքականության հետ, որը պետական մարմինների համար մշակվում է կանանց հարցերով զբաղվող ազգային մեխանիզմի կողմից: Այս համատեքստում սա այն քաղաքականությունն է, որը մշակվում է հատուկ ընտրական մարմնի համար, և որին վերջինս հետևում է որպես ռազմավարական ուղղություն: Այն կարող է սկսել գենդերային իրավիճակի գնահատման մեջ նախանշված անհավասարության ոլորտներից (տե՛ս Աղյուսակ 1-ի վերևում), ապա սահմանել այդ անհավասարությունները հասցեագրող ընդհանուր գործողություններ, այնուհետև նախանշել կոնկրետ թիրախներ՝ փոփոխության առաջընթացը մշտադիտարկելու համար: Ստորև որպես օրինակ ներկայացված է Նեպալի Գենդերային հավասարության և համընդգրկունության քաղաքականությունը:

3.3. Գենդերային քաղաքիչի ներառման ինստիտուցիոնալացում. Գենդերային հարցերը համակարգող անձինք, միավորներ և հանձնաժողովներ

Գենդերային քաղաքիչի ներառման և կանանց հզո-

Նեպալի Ընտրական հանձնաժողով: Գենդերային հավասարության և համընդգրկունության քաղաքականություն, 2013 թվական

Նեպալի Ընտրական հանձնաժողովը նախանշել է գենդերային հավասարության և համընդգրկունության սկզբունքների տեսանկյունից արդար, անկողմնակալ, թափանցիկ և վստահելի ընտրությունների անցկացման մի շարք մարտահրավերներ: Այս համատեքստում հարկավոր է՝

- (1) Ընդունել գենդերային զգայուն և համընդգրկուն ընտրությունների վերաբերյալ քաղաքականություններ և օրենքներ:
- (2) Ապահովել գենդերային հավասարության և համընդգրկունության վերաբերյալ դրույթների կիրառումն ընտրական գործընթացներում:
- (3) Իրականացնել հանրության իրազեկում գենդերային հիմնահարցերի վերաբերյալ, տեղեկացնել թիրախային խմբերին գենդերային հավասարության և համընդգրկունության հիմնահարցերի մասին:
- (4) Մոբիլիզացնել անհրաժեշտ ռեսուրսները՝ ընտրական գործընթացներում գենդերային հավասարությանը և համընդգրկունությանը վերաբերող քաղաքականություններով և օրենքներով սահմանված ծառայությունները և կարողություններն ապահովելու համար:

Նեպալի Ընտրական հանձնաժողովի կողմից գենդերային քաղաքականության մշակման հիմք են հանդիսացել 2007 թվականին ընդունված Նեպալի միջանկյալ սահմանադրությամբ ամրագրված գենդերային հավասարության և համընդգրկունության սկզբունքները և ազգային, տարածաշրջանային և միջազգային համաձայնագրերի շրջանակներում Նեպալի կողմից ստանձնած պարտավորությունները:

Նեպալի ընտրական հանձնաժողովը ձգտում է հասցեագրել գենդերային հավասարության և համընդգրկունության հիմնահարցերը, որոնց առերեսվում են կանայք, դալիթները, ճնշված կաստաները/էթնիկ խմբերը,

ճնշված համայնքները/դասակարգերը/շրջանները, մադհեզիները և այլ փոքրամասնություններ:

Սույն քաղաքականության նպատակն է ապահովել բոլոր քաղաքացիների մասնակցությունը ժողովրդավարական ընտրություններին, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ձևակերպել գենդերային հավասարության և համընդգրկունության սկզբունքներն այս քաղաքականության մեջ՝ կառուցվածքային և իրավական դրույթների հիման վրա, և հետամուտ լինել դրանց իրականացմանը: Այս համատեքստում այս նոր քաղաքականությունը կոչված է կոնսուլիդացնելու պետության կողմից որդեգրված ժողովրդավարացման գործընթացը՝ ընտրական գործընթացի յուրաքանչյուր փուլում ապահովելով բոլոր համայնքների, դասերի և շրջանների գենդերային հավասարության և ներգրավվածության տեսանկյունից ճշված կանանց, տղամարդկանց, երրորդ սեռի ներկայացուցիչների, դալիթների, ճնշված, մարգինալացված և բացառված քաղաքացիների մասնակցությունը:

Քաղաքականության հիմքում ընկած են հետևյալ տեսլականը և նպատակները՝

Տեսլական

Սահմանադրական դրույթների համաձայն՝ ընտրությունների միջոցով ապահովել քաղաքացիների համամասն և համընդգրկուն ներկայացվածությունը բոլոր պետական կառույցներում, ինչպես նաև ձևավորել գենդերային հավասարության և համընդգրկունության տեսանկյունից գենդերային զգայուն ընտրական մարմին, որը կանցկացնի արդար, անկողմնակալ, վստահելի և թափանցիկ ընտրություններ:

Նպատակներ

1. Գենդերային բաղադրիչի ներառումը բոլոր ընտրական գործընթացներում:
2. Համընդգրկունության հիմնահարցերի ներառումը ընտրություններին վերաբերող բոլոր գործընթացներում:
3. Գենդերային զգայուն և համընդգրկուն ընտրական մարմնի ձևավորումը:

րացման գործընթացի առաջխաղացման համար անհրաժեշտ է ինստիտուցիոնալացնել հաստատության ներսում համապատասխան միջոցառումների մշտադիտարկման և խթանման պարտավորությունը: Հաստատության ներսում գենդերային բաղադրիչի ինտեգ-

րումը պետք է իրականացվի հաստատության բոլոր աշխատակիցների միջոցով: Այնուամենայնիվ, պետք է լինի հատուկ պատասխանատու մարմին, որը հաստատության ներսում կունենա բարձր կարգավիճակ և մասնակից կլինի բոլոր որոշումների կայացմանը: Որոշ

դեպքերում նշանակվում է գենդերային փորձագետ կամ պատասխանատու անձ, ով աշխատում է հաստատության ներսում գենդերային բաղադրիչի խթանման ուղղությամբ: Այնուամենայնիվ, սա ոչ միշտ է իրագործելի՝ պայմանավորված ֆինանսական կամ կադրային սահմանափակումներով: Նման դեպքերում գենդերային հարցերը համակարգող անձանց դերում կարող են նշանակվել ընտրական մարմնի անդամներ կամ աշխատակիցներ: Այս պարագայում կարևոր է ապահովել, որպեսզի վերջիններս ունենան բավարար ժամանակ և անցնեն համապատասխան վերապատրաստում այդ պարտավորությունը ստանձնելու համար:

Այլընտրանքային լուծում կարող է լինել հաստատության ներսում տարբեր ոլորտներում ներգրավված կին և տղամարդ աշխատակիցների ցանցի ստեղծումը, որը հետամուտ կլինի, որպեսզի հաստատության աշխատակիցները հետևեն գենդերային հավասարության սկզբունքներին իրենց առօրյա աշխատանքում: Մեկ պատասխանատու անձ նշանակելու փոխարեն պատասխանատու անձանց ցանց ստեղծելով զարգանում է գենդերային հավասարության տեսանկյունից հաստատության գործունեության վերլուծության կարողությունը, իսկ գենդերային բաղադրիչի ներառման գործընթացը դառնում է էլ ավելի տեսանելի և լեգիտիմ: Այսպես օրինակ, Աֆղանստանի Ընտրական հանձնաժողովի 34 մարզերից յուրաքանչյուրում լրիվ դրույքաչափով աշխատող աշխատակիցների միջից ընտրվել է մեկական գենդերային խորհրդատու: Ընտրված խորհրդատուներն անցել են կառավարման և առաջնորդության, հզորացման, գենդերային հավասարության հիմնահարցերի, գենդերային ուղղվածությամբ միջոցառումների պլանավորման և բյուջետավորման, ինչպես նաև համարաբարությունների կառավարման ծավալուն դասընթացներ: Խորհրդատուներն ամրապնդել են կապերը կանանց իրավունքները պաշտպանող կազմակերպությունների հետ, ընդգծել են գենդերային հավասարության հիմնահարցերը և մասնակցել են իրենց շրջանում միջոցառումների պլանավորման, բյուջետավորման և իրականացման աշխատանքներին:²⁹

Մեկ այլ այլընտրանքային տարբերակ կարող է լինել գենդերային հիմնահարցերով զբաղվող հանձնաժողովի կամ միավորների ստեղծումը: Այս հանձնաժողովները կամ միավորները նման են այն ներքին գործառնական հանձնաժողովներին, որոնք ստեղծվում են հաստատությունների գործունեության որոշակի հայեցակետերի կամ որոշակի գործընթացների ուղղությամբ աշխատելու համար (օրինակ՝ ավագ կառավարման հանձնաժողովները): Հաշվի առնելով ընտրական մարմինների մե-

ծամասնության գենդերային կազմը նման հանձնաժողովում կամ միավորում ամենայն հավանականությամբ ներգրավված կլինեն թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, ինչը ևս մեկ անգամ կընդգծի, որ գենդերային հավասարությունը վերաբերում է բոլորին: Եթե ընտրական մարմինը աշխարհագրորեն ցրված է, հարկավոր է պատասխանատվությունը բաժանել տարբեր կառուցվածքային միավորների միջև: Ընտրական մարմնի ղեկավար անձնակազմը կարող է կարևոր դերակատարում ունենալ միավորի աշխատանքների վերահսկման և վերջինիս գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման հարցում:

Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում ընտրական մարմինները վերջին տարիներին ձեռնարկել են գենդերային հավասարության խթանման ինստիտուցիոնալացման ուղղությամբ քայլեր՝ նշանակելով գենդերային հարցերը համակարգող անձանց կամ միավորներ, որոնց գործունեության նպատակը ընտրական գործընթացներում կանանց մասնակցության խթանումն է: Թեև վերոնշյալ միավորների ինստիտուցիոնալ կարողությունները, տեխնիկական փորձագիտական և այլ ռեսուրսները տարբերվում են ըստ երկրի, դրանց ստեղծումը կարևոր քայլ է կանանց մասնակցության խթանմանն ուղղված քաղաքականությունների և պրակտիկաների ինստիտուցիոնալացման տեսանկյունից: Օրինակ՝ Պարագվայի ընտրական մարմնի ներսում ստեղծվել է Հատուկ գենդերային հարցերը համակարգող բաժին, որն առաջին անգամ իրականացրել է ընտրական գործընթացներին վերաբերող վիճակագրական տվյալների ըստ սեռի տարանջատում:³⁰

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 10-ը (29%-ը) նշել են, որ իրենց կողմից հաստատության ներսում նշանակվել են գենդերային հարցերը համակարգող անձինք: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Կոստա Ռիկան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Եթովպիան, Իրաքը, Ղազախստանը, Սոգամբիկը, Նամիբիան, Նեպալը և Տանզանիան: Բացառությամբ Նամիբիայի և Սոգամբիկի, բոլոր վերոնշյալ երկրներում «ստեղծվել են գենդերային հարցերը համակարգող խմբեր՝ ավագ ղեկավար անձնակազմի ներգրավվածությամբ»:

Գենդերային հավասարության հարցերով ենթակառուցվածքների ստեղծման որոշ օրինակներ

- **Աֆղանստանում** 2009 թվականի հունիսին ստեղծվել է Գենդերային հարցերը համակարգող բաժին, որի մանդատն է «խթանել կանանց մասնակցությունը քաղաքական գործընթացներում»

Ընտրական հանձնաժողովում հեռահար փոփոխություններ կատարելով, այդ թվում՝ կարողությունների զարգացման, գենդերային բաղադրիչի ներառման և Հանձնաժողովը գենդերային զգայուն մարմին դարձնելու ճանապարհով»։ Միավորը խորհրդատվություն և աջակցություն է տրամադրում մյուս բոլոր վարչություններին, որպեսզի վերջիններս կարողանան «համապատասխանեցնել իրենց քաղաքականությունները, գործընթացները, բյուջեն և միջոցառումները՝ կանանց՝ թե՛ որպես քաղաքական գործիչների, թե՛ որպես հաստատության աշխատակիցների մասնակցությունն ամեն կերպ խթանելու նպատակին»։ Միավորը փորձում է «ապահովել գենդերային բաղադրիչի ներառումը Ընտրական հանձնաժողովի գործունեության բոլոր ոլորտներում՝ սկսած գնումներից և մարդկային ռեսուրսներից մինչև ընտրությունների կանոնակարգումն ու անվտանգությունը»։³¹

- **Կոստա Ռիկա.** 2000 թվականին Կոստա Ռիկայի Գերագույն ընտրական դատարանի կողմից նշանակվել է հաստատության աշխատակիցներից բաղկացած հարցերով Գենդերային հանձնաժողով։ Գենդերային հանձնաժողովը նախագահում է (կին) մագիստրատը կամ (կին) ընտրական դատավորը։ Այս հանձնաժողովը կարևոր դեր է խաղացել տվյալ հաստատությունում գենդերային հավասարության և արդարության քաղաքականության նախանշման և մշակման հարցում։³²
- **Կոնգոյի Գեմոկրատական Հանրապետությունում** Ընտրական հանձնաժողովի յոթ անդամներից մեկը նշանակվել է որպես գենդերային հարցերը համակարգող անձ, ով աջակցել է Ընտրական հանձնաժողովի ներսում գենդերային հարցերը համակարգող բաժնի ստեղծմանը։ Գենդերային հարցերը համակարգող բաժինը կազմված է երկու կանանցից՝ համակարգողից և օգնականից։ Գենդերային հարցերը համակարգող բաժնի նպատակն է մշակել հաստատության ներսում գենդերային բաղադրիչի ներառման մեխանիզմներ։ Այն նաև վերահսկում է Ընտրական հանձնաժողովի գենդերային քաղաքականությունների կիրառումը կենտրոնական և տարածքային մակարդակներում։³³
- **Գանայի** Ընտրական հանձնաժողովը, ճանաչելով ընտրական գործընթացներում կանանց մասնակցության կարևորությունը, հիմնել է գենդերային ստորաբաժանում։³⁴

- **Հոնդուրասում,** Ընտրական դատարանի ներսում (Tribunal Supremo de Elecciones) ստեղծվել է Գենդերային հավասարության գրասենյակ։³⁵
- 2011 թվականին **Իրաքի** Անկախ բարձրագույն ընտրական հանձնաժողովում (ԱԲԸՀ) նշանակվել է գենդերային հարցերը համակարգող բաժին, որը նախագահել է հանձնաժողովի կին անդամներից մեկը։ Միավորին խորհրդատվական աջակցություն է տրամադրել ՄԱԿ-ի կողմից ներգրավված փորձագետ խորհրդատուն։
- **Մեքսիկայի** Ազգային ընտրական ինստիտուտի ներսում ստեղծվել է Գենդերային հավասարության և խտրականության հարցերով հատուկ տեխնիկական միավոր (Unidad Técnica de Igualdad de Género y No Discriminación)։
- **Նեպալի** կառավարության որոշմամբ յուրաքանչյուր հանրային ծառայություն իրականացնող հաստատություն, այդ թվում՝ նաև Ընտրական հանձնաժողովը, պարտավորվել է որպես գենդերային հարցերը համակարգող անձ նշանակել ղեկավար անձնակազմի մեկ ներկայացուցիչ։³⁶ Բացի այդ, Նեպալի ընտրական հանձնաժողովը ստեղծել է Գենդերային հարցերով միավոր, ինչպես նաև նշանակել է Գենդերային հավասարության և սոցիալական ներառականության հարցերով պատասխանատու անձ։
- 2009 թվականին **Պարագվայի** Ընտրական դատարանը հիմնել է Գենդերային հավասարության միավոր, որը պատասխանատու է ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման, գենդերային տեսանկյունից ընտրական գործընթացների վերլուծության, կուսակցությունների հետ կանանց մասնակցության խթանման ռազմավարությունների համաձայնեցման, ինչպես նաև ազգային և միջազգային կառույցների հետ համագործակցության համար։³⁷
- **Եմենի** Ընտրական հանձնաժողովում գործում է Գենդերային հարցերով միավոր, որը զբաղվում է ընտրական գործընթացներում կանանց շահերի խթանմամբ։ Գենդերային հարցերը համակարգող բաժին է գործում նաև Տեղական ինքնակառավարման նախարարության ներսում՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության բոլոր մակարդակներում կանանց ինտեգրումն ապահովելու համար։ Միավորի նախագահը կին է։³⁸

Որոշ դեպքերում, երբ Ընտրական մարմինները ուղղակի կերպով չեն նշանակում գենդերային հարցերով միավորներ կամ պատասխանատու անձ, նրանք հնարավորություն ունեն օգտվել ՄԱԶԾ-ի կողմից ներգրավված գենդերային հարցերով խորհրդատուների ծառայություններից: Օրինակ՝

- Նեպալում Ընտրական գործընթացների աջակցության շրջանակներում ՄԱԶԾ-ի կողմից նշանակվել է գենդերային խորհրդատու, ով աջակցում է Նեպալի Ընտրական հանձնաժողովին գենդերային հավասարության և սոցիալական ինտեգրման միջոցառումների իրականացման հարցում: Միաժամանակ, Նեպալի ընտրական հանձնաժողովի ներսում որպես գենդերային հարցերը համակարգող անձ է նշանակվել Համատեղ քարտուղարը: ՄԱԶԾ գենդերային հարցերով մասնագետը Նեպալի ընտրական հանձնաժողովի գրասենյակում Հանձնաժողովի հետ համատեղ աշխատում է առանցքային փաստաթղթերի, այդ թվում՝ գենդերային բաղադրիչի ներառման քաղաքականության, գործողությունների ծրագրի, Նեպալի Ընտրական հանձնաժողովի գենդերային


հարցերը համակարգող անձի համար տեխնիկական առաջադրանքի, ինչպես նաև նոր հիմնադրված գենդերային հարցերը համակարգող բաժնի հայեցակարգի մշակման շուրջ, ինչպես նաև աջակցում է Ընտրական հանձնաժողովին գենդերային ուղղվածության բոլոր միջոցառումների ծրագրման և իրականացման հարցում:³⁹

- 2010 թվականին Սուդանում ՄԱԶԾ գենդերային հարցերով խորհրդատուն, ով համատեղության կարգով համագործակցում էր նաև Նեպալի ընտրական հանձնաժողովի հետ, ներկայացրել է ընտրական գործընթացներում գենդերային հավասարության հայեցակարգի ինտեգրման քաղաքականության վերաբերյալ առաջարկներ:
- 2011 թվականին Թունիսում, ՄԱԶԾ-ի գենդերային և ընտրական հարցերով խորհրդատուն համագործակցում էր Թունիսի Բարձրագույն անկախ ընտրական մարմնի (ԲԱԸՄ) հետ և աշխատում ընտրական մարմնի իրազեկման և վերապատրաստումների հարցերով պատասխանատու աշխատակիցների հետ:



ԱՄՓՈՓՈՄ

- Ընտրական մարմնի ներսում գենդերային անհավասարության հասցեագրումը և հաղթահարումը կարող է իրականացվել ամենաբարձր պլանավորման մակարդակով:
- Ընտրական մարմինները կարող են հստակորեն ձևակերպել գենդերային հավասարության իրենց հանձնառությունը և դրա նշանակությունը ազգային համատեքստում:
- Այս ամենը հնարավոր է ապահովել հաստատության ռազմավարական ծրագրում, ինչպես նաև տեսլականում և առաքելությունում ինտեգրելով գենդերային զգայուն նպատակներ, թիրախներ և դրանց իրագործմանն ուղղված միջոցառումներ:
- Այս ամենը կարող է իրականացվել նաև ընտրական մարմնի տեսլականը և նպատակները սահմանող գենդերային քաղաքականության մշակման միջոցով:
- Հանձնառության մասին հայտարարելուց անմիջապես հետո հարկավոր է հատկացնել ռեսուրսներ համապատասխան միջոցառումների իրականացման համար:
- Գենդերային հարցերը համակարգող անձինք կամ գենդերային հավասարության հարցերով հանձնաժողովը կամ միավորը կարող են արդյունավետ դեր կատարել ընտրական մարմնի կողմից գենդերային հավասարության հանձնառության ինստիտուցիոնալացման հարցում:



4 Գենդերային հավասարակշռությունը ընտրական մարմնում. խորհուրդ և աշխատակազմ

Որպես կանոն ընտրական մարմինը պատասխանատու է ընտրությունների վարչարարության քաղաքականության սահմանման, ինչպես նաև լոգիստիկ գործողությունների իրականացման համար:⁴⁰ Որոշ ընտրական մարմիններում քաղաքականությունների սահմանումն իրականացվում է հանձնաժողովի կամ խորհրդի կողմից, իսկ քարտուղարությունը (ընտրական անձնակազմը) զբաղվում է ընտրությունների վարչարարությամբ:⁴¹ Գենդերային հավասարակշռություն ապահովելու համար անհրաժեշտ է ապահովել կանանց ներկայացվածությունը թե՛ հանձնաժողովում/խորհրդում, թե՛ քարտուղարության կազմում:

Հանձնաժողովը կամ խորհուրդը, որպես կանոն, հանդիսանում է ընտրական մարմնի որոշումներ կայացնող միավոր: Այն շատ կարևոր դերակատարում ունի ընտրական մարմնի ներսում գենդերային հավասարությանը վերաբերող փոփոխությունների իրականացման հարցում: Այն ունի բացառիկ հնարավորություն ապահովելու ընտրական մարմնի քաղաքականության, ինչպես նաև կառուցվածքային կազմի համապատասխանությունը միջազգային պարտավորությունների և գենդերային հավասարության մասով սահմանված թիրախներին: Կանայք պետք է ներկայացված լինեն հանձնաժողովում կամ խորհրդում քաղաքականությունների մշակման կամ որոշումների կայացման գործընթացներում իրենց ներդրումն ունենալու համար:

Քարտուղարությունն ընտրական մարմնի քաղաքականություններն իրականացնող մարմինն է: Այս մարմնում կանանց ներկայացվածությունն անհրաժեշտ է ընտրական վարչարարության մեջ գենդերային հիմքով կանանց հանդեպ խտրականության բացառումն ապահովելու համար:

Քարտուղարությունը կարող է նաև հետամուտ լինել, որպեսզի կանայք ներգրավված լինեն ժամանակավոր ընտրական անձնակազմներում, հատկապես այն համատեքստերում, որտեղ մշակութային առանձնահատկություններով պայմանավորված, կին ընտրողները չեն կարող առնչվել տեղամասային կենտրոնների իրենց անձանոթ տղամարդ աշխատակիցների հետ: Այս բաժ-

նում նշվում են այն միջոցառումները, որոնք կարող են ձեռնարկվել ընտրական մարմինների կազմում կանանց ներկայացվածությունն ապահովելու համար:

4.1. Ընտրական մարմնի խորհրդի կամ հանձնաժողովի կազմը

Ընտրական մարմինների շրջանում իրականացված հետազոտության արդյունքում հաստատվել է ընտրական մարմիններում առաջնորդ դերերում տղամարդկանց գերակայությունը:

- **Մոզամբիկ.** 2011 թվականին Մոզամբիկի Ազգային ընտրական հանձնաժողովի 13 անդամներից միայն երկուսն էին կին (15%):⁴²
- **Նեպալ.** 2012 թվականին Նեպալի Ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները տղամարդիկ էին: 2013 թվականին նորանշանակ հինգ անդամներից միայն մեկն էր կին:⁴³
- **Տանզանիա.** 2011 թվականին Տանզանիայի Ազգային ընտրական հանձնաժողովի 7 անդամներից միայն 2-ն էին կանայք (28.5%):⁴⁴
- **Թունիս.** 2011 թվականին Թունիսի Բարձրագույն անկախ ընտրական մարմնի 16 անդամներից միայն երկուսն էին կանայք (12%):

Ընտրական մարմինների խորհուրդների/հանձնաժողովների նշանակման եղանակները խիստ տարբեր

Ընտրական մարմինների անդամների նշանակման կամ ընտրության գործընթացում քվոտաների կիրառման մի շարք օրինակներ բերված են ստորև.

- **Ալբանիա.** Հասարակության մեջ գենդերային հավասարության օրենքը (2008) և Ընտրական օրենսգիրքը (ընդունված 2008 թվականին և փոփոխված վերջերս) սահմանում են, որ հանրային հատվածի բոլոր հաստատություններում, այդ թվում՝ 89 վարչական շրջանների ընտրական հանձնաժողովներում յուրաքանչյուր սեռը պետք է ունենա առնվազն 30% ներկայացվածություն՝ ազգային և տեղային մակարդակներում թե՛ հանձնաժողովների անդամների կազմում, թե՛ աշխատակազմում:⁷⁹
- **Բոլիվիա.** Օրենքը սահմանում է Գերագույն ընտրական դատարանի հետևյալ կազմը. Գերագույն ընտրական դատարանը պետք է կազմված լինի յոթ անդամներից, որոնցից առնվազն երկուսը պետք է լինեն ծագումով քնիկներ: Գերագույն

ընտրական դատարանի անդամներից առնվազն երեքը պետք է լինեն կանայք:⁸⁰

- **Բոսնիա և Հերցեգովինա.** Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ «ընտրական հանձնաժողովի կազմը արտացոլի երկու սեռերի հավասար ներկայացվածությունը», այսինքն՝ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչները պետք է կազմեն ընտրական հանձնաժողովի անդամների առնվազն 40 տոկոսը:
- **Օրենքում նշվում է նաև, որ հարկավոր է գործադրել ջանքեր, որպեսզի համայնքային ընտրական հանձնաժողովներում և տեղամասային ընտրական հանձնաժողովներում թերներկայացված սեռի ներկայացուցիչների թիվը հասցվի առնվազն 40%-ի:⁸¹**
- **Իրաք.** Ընտրական օրենսգիրքով սահմանվում է, որ հանձնաժողովի 9 անդամներից առնվազն երկուսը պետք է լինեն կանայք:⁸²
- **Ղրղզստան.** Ընտրական օրենսգրքով սահմանվում է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում մինչև սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է գերազանցի անդամների ընդհանուր թվի 70 տոկոսը:⁸³
- **Արևելյան Թիմոր.** 2007 թվականին ազգային ընտրական մանդատով սահմանվել է քվոտա, համաձայն որի 15 խորհրդականներից առնվազն չորսը պետք է լինեն կանայք:⁸⁴

Կան նաև դեպքեր, երբ գենդերային հավասարության հայեցակարգը ներառվում է ազգային օրենսդրության մեջ առանց հատուկ չափորոշիչների կամ քվոտաների սահմանման:

- **Եթովպիա.** Ընտրական օրենքը պահանջում է, որ ընտրական մարմնի խորհրդի կազմը արտացոլի ազգային գենդերային հարաբերակցությունը:⁸⁵



© ՄԱԿ-ի նկար / Մարտին Պերե

են: Որոշ երկրներում որդեգրվել են ժամանակավոր հատուկ միջոցներ, ինչպիսին է գենդերային քվոտան, ապահովելու համար կանանց ներկայացվածությունը խորհրդում կամ հանձնաժողովում: Ընտրական մարմնի համար գենդերային քվոտան կարող է սահմանվել Ընտրական օրենսգրքով կամ գենդերային հավասարության վերաբերյալ այլ, ավելի լայն օրենսդրությամբ:

Որպես կանոն նման քվոտաներն արդյունավետ են, եթե կա ընտրական մարմնի հանձնաժողովի կամ խորհրդի կազմի համար պատասխանատու անձ կամ կազմակերպություն: Շատ երկրներում ընտրական մարմինները ձևավորվում են տարբեր կուսակցությունների կողմից առաջադրված անհատներից, և չկա գենդերային հավասարակշռության մասով վերահսկողություն իրականացնող անձ կամ կազմակերպություն: Օրինակ՝ Մոլդովայում գործում է գենդերային զուգակշռվածության վերաբերյալ օրենք, սակայն հանձնաժողովի անդամները նշանակվում են անհատապես (Հանրապետության նախագահի կամ կուսակցությունների կողմից) և չկա գենդերային հավասարակշռության մասով վերահսկողություն իրականացնող անձ կամ կազմակերպություն:⁴⁵Այս մարտահրավերն առկա է նաև Բենինում:⁴⁶Նման դեպքերում յուրաքանչյուր կուսակցություն կարող է տեղեկացվել գենդերային հավասարակշռության անհրաժեշտության մասին, այնուամենայնիվ գենդերային քվոտայի կիրառումը կարող է դժվար լինել:

Որպես մեկ այլ մարտահրավեր որոշ ընտրական մարմինների կողմից նախանշվում է այն հանգամանքը, որ կանայք հաճախ չեն փորձում առաջադրել իրենց թեկնածությունը ընտրական մարմիններում ղեկավար պաշտոններ զբաղեցնելու համար: 2011 թվականին Թունիսի Բարձրագույն անկախ ընտրական մարմնի անդամների ընտրությամբ զբաղվող հանձնախումբը հանձն է առել հետամուտ լինել ընտրական մարմնի հանձնաժողովում և աշխատակազմում «կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի» պահպանմանը: Թունիսի Բարձրագույն անկախ ընտրական մարմնի հանձնաժողովի 16 անդամներից կանայք ընդամենը երկուսն էին: Թեպետ ջանքեր են գործադրվել Թունիսի Բարձրագույն ընտրական մարմնի տարածքային գրասենյակներում ներգրավվել ավելի մեծ քանակությամբ կանանց, արդյունքում մարզային ընտրական վարչարարության մարմիններում կանայք կազմեցին 18, իսկ տարածքային ընտրական վարչարարության մարմիններում՝ 11 տոկոս: Այս արդյունքը մեծամասամբ պայմանավորված էր նրանով, որ կանայք իրենք խուսափում էին առաջադրվելուց:⁴⁷

Որոշ երկրների ընտրական մարմիններում կանանց և տղամարդկանց հավասար ներկայացվածությունը հնարավոր է եղել ապահովել առանց իրավական կարգավորումների: Քաղաքական կամքի առկայության դեպքում խորհրդի կամ հանձնաժողովի կազմում գենդերային հավասարակշռության ապահովումը միանգամայն իրագործելի է: Օրինակ՝

- 2011 թվականին Մալավիի ընտրական հանձնաժողովում կանանց և տղամարդկանց ներկայացվածությունը հավասար է եղել, անկախ այն հանգամանքից, որ չկար համապատասխան օրենք կամ իրավական կարգավորում:⁴⁸
- 2007 թվականին Գանայի ընտրական հանձնաժողովի յոթ անդամներից երեքը եղել են կանայք: Հանձնաժողովի բոլոր անդամները նշանակվել են նախագահի կողմից՝ գենդերային հավասարություն ապահովող օրենքի կամ կանոնակարգի բացակայության պայմաններում:⁴⁹
- Սիերա Լեոնեում 2008 թվականին հանձնաժողովի հինգ անդամներից երեքը, այդ թվում՝ հանձնաժողովի նախագահը, եղել են կանայք:⁵⁰

4.2. Ընտրական մարմինների քարտուղարություն և աշխատակազմ

Քարտուղարությունն Ընտրական մարմնի քաղաքականությունն իրականացնող միավորն է: Քարտուղարության աշխատակազմում կարող են ընդգրկվել թե՛ քաղաքացիական ծառայություն իրականացնող ժամանակավոր աշխատակիցներ, թե՛ ընտրական վարչարարության մասնագետներ՝ լիաժամկետ կառավարչի ղեկավարությամբ:⁵¹ Քարտուղարության աշխատակիցների նշանակման եղանակները տարբեր են՝ կախված տվյալ ընտրական մարմնի կողմից կիրառվող մոդելից: Պետական ընտրական մարմինների աշխատակազմը սովորաբար կազմված է լինում գործադիրի կողմից նշանակված քաղաքացիական ծառայողներից: Վերջիններս նշանակվում են նույն կանոններով ինչ բոլոր քաղաքացիական ծառայողները: Անկախ ընտրական մարմինների աշխատակիցները, որպես կանոն, նշանակվում են ընտրական մարմնի կողմից՝ վերջինիս սեփական կադրերի հավաքագրման ընթացակարգերի և աշխատանքային պայմանների հիման վրա:⁵² Ընտրական մարմնի քարտուղարության աշխատակիցների օպտիմալ քանակ սահմանված չէ: Ընտրական մարմնի անդամների և քարտուղարության աշխատակիցների

Հավասար աշխատանքային հնարավորությունների ապահովման մի շարք օրինակներ բերված են ստորև.

- **Բոսնիա և Հերցեգովինա.** Գենդերային հավասարության օրենքն արգելում է սեռով պայմանավորված ցանկացած խտրականության դրսևորում աշխատակիցների հավաքագրման, աշխատանքային պայմանների և վարձատրության հարցում, այդ թվում՝ ընտրական մարմիններում:¹⁸
- **Քենիա.** Ընտրական հանձնաժողովի ձևավորումը կարգավորող օրենքը սահմանում է, որ հաստատության աշխատակիցների կազմում մինչև սեռի ներկայացուցիչների քանակը չի կարող գերազանցել աշխատակիցների ընդհանուր թվի երկու երրորդը:¹⁹
- **Նեպալ.** Նեպալի Ընտրական հանձնաժողովի 2015-2019թթ. ռազմավարական ծրագրում նախանշված են հավասար հնարավորությունների երաշխավորմանը և քաջակերմանը ուղղված հստակ գործողություններ, ինչպես նաև գենդերային հավասարության և կանանց մասնակցության խթանմանը միտված դրական խտրականության միջոցառումներ:
- **Կոնգոյի Հանրապետություն.** Ազգային օրենսդրությունը սահմանում է գենդերային հավասարության սկզբունքի կիրառումը հանրային հատվածի բոլոր հաստատությունների աշխատակիցների հավաքագրման գործընթացում:²⁰
- **Մալդիվյան Հանրապետություն.** Օրենքը սահմանում է հավասար աշխատանքային հնարավորություններ երկու սեռերի համար:²¹
- **Ռումինիա.** Պետությունը երաշխավորում է կանանց և տղամարդկանց համար հանրային քաղաքացիական կամ ռազմական հաստատություններում պաշտոններ զբաղեցնելու հավասար հնարավորություններ:²²
- **Հարավաֆրիկյան Հանրապետություն.** «Աշխատանքային հավասարության մասին» իրավական ակտի (№ 55, 1998թ.) հիման վրա Ընտրական հանձնաժողովը մշակել է աշխատանքային հավասարության ծրագիր, սահմանելով քանակական թիրախներ ըստ սեռի և ռասայական պատկանելության:²³
- **Տանզանիա.** Կառավարության շրջաբերականներով նախատեսվում է Ազգային ընտրական հանձնաժողովի քարտուղարությունում կլին աշխատակիցների ներգրավվածության ապահովումը:²⁴
- **Արևելյան Թիմոր.** Ընտրական մարմինները (թե՛ Ընտրական վարչարարության տեխնիկական քարտուղարությունը, թե՛ Ազգային ընտրական հանձնաժողովը) խրախուսում են են ներքին դիրեկտիվների և քաղաքականությունների միջոցով խրախուսել կանանց ներգրավումն ու մասնակցությունն ընտրական մարմինների կառուցվածքում:
- **Ուգանդա.** Կառավարությունը որդեգրել է բոլորի համար աշխատանքի հավասար հասանելիության ընդհանուր քաղաքականություն:²⁵

քանակը և աշխատանքային գրաֆիկը, որպես կանոն, սահմանվում են ելնելով տվյալ երկրի և բնակչության չափերից, տնտեսական և աշխարհաքաղաքական խնդիրներից, ինչպես նաև ընտրական մարմնի վերագրված լիազորություններից և գործառնություններից:⁵³

Հավասար աշխատանքային հնարավորություններ

Ընտրական մարմինների աշխատակազմում կանանց և տղամարդկանց զուգակշռված ներգրավվածության ապահովումն առանցքային կարևորություն ունի գենդերային հավասարության հաստատման տեսանկյունից: Նեպալում ընտրական մարմինների աշխատակիցների և արտաքին շահառուների հետ ֆոկլուս խմբային քննարկումների միջոցով իրականացված ինստիտուցիոնալ քարտեզագրումը և քաղաքականությունների վերանայումը թույլ են տվել նախանշել անձնակազմի հավաքագրման խտրական պրակտիկաները հասցեագրող մի շարք քայլեր: Այն ընտրական մարմիններում, որտեղ տղամարդիկ աշխատակազմում մեծամասնություն են կազմում, կանանց ներգրավվածությունը խթանող քայլերի ձեռնարկումն առանցքային նշանակություն ունի: Շատ երկրներում հավասար հնարավորությունները սահմանվում են համապատասխան օրենսդրական կարգավորումներով, հատկապես հանրային հատվածում, որի մասն են կազմում նաև ընտրական մարմինները:

Ներքին քաղաքականությունները կարող են նաև հիմք հանդիսանալ աշխատակիցների համար հավասար հնարավորությունների ապահովման համար, անկախ այն բանից, արդյոք կան համապատասխան օրենսդրական կարգավորումներ: Եթե ընտրական մարմինը լիազորված է սահմանել աշխատակիցների հավաքագրման և առաջխաղացման իր սեփական կանոնները և կանոնակարգող շրջանակը, կարևոր է ապահովել վերոնշյալ կանոնների և կանոնակարգող շրջանակի համապատասխանությունը զբաղվածության ոլորտը կարգավորող ազգային իրավական շրջանակին:

Օրինակ՝ Աֆղանստանի Անկախ ընտրական հանձնաժողովի մշտական աշխատակիցները նշանակվում են Աֆղանստանի քաղաքացիական ծառայության վերաբերյալ օրենքի և ընթացակարգերի հիման վրա: Աֆղանստանի Անկախ ընտրական հանձնաժողովի ներքին կանոնակարգերով սահմանվում է աշխատակիցների հավաքագրման գործընթացում գենդերային հավասարակշռության սկզբունքի պահպանման պահանջը:⁵⁴

Հանձնաժողովի ներսում գործող Գենդերային հարցերը համակարգող բաժինն ուղարկում է թափուր հաստիքի հայտարարությունը շահառուների լայն շրջանակներին, այդ թվում՝ Կանանց հարցերով զբաղվող նախարարությանը, իսկ վերջիններս իրենց հերթին տարածում են հայտարարությունը համապատասխան թեկնածուների շրջանակներում:

Կին թեկնածուների ոչ բավարար քանակության դեպքում թափուր հաստիքը զբաղեցնելու համար դիմումների ներկայացման ժամկետները կարող են հետաձգվել: Պակիստանի Ընտրական հանձնաժողովը, հիմք ընդունելով հանրային ծառայության վերաբերյալ ազգային օրենքի դրույթները, իր գործողությունների ծրագրում ներառել է դրույթ առ այն, որ Պակիստանի Ընտրական հանձնաժողովի քարտուղարության աշխատակիցների առնվազն 10 տոկոսը պետք է կազմեն կանայք:⁵⁵ Ընտրական մարմինների հետազոտության շրջանակներում իրականացված հարցման 35 մասնակիցներից 15-ը (43 տոկոսը) նշել են, որ իրենք ունեն «աշխատակազմի համար հավասար հնարավորությունների ապահովման պաշտոնական քաղաքականություն»: Վերոնշյալ 15 երկրներն են՝ Աֆղանստանը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կոստա Ռիկան, Իրաքը, Ղազախստանը, Ղրղզական հանրապետությունը, Մադագասկարը, Մալդիվները, Մոլդովան, Մոզամբիկը, Պաղեստինյան Պետությունը, Հարավաֆրիկյան Հանրապետությունը, Տանզանիան և Ուզբեկստանը: Վերոնշյալ պետություններից հինգը նշել են, որ իրենք ունեն «գենդերային քաղաքականություն և դրա իրականացման գործողությունների ծրագիր»: Այդ պետություններն են՝ Աֆղանստանը, Կանադան, Ղազախստանը, Ղրղզստանը և Տանզանիան:

Հաստատությունների ներսում գենդերային հավասարակշռության խթանմանը կարող են նպաստել նաև աշխատակազմի հավաքագրման կոնկրետ մեթոդները: ԺԸՎԻ-ի ազատ և արդար ընտրությունների համար կազմված գենդերային ստուգացանկը հարցադրում է անում ընտրական մարմիններին, թե արդյոք վերջիններս որոշումներ կայացնող պաշտոններում և աշխատակազմի մյուս բոլոր մակարդակներում աշխատակիցների ընտրության և նշանակման գործընթացում ապահովում են հավասար հնարավորություններ կանանց և տղամարդկանց համար, և արդյոք թափուր հաստիքների հայտարարությունները պարունակում են հավասար հնարավորությունները շեշտադրող և կանանց մասնակցությունը խրախուսող ձևակերպումներ:⁵⁶ Ընտրական մարմինները կարող են նաև ստուգել, թե ինչպես են գր-

վում աշխատանքի բնութագրերը, ապահովելու համար աշխատանքի նկարագրության, պահանջվող հմտությունների և չափորոշիչների գենդերային տեսանկյունից չեզոքությունը: Հարկավոր է ստուգել հաստիքների բնութագրերը, և համոզվել, որ տվյալ բնութագիրը չի նախասահմանում տվյալ պաշտոնը զբաղեցնող աշխատակցի սեռը, ինչպես նաև մանրամասն ուսումնասիրել աշխատանքային պարտականությունները և համոզվել, որ դրանք հավասարապես կարող են իրականացվել թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց կողմից: Շատ երկրներում կանայք թերներկայացված են որոշակի մասնագիտական և որակավորման ոլորտներում, այդ իսկ պատճառով, հաստիքի բնութագրում այդ որակավորումների կամ մասնագիտական հմտությունների պահանջի ներառումը դժվարին է դարձնում կանանց՝ այդ հաստիքի համար դիմելը: Այդ իսկ պատճառով, որակավորման և փորձի հետ կապված որևէ պահանջ սահմանելիս՝ հարկավոր է հաշվի առնել, արդյոք կանայք և տղամարդիկ ունեցել են դրանք ձեռք բերելու հավասար հնարավորություններ տվյալ երկրի համատեքստում:

Լավ գործելակերպ է աշխատանքի բնութագրերում հավասար հնարավորությունների մասին տեղեկության զետեղումը, ինչպես նաև, որոշ դեպքերում, կոչը կանանց և այլ թերներկայացված խմբերին՝ դիմել տվյալ հաստիքի համար: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտությանը մասնակցած 35 երկրներից 17-ը (48 տոկոսը) նշել են, որ իրենց թափուր հաստիքների հայտարարությունները պարունակում են խտրականության բացառման մասին հայտարարություն: Վերոնշյալ երկրներն են՝ Աֆղանստանը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կոստա Ռիկան, Եգիպտոսը, Եթովպիան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մադագասկարը, Մալդիվն, Մոլդովան, Մոզամբիկը, Պաղեստինը, Ռումինիան, Հարավային Աֆրիկան, Տանզանիան և Ուզբեկստանը: Օրինակ՝ Եթովպիայում քաղաքացիական ծառայողների հավաքագրումը և վարձատրությունը կարգավորող օրենքներով խրախուսվում է կանանց կողմից թափուր հաստիքների, ինչպես նաև աշխատանքային առաջխաղացման համար հայտերի ներկայացումը, և սահմանվում են հատուկ միջոցներ այդ գործընթացն ապահովելու համար:⁵⁷

Հարկավոր է հաշվի առնել նաև վարձատրությունը և աշխատանքային պայմանները, այն թե որտեղ և ինչպես է գովազդվում տվյալ թափուր հաստիքի հայտարարությունը, որտեղ և ինչպես են անցկացվում հարցազրույցները և ովքեր են ընդգրկված հարցազրույցավարների կազմում: Ավագ ղեկավար պաշտոնների համար հար-

ցազրույցների ընթացքում հարցնելով թեկնածուներին գենդերային հիմնահարցերի վերաբերյալ տեղեկացվածության կամ փորձառության մասին և դարձնելով դա ընտրության համար հիմք ծառայող չափորոշիչներից մեկը, կազմակերպությունը կարող է ընդգծել իր լուրջ մոտեցումը գենդերային հավասարության հիմնահարցերին:

Ընտրական մարմինների հետազոտությանը մասնակցած 35 երկրներից 12-ը (34 տոկոսը) նշել են, որ իրենց աշխատանքի բնութագրերում ներառված է գենդերային

հավասարության չափորոշիչը: Վերոնշյալ երկրներն են՝ Աֆղանստանը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Եգիպտոսը, Եթովպիան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մադագասկարը, Մոզամբիկը, Պաղեստինը, Տանզանիան և Ուգանդան:

- **Ղազախստան.** Աշխատանքի ընդունման գործընթացում գենդերային պատկանելությունը հաշվի չի առնվում և չկա կին կամ տղամարդ թեկնածուների հանդեպ խտրական մոտեցում:⁵⁸

Ժամանակավոր պաշտոններում կանանց մասնակցությունը խթանելու օրենսդրական և ոչ օրենսդրական միջոցառումների մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Բոսնիա և Հերցեգովինա.** Ընտրական օրենքին համաձայն «պետք է ջանքեր գործադրվեն ապահովելու համար մունիցիպալ ընտրական հանձնաժողովներում կամ տեղամասային ընտրական հանձնաժողովներում թերներկայացված սեռի ներկայացուցիչների առնվազն 40 տոկոս ներկայացվածությունն ապահովելու ուղղությամբ»²⁶
- **Կամերուն.** Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների պաշտոններում առաջնահերթությունը պետք է տրվի կանանց՝ կին ընտրողների իրավունքները պաշտպանելու համար:²⁷
- **Եթովպիա.** Չկա ժամանակավոր աշխատակիցների կազմում կանանց ներկայացվածությունը կարգավորող կանոնակարգ, սակայն կա ընդունված պրակտիկա, համաձայն որի յուրաքանչյուր տեղամասային կենտրոնում նշանակվող հինգ ընտրական պաշտոնյաներից առնվազն երկուսը կանայք են:²⁸
- **Լիբանան.** Միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնների աշխատակիցները կանայք են:²⁹
- **Մադիվներ.** Ժամանակավոր աշխատակիցներն ընտրվում են արժանիքների և հարցազրույցի արդյունքների հիման վրա, անկախ նրանց սեռային պատկանելությունից:³⁰
- **Նեպալ.** Ընտրական հանձնաժողովի կողմից թողարկված ուղեցույցերում նշվում է, որ ընտրողների գրանցման ցուցակագրողների, ընտրողների կրթման միջոցառումների կամավորների և համայն-

քային քարոզիչների առնվազն կեսը պետք է լինեն կանայք: Յուրաքանչյուր տեղամասային կենտրոնում պետք է լինի առնվազն մեկ մատնահետքեր վերցնող կին աշխատակից, ով կկանոնակարգի կանանց հերթը:³¹

- **Պաղեստինի Պետություն.** 2016 թվականի ընտրությունների նախօրեին Ընտրական հանձնաժողովը հավաստիացել է, որ յուրաքանչյուր տեղամասային կենտրոնում կա առնվազն մեկ կին աշխատակից, որպեսզի դեմքը ծածկող կանայք կարողանան կին աշխատակցի մոտ բաց անել իրենց դեմքը նույնականացման համար: Այս միջոցը ձեռնարկվել է բոլոր այն վայրերում, որտեղ չեն եղել միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոններ:³²
- **Պակիստան.** Միայն կանանց համար նախատեսված բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովները նախագահել են կանայք: Երկու սեռերի նեկայացուցիչների համար նախատեսված որոշ տեղամասային ընտրական հանձնաժողովներ՝ հատկապես քաղաքներում նույնպես ունեցել են կին նախագահողներ: Պակիստանի կառավարությունը սահմանել է տեղամասային ընտրական հանձնաժողովներում կրտսեր պաշտոններում (ՊԱՀ լիադրույք աշխատակիցներ) կանանց առնվազն 10 տոկոս ներկայացվածությունն ապահովող քվոտա:³³
- **Տանզանիա.** Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների մեծ մասն ուսուցիչներ են, և քանի որ ուսուցիչների մեծ մասը կանայք են, տեղամասային ընտրական հանձնաժողովներում նույնպես կանայք մեծամասնություն են կազմում:³⁴
- **Արևելյա Թիմոր.** 2007 և 2012 թվականների ազգային ընտրություններում սահմանվել են տեղամասային ընտրական հանձնաժողովներում կանանց ներկայացվածությունն ապահովող քվոտաներ:³⁵

- **Մոլորվա.** Օրենքը պահանջում է ցանկացած տեսակի խտրականության վերացում, այդ թվում՝ գենդերային հիմքով խտրականությունը: Ընտրությունը կատարվում է գենդերային տեսանկյունից չեզոք մրցակցային քննության արդյունքների հիման վրա:⁵⁹
- **Ուզանդա.** Ընտրական հանձնաժողովների աշխատակիցների հավաքագրումը և առաջխաղացումն իրականացվում է թեկնածուի կամ աշխատակիցների արժանիքների հիման վրա՝ անկախ վերջիններիս սեռային պատկանելությունից: ⁶⁰

Այնտեղ, որտեղ խթանման քաղաքականության հետագոտությունները ի հայտ են բերել ղեկավար պաշտոններում կանանց թերներկայացվածություն, հարկավոր է ձեռնարկել **կանանց ներկայացվածությունը խթանող հաստուկ միջոցառումներ:** Օրինակ՝ Տանզանիայում և Նամբիայում ղեկավար պաշտոնների համար ընտրությունը կատարվում է արժանիքների հիման վրա, այնուամենայնիվ, եթե դիմում են հավասար որակավորում ունեցող կին և տղամարդ թեկնածուներ, կամ այլ մարզինալացված խմբերի ներկայացուցիչներ, նախապատվությունը տրվում է թերներկայացված սեռի կամ մարզինալացված խմբի ներկայացուցչին:

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետագոտությանը մասնակցած 35 երկրներից 10-ը (29%-ը) նշել են, որ իրենք կիրառում են դրական խտրականության միջոցառումներ կին աշխատակիցների առաջխաղացման համար: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Բելառուսի հանրապետությունը, Բոսնիան և Հերցեգովինան, Իրաքը, Ղազախստանը, Ղրղզստանը, Մոզամբիկը, Նամբիան Հարավային Աֆրիկան և Տանզանիան: Կանանց կարիերային զարգացմանն ու առաջխաղացմանը կարող են նպաստել նաև ուղղորդման և վերապատրաստման ծրագրերը, ինչպես նաև տարբեր կազմակերպությունների միջև փորձի փոխանակումը (վերապատրաստման մասով տես՝ Բաժին 5): Հարկավոր է նաև մտածել այն ուղղությամբ, թե արդյոք նորանշանակ աշխատակիցը պետք է անցնի իր պարտականությունների կատարմանը աշխատանքային առաջին իսկ օրվանից, թե ողջամիտ ժամկետներում վերապատրաստում անցնելուց և փորձ ձեռք բերելուց հետո: Այն հասարակություններում, որտեղ կրթության և որոշակի մասնագիտական ոլորտների հասանելիությունը կանանց համար սահմանափակ է, վերոնշյալ տարբերակներից երկրորդը թույլ կտա աշխատակիցների հավաքագրման կամ առաջխաղացման գործընթացը դարձնել առավել համընդգրկուն:

Կարևոր հանգամանք է նաև, որ ընտրող հանձնախմբի կազմում ևս լինի գենդերային հավասարակշռություն: Ընտրական մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման անձնակազմը կարող է ուշադրություն դարձնել հասարակական և մշակութային կանխակալություններին, որոնք խոչընդոտում են հավասար աշխատանքային հնարավորությունների ապահովմանը և խուսափել կանանց կամ տղամարդկանց գործունեության միայն որոշակի ոլորտներում ընդգրկելուց:

Հավելյալ ուշադրություն է պետք դարձնել տարբեր ֆորմների, տարածաշրջանային և միջազգային հանդիպումների և դասընթացների մասնակցող ընտրական մարմինների ազգային պատվիրակությունների ձևավորման չափորոշիչներին: 2012 թվականից ի վեր Իրաքում ՄԱԿ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր դասընթացներին և ուսումնական շրջագայություններին մասնակցող պատվիրակությունների առնվազն մեկ քառորդը պետք է կազմեն Անկախ բարձրագույն ընտրական հանձնաժողովի (ԱԲԸՀ) կին աշխատակիցները: 2013 թվականի հոկտեմբերին Կորեայում ՄԱԶԾ-ի և Կորեայի Հանրապետության կողմից կազմակերպված Գլոբալ ընտրական կազմակերպության (ԳԸԿ) վեցերորդ տարեկան համաժողովին առաջարկություն է արվել, որ հետագա համաժողովներում երկրների պատվիրակությունների կազմում կանայք ունենան առնվազն 30 տոկոս ներկայացվածություն: ԳԸԿ համաժողովը ընտրական մասնագետների առաջատար միջազգային ֆորում է, որի նպատակն է նպաստել փորձի և տեղեկատվության փոխանակմանը և կապերի հաստատմանը:

4.3. Կանայք որպես ժամանակավոր և/կամ տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատակիցներ

Ինչպես արդեն նշվել է, աշխատակազմում գենդերային հավասարակշռությունը հնարավոր է ապահովել զուգակշռվածության սկզբունքի վրա հիմնված պաշտոնական հավաքագրման քաղաքականության կամ համապատասխան քվոտավորման կամ կամավոր ուղեցույցների կամ ընտրական մարմնի կամ պետության հավաքագրման քաղաքականության թիրախների վրա հիմնվելով:

Կենտրոնական ընտրական մարմնի բոլոր համապատասխան քաղաքականությունները պետք է հնարավորության դեպքում կիրառվեն նաև տեղամասային կենտրոններում աշխատող աշխատակիցների, այդ թվում՝ գրանցում իրականացնող և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների հավաքագրման գործընթա-

ցում: Որոշ երկրներում կիրառվում են հատուկ միջոցառումներ կանանց, որպես ժամանակավոր աշխատակիցներ կամ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ ներգրավելու համար: Հարկավոր է նաև հաշվի առնել տեղական համատեքստին հատուկ նկատառումները (օրինակ՝ անվտանգությունը, տե՛ս Բաժին 4-ը):

Երբ ընտրական շրջանում այլ պետական մարմինների աշխատակիցներ գործուղվում են ընտրական մարմիններ ընտրական աշխատանքներում ժամանակավորապես ներգրավվելու համար, հարկավոր է այս դեպքում նույնպես հավատարիմ մնալ տղամարդկանց և կանանց համար հավասար հնարավորությունների ապա-


հովման սկզբունքին: Եթե ընտրական մարմինը կարող է ընտրել, թե որ պետական հաստատության աշխատակիցները պետք է ժամանակավորապես ներգրավվեն ընտրական գործընթացներում, ապա այն կարող է նախապատվություն տալ այն հաստատություններին, որտեղ աշխատում են թե՛ կանայք, թե՛ տղամարդիկ, կամ մի շարք հաստատությունների, որոնք միասին վերցրած ունեն կին և տղամարդ աշխատակիցների հավասար համամասնություն: Եթե խնդիր է դրված ապահովել սեռերի հավասար ներկայացվածություն, գործուղման համակարգը մշակելիս վերջնական որոշումը պետք է կայացնի ընտրական մարմինը:



© ՄԱԿ-ի նկար / Մարտին Պերե

ԱՄՓՈՓՈՒՄ

- Կանանց ներկայացվածությունը ընտրական մարմինների բոլոր մակարդակներում, այդ թվում՝ ղեկավար պաշտոններում անհրաժեշտ գործոն է, որպեսզի թե՛ հաստատությունը և թե՛ հաստատության գործունեությունը համապատասխանեն գենդերային հավասարության նպատակներին և պարտավորություններին:
- Կանանց ներկայացվածությունն ապահովելու մի քանի ճանապարհ, այդ թվում՝ այնպիսի ԺՅՄ-ների որդեգրումը, ինչպիսին է ընտրական հանձնաժողովի անդամների և քարտուղարության անձնակազմի նշանակման և հավաքագրման գործընթացում քվոտայի կիրառումը:
- Հավասար հնարավորությունների քաղաքականությունը և աշխատակիցների հավաքագրման և առաջխաղացման գենդերային զգայուն գործընթացները, օրինակ՝ հավասար որակավորում ունեցող կին և տղամարդ թեկնածուներից նախապատվությունը կին թեկնածուին տալը, կարող են հանգեցնել հաստատության աշխատակազմում ավելի կայուն գենդերային հավասարակշռության :
- Կարևոր է ընտրական շրջանում կին աշխատակիցների ներգրավումը, ինչը կարող է խրախուսել և որոշ դեպքերում դյուրացնել կին ընտրողների մասնակցությունը:



5

Ընտրական մարմնում գենդերային զգայուն աշխատանքային մշակույթի ստեղծումը

Ի լրումն իրավական և քաղաքականության շրջանակների մշակմանը, ստեղծելով գենդերային բաղադրիչի ներառման ենթակառուցվածք և հասցեագրելով գենդերային հավասարակշռության հիմնահարցերը ընտրական մարմնի աշխատակազմում, ընտրական մարմինը կարող է ուսումնասիրել աշխատավայրի մշակույթը գենդերային տեսանկյունից: Ներկայացված հավասարակշռության մշակույթը ձևավորվում է աշխատավայրում գործող որոշակի նորմերի, կանոնների և պրակտիկաների հիման վրա: Այն արտացոլում է ընդունելի չափանիշները և պայմանները, որոնց ներքո գործում է հաստատության աշխատակազմը:

Գենդերային զգայուն աշխատանքային մշակույթը ապահովում է միջավայր, որտեղ յուրաքանչյուր ոք հարմարավետ է զգում իր աշխատանքն արդյունավետ կատարելու համար: Գենդերային զգայուն աշխատանքային մշակույթի երկու հիմնական տարրերն են՝ բոլոր աշխատակիցների համար աշխատանքի և կյանքի միջև հավասարակշռության ապահովումը և, անհրաժեշտության դեպքում, կին աշխատակիցների կարիքները հասցեագրող հատուկ մոտեցումների որդեգրումը, ինչպես նաև խտրականության բոլոր ձևերի, այդ թվում՝ ոտնձգության և ծաղրանքի բացառումը:

5.1 Աշխատանքի և կյանքի միջև հավասարակշռություն

Կանանց աճող մասնակցությունը վարձատրվող աշխատավայրերում պահանջում է զգալի փոփոխություններ կազմակերպությունների կառուցվածքում և ներքին կազմակերպական ընթացակարգերում: Ծաբայթական աշխատանքային ժամերը, ընտանեակենտրոն քաղաքականությունները, այդ թվում՝ արձակուրդների նախատեսումը, ինչպես նաև կանանց հատուկ կարիքները հասցեագրող մոտեցումների որդեգրումն աշխատավայրում այն մի քանի ոլորտներն են, որոնք բոլոր հաստատությունները, այդ թվում՝ ընտրական մարմինները կարող են հաշվի առնել՝ գենդերային զգայուն հաստատություն դառնալու համար:

Ընտրական շրջանում ընտրական մարմնի աշխատանք

ընդ ինտենսիվ է և հաճախ ենթադրում է արտաժամայն աշխատանք՝ ընտրությունների արդյունավետ անցկացումն ապահովելու համար: Այս ակնկալիքները ընդհանուր խնդիր են շատ ընտրական մարմիններում աշխատող կանանց համար: Օրինակ՝ Աֆղանստանի գենդերային հարցերը համակարգող բաժինը նշել է, որ կին աշխատակիցներին մտահոգում է այն փաստը, որ իրենք հաճախ ստանում են արտաժամայն աշխատելու կարգադրություն անգամ ուրբաթ օրերին: Նմանատիպ իրավիճակները խնդրահարույց են կանանց համար, քանի որ վերջիններս ունեն պարտադիր ընտանեկան պարտականություններ, ինչպես նաև չեն կարող դրսում լինել մութ ընկնելուց հետո:⁶¹ Նման կարգադրությունները բացասաբար են ազդում նաև տղամարդ աշխատակիցների վրա:

Նմանատիպ իրավիճակները կարող են հասցեագրվել հատուկ քաղաքականության միջոցով, որը հաշվի է առնում ընտրական շրջանում նմանատիպ կարգադրությունների ազդեցությունը մասնավորապես ընտանիք ունեցող կանանց վրա: Օրինակ՝ ընտրական շրջանում աշխատանքային ժամանակացույցը կազմելիս կարելի է աշխատակիցներին իրենց կանոնավոր աշխատաժամերից բացի 50% արտաժամայն աշխատանք պարտադրելու փոխարեն հավելյալ աշխատանքի համար ներգրավել հավելյալ աշխատակիցների կամ դիտարկել հերթափոխով աշխատանքի կազմակերպման տարբերակը:

Կանադայի ընտրական մարմիններում գենդերային բաղադրիչի ներառումն ազդում է բազմաթիվ ոլորտների վրա: Գենդերային հավասարության իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրվում է ինչպես համակարգային, այնպես էլ անհատական ճանապարհով՝ նորանշանակ աշխատակիցներին տրամադրվող ձևաթղթերի միջոցով: Աշխատուժի վերլուծությունն իրականացվում է եռամսյակային կտրվածքով և տարածվում է ղեկավար անձնակազմի շրջանում: 2011 թվականի հունվարին Կանադայի ընտրական մարմիններում ղեկավար պաշտոնների հասանելիությունն ընդլայնելու համար սահմանվել են «ընտրության նվազագույն շրջանակ» (աշխարհագրական սահմաններ, որտեղ բնակվող և աշխատող մարդկանց վրա է տարածվում թափուր հաստիքի համար դիտարկվող թեկնածուների ընտրության շրջանակը): Թեկնածուների ընտրությունն իրականացվում է մանրակրկտորեն՝ հիմնվելով վերջիններիս արժանիքների վրա: Գենդերային ներառականության կամ գենդերային զգայուն միջավայրի ապահովման համար կարող են որդեգրվել համապատասխանեցված մոտեցումներ: Համապատասխանեցված մոտեցման օրինակ է եղել արտաժամյա աշխատանքի կրճատումը 40-րդ և 41-րդ ընդհանուր ընտրությունների ժամանակ: Ի լրումն այս մոտեցմանը՝ ձեռնարկվել են մի շարք այլ միջոցառումներ, օրինակ հերթափոխի սահմանումը և այլն: Կանադայի ընտրական հանձնաժողովը շարունակում է տեղեկատվություն տրամադրել ղեկավարներին (ինտրանետի, վերապատրաստումների, աշխատաժողովների միջոցով) գենդերային հավասարության իրավիճակի մասին, այդ թվում՝ հաստատության աշխատուժի մասին, ապահովելու համար ղեկավար անձնակազմի իրազեկվածությունը գենդերային հավասարության հիմնահարցերի վերաբերյալ: Կանադայի Ընտրական հանձնաժողովը հիմնադրել է բազմազանության հանձնաժողով, որը զբաղվում է հավասարության և բազմաշախուղայնության խթանմամբ: Հանձնաժողովն ամեն տարի կազմակերպում է բազմաթիվ միջոցառումներ, ինչպիսիք են՝ բազմազանության թեմայով ընդունելություններ, հոլովակների շնորհանդեսներ և Կանադայի ընտրական հանձնաժողովի տեղեկատվական թերթում թեմատիկ հոդվածների հրապարակումներ:⁸⁶



Ընտանեակենտրոն աշխատանքային պայմանների ապահովման մի շարք օրինակներ բերված են ստորև.

- **Կոստա Ռիկա.** Ինստիտուցիոնալ գենդերային քաղաքականությունը ենթադրում է աշխատակիցների ընտանեկան և աշխատանքային պարտավորությունների ներդաշնակեցում, ներառյալ այնպիսի իրավիճակներում, ինչպիսիք են՝ ընտանեկան բռնության դեպքերը, միայնակ ծնողավարումը, ընտանիքի տարեց, հաշմանդամություն ունեցող կամ անչափահաս անդամների խնամքը: Այսպիսի դեպքերը հասցեագրող միջոցառումների շրջանակներում կարելի է դիտարկել ցերեկային խնամքի կենտրոնների ստեղծումը:³⁶
- **Վրաստան.** Գենդերային քաղաքականությունը ներառում է մանկահասակ երեխաներ ունեցող կին աշխատակիցների համար ճկուն աշխատաժամերի սահմանումը: Ընտրական մարմնի աշխատակիցներին հատկացվում է հղիության, ծննդաբերության, նորածնի որդեգրման և երեխայի խնամքի նպաստ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը վարում է վարչակազմի տվյալների բազա, այդ թվում՝ 11 տարեկանից փոքր երեխաներ ունեցող մայրերի թվաքանակի վերաբերյալ: Այս տվյալները թույլ են տալիս դասակարգել կարիքներն ըստ առաջնահերթության և ձեռնարկել մանկահասակ երեխաներ ունեցող ընտանիքների սատարման միջոցառումներ:³⁷

- **Ռումինիա.** Ընտրական մարմինը սահմանել է ճկուն աշխատանքային պայմաններ մանկահասակ երեխաներ ունեցող կին աշխատակիցների համար, այդ թվում՝ կրճքով կերակրման համար հատկացվող լրացուցիչ ընդմիջումներ:³⁸
- **Արևելյան Թիմոր.** 2009 թվականի տեղական ընտրությունների և 2012 թվականի ազգային ընտրությունների ժամանակ ընտրական մարմինների աշխատակիցների վերապատրաստման դասընթացներում ներառվել է հղի կանանց և երեխաների հետ ներկայացած կանանց առաջնահերթություն տալու և այլ ընտանեակենտրոն մոտեցումների վերաբերյալ տեղեկատվություն:

Ծնողական արձակուրդը կարող է համարվել նվազագույն պահանջ կին աշխատակիցներ ունեցող ցանկացած հաստատության համար: Կարելի է ընդունել նաև այլ բազմաթիվ ընտանեակներին քաղաքականություններ, այդ թվում՝ աշխատավայրում երեխայի խնամքի կենտրոնների ստեղծումը կամ երեխայի խնամքի հավաստատման տրամադրումը, կրծքով կերակրող մայրերի համար հատուկ պայմանների ստեղծումը, ընտանեկան սենյակի ստեղծումը և կես դրույքով աշխատանքի վերադառնալու հնարավորությունը:

Կարելի է դիտարկել կին և տղամարդ աշխատակիցներին ընտանեկան հանգամանքներով պայմանավորված հատուկ արձակուրդներ տրամադրելու հնարավորությունը անհատական արտակարգ իրավիճակները հասցեագրելու համար, երբ արձակուրդի մյուս տարբերակների դիտարկումը հնարավոր չէ:

Կանանց մասնակցությունը և աշխատանքի պահպանումը խրախուսելու համար կարելի է ձեռնարկել կյանքի և աշխատանքի միջև հավասարակշռությանը միտված այլ միջոցառումներ, այդ թվում՝ հատկացնել միայն կանանց համար կամ ընդհանուր առթյալ սենյակ, սահմանել ճկուն աշխատանքային պայմաններ՝ հաշվի առնելով ուսումնական տարվա ժամանակացույցը կամ ընտանիքի հիվանդ անդամների խնամքը, կես դրույքով կամ հերթափոխով աշխատելու հնարավորությունը, առանձին դեպքերում՝ գործուղումներին ընտանիքի անդամի հետ մեկնելու համար անհրաժեշտ ծախսերի հատուցումը, տարեկան գործուղումների քանակի սահմանափակումը կամ ճամփորդության ընթացքում ընտանիքի անդամների հետ հաղորդակցվելու ծախսերի հատուցումը:

Կարող է լինել նաև աշխատավայրում կանանց հարմարավետությունն ապահովող գենդերային ուղղվածությամբ ինստիտուցիոնալ ռազմավարությունների շրջանակ: Օրինակ՝ հատուկ կանանց համար նախատեսված սանհանգույցի առկայությունը ցույց է տալիս, որ կանայք աշխատանքային միջավայրի մասն են կազմում: Որոշ երկրներում կանանց համար նախատեսված սանհանգույցները ներառված չեն եղել շենքի նախնական նախագծում և որքան ավելի շատ կանայք են ներգրավվել հաստատության աշխատակազմում, այնքան ավելի է մեծացավ դրանց կառուցման անհրաժեշտությունը: Այսպիսին է եղել իրավիճակը Նեպալում, երբ 2011 թվականին կին աշխատակիցների քանակի կտրուկ ավելացումը Նեպալի Ընտրական հանձնաժողովում հանգեցրել է կանանց համար նախատեսված

սանհանգույցների կառուցման անհրաժեշտությանը: Այլ կարևոր հարցեր են աշխատավայրի անվտանգությունը, անվտանգ մուտքն ու ելքը, ինչպես նաև կանանց փոխադրող տրանսպորտի ապահովումը՝ հատկապես վաղ առավոտյան և ուշ գիշերային ժամերին:

5.2 Խտրականության, ոտնձգությունների և ծաղրանքի բացառումը

Աշխատավայրի մշակույթը պետք է բացառի որևէ աշխատակցի հանդեպ որևէ հիմքով խտրականություն և պետք ապահովի, որ աշխատավայրը մարդկանց համար լինի ապահով միջավայր իրենց պարտականություններն իրականացնելու համար: Կարևոր է ապահովել, որ գործելակերպը չդրսևորի խտրականություն որևէ աշխատակցի նկատմամբ կամ բացառի որևէ աշխատակցի, կամ որևէ աշխատակցի համար ստեղծի անհարմարություններ: Օրինակ՝ այն մտածելակերպը, որ կանայք չեն կարող տեղակայվել որևէ կոնկրետ վայրում կամ չեն կարող ճանապարհորդել երկրի ներսում կամ դեպի արտերկիր, կամ առանց ուղեկցման խտրականության դրսևորում է և կարող է կասկածի տակ դնել կանանց հեղինակությունը: Անհրաժեշտ է բացահայտել և վերացնել խտրականության, այդ թվում՝ ոչ միտումնաբեր կամ անուղղակի խտրականության հիմքում ընկած պատճառները: Սեռական խտրականության հիմքում հաճախ ընկած են այն համոզմունքները և գործելակերպերը, որոնք գոյություն են ունեցել տարիներ շարունակ և հետևաբար կարող են համարվել սովորական և մնալ աննկատ:

Ղեկավարությունը կարող է հղել ուղերձ առ այն, որ այն ցանկանում է խթանել գենդերային զգայուն աշխատավայրի ապահովումը, այդ հանձնառությունը ընդգրկելով իր ռազմավարական ծրագրում և գործառնական նպատակներում, և ընդունելով մի շարք գենդերային հիմնահարցերը հասցեագրող քաղաքականություններ: Գենդերային քաղաքականությունները մասնավորապես ուղղված են լինում չեղարկելու այն ընթացակարգերը և գաղափարները, որոնք շատերի կողմից ընդունվել են որպես սովորական և չեն դիտարկվել որպես խտրական: Իհարկե, հետագայում այդ քաղաքականությունները պետք է ներկայացվեն, իրականացվեն և մշտադիտարկվեն: Այս իմաստով լավ գործելակերպ կարող է լինել խտրականության վերաբերյալ մասնագիտական զարգացման սեմինարների անցկացումն աշխատավայրում, այնպես, որ բոլոր աշխատակիցները տեղեկացված լինեն կանոնակարգող շրջանակի և ամրագրված

դրույթները խախտելու հնարավոր հետևանքների մասին (վերապատրաստման մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Բաժին 5-ը):

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մասնակից երկրներից ութը (23 տոկոս) նշել են, որ իրենք ունեն «սեռական ոտնձգությունների (դեմ) սահմանված քաղաքականություն»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Կանադան, Կոստա Ռիկան, Ղազախստանը, Մալդիվյան Հանրապետությունը, Պաղեստինը, Հարավային Աֆրիկան և Տանզանիան: Աֆղանստանում գենդերային հարցերը համակարգող բաժինն իրականացրել է մի շարք աշխատանքային քննարկումներ այն աշխատակիցների համար, որոնք խոցելի են ոտնձգությունների նկատմամբ, այդ թվում՝ ծառայող անձնակազմը, օրինակ՝ հավաքարարները և խոհարարները:⁶² Բացի այդ, ամբողջ անձնակազմն անցնում է ոտնձգությունների մասին իրազեկման դասընթացներ, այդ թվում՝ աշխատավայրում ոչ պատշաճ վարվելակերպի և ոտնձգությունների դեպքերի հասցեագրման վերաբերյալ:⁶³


Իր սեփական քաղաքականությունը և ներքին կանոնակարգը սահմանելիս՝ ընտրական մարմինը կարող է ակտիվորեն իրականացնել օրենսդրությամբ սահմանված խտրականության դեմ պայքարին ուղղված ցանկացած միջոցառում: Կանադայում, օրինակ, սահմանվել են համընդգրկուն աշխատավայրի ուղեցույց (Կանադայի մարդու իրավունքների հարցերով հանձնաժողով) և Աշխատավայրում ոտնձգությունների կանխարգելման և հաղթահարման քաղաքականություն:⁶⁴



© Գաբրիել Բարդալ

ԱՄՓՈՓՈՒՄ

- Գործող նորմերը և գործելակերպերը շատ հաստատություններում և կազմակերպություններում կարող են իրենց ազդեցությունն ունենալ կանանց վրա կամ նրանց համար անհարմարություն առաջացնել աշխատավայրում:
- Ընտրական մարմինները կարող են վերանայել իրենց աշխատանքային մշակույթն այնպես, որ այն լինի գենդերային զգայուն, թույլ տալով բոլոր աշխատակիցներին զգալ լեգիտիմորեն ընդգրկված, ապահով և ամենակարևորը՝ ավելի արդյունավետ:
- Աշխատավայրի մշակույթի հասցեագրումը պահանջում է ուշադրություն դարձնել այն ուղիներին, որոնց միջոցով անհատները կարող են հավասարակշռել իրենց աշխատանքը և ընտանեկան պարտականությունները:
- Կազմակերպություններն ունեն նաև իրենց աշխատակիցների մասին հոգ տանելու պարտականություն: Խտրականության ցանկացած ձև, այդ թվում՝ ծաղրանքը և ոտնձգությունները պետք վերացվեն օրենքների և կարգավորումների և աշխատանքային քննարկումների և մասնագիտական զարգացման դասընթացների միջոցով:



6

Գենդերային հավասարության ապահովման կարողությունների զարգացումը վերապատրաստման միջոցով

Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ իրազեկ ընտրական մարմիններն իրենց աշխատակիցներից պահանջում են հասկանալ գենդերային բաղադրիչի ներառման ռազմավարությունները և մասնակցել դրանց իրականացմանը: Հասկանալու և իրականացնելու կարողությունը հնարավոր է զարգացնել կազմակերպության ներսում կոնկրետ խմբերի համար մի շարք վերապատրաստման դասընթացների անցկացման միջոցով:

Օրինակ՝ աշխատակազմի համար կարող են իրականացվել գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ վերապատրաստումներ և կոնկրետ գենդերային քաղաքականությունների վերաբերյալ աշխատանքային քննարկումներ՝ գենդերային հավասարության արժեքները բարձրացնելու և ընտրական մարմնում գենդերային զգայունության անհրաժեշտությունը շեշտադրելու համար: Մասնագիտացված վերապատրաստում, այդ թվում՝ աշխատավայրում հրահանգավորում կարող են իրականացվել գենդերային հավասարության հարցերով պատասխանատու անձանց կամ այն աշխատակիցների համար (և՛ տղամարդ, և՛ կին), ում պարտականությունների շրջանակն ընգրկում է գենդերային բաղադրիչի ներառումը: Վերջիններիս համար կարող են նաև մշակվել հատուկ մասնագիտական զարգացման ծրագրեր՝ կազմակերպությունում նրանց անձնական աճը խթանելու համար:

Գենդերային զգայունության թեմայով վերապատրաստում իրականացնելիս անհրաժեշտ է հաշվի առնել մի քանի նկատառումներ: Նախ, անկախ նրանից, թե ով է իրականացում վերապատրաստումը (հրավիրված խորհրդատուները կամ կազմակերպության աշխատակից հանդիսացող վերապատրաստողները), բովանդակությունը պետք է արտահայտի այդ հաստատության գենդերային հավասարության ապահովման նպատակները: Երկրորդ, անհրաժեշտ է հաշվի առնել վերապատրաստման վայրը և ժամը, որպեսզի վերապատրաստումը հասանելի լինի բոլոր աշխատակիցների համար: Կարևոր է նաև տեղեկացված լինել վերապատրաստմանը մասնակցող կանանց և տղամարդկանց թվային հարաբերակցության մասին և այդ մասին նշել հաշվետվության կամ գնահատ-

ման մեջ: Երրորդ կարևոր հարցը վերապատրաստման խմբերի կազմն է: Սովորաբար, երբ վերապատրաստումն իրականացնում են երկու և ավելի վերապատրաստողներ կամ վարողներ, ցանկալի է, որ խումբը լինի գենդերային իմաստով գուցակշռված: Որոշ համատեքստերում, սակայն, ավելի նպատակահարմար է խմբերում ներգրավել միայն կին մասնակիցների: Այս մթնոլորտում մասնակիցները կարող են ավելի համարձակ արտահայտել իրենց կարծիքները, ավելի մեծ օժանդակություն ստանալ իրենց գործընկերների կողմից և ավելի մեծ օգուտ քաղել վերապատրաստումից: Եվ ի վերջո, ընտրական մարմիններում ներգրավված բոլոր վերապատրաստողները, անկախ իրենց մասնագիտական ուղղվածությունից, պետք է անցնեն գենդերային հավասարության հիմնախնդիրների վերաբերյալ իրազեկման վերապատրաստում, որպեսզի նրանց կողմից անցկացվող դասընթացները լինեն գենդերային հավասարության հիմնահարցերի վերաբերյալ ավելի իրազեկող:

Ստորև ներկայացված են ընտրական մարմինների աշխատակազմի վերապատրաստման ծրագրերում գենդերային հավասարության հիմնահարցերի ներառման մի քանի տարբերակներ՝

1. Բոլոր մակարդակների աշխատակիցների համար կարող են իրականացվել գենդերային հավասարության հիմնահարցերի վերաբերյալ իրազեկման պարտադիր դասընթացներ:
2. Գենդերային հավասարության հիմնահարցերը կարող են ներառվել ընտրական մարմինների աշխատակիցների համար իրականացվող բոլոր դասընթացներում՝ ընտրական ընթացակարգերի գենդեր-

Գենդերային հիմնահարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով անցկացվող վերապատրաստումների մի շարք օրինակներ բերված են ստորև.

- **Աֆղանստան.** 2010 թվականի ընտրությունների նախօրեին գենդերային հարցերը համակարգող բաժինը համապատասխան վերապատրաստում է կազմակերպել կին աշխատակիցների, գենդերային հավասարության հարցերով պատասխանատու անձնաց կամ միավորների և ընտրությունների ժամանակ գենդերային հավասարության հարցերով հանձնակատարների համար: Վերապատրաստման շրջանակն ընդգրկել է համապատասխան մոտեցումները, հմտությունները և գիտելիքները: ⁸⁷ԱԱԸՀ-ի կին աշխատակիցները կանոնավոր հանդիպումներ են ունեցել աշխատավայրի կարիքները և մարտահրավերները նախանշելու և քննարկելու համար: Յուրաքանչյուր հանդիպում ներառել է հատուկ գենդերային հավասարությանը կամ ընտրություններին վերաբերող թեմաներով պրեզենտացիաներ՝ որպես կարողությունների զարգացման մաս: Հանդիպումների արդյունքում ստացված առաջարկությունները ներկայացվել են բարձրաստիճան ղեկավարությանը:⁸⁸
- **Մեխիկո.** 2010 թվականին Ընտրական տրիբունալը (*Tribunal del Poder Judicial de la Federación*, կամ TPJF-ն) մասնակցել է ՄԱԶԾ-ի, ՄԱԿ-Կանայք կառույցի, Մեխիկոյի կառավարության արտաքին հարաբերությունների քարտուղարության (որն իրավասու է զբաղվելու Մեխիկոյում գենդերային հավասարության, քաղաքական իրավունքների և արտաքին հարաբերությունների հարցերով) «Դեպի կանանց՝ մարդու իրավունքների իրացման հզորացում» թեմայով համատեղ նախաձեռնությանը: Այս նախաձեռնությունը ներառել է միջոցառումներ ուղղված Ընտրական տրիբունալի դատավորների վերապատրաստմանը գենդերային հավասարու-

թյան հայեցակարգն իրենց աշխատանքում ընդգրկելու մասով: Ընտրական տրիբունալի աշխատակազմը նշել է, որ գենդերային հավասարության տեսանկյունից գործի քննման վերաբերյալ հատուկ դասընթացների արդյունքում լրացվել են օրենսդրության կարևոր բացերը և կայացվել են շատ առաջադեմ վճիռներ, այդ թվում՝ քվոտաների մասին օրենքի կիրառումը:⁸⁹

- **Նեպալ.** Նեպալի Ընտրական հանձնաժողովն իր աշխատակիցների, անվտանգություն ապահովող մարմինների, կառավարության անձնակազմի և այլ շահառուների համար կազմակերպել և իրականացրել է համակողմանի վերապատրաստման ծրագրեր՝ ուղղված ընտրական գործընթացներում կանանց մասնակցությանը:
- **Ուկրաինա.** Բոլոր հանրային ծառայողներն անցնում են իրազեկող վերապատրաստում՝ գենդերային հիմքով կարծրատիպերին հակազդելու համար:⁹⁰
- **Արևելյան Թիմոր.** Ընտրական մարմինները մշակել և իրականացրել են վերապատրաստման ծրագրեր ողջ երկրի համար, այդ թվում՝ գենդերային հավասարության և կանանց մասնակցության թեմաներով: Բացի այդ, ընտրական մարմիններն իրականացրել են թեմատիկ իրազեկման արշավներ 2007 և 2012 թվականների ազգային ընտրությունների, ինչպես նաև 2009թ. տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ողջ ընթացքում:
- **ՄԱԶԾ-ի՝** Ընտրական շրջափուլի աջակցության գլոբալ ծրագիրը (GPECS) մշակել է **BRIDGE** ծրագրի մոդուլ գենդերային հավասարության և ընտրությունների վերաբերյալ, որն առաջարկում է համակողմանի հնգօրյա դասընթացներ ընտրական մրցակցության, վարչարարության և մասնակցության հարցերի վերաբերյալ: 2011 թվականից ի վեր այս դասընթացին մասնակցել են ավելի քան 500 մասնակիցներ ավելի քան 60 երկրներից:

րային զգայունությունը ապահովելու համար:

3. Կարող են կազմակերպվել մասնագիտացված դասընթացներ, այդ թվում՝ գենդերային հարցերը համակարգող անձանց համար՝ հատուկ քաղաքականությունների վերաբերյալ կամ այլ համապատասխան թեմաներով:
4. Կարող է կազմակերպվել դասընթաց՝ հավասար զբաղվածության հնարավորություններ ապահովելու կամ կոնկրետ ոլորտներում կարողություններ ձևավորելու համար:

6.1. Պարտադիր վերապատրաստում բոլոր աշխատակիցների համար

Ընտրական մարմինների համար կարող է պարտադիր լինել գենդերային հավասարության, գենդերային բաղադրիչի ներառման և գենդերային վերլուծության թեմաներով դասընթացների կազմակերպումը: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մասնակից 35 երկրներից չորսը (11 տոկոս) նշել են, որ «գենդերային հավասարության թեմայով վերապատրաստումը պարտադիր է ղեկավար անձնակազմի և բոլոր աշխատակիցների համար»: Այդ երկրներն են՝

Կոստա Ռիկյան, Ղազարյան, Մոզամբիկը և Տանգանիան: Տանգանիայում ընտրական մարմինը ակտիվորեն փնտրում և իրականացնում է կանանց հզորացման վերաբերյալ դասընթացներ:

Գենդերային հավասարության կոնկրետ մարտահրավերներ, այդ թվում՝ խտրականությունը, ոտնձգությունները և ծաղրանքը հասցեագրող քաղաքականությունների վերաբերյալ վերապատրաստումները պետք է հասանելի լինեն ողջ աշխատակազմի համար: Նոր քաղաքականություն որդեգրելիս հարկավոր է իրականացնել այդ աղաքականության վերաբերյալ վերապատրաստում ողջ աշխատակազմի համար՝ ապահովելու համար քաղաքականության ճանաչումն ու ընկալումը հաստատության ներքում: Որոշումների կայացման, քաղաքականությունների մշակման և գործողությունների պլանավորման գործընթացներում քաղաքականության կիրառումն ապահովելու համար հարկավոր է տվյալ քաղաքականության վերաբերյալ դասընթաց կազմակերպել նաև ղեկավար անձնակազմի համար: Եթե աշխատավայրում կան ոտնձգության, այդ թվում՝ ծաղրանքի և սեռական ոտնձգության դրսևորումներ, ապա կարևոր է բոլոր կին և տղամարդ աշխատակիցների համար ոտնձգությունների վերաբերյալ իրազեկման դասընթացի կազմակերպումը՝ աշխատավայրում ապահովության մթնոլորտ կերտելու համար: Այս տեսակ դասընթացը հնարավորություն է տալիս մարդկանց նախանշել ոտնձգության դրսևորումները, դրանց ազդեցությունը մյուսների վրա, ինչպես է այն հակասում կազմակերպության քաղաքականությանը և ինչ է պետք անել, երբ որևէ աշխատակցի նկատմամբ կիրառվում է կամ որևէ աշխատակից աշխատանքի ժամանակ առերեսվում է ոտնձգության դրսևորումների:

6.2. Գենդերային բաղադրիչի ներառումը ընտրական մարմինների բոլոր դասընթացներում

Գենդերային անհավասարության դրսևորումները կարող են ազդել ընտրական շրջափուլի բոլոր տարրերի վրա: Հետևաբար կարևոր է գենդերային բաղադրիչի ներառումը ընտրական մարմինների կողմից առաջարկվող բոլոր դասընթացներում, այդ թվում՝ ընտրական համակարգի բոլոր աշխատակիցների համար՝ ընտրական գործառնությունների վերաբերյալ դասընթացներում: Աֆղանստանում քվեարկողների գրանցումն իրականացնող աշխատակիցների համար կազմակերպված վերապատրաստման ընթացքում քննարկվել են ամուսնու կողմից կնոջ փոխարեն գրանցումը կանխող գործողությունները, ինչպես նաև կին ընտրողների՝ լուսան-

Թիրախային վերապատրաստման ծրագրերի մի շարք օրինակներ բերված են ստորև.

- Գանայում 2009 թվականին ՄԱԶԾ-ի կողմից իրականացվել են մի շարք թիրախային ծրագրեր, օրինակ՝ Ընտրական հանձնաժողովի գենդերային հավասարության և հաշմանդամության մասնագիտացված գրասենյակի համար՝ կանանց և խոցելի այլ խմբերի՝ ընտրական գործընթացներում լիարժեք ներգրավվածության և մասնակցության ապահովումը դյուրացնելու համար:⁹¹
- Լիբերիայում ՄԱԶԾ-ի գենդերային հավասարության հարցերի փորձագետներն աշխատել են ընտրական մարմիններում տեղական գործընկերների հետ՝ վերջիններիս կարողությունների զարգացման օժանդակելու համար: Օժանդակության այս տեսակը նպաստել է գենդերային հավասարության հարցերը համակարգող անձանց կարողությունների զարգացմանը, ինչպես նաև խթանել է կազմակերպության ավելի լայն շրջանակներում գենդերային հավասարության հարցերը որպես գերակա ուղղություն սահմանելու գործընթացը:⁹²Գենդերային հավասարության հարցերով տեխնիկական կարողությունների աջակցության արդյունքում ԱԸՀ-ի կազմում ձևավորվել է գենդերային հավասարության համակարգողների գրասենյակը:⁹³
- Նեպալ. Ընտրական մարմինները Նեպալում մշակել, կազմակերպել և իրականացրել են գենդերային հավասարության վերաբերյալ մի շարք դասընթացներ հեղինակավոր փորձագետների և Bridge ծրագրի կողմից հավատարմագրված ֆախիլիտատորների միջոցով: Բացի այդ, իրականացվել են հաշմանդամություն ունեցող անձանց, խոցելի փոքրամասնություններին և այլ խոցելի խմբեր թիրախավորող թեմատիկ վերապատրաստման ծրագրեր:
- Արևելյան Թիմոր. Հաշմանդամություն ունեցող անձինք մասնավորապես եղել են ընտրությունների վարչարարության վերաբերյալ վերապատրաստման ծրագրերի և իրազեկման արշավների կենտրոնում: Բացի այդ, իրականացվել են ընտրողների կրթության թիրախային արշավներ հեռավոր շրջաններում բնակվող երիտասարդ և առաջին անգամ ընտրություններին մասնակցող ընտրողների, կանանց և տարեցների համար:

կարի փոխարեն մատնահետքով նույնականացումը:⁶⁵ BRIDGE ծրագրի գենդերային հավասարության և ընտրությունների մոդուլը կարող է հիմք հանդիսանալ վերապատրաստման բոլոր նյութերում գենդերային վերլուծությունների և համապատասխան գործողությունների ներառման համար: Քվեարկողների իրազեկման մասին լրացուցիչ տեղեկատվությունը տրամադրված է Բաժին 13-ում:

6.3. Հատուկ պարտականություններ ունեցող անձնակազմի վերապատրաստումը

Որոշ աշխատակիցների համար կարող է պահանջվել գենդերային հավասարության մասին մասնագիտացված կամ ավելի խորքային թեմատիկ վերապատրաստում՝ պայմանավորված այն հատուկ պարտականություններով, որ վերջիններս ունեն գենդերային բաղադրիչի ներառման հետ կապված:

Գենդերային հավասարության հարցերով պատասխանատու անձանց կամ միավորների վերապատրաստումը

Ընտրական մարմնի աշխատակիցների համար գենդերային զգայուն վերապատրաստման դասընթացներից բացի, կարևոր է նաև ապահովել համապատասխան վերապատրաստումներ և աջակցություն ընտրական մարմնի ներսում գենդերային հավասարության հարցերով պատասխանատու անձի (անձանց) համար: Սա հատկապես վերաբերում է այն երկրներին, որտեղ այս պաշտոնը նոր է ներդրվել և նախկին փորձը կամ առկա կարողությունները անբավարար են: Այդպիսի վերապատրաստումներն ու կարողությունների զարգացումը հաճախ ապահովվում է տեղում իրականացվող և/կամ հատուկ մշակված դասընթացների միջոցով, գործընկերների կամ գենդերային հավասարության հարցերով փորձագետների աջակցությամբ:

Գենդերային զգայուն վերապատրաստման դասընթացները տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար

Վերապատրաստումը միշտ հանդիսանում է ընտրությունների նախապատրաստման կարևոր մաս: Մինչդեռ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներն անցնում են վերապատրաստում ընտրական ընթացակարգերի և կանոնների վերաբերյալ, գենդերային հավասարության կամ զգայունության վերաբերյալ վերապատրաստումը ևս կարևոր է և պետք է ընդգրկվի բոլոր աշխատակիցների համար իրականացվող վերապատրաստման ծրագրերում: Կարևոր է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները տեղեկացված լինեն ընտրական մարմնի՝

կանանց մասնակցության խրախուսման և ուղղորդված (ընտանեկան) քվեարկության դեպքերի կանխման հանձնառության մասին: Վերապատրաստման արդյունքում հանձնաժողովի անդամները կարող են համապատասխան գիտելիքներ և փորձ ձեռք բերել հանգուցալուծելու այնպիսի խնդրահարույց իրավիճակներ, ինչպես օրինակ՝ որոշ կանանց՝ քվեարկության համար լուսանկար պարունակող նույնականացման փաստաթղթով չգրանցվելու ցանկությունը (այս մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Բաժին 8-ը): Նման դասընթացները տեղամասային ընտրական հանձնաժողովների աշխատակիցների համար դյուրացնում են կանոնակարգերի կիրարկումը:

6.4. Կանանց կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստում

Ընտրական մարմնիների կողմից կարող են կիրառվել վերապատրաստման հնարավորությունների հավասար հասանելիության պաշտոնական կազմակերպական քաղաքականություններ: Ընտրական մարմնիների շրջանում իրականացված հետազոտության մասնակից 35 երկրներից 19-ը (54 տոկոս) նշել են, որ իրենք ունեն կանանց և տղամարդկանց համար վերապատրաստման և զարգացման հնարավորությունների հավասար հասանելիության քաղաքականություն: Այդ երկրներն են Աֆղանստանը, Բելառուսը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կոստա Ռիկան, Եգիպտոսը, Եթովպիան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մադագասկարը, Մալդիվները, Մոլդովան, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան, Ուգանդան և Ուզբեկստանը:

Ընտրական մարմինը կարող է կանոնավոր կերպով գնահատել իր աշխատակազմի վերապատրաստման կարիքները, այդ թվում՝ կին աշխատակիցների հատուկ կարիքները և համապատասխանաբար առաջարկել վերապատրաստման և կարողությունների զարգացման հնարավորություններ: Ընտրական մարմինը կարող է միջազգային մակարդակով փնտրել և ապահովել վերապատրաստման հնարավորություններ կին աշխատակիցների համար, դյուրացնել նրանց մասնակցությունը մասնագիտացված դասընթացներին: Եթե կանայք սովորաբար չեն նշանակվում կոնկրետ պաշտոնների, ինչպես օրինակ՝ ICT կամ GIS հմտությունների բացակայության պատճառով, ապա հավասարության ապահովման համար կարևոր է տեխնիկական վերապատրաստումը կամ կրթական հնարավորությունները: Շատ երկրներում կանայք ստիպված են եղել հաճախել միայն իգական սեռի համար նախատեսված ուսումնական հաստատություններ: Այստեղից բխող կաշկանդ-

վածությունը վերացնելու համար անհրաժեշտ է կազմակերպել թիրախավորված վերապատրաստման դասընթացներ:

Օրինակ, Աֆղանստանում աղջիկներին կարող է չուսուցանելու ավելի վաղ կիրառվող քաղաքականության հետևանքով, Ընտրական հանձնաժողովը դժվարություններ էր ունենում միայն կանանց գրանցման և միայն կանանց քվեարկության համար նախատեսված տեղամասային կենտրոնների կին աշխատակիցների համալրման հարցում:⁶⁶ Այս մարտահրավերը հաղթահարելու համար մտեցումներից մեկը եղել է կանանց հատուկ վերապատրաստումը ավանդաբար տղամարդկանց կողմից կատարվող այդ աշխատանքի համար: Ավելի բարձր մակարդակներում կրթական օժանդակությունը ևս կարող է ապահովել խթաններ և կարողությունների զարգացում: ԱԸԱՀ-ն աջակցում է այն աշխատակիցներին, ովքեր ավարտում են իրենց բարձրագույն կրթությունը մասնավոր համալսարաններում՝ կրթության համար նախատեսված գումարի տեսքով, իսկ կին աշխատակիցներին տրամադրում է աջակցություն՝ ծածկելով վերջիններիս տրանսպորտային ծախսերը և ուսման վարձը: Կանանց դերն աշխատավայրում ընգծելու համար ԱԸԱՀ-ն նաև նշում է կանանց նվիրված հանրային տոները և միջոցառումները, ինչպես օրինակ Կանանց միջազգային տոնը և պարգևատրում է կին աշխատակիցներին ձեռքբերումների համար:

Ընտրական մարմինները կարող են նաև օգտվել ավելի լայն հանրային հատվածում կանանց համար առաջարկվող այլ վերապատրաստման և զարգացման հնարավորություններից: Նման վերապատրաստումը կարող է ամրապնդել գենդերային հավասարության ազգային հանձնառությունը, ինչպես նաև ապահովել մասնագիտական խորհրդատվություն, որը ընտրական

մարմնի ներսում կարող է հասանելի չլինել: Կանանց մասնակցությունն արտաքին վերապատրաստման և մասնագիտական զարգացման միջոցառումներին, այդ թվում՝ միջազգային ուսուցողական այցերին կարող է սահմանափակվել գենդերային խտրականության դրսևորումներով պայմանավորված: Խտրականության նման դրսևորում է այն ենթադրությունը, որ կանայք չեն կարող հեռու գտնվել իրենց տանից՝ ընտանեկան պարտականությունների պատճառով: Ընտրական մարմինները պետք է հարցնեն բոլոր հնարավոր մասնակիցներին, թե ինչ է անհրաժեշտ իրենց մասնակցությունը հնարավոր դարձնելու համար և, նպատակահարմար լինելու դեպքում, ծրագրերում կատարեն համապատասխան փոփոխություններ ընտանեկան պարտականությունների հետ համատեղելիությունն ապահովելու նպատակով:

Ուղղորդում


Կին աշխատակիցների ուղղորդումը կարիերայի կառուցման և առաջխաղացման հարցում հանդիսանում է ևս մեկ միջոց, ապահովելու համար կին աշխատակիցների երկարատև աշխատանքն ընտրական մարմնում և նրանց ամուր դիրքավորումն առաջխաղացման հնարավորությունների դիտարկման գործընթացում: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մասնակից 35 երկրներից 7-ը (20 տոկոս) նշել են, որ իրենք ունեն կին աշխատակիցների ուղղորդման մեխանիզմներ: Այդ երկրներն են Աֆղանստանը, Բելառուսը, Բոսնիան և Հերցեգովինան, Իրաքը, Ղազախստանը, Մոզամբիկը և Տանզանիան: Աֆղանստանի ԱԸԱՀ-ն մշակել է ուղղորդման ծրագրեր հանձնաժողովի անդամ կանանց առաջխաղացումը խթանելու նպատակով վերջիններիս համապատասխան գիտելիքներ և հմտություններ փոխանցելու համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

- Վերապատրաստման հնարավորությունները կարևոր են ընտրական մարմնում գենդերային բաղադրիչը արդյունավետ ներառելու համար:
- Քանի դեռ աշխատակիցները չեն ընկալում հաստատության կառուցվածքի, սկզբունքների, աշխատանքների և գործառնությունների գենդերային հավասարության տեսանկյունից վերակազմակերպման սկզբունքներն ու հիմնավորումները, նման վերակազմակերպումը չի կարող իրականացվել:
- Գոյություն ունեն վերապատրաստման մի քանի տարբերակներ, այդ թվում՝ գենդերային հիմնահարցերի վերաբերյալ իրազեկող վերապատրաստման դասընթացները, գենդերային բաղադրիչի ներառումը ընտրական մարմնի կողմից անցկացվող բոլոր դասընթացներում, գենդերային հարցերը համակարգող անձանց համար մասնագիտական վերապատրաստման ապահովումը և կանանց մասնագիտական զարգացման հնարավորություններն և ուղղորդումը թիրախավորող դասընթացները:

Վերապատրաստման հնարավորությունները կարևոր են ընտրական մարմնում գեներային բաղադրիչի արդյունավետ ներգրավման համար:

”



7

Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը

Տվյալների հավաքագրումը և հրապարակումը կարևոր գործառույթ է համընդգրկուն ընտրական մարմնի համար: Այնուամենայնիվ, տվյալները միշտ չեն տարանջատվում ըստ այնպիսի փոփոխականների, ինչպիսիք են սեռը և տարիքը: Որոշ վիճակագրական տվյալների տարանջատումն ըստ սեռի կարևոր է ընտրական մարմնի համար, քանի որ վերջինս կարող է դրանք վերլուծել, ներառել և կիրառել քաղաքականության և որոշումների կայացման գործընթացում: Ընտրացուցակներում գրանցված, ընտրության օրը քվեարկության մասնակցած ընտրողների և ընտրական մարմնի բոլոր մակարդակներում աշխատակիցների քանակական տվյալների ըստ սեռի տարանջատումը չափազանց կարևոր է ընտրությունների ժամանակ սեռային գուճակշմվածության գնահատումը հնարավոր դարձնելու, ինչպես նաև կանանց մասնակցության և նրանց համար հասանելիության ապահովման գործընթացում բացահայտված անհավասարակշռությունը հասցեագրելու համար: Ընտրողների գրանցման, մասնակցության և ընտրական ոլորտում ներգրավված աշխատակիցների վերաբերյալ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների վերլուծությունը արդյունավետ կարող է լինել նաև հետընտրական շրջանի գնահատումների իրականացման տեսանկյունից:

Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հիման վրա հնարավոր է պատկերացում կազմել կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ, ինչը կարևոր է, այդ թվում՝ խնդիրի հետևանքների հասցեագրման տեսանկյունից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի գլխավոր քարտուղարի՝ «Կանայք, խաղաղությունը և անվտանգությունը» վերնագրով 2010 թվականի թիվ S/2010/498 հաշվետվության մեջ ներկայացված են մի խումբ ցուցանիշներ՝ թիվ 1325 (2000) բանաձևի իրականացումը համաշխարհային մակարդակում վերահսկելու համար:⁶⁷ ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից կամավոր գեկույցների ցուցանիշների շարքում նոր ցուցանիշ է կանանց՝ որպես ընտրողների կամ թեկնածուների քաղաքական մասնակցությունը բնութագրող ցուցանիշը: Այս ցուցանիշի միջոցով վերահսկվում է, թե որքանով են կանայք գրանցվում և փաստացի ընտրում, ինչպես նաև որքանով են կանայք մասնակցում ազգային ընտրությունների քարոզարշավներին որպես թեկնածուներ: Կանանց մասնակցության մշտադիրտարկում իրականացնելու համար կարող է պա-

հանջվել, որպեսզի ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության ծրագրերում հատուկ շեշտադրում կատարվի տեղական գործընկերներին համապատասխան տվյալները տրամադրելու ուղղությամբ աջակցության ցուցաբերմանը: Երկրների մեծ մասում, ընտրողների փաստացի թիվը (ընտրողների մասնակցությունը) սովորաբար չի տարանջատվում ըստ սեռի, ինչը թույլ չի տալիս հասկանալ, թե ինչպիսին է կին ընտրողների ներկայացվածության գործակիցը: Նույնը վերաբերում է կին թեկնածուներին: Այս տվյալները գեկույցելու համար կարող են անհրաժեշտ լինել ընտրական գործընթացի ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրվումն ապահովող հատուկ դրոյթներ:

Տվյալների հավաքագրումը

Գոյություն ունեն ընտրական մարմնում ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման ինստիտուցիոնալացման մի քանի ուղիներ: Առաջին քայլը տվյալների գրանցման էլեկտրոնային համակարգում «սեռ» կամ «գենդեր» դաշտի ավելացումն

է: Երկրորդ քայլը ընտրողի «սեռի» կամ «գենդերի» նշումն է անմիջապես գրանցման պահին, քանի որ հետագա փուլերում մեծ թվով տվյալների ռետրոսպեկտիվ տարանջանջատումը կապված է մեծ ծախսերի հետ և անարդյունավետ է: Այնուամենայնիվ ձևաթղթերում և այլ տվյալների բազաներում «սեռ» կամ «գենդեր» դաշտի ընդգրկումը հաճախ այն ամենն է, ինչ անհրաժեշտ է ըստ սեռի տարանջատված տվյալներ հավաքագրելու համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և աշխատակիցները նույնպես պետք է անցնեն վերապատրաստում տվյալների ըստ սեռի տարանջատման գործընթացը հասկանալու համար: Որպես այլընտրանք, սա կարող է ընգրկվել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների և աշխատակիցների համար անցկացվող ստանդարտ վերապատրաստման դասընթացներում: Գենդերային քարտեզագրումը կամ գնահատումը կօգնի ընտրական մարմինն հայտնաբերել բացերը ըստ սեռի տարանջատված տվյալների հավաքագրման (և տարածման) գործընթացում:

7.1. Ընտրողների գրանցման տվյալները

Տվյալների տարանջատումն ըստ սեռի իրականացվում է շատ երկրներում, որտեղ «սեռը» կամ «գենդերը»

ընտրողների գրանցման համար պահանջվող տվյալներից մեկն է: Այն դեպքերում, երբ «սեռը» կամ «գենդերը» չի հանդիսանում գրանցման համար պահանջվող տվյալայն տվյալների հավաքագրման համար կարող են պահանջվել փոփոխություններ օրենքում կամ կանոնակարգերում: Եթե գրանցումները պահպանվում են էլեկտրոնային տեսքով, թե առանձին ընտրական տարածքներում և թե ողջ երկրում տվյալների վերլուծությունն ըստ սեռի կամ գենդերի դյուրին է լինում: Եթե գրանցվում են նաև այլ մանրամասներ, ինչպես օրինակ տարիքը կամ էթնիկ ծագումը, այդ տվյալները նույնպես կարող են տարանջատվել ըստ սեռի կամ գենդերի և համեմատվել ընդհանուր բնակչության կազմի համապատասխան տվյալների հետ: Թեև բարձր տեխնոլոգիաներով հագեցած համակարգերը կարող են դյուրացնել տվյալների տարանջատումն ըստ սեռի, վիճակագրական տվյալների արդյունավետ դասակարգում իրականացնելու համար բավական է անգամ շատ պարզ տեխնոլոգիաները: Ընտրողների տվյալների գրանցման գործընթացի վերջերս իրականացված բարեփոխումներն հնարավոր են դարձրել տվյալների ըստ սեռի տարանջատումն այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունը, Իրաքը, Թունիսը, Տանզանիան և Պաղեստինը:⁶⁸ Այն երկրներում, որտեղ գրանցումն իրականացվում է ձեռքով, ինչպես օրինակ Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունում և Մոզամբիկում, տվյալների տարանջատումն ըստ սեռի դեռևս հնարավոր չէ իրականացնել:

Ընտրական մարմինների շրջանում անցակցված հետազոտության մեջ, 35 երկրներից 18-ը (51 տոկոս) նշել են, որ իրենք իրականացնում են ընտրողների տվյալների ըստ սեռի տարանջատում: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Բոսնիան և Հերցեգովինան, Կանադան, Կոնգոյի ժողովրդավարական Հանրապետությունը, Եգիպտոսը, Եթովպիան, Իրաքը, Ղրղզստանը, Լեւոտոն, Մադագասկարը, Մալդիվները, Մաուրիտիուսը, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Պակիստանը, Հարավային Աֆրիկան և Թունիսը: Որոշ երկրներում իրականացվում է գրանցման մակարդակի մշտադիտարկում՝ հասկանալու համար, թե որ տարածքներում է կանանց և երիտասարդների գրանցման մակարդակը ցածր: Այս տարածքներում կարող են կիրառվել գրանցման ցածր մակարդակ ունեցող խմբերը թիրախավորելու իրազեկման և տեղեկացման արշավներ:⁶⁹

7.2. Ընտրողների մասնակցության վերաբերյալ տվյալներ

Քվեարկող կանանց և տղամարդկանց համամասնու-



© Զուլի Բալիզբոն

թյան մասին տվյալների հավաքագրումը և այդ մասին զեկուցումը (ընտրողի ներկայացվածություն) դեռևս սահմանված նորմ չէ ընտրական մարմինների մեծ մասում: Առանց այս տվյալների հնարավոր չէ հասկանալ, թե արդյոք տվյալ երկրում կամ երկրի առանձին շրջաններում կամ տարիքային խմբի ներկայացվածության մասով կա գենդերային անհավասարություն: Որոշ ընտրական մարմիններ և շահագրգիռ կողմեր բարձրաձայնում են իրենց մտահոգություններն առ այն, որ ընտրողների մասնակցության տվյալների ըստ սեռի տարանջատումը և զեկուցումը կարող է խաթարել քվեարկության գաղտնիությունը: Մակայն դա այդպես չէ: Նախ և առաջ, տարանջատվում են միայն մասնակցության մասին տվյալները, և ոչ թե քվեարկության արդյունքները: Երկրորդ, վիճակագրական տվյալների տարանջատումն ըստ սեռի արդյունավետ է և պարտադիր միայն աճողական կարգով՝ փոքր և մեծ քաղաքների, շրջանների և ընդհանուր երկրի մակարդակներով: Հետևաբար, ընտրական մարմինը կարող է որոշել, թե ինչպես ներկայացնել մասնակցության արդյունքները, որպեսզի տեղեկությունը լինի նպատակահարմար և բաց, մինևսյն ժամանակ պահպանելով ընտրական կենտրոնի, շրջանի կամ տարածաշրջանի մակարդակում յուրաքանչյուր անհատ քվեարկողի գաղտնիությունը: Այսպիսով, ըստ սեռի տարանջատված մասնակցության տվյալների (ոչ արդյունքների) զեկուցումը չպետք է դիտարկվի որպես ձայնի գաղտնիության խախտում:

Այն դեպքերում երբ կանանց և տղամարդկանց քվեարկության համար նախատեսված տեղամասային կենտրոններն առանձնացված են (տես Բաժին 10-ը), ներկայացվածության մասին տվյալները կանանց և տղամարդկանց համար կարող են լինել տեղամասային կենտրոնների ստանդարտ հաշվետվության մաս: Երբ ընտրացուցակում նշվում է սեռը, ընտրատարածքների աշխատակիցները կարող են ցուցում ստանալ հաշվարկել այն կանանց և տղամարդկանց թիվը, որոնք քվեարկում են յուրաքանչյուր տեղամասային կենտրոնում՝ գրանցելով այդ տեղեկատվությունը ձայների հաշվարկի թերթիկի վրա՝ քվեարկության ավարտին: Հաշվարկի կամ արդյունքների ձևաթղթերը, որտեղ գրանցվում են ընտրողների ընդհանուր թիվը, քվեաթերթիկները, անվավեր քվեաթերթիկները և այլ տվյալներ կարելի է ընդգրկել նաև քվեարկված կանանց և տղամարդկանց թվի համար նախատեսված դաշտ: Եթե քվեարկողների ցանկը տեղամասային կենտրոնում կիրառվում է քվեարկողների ըրտելու իրավունքի առկայությունը ստուգելու համար և հետո նշվում է, երբ տրամադրվում են քվեարկության թերթիկները, սակայն դրանում չի նշվում սեռը, ընտրատարածքի աշխատակիցները կա-

րող են գրանցել այն կանանց և տղամարդկանց թիվը, որոնք այդ տեղեկատվությունը տրամադրում են առանձին ձայների հաշվարկի թերթիկի վրա, այդ թվում՝ այդ նպատակով նախատեսված տվյալների հատուկ դաշտում (Նեպալում այս տվյալների հավաքագրման համար կիրառվող օրինակելի ձևի համար տես Հավելված Բ): Այս կերպ հնարավոր է հավաքագրել ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ: Ամեն դեպքում, ընդհանուր առմամբ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների գրանցումը մեծապես դյուրանում է, եթե կիրառվող քվեարկողների ցանկը էլեկտրոնային է և/կամ քվեարկողների գրանցման ցանկն արդեն պարունակում է քվեարկողի սեռի կամ գենդերի մասին տեղեկություններ:

Քվեարկողների մասնակցության ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների պաշտոնապես և կանոնավոր հիմունքներով հավաքագրումը լավ գործելակերպ է: Մակայն այն դեպքերում, երբ դա հնարավոր չէ, մասնակցության ոչ պաշտոնական պատկերը կարող է գրանցվել տեղական և միջազգային դիտորդների խմբերի կողմից: Եթե, ինչպես դեպքերի մեծ մասում, յուրաքանչյուր ընտրատարածքում չկան բավարար թվով դիտորդներ ողջ օրվա ընթացքում տվյալների գրանցում իրականացնելու համար, դիտորդների խումբը կարող է մշակել ընտրանքային ուսումնասիրության ծրագիր, որը թույլ կտա հավաքագրել մասնակցության ներկայացուցչական տվյալներ: Ընտրանքային ուսումնասիրության այս ծրագիրը կարող է ընդգրկել ժողովրդագրական խնդիրները, աշխարհագրական բաշխվածությունը և գենդերային զգայուն պլանավորումն այն պահի դրությամբ, երբ գրանցվում են տվյալները (օրինակ՝ եթե կանայք պատասխանատու են դպրոցական ժամերից դուրս երեխայի խնամքի համար կամ նրանց շարժը սահմանափակվում է մութն ընկնելուց հետո, երեկոյան տվյալների հավաքագրումը աղավաղում է արդյունքները): Ձևավորված միջազգային դիտորդական կազմակերպություններից շատերն ունեն տեղամասային կենտրոնների ընտրանքային ուսումնասիրության արդեն փորձված մեթոդներ ողջ երկրի մասին ներկայացուցչական պատկեր ստանալու համար, և այս մեթոդները կարող են կիրառվել տեղամասային կենտրոնների ներկայացուցչական տվյալները ստանալու համար, երբ հավաքագրվում են մասնակցության մասին ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ: Թեև դիտորդական ընտրանքային ուսումնասիրությունների ճշտության աստիճանը գնալով աճում է, այս մեթոդը չպետք է փոխարինի ընտրական մարմինների կողմից հավաքագրվող պաշտոնական տվյալներին:



© ՄԱԿ-ի նկար / Բոթոթեյի

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 12-ը (34 տոկոս) նշել են, որ իրենց մասնակցության տվյալները տարանջատում են ըստ սեռի: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բոսնիան և Հերցեգովինան, Կոստա Ռիկան, Եթովպիան, Լիբանանը, Մադագասկարը, Մալդիվները, Մատրիտիուսը, Պաղեստինը, Կոնգոյի Հանրապետությունը և Հարավային Աֆրիկան: Ընտրողների ներկայացվածության՝ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման և գեկուցման օրինակներ են՝

- **Նեպալ.** Ընտրական մարմինը կիրառել է հատուկ մշակված օրինակելի ձև յուրաքանչյուր տեղամասային կենտրոնում 2013 թվականի Հիմնադիր ժողովի ընտրությունների ժամանակ՝ ընտրողների վերաբերյալ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալները գրանցելու համար:
- **Արևելյան Թիմոր.** Ընտրական օրենքը պահանջում է, որ յուրաքանչյուր տեղամասային կենտրոն գրանցի յուրաքանչյուր ընտրողի սեռը և ներկայացնի գրանցված թվերի վերաբերյալ հաշվետվություն:
- **Հարավային Աֆրիկա.** 2009 թվականին բոլոր տեղամասային կենտրոններում ընտրողների նույնականացման փաստաթղթերի սկանավորումը թույլ է տվել տվյալների բազայի հիման վրա ստանալ մասնակցության տվյալների պատկերը տարանջատված ըստ սեռի և տարիքի: Նախատեսվել է այս տվյալները կիրառել մինչև հաջորդ ընտրությունները ընտրողների կրթությունն ավելի լավ թիրախավորված դարձնելու համար:⁷⁰

Իրավակարգավորիչ շրջանակի բարեփոխումները

Ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ հավաքագրելու և դրաց մասին հաշվետվություններ ներկայացնելու համար կարող է անհրաժեշտ լինել ընտրական կանոնակարգերում կատարել փոփոխություններ: Օրինակ, Պակիստանում ՄԱԿ-Կանայք կառույցը և ՄԱԶԾ գրասենյակն աջակցել են Պակիստանի ընտրական հանձնաժողովին ըստ սեռի տարանջատված տվյալների հաշվետվությունների ներկայացմանը հարցում: ՊԸՀ-ի տվյալների հավաքագրման XIV, XVI և XVII օրինակելի ձևերը (Ընտրությունների կանոններ 1977) չեն նախատեսել ընտրողների գրանցման և մասնակցության տվյալների ըստ սեռի տարանջատում և դրանց վերաբերյալ հաշվետվությունների պատրաստում: Սա նշանակել է, որ ՊԸՀ-ն որևէ հաշվետվություն չի ներկայացրել այդ տվյալների մասին: Արվել են առաջարկներ առ այն, թե ինչպես կարելի է տվյալները տարանջատել ըստ սեռի, փոփոխվել են IV, XVI և XVII օրինակելի ձևերը, որոնք հաստատվել են ՊԸՀ-ի կողմից 2013 թվականի հունվարին, ապահովելով հիմքեր հաջորդ ընտրությունների ժամանակ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման համար:⁷¹

Ռումինիայի մշտական ընտրական մարմինը նշել է, որ այն չի հավաքագրել ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ, քանի որ չի եղել նման իրավական պահանջ: Համապատասխան օրենսդրությունը սահմանում է, որ ընտրական ռեգիստրում պետք է ընդգրկվեն տեղեկատվության հետևյալ կատեգորիաները՝ ա) ծննդյան ամսաթիվ, բ) անձնական նույնականացման համարը, գ) դոմինցիլի կամ բնակության երկիրը, դ) դոմինցիլի հասցեն, ե) բնակության հասցեն, զ) ընտրական քարտի սերիան և համարը և է) նույնականացման քարտի սերիան և համարը:⁷² Ընտրական մշտական մարմինը նշել է, որ մինչև չփոփոխվի օրենքը կամ օրենսդրությունը, հնարավոր չի լինի հավաքագրել ներկայացվածության ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ:

Լիհում են նաև դեպքեր, երբ օրենքով սահմանված ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման պահանջը չի կիրարկվում: Մի ընտրական մարմին նշել է, որ «կան դրույթներ, համաձայն որոնց պահանջվում է հավաքագրել ներկայացվածության ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ, սակայն ծառայողները դա չեն անում»:⁷³

Ինչպես արդեն նշվել է, հետընտրական ժամանակահատվածի գնահատումները կարող են ընդգրկել

գրանցման և մասնակցության մասին ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների վերլուծություն և հաշվետվություններ: Սա կարող է լինել կարևոր գործիք, վերլուծելու, թե արդյոք քվեարկության մասնակցող կանանց և տղամարդկանց ներկայացվածությունն անհավասար է, և եթե դա այդպես է, նախանշելու հաջորդ ընտրություններին այդ անհավասարության հասցեագրմանն ուղղված գործողությունները: 1325 Բանաձևով այս տվյալների պոտենցիալ արժեքը ճանաչվել է ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից կամավոր հաշվետվություններում ներկայացվող ցուցանիշներից մեկը:

7.3. Թեկնածուների գրանցման տվյալները

Թեկնածուները ընտրված կանանց թվի վերաբերյալ տվյալները լայնորեն ներառվում են հաշվետվությունում, թեկնածուների գրանցման՝ ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների վերաբերյալ զեկույցներ կամ հաշվետվություններ չկան: Տվյալների գրանցման ձևաթղթում սեռը որպես առանձին դաշտ ընդգրկվել և ստացված տվյալների էլեկտրոնային ֆորմատով պահպանումը դյուրացնում են ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրումն ու պատրաստումը: Եթե սեռն ընդգրկված չի տվյալների գրանցման ձևաթղթում, ապա անհրաժեշտ է փոփոխել օրենքը կամ կանոնակարգերն այնպես, որ հնարավոր լինի հավաքագրել ըստ սեռի տարանջատված տվյալներ:

Թեկնածուների գրանցման ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալները կարևոր են ոչ միայն երկրի կանանց քաղաքական մասնակցության մակարդակը բնութագրող ցուցանիշի վերաբերյալ հաշվետվությունների մասով, դրանք նաև արդյունավետ գործիք են քաղաքական կուսակցության կատարողականի վերլուծության համար: Նման օրինակ գրանցվել է Մոլդովայում, երբ 2001 թվականի ընտրություններից հետո, Մոլդովայի ԿԸՀ-ն վերլուծել և հանրությանն ու բոլոր շահագրգիռ կազմակերպություններին է ներկայացրել համեմատական վիճակագրություն քաղաքապետի ընտրություններին կանանց մասնակցության, տեղական և տարածքային խորհուրդների ընտրություններում կուսակցական ցանկում կանանց առկայության և որպես քաղաքապետ ընտրված կանանց վերաբերյալ: Այս վիճակագրությունը հասանելի է եղել ընտրությանը մասնակցող թեկնածուների համար ևս, որպեսզի նրանք և ընդհանուր հանրությունը կարողանան համեմատել կուսակցության կատարողականը գենդերային հավասարության ոլորտում:⁷⁴

Այս տվյալները հավաքագրելու մեկ այլ պատճառ է հանդիսանում օրենքով սահմանված քվոտաների կիրառման մշտադիտարկումը: Այն երկրներում, որտեղ քվոտան պահանջում է կին թեկնածուների օրինակ 30 տոկոս կամ 50 տոկոս ներկայացվածություն, թեկնածուների ըստ սեռի տարանջատված տվյալների վերաբերյալ հաշվետվություններն անհրաժեշտ են սահմանված քվոտայի կիրառման մշտադիտարկման համար: Որոշ երկրներում կարող է սահմանված լինել նաև ընտրական ցուցակներում կին թեկնածուների դիրքերի վերաբերյալ պահանջ, ինչպես օրինակ պահանջ առ այն, որ քաղաքական կուսակցության ցուցակի յուրաքանչյուր երրորդ տեղում պետք է լինի կին թեկնածու: Թեկնածուների մասին հաշվետվությունը կարող է նաև առաջացնել կուսակցությունների ցանկում կանանց ընդգրկման մասին տեղեկատվության անհրաժեշտություն՝ օրենքով սահմանված քվոտաներին համապատասխանությունը ապահովելու համար:

7.4. Մարդկային ռեսուրսների վերաբերյալ տվյալները

Ընտրական մարմնի տարբեր մակարդակներում ժամանակավոր և հիմնական աշխատակիցների սեռը սովորաբար հեշտ է գրանցել: Այս տվյալների հավաքագրումը և մշտադիտարկումը կարող է ընդգրկվել մարդկային ռեսուրսների հիմնական գործառնություններում: Աշխատակազմի յուրաքանչյուր մակարդակում կանանց ներկայացվածության ցուցանիշը համեմատելի է պետական մարմինների նույն մակարդակի ցուցանիշի և 50 տոկոս գենդերային հավասարության հետ: Ընտրական մարմիններում և տեղամասային կենտրոններում տարբեր մակարդակների պաշտոններում կանանց հավասար ներկայացվածությունը որոշելու համար կարող է պահանջվել տվյալների տարանջատում լրացուցիչ կետերով:

Ընտրական մարմինների շրջանում իրականացված հետազոտության մասնակից 35 երկրներից 12-ը (34 տոկոս) նշել են, որ նրանք «վարում են ընտրատարածքների աշխատակազմի տվյալների բազա՝ տարանջատված ըստ սեռի»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Բոսնիան և Հերցեգովինան, Կանադան, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունը, Եթովպիան, Իրաքը, Ղազախստանը, Մադագասկարը, Մալդիվները, Մաուրիտիուսը, Պաղեստինը և Հարավային Աֆրիկան: Տարբեր կետերով տարանջատված տվյալների հավաքագրման օրինակ կարող է լինել Վրաստանը, որտեղ Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովի վարչական աշխատակազմի վերաբերյալ տվյալների բազայում նշվում է, թե արդյոք կին աշխատակիցն ունի չա-

մունանցածի կարգավիճակ, ամուրի է, մայր է, ինչպես նաև երեխաների քանակը և արդյոք այդ երեխաներն անչափահաս են, թե չափահաս: Այս տվյալները հավաքագրվել են «կարիքները և համապատասխան օժանդակության միջոցառումներն ըստ առաջնահերթության դասակարգելու համար»:⁷⁵

Տվյալների վերլուծությունը և հաշվետվությունը

Տվյալների հավաքագրումը որևէ արդյունք չի ունենա, եթե այն չի վերլուծվում, զեկուցվում և հրապարակվում: Այս հաշվետվությունների և վերլուծության մեծ մասն իրականացվում է ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Օրինակ, լավ գործելակերպ է համարվում մարդկային ռեսուրսների տարբեր մակարդակներում ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների ընդգրկումը ընտրական մարմնի աշխատանքի մասին տարեկան հաշվետվությունում, և տեղամասային կենտրոնների աշխատակիցների և ընտրողների մասին ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների ընդգրկումն ընտրությունների մասին բոլոր հաշվետվություններում: Միևնույն ժամանակ, ընտրական մարմինը կարող է ցանկանալ խթանել արտաքին, ինչպես նաև ներքին ոլորտների ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրումը (օրինակ՝ տվյալներ ընտրողի գրանցման, ներկայացվածության, թեկնածուների և այլնի մասին): Ստացված տվյալները նույն ոլորտներում հավաքագրված այլ վիճակագրական տվյալների հետ համեմատելիս (ըստ տարածաշրջանի, ըստ տարիքի և այլն), հնարավոր է ստանալ կանանց քաղաքական մասնակցության ընգրկուն և մանրամասն պատկեր: Պատշաճ վերլուծությունը կարող է օգնել ընտրական մարմիններին ավելի լավ հասկանալ մարտահրավերները և հաջողությունները: Օրինակ՝ համեմատելով ընտրողների գրանցման ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալները մասնակցության ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հետ, ընտրական մարմինները կարող են նախանշել առկա կապն ու բացերը և դրանց հասցեագրմանն ուղղված գործողությունները: Ստորև բերված են մանրամասն և կիրառելի հաշվետվության օրինակներ.

- **Բուրունդի.** ՄԱԿ-Կանայք կազմակերպության օժանդակությամբ, CENI-ն (Անկախ ազգային ընտրական հանձնաժողով) մասնակցության հինգ ոլորտների համար ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալների հավաքագրման և վերլուծության համար մշակել է մեկ գործիք: 2014 թվականին ընտրական մարմնի աշխատակազմն անցել է այս գործիքի վերաբերյալ վերապատրաստում BRIDGE մոդուլով:

- **Եթովպիա.** 2010 թվականի համազգային ընտրությունների հետընտրական գնահատումը վերլուծության է ենթարկել կանանց՝ որպես ընտրողների, ընտրական ոլորտի աշխատակիցների, դիտորդների թեկնածուների ընտրական մասնակցության մակարդակը:⁷⁶

- **Արևելյան Թիմոր.** Մասնակցության մասին հաշվետվության մեջ մասնակցության ըստ սեռի տարանջատման վիճակագրական տվյալները համեմատվել են յուրաքանչյուր տարածքի համար մարդահամարի տվյալների հետ՝ յուրաքանչյուր տարածքում կանանց և տղամարդկանց թվի մատով, քանի որ թեև կանայք կազմում են ընդհանուր բնակչության 49.1 տոկոսը, այս արժեքը տարբերվում է տարածքից տարածք, մայրաքաղաքում ամենացածր 46.5 տոկոսից մինչև ամենաբարձր 50.9 տոկոս ցուցանիշով: Մասնակցության պատկերն առանձին տարածքներում համապատասխանել է մարդահամարի պատկերին:⁷⁷

Եզրակացություն

Ընտրական մարմիններում գենդերային հավասարության խթանումը կախված է գործող կառույցների և գործընթացների՝ գենդերային հավասարության տեսակետից վերանայումից՝ բացառելու համար կանանց նկատմամբ ցանկացած խտրականություն: Գենդերային բաղադրիչի ներառումը և գենդերային ռազմավարությունները կարող են ծառայել հայտնաբերված բացերը հասցեագրելու համար: Գենդերային աուդիտը և քարտեզագրումը օգտակար են բարելավման կարիք ունեցող ոլորտները բացահայտելու համար: Մշակելով գենդերային քաղաքականություններ, նախաձեռնելով ռազմավարական պլանավորման աշխատանքներ և հատկացնելով գենդերային հարցերին ուղղված հատուկ ռեսուրսներ, կամ գենդերային հարցերով փորձագետների, կ'ամ գենդերային հարցերը համակարգող բաժինների տեսքով, ընտրական մարմինները կարող են զինվել առաջ գնալու համար նախատեսած գործիքներով: Ընտրական մարմինների ղեկավարների կազմը և մարդկային ռեսուրսների կառուցվածքը կարող են վերանայվել կազմակերպությունում կանանց առաջխաղացման, այդ թվում բարձրաստիճան պաշտոններում նշանակման համար պայմաններ ապահովելու նպատակով: Ընտրական մարմինների մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը կարող է ապահովել ոչ միայն կանանց քանակական ներկայացվածությունը, այլ նաև նպաստավոր պայմաններ կանանց հավաքագրման և երկարատև աշխատանքի համար, ինչն իրականացվում է տարբեր գենդերային զգայուն քաղաքականությունների միջոցով: Կարևոր է ընտրական մարմինների ողջ աշխատակազմի գենդերային հիմնահարցերի վերաբերյալ վերապատրաստումը, ինչպես նաև կազմակերպությունում կանանց աճին օժանդակելու նպատակով կին աշխատակիցների համար մասնագիտական կարողությունների զարգացման վերապատրաստման հասանելիության ապահովումը: Եվ, ի վերջո, համընդգրկուն ընտրական մարմինները հավաքագրում և տարածում են ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ՝ ապահովելու կանանց ընտրական և քաղաքական մասնակցության համակողմանի վերլուծություն իրականացնելու հնարավորությունը:



ԱՄՓՈՓՈՄ

- Տվյալների հավաքագրումն ու տարածումը կարևոր է համընդգրկուն ընտրական մարմնի համար:
- Ընտրական մարմիններն ունեն անհրաժեշտ գործիքակազմն ապահովելու համար իրենց կողմից հավաքագրվող տվյալների տարանջատումն ըստ սեռի: Այս տվյալները թույլ են տալիս ընտրական մարմիններին բացահայտել ընտրողների գրանցման, մասնակցության կամ կադրերի կառավարման մակարդակներում գենդերային անհավասարության ցանկացած դրսևորում և մշտադիտարկել նման դրսևորումների վերացման մասով առաջխաղացումը:
- Ապահովելու համար տվյալների ըստ սեռի տարանջատումը կարող են պահանջել օրենսդրական բարեփոխումներ կամ փոփոխություններ ընտրական կարգավորումներում:
- Գրանցված, քվեարկած և թեկնածություն առաջադրած կանանց և տղամարդկանց թվի վերաբերյալ տվյալների համեմատությունը բնակչության մեջ քվեարկության իրավունք ունեցող կանանց և տղամարդկանց թվի հետ, օգնում է որոշել ընտրական և քաղաքական մասնակցության գենդերային տարբերությունների աստիճանը:

© ՄԱԿ-ի նկար / Թին Մքլուկա



© Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում ՄԱԿ-ի կայունացման առաքելություն / Միլվան Լիչտի



Մաս Բ.




Անդրադարձ գեղեցիկին անհավասարություններին ընտրական գործընթացներում և միջոցառումներում

8 Ընտրական միջոցառումների ներառում	65	12 Անվտանգության ապահովումն ընտրական գործընթացում	93
9 Ընտրողների գրանցում	67	13 Աշխատանք ընտրական գործընթացի շահառուների հետ	101
10 Թեկնածուների և քաղաքական կուսակցությունների առաջադրումն ու գրանցումը	77	14 Ընտրողների իրազեկումը	107
11 Քվեարկությունը	86	15 Եզրակացություն	118

Ընտրական գործընթացներում կանանց
մասնակցությունն ապահովելու նպատակով մշակված
միջամտությունները հնարավորություն են տալիս
ընտրական մարմիններին (կամ այլ պարասիսանսարու
մարմիններին) կարարել գենդերային հավասարությունը
խթանելու վերաբերյալ սրանձնած միջազգային
պարտավորությունները:

”



8 Ընտրական միջոցառումների ներառում

Ընտրական մարմիններն ընտրական գործընթացի վարչարարական հարցերով զբաղվող առանցքային դերակատարներն են, ուստի մեծամասամբ նրանց կառուցվածքով, կազմով և արդյունավետությամբ է պայմանավորված ընտրական գործընթացի արժանահավատությունը և արդյունքների ընդունումը:⁹⁴ Կանանց համընդգրկուն մասնակցությունն ընտրական գործընթացներին նույնպես կարևոր է ընտրությունների արժանահավատության տեսանկյունից և հանդիսանում է ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության ծրագրերի կարևոր նպատակներից:⁹⁵

Մաս Բ-ում փորձ է արվում տրամադրել փաստաթղթավորված գործելակերպի օրինակներ ընտրական գործընթացներին կանանց հավասար մասնակցությունն ապահովելու վերաբերյալ: Բաժնում նկարագրված են այն հստակ միջոցառումները, որոնք հատուկ մշակվել են ընտրական գործընթացներում կանանց մասնակցությունն ապահովելու նպատակով՝ հնարավորություն տալով ընտրական մարմիններին (կամ այլ պատասխանատու մարմիններին) կատարել գեներային հավասարությունը խթանելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունները: Այս բաժնում նաև տեղ են գտել մի շարք առաջարկություններ, որոնք, ըստ անհրաժեշտության, կարող են հաշվի առնվել միջազգային մակարդակով աջակցություն ցուցաբերող կառույցների կողմից:

Մաս Բ-ն անդրադառնում է ընտրական և այլ մարմինների կողմից ընտրություններից առաջ իրականացվող նախապատրաստական աշխատանքներին՝ ընդգծելով գեներային բաղադրիչի ներառումն ու գեներային ուղղվածության միջոցառումները, որոնք կարող են իրագործվել կանանց մասնակցությունը խթանելու միտումով: Բաժնում նաև ընդգրկված են ընտրական մարմինների կողմից նախանշված մի շարք հնարավոր խոչընդոտներ, որոնց կանայք կարող են առերեսվել, այդ թվում՝ ինքնությունը հաստատող փաստաթղթերի բացակայություն, մեծ հեռավորություն անցնելու անհրաժեշտություն, ինչը կարող է ազդել գրանցման կամ ընտրողների մասնակցության ընդհանուր պատկերի վրա, ուղղորդված (ընտանեկան) քվեարկություն և ընտրական գործընթացին վերաբերող տեղեկատվության մատչելիության պակաս: Մաս Բ-ն ավարտվում է ընտ-


րողների իրազեկման ռազմավարություններում առաջավոր փորձի ներկայացմամբ՝ կանանց քաղաքական իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:

Իրավակարգավորող շրջանակը

Ընտրությունները հաճախ դիտարկվում են որպես սուր քաղաքական պայքար: Յուրաքանչյուր գործընթաց, որը նպաստում է ընտրությունների հաջող անցկացմանը՝ սկսած ընտրողների գրանցումից մինչև քվեաթերթիկների հաշվարկն ու վեճերի լուծումը, կարգավորվում է համապատասխան իրավական դաշտում: Այդ իրավական դաշտն ապահովում է, որ բոլոր մասնակիցները և շահառուները (այդ թվում՝ ընտրողները, թեկնածուները և քաղաքական կուսակցությունները) ենթարկվեն ընտրությունների անցկացման փոխհամաձայնեցված կանոնների: Եթե օրենքը խախտվում է, ապա իրավական դաշտը թույլ է տալիս կիրառել պատժամիջոցների համակարգ:


Ընտրական գործընթացներին առնչվող իրավական դաշտը կարգավորում է պետության ընտրական մարմինների գործառույթներն ու լիազորությունները և ողջ ընտրական համակարգը: Այդ գործառույթների և լիազորությունների հիմք կարող են հանդիսանալ մի շարք աղբյուրներ, որոնց թվին են դասվում Մահմանադրությունը, միջազգային համաձայնագրերը, ազգային օրենսդրությունը (այդ թվում՝ ընտրական օրենսգիրքը, ընդհանուր ընտրական իրավունքը և (կամ) ընտրական մարմինների ստեղծման մասին օրենքները), ազգային օրենսդրությունը, կանոնակարգերն ու շրջաբերականները՝ սահմանված ընտրական մարմինների կամ այլ լիազոր

Աղյուսակ 2. Գենդերային բաղադրիչի ներառման միջամտություններ



մարմինների կողմից, վարչական քաղաքականությունը և վարքագծի կանոնները:⁶⁶ Այս բոլոր փաստաթղթերը կազմում են իրավական դաշտը և կարող են վերանայվել՝ ապահովելու կանանց նկատմամբ բացահայտ կամ անտղղակի խտրականության բացառումը: Հետընտրական շրջանում հաճախ են առաջ քաշվող օրենսդրության և կանոնակարգերի փոփոխությունների վերաբերյալ դիտարկումները ընտրությունների արդյունքների գնահատման մաս են կազմում: Կատարյալ պայմաններում ցանկացած փոփոխություն կատարվում է ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում, որպեսզի փոփոխությունների ազդեցությունը հաշվի առնվի և շր-

ջանառվի նախքան ընտրական շրջանի մեկնարկը: Կանանց հզորացման տեսանկյունից կարևոր է, որ օրենքները, ինչպիսիք են՝ ընտրողների գրանցումը և գենդերային քվոտաների պահպանումը, գործնականում կիրառվեն ընտրական մարմինների կողմից, իսկ ցանկացած անհամապատասխանություն արժանանա պատժամիջոցների: Անհրաժեշտության դեպքում ընտրական մարմինները նաև կարող են դիմել խորհրդարանին՝ գործող օրենքների մեջ փոփոխություններ մտցնելու, դրանք ավելի արդյունավետ դարձնելու կամ խտրական օրենսդրությունը բարեփոխելու առաջարկություններով:



9 Ընտրողների գրանցում

Ընտրողների արդյունավետ գրանցումն ու քվեարկության կարգի սահմանումը նախատեսված են ապահովելու «մեկ անձ, մեկ ձայն» սկզբունքի պահպանումը և արժանահավատ ընտրությունների անցկացումը: Ընտրողների գրանցումը կարևոր նախապատրաստական քայլ է ընտրությունների ընթացքում: Որոշ երկրներում գործող կանոնները կարող են դժվարացնել ընտրողների որոշակի խմբերի մասնակցությունը: Օրենքի հետևյալ երկու բաղադրիչներ հաճախ որպես խոչընդոտ են դիտարկվում քվեարկությանը մասնակցող կանանց համար. ա) գրանցման համար անհրաժեշտ նույնականացման փաստաթղթերը, բ) գրանցման ձևում պարունակվող տեղեկատվությունը: Այս պահանջները կարող են ազդել քվեարկության օրը մասնակցության վրա:

Շատ երկրներում ընտրողների ցուցակը կազմվում է քվեարկելու իրավունք ունեցող անձանց ցանկի հիման վրա: Որպես այլընտրանք, հնարավոր է նաև օգտագործել բնակչության ռեգիստրի կամ մարդահամարի տվյալները՝ քվեարկելու իրավունք ունեցող ընտրողների ցուցակը կազմելու նպատակով: Ընտրողների ճշգրիտ ցուցակը հիմնարար պայման է ընտրությունների ընդգրկունության ապահովման համար, քանի որ այն երաշխավորում է, որ քվեարկելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարողանան քվեարկել, և բացառում է կրկնակի քվեարկությունը: Ընտրողների միասնական ռեգիստրի համար կարևոր են տարրեր են՝ ճշգրտության մակարդակը, ռեգիստրի մշակման և պահպանման թափանցիկությունը, ինչպես նաև ընտրողների դյուրին գրանցման, անձնական տվյալների ստուգման և անճշտության դեպքում ուղղման հնարավորությունը (օրինակ՝ ամուսնությունից հետո հասցեի կամ անվան փոփոխություն):

Ընտրողների գրանցման մեթոդները

Ընտրողների ռեգիստրը սովորաբար կազմվում է «ակտիվ» կամ «պասիվ» եղանակով, ինչպես նաև շարունակական կամ պարբերական ձևաչափով: «Ակտիվ»

ռեգիստրի դեպքում ընտրողները պետք է անձամբ այցելեն գրանցման վայր, որպեսզի կարողանան գրանցվել կամ պետք է ծանուցեն ազգանվան կամ հասցեի փոփոխության մասին փաստաթղթերի ներկայացումից հետո որոշակի ժամանակահատվածի ընթացքում: Որոշ դեպքերում յուրաքանչյուր ընտրության համար ստեղծվում է նոր ռեգիստր, և ընտրողները ստիպված են լինում ամեն անգամ գրանցվել՝ հաճախ ընտրություններից առաջ հատուկ գրանցման «պատուհանների» բացման ժամանակ (պարբերական գրանցում): Այլ երկրներում ռեգիստրը շարունակաբար թարմացվում է, և ընտրողները կարող են մեկ անգամ գրանցվել, իսկ հետո՝ փոփոխության դեպքում, տվյալները թարմացնել: Ակտիվ գրանցման ևս մեկ տարբերակ է այն, երբ գրանցում իրականացնող խմբերը կատարում են ընտրողների դռնեղուտ հաշվառում և գրանցում:⁹⁷ Որոշ երկրներում ընտրողները կարող են ստուգել և փոխել իրենց տվյալները առցանց կամ փոստով: «Ակտիվ» գրանցման բոլոր վերոնշյալ տարբերակներում գրանցման գործընթացի համար պատասխանատվություն կրողն ընտրողն ինքն է:

Գրանցման պլանավորման և իրականացման զգալի մասը տեղի է ունենում նախընտրական շրջանում կամ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Կանանց հավասար մասնակցության ապահովման մեթոդների փոփոխության վերաբերյալ ցանկացած քննարկում պետք է կատարվի նախընտրական պլանավորման ժամանակահատվածից առաջ, ինչը թույլ կտա ապահովել լիարժեք կիրառում մինչ ընտրական շրջանի մեկնարկը:



«Պասիվ» գրանցման ժամանակ ընտրական մարմինը կարող է կազմել ընտրողների ռեգիստր գոյություն ունեցող այլ ցուցակներում առկա տեղեկությունների հիման վրա, ինչպիսիք են՝ բնակչության ռեգիստրը, քաղաքացիության, ազգային նույնականացման քարտերի տվյալների բազան կամ բնակության վայրը հաստատող ցուցակները: Ընտրողների ամբողջական ռեգիստրների համար տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներ են հանդիսանում հարկային ռեգիստրը, իմիգրացիոն տվյալները, ազգային անվտանգության ռեգիստրը, վարորդական իրավունքի վկայագրեր տրամադրող գործակալությունները, կենսական վիճակագրության տվյալների բազաները, տեղական ընտրական ցուցակները (տարածաշրջանային, նահանգային, մարզային, տարածքային մակարդակով) և անմիջականորեն ընտրողների կողմից տրամադրված տեղեկատվությունը: Նման դեպքերում ընտրողները սովորաբար որևէ գործողություն չեն կատարում ընտրողների ռեգիստրում հայտնվելու համար: Որոշակի քայլեր նախաձեռնելու անհրաժեշտություն առաջանում է այն դեպքում, երբ ընտրողները տարբեր պատճառներով չեն ցանկանում գրանցված լինել ռեգիստրում: Այս պարագայում նրանք պետք է դիմեն ընտրական մարմիններին կամ պետական ձևաթղթերի լրացման ժամանակ համապատասխան վանդակում նշեն, որ չեն ցանկանում տրամադրել իրենց տվյալները: Այս մեթոդի կիրառման դեպքում հնարավոր է դառնում իրականացնել քաղաքացիության կամ բնակության վայրի ցուցակների գեներային վերլուծություն, որն էլ իր հերթին կարող է ապահովել, որպեսզի կանայք չգրկվեն քվեարկելու իրենց իրավունքի իրացումից:

Անկախ այն հանգամանքից, թե ընտրողների գրանց-

ման ինչ մեթոդ է կիրառվում՝ լինի դա ընտրողների շարունակական գրանցման գործընթաց, ցուցակների պարբերական թարմացում կամ յուրաքանչյուր ընտրության համար նոր կազմվող ռեգիստր, գրանցման գործընթացը տեղի է ունենում նախքան ընտրությունների մեկնարկը և կարող է տևել մինչև քվեարկության օրվան նախորդող շաբաթը:⁹⁸

Գրանցման գործընթացը գեներային հավասարության տեսանկյունից

Ընտրողների ռեգիստր ստեղծելու յուրաքանչյուր մեթոդ ունի առավելություններ և թերություններ, և ցանկացած մեթոդի կիրառման վերաբերյալ որոշումները կախված են տեղական համատեքստից: Գրանցման գործընթացի գեներային վերլուծությունը պետք է ընդգծի բոլոր առավելություններն ու թերությունները կանանց մասնակցության տեսանկյունից, ինչպես նաև ցանկացած գործունեության ոլորտ, որից կանայք կարող են կամա, թե ակամա դուրս մնալ: Ընտրական գործընթացի սկզբում և ընտրողների ռեգիստրի կազմման կամ թարմացման ժամանակ ընտրական մարմինը պետք է տեղյակ լինի այն գեներային ռիսկերի մասին, որոնք կարող են խոչընդոտել կին ընտրողների գրանցումը:

Կարևոր է նշել, որ գրանցման պլանավորումը և իրականացումը մեծամասամբ տեղի է ունենում նախընտրական շրջանում կամ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Գրանցման գործընթացի վերաբերյալ ընտրողների իրազեկումը նույնպես կարևոր նախապայման է կանանց մասնակցությունը երաշխավորելու համար (տես 12-րդ Բաժինը ընտրողների իրազեկման մասին): Այս բաժինն անդրադառնում է որո-

Որոշ մարտահրավերներ, որոնք կարող են խոչընդոտել ընտրողների ցուցակում կանանց գրանցումը.

- Մշակութային նորմերը, որոնք այս կամ այն կերպ ճնշում կամ կանխարգելում են կանանց մասնակցությունն ընտրություններին
- Գրանցման համար անհրաժեշտ անձը հաստատող փաստաթղթերի բացակայությունը, ինչպիսիք են, օրինակ, քաղաքացիությունը հաստատող կամ ընտանեկան կարգավիճակը հավաստող փաստաթղթերը
- Գլխաշոր կամ այլ կրոնական հագուստ կրող կանանց համար լուսանկարով նույնականացման պահանջը
- Ընտրողների «ստատիկ» ռեգիստրները, որոնք դժվարամատչելի են կանանց համար անվան և բնակության վայրի փոփոխման տեսանկյունից (օրինակ՝ ամուսնությունից հետո)
- Ռեգիստրները՝ հիմնված տվյալների այնպիսի աղբյուրների վրա, որոնք չեն ներառում բոլոր կանանց կամ ընդգրկում են կանանց որպես տղամարդկանց առընթեր խումբ, ինչպիսիք են՝ ընտանիքի կամ տնային տնտեսությունների ղեկավարների մասին տեղեկությունը պարունակող ռեգիստրները
- Գրանցման կենտրոնների սահմանափակ մատչելիությունը՝ պայմանավորված աշխատանքային ժամերով կամ անվտանգության խնդիրներով
- Անբավարար տեղեկատվություն այն մասին, թե երբ և ինչպես է պետք գրանցվել, հատկապես այն կանանց համար, ովքեր չեն կարողանում կարդալ կամ խոսել պետական լեզվով



Աղյուսակ 3. Գեներային ազդանշանի գրանցման պահանջները

Գրանցման համար պահանջ	Չնարավոր բացասական ազդեցությունը կանանց վրա	Գեներային հիմնահարցերը հասցեագրող միջամտություններ
<p>Ինքնության հաստատում</p>	<ul style="list-style-type: none"> • Քաղաքացիություն ստանալու գործընթացը բարդ է • Կանանց գրանցումը կարող է խոչընդոտվել առանցքային փաստաթղթերի բացակայության պատճառով կամ անձը հաստատող փաստաթղթերի՝ ամուսնու կամ հոր մոտ գտնվելու փաստով պայմանավորված 	<ul style="list-style-type: none"> • Ընտրական մարմինն ուսումնասիրում է առկա մարտահրավերները հաղթահարելու բոլոր հնարավորությունները • Չամայնքի ղեկավարները կամ ընտրական ոլորտի պաշտոնյաները կարող են որպես վկա հանդես գալ՝ հավաստելով կնոջ ինքնությունը • Լայնամասշտաբ իրազեկման արշավների արդյունքում ազգային նույնականացման քարտերը տրամադրվում են հատուկ խմբերի առանց ինքնությունը կամ քաղաքացիությունը հաստատող այլ փաստաթղթերի առկայության (օրինակ, գյուղական համայնքների կանանց)
<p>Լուսանկարով նույնականացման քարտեր</p>	<ul style="list-style-type: none"> • Որոշ մշակույթներում կանանց չի թույլատրվում հանել գլխաշորը և լուսանկարվել • Որոշ մշակույթներում կանայք կարող են զգայունություն դրսևորել իրենց լուսանկարների հրապարակային ցուցադրման հանդեպ 	<ul style="list-style-type: none"> • Լուսանկարով նույնականացման քարտեր ունենալը կարող է պարտադիր պահանջ չլինել կամ կարող են կիրառվել անձը հաստատող փաստաթղթերի այլ ձևեր, օրինակ՝ մատնահետքերի հանձնում կամ վկայություն • Ընտրական մարմինները կարող են առանձին տարածքներ ապահովել լուսանկարվելու համար • Ընտրական մարմինները կարող են ապահովել միայն կանանց գրանցող խմբերի կամ միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնների հասանելիություն • Ընտրական մարմինները կարող են տվյալների բազայից հեռացնել կամ հրապարակայնորեն չցուցադրել ընտրողների լուսանկարները
<p>Անձամբ գրանցում</p>	<ul style="list-style-type: none"> • Գրանցման կենտրոնների սահմանափակ մատչելիությունը՝ պայմանավորված աշխատանքային ժամերով կամ անվտանգության խնդիրներով 	<ul style="list-style-type: none"> • Ընտրություններին մասնակցելու նպատակով գրանցվող կանանց համար կարող է սահմանվել հերթից դուրս սպասարկում • Չամապատասխան համատեքստում կարող է իրականացվել գաղտնի կամ անանուն գրանցում

շակի մարտահրավերների, որոնց կանայք կարող են առերեսվել գրանցման գործընթացում և մատնանշում է կանանց մասնակցության դյուրացմանն ուղղված որոշակի նախաձեռնություններ, որոնց կիրառելիությունը կախված է տվյալ երկրի ազգային համատեքստից:

9.1. Գրանցման գործընթացում գեներային հավասարության հիմնահարցերը հասցեագրող մոտեցումներ

Ընտրողների գրանցման գործընթացին առնչվող երեք

հիմնական պահանջները, որոնք կարող են բացասաբար անդրադառնալ կանանց գրանցման վրա՝ ինքնության հաստատում, լուսանկարով նույնականացման քարտեր և անձամբ գրանցում (կետերն ամփոփված են ստորև քերված աղյուսակում):

Ինքնության հաստատում

Կանայք սովորաբար դժվարությունների են առերեսվում, երբ գրանցվելու համար անհրաժեշտ է լինում ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ՝ քաղաքացիության

վկայական կամ անձնագիր: Խնդիրը կայանում է նրանում, որ կանայք կամ չեն ունենում անհրաժեշտ փաստաթղթերը, կամ էլ դրանք գտնվում են ամուսնու կամ հոր մոտ: Ուշադրության արժանի են նաև այն կանոնակարգերը, որոնք սահմանափակում կամ խոչընդոտում են կանանց՝ քաղաքացիության վկայականներ կամ անձը հաստատող փաստաթղթեր ստանալը, ինչպիսիք են, օրինակ, տղամարդ ազգականի կամ ամուսնու կողմից կնոջ ինքնության կամ ծագման հաստատման պահանջը: Որոշ երկրներում ակտիվորեն խոչընդոտվում է կանանց քաղաքացիություն ստանալու գործընթացը կամ նրանք այլ քաղաքացիական կարգավիճակ են ունենում, քանի որ այդ հանգամանքը բացի քվեարկելու իրավունքից կարող է տալ նրանց նաև այլ իրավունքներ, ինչպիսիք են՝ հող կամ գույք ժառանգելու կամ երեխաներին քաղաքացիություն փոխանցելու իրավունքը:

Անհրաժեշտ է նաև հավաստիանալ, որ նշված փաստաթղթերը կիրառելի լինեն բոլոր մշակութային համատեքստերում. օրինակ, եթե նորապսակ կնոջ դեպքում պահանջվում է ամուսնության վկայականի առկայություն իր գրանցման տվյալները փոխելու համար, սակայն նման վկայականները այդ մշակույթի կամ կրոնական ամուսնության մաս չեն կազմում, ապա այդ դրույթը ինքնին բացառում է կանանց մի մասի մասնակցությունը: Եթե որոշակի խումբը չունի նույնականացման փաստաթղթեր, ապա կարող են համապատասխան միջոցներ ձեռնարկվել՝ հնարավոր դարձնելու նրանց գրանցումը: Ստորև բերված են մի շարք գործողությունների օրինակներ, որոնք իրականացվել են, որպեսզի կանայք ունենան նույնականացման փաստաթղթեր.

- **Նեպալ.** 2013 թվականի սկզբին շատ կանայք չէին կարողանում գրանցվել քվեարկելու համար, քանի որ նրանք չունեին համապատասխան քաղաքացիական վկայականներ: Նեպալի Ընտրական հանձնաժողովը թողարկեց շրջաբերական, որում ասվում էր, որ կանայք իրավունք ունեն գրանցվելու համապատասխան տեղական պաշտոնյայի ներկայությամբ, ով կարող է հանդես գալ որպես վկա:⁹⁹
- **Եգիպտոս.** 2011 թվականին ՄԱԿ-ի կանանց, Վարչական զարգացման պետական նախարարության (ՎԶՊՆ) և այլ գործընկերների համատեղ ջանքերով մշակվեց «Քաղաքացի կանանց նախաձեռնություն» ծրագիրը: Ժողովրդավարական անցումային շրջանում գտնվող Եգիպտոսում կանանց քաղաքացիության իրավունքի ապահովմանն ուղղված «Ձեր նույնականացման փաստաթուղթը, ձեր իրավունքները» արշավի շրջանակներում տրամադրվում էին ազգությունը փաստող նույնականացման քարտեր

գյուղական կամ հեռավոր վայրերում ապրող աղքատ և մարգինալացված կանանց: Ծրագրի նպատակն էր շուրջ երկու միլիոն ազգային նույնականացման քարտեր թողարկել եգիպտոսիների համար:¹⁰⁰

- **Սիերա Լեոնե.** Քանի որ շատ ընտրողներ չունեն անհրաժեշտ նույնականացման փաստաթղթեր, ընտրական օրենքը թույլ է տալիս համայնքի ղեկավարին կամ այլ արժանահավատ վկայի փաստել, որ այս կամ այն կինը և տղամարդն իրավասու են քվեարկել:¹⁰¹
- **Արևելյան Թիմոր.** 2010-2012թթ. ընտրական մարմինները՝ Ընտրությունների կազմակերպման տեխնիկական քարտուղարությունը (ԸԿՏՔ) և Ազգային ընտրական խորհուրդը (ԱԸԽ), նախաձեռնեցին ընտրողների գրանցման տվյալների թարմացման գործընթացը, որի թիրախում էին կանայք և խոցելի խմբերը: Գործընթացը ներառում էր տարբեր փուլեր՝ նոր ընտրողների գրանցում, ընտրողների տվյալների թարմացում, ընտրողների ցուցակների հրապարակում, մարտահրավերներ և տեղեկատվության տարածում:¹⁰²

Անձամբ գրանցում

Երբ գրանցման գործընթացի մատչելիությունը դիտարկվում է կանանց մասնակցության տեսանկյունից, ապա այն կարող է մտահոգության տեղիք տալ: Հաշվի առնելով, որ ընտրողների համար գրանցման ամենատարածված եղանակը գրանցման կենտրոն այցելելն է, ապա կարելի է եզրակացնել, որ կենտրոնի գտնվելու վայրը և աշխատանքային ժամերը շատ կարևոր են այդ համատեքստում: Հատկապես կարևոր են աշխատանքային ժամերը, որոնք պետք է դիտարկվեն կանանց այցը գրանցման կենտրոն ավելի հավանական դարձնելու տեսանկյունից: Բեղառուսում և Իրաքում գրանցման կենտրոնների աշխատանքային ժամերը սահմանելիս հստակորեն հաշվի է առնվում կանանց և խնամակալների համար մատչելիություն ապահովելու հանգամանքը: Տանգանիայում և բազմաթիվ այլ երկրներում հաշմանդամները, տարեցները, հղիները և կերակրող կանայք գրանցման ժամանակ օգտվում են հերթից դուրս սպասարկումից:

Անվտանգության երաշխիքը գրանցման ժամանակ նույնպես կարևոր է: Իրաքում ընտրական մարմինը առանձին հերթեր է սահմանում կանանց և տղամարդկանց համար, ինչպես նաև համապատասխանաբար ապահովում է միայն տղամարդկանցից և միայն կանանցից բաղկացած դիտորդների և անվտանգության աշխատակիցների ներկայություն (տե՛ս կոնֆլիկտային իրավիճակների վերաբերյալ ստորև բերված այլ օրի-

նակներ): Որոշ դեպքերում, երբ անհատները զգում են, որ գրանցման բացահայտ գործընթացն իրենց անհատական ռիսկի առաջ է կանգնեցնում պահանջվող տեղեկատվություն պատճառով, ապա մի շարք երկրներ թույլ են տալիս ընտրողների «անանուն» կամ «գաղտնի» գրանցում: Մա վերաբերում է ընտրողների ցուցակում անձանց այնպիսի տեղաբաշխմանը, երբ նրանց անունները կամ այլ տվյալներ (օրինակ՝ հասցեները) չեն երևում ընտրողների ցուցակի որևէ հրապարակված կամ շրջանառվող տարբերակում:¹⁰³

- **Նոր Զեյլանդիայում** «չհրապարակվող պաշտոնական ցուցակում» տեղ գտնելու հայտը պահանջում է հետևյալ փաստաթղթերի առկայությունը.
 - » Ընտանեկան բռնությունից պաշտպանության վերաբերյալ որոշման պատճենը
 - » Գործող դատական արգելքի պատճենը
 - » Ոստիկանության կողմից հաստատված հայտարարություն վտանգի մասին
 - » Փաստաբանի, գործատուի կամ մագիստրատի կողմից աջակցման նամակ¹⁰⁴
- Նույն կերպ **Կանադայում** կանանց ապաստաններում ժամանակավորապես բնակվող կանայք կարող են գրանցվել հատուկ քվեաթերթիկով քվեարկելու համար՝ առանց ապաստանի հասցեն բացահայտելու:

Որոշ երկրներ խուսափում են լուսանկարով նույնականացման քարտերի և անձամբ գրանցման տարբերակներից՝ կազմելով ընտրողների ռեգիստր բնակչության վերաբերյալ տվյալների այլ աղբյուրների հիման վրա:

- **Բոսնիա և Հերցեգովինայում** նույնականացման քարտեր ունեցող քաղաքացիները կարիք չունեն քայլեր ձեռնարկելու, որպեսզի գրանցվեն ընտրողների կենտրոնական ռեգիստրում: Ակտիվ գրանցումն անհրաժեշտ է միայն արտասահմանում գտնվող ընտրողների համար:¹⁰⁵
- **Կանադայում** ընտրական մարմինը շարունակաբար թարմացնում է ընտրողների ազգային ռեգիստրը՝ օգտագործելով պետական մարմինների կողմից տրամադրվող ինֆորմացիան եկամտահարկի ձևաթղթերից, քաղաքացիություն ստանալու համար ներկայացված դիմումներից, վարորդական վկայականների տվյալների բազայից, մարզային մշտական ընտրացուցակներից և այլ տեղեկատվության աղբյուրներից:¹⁰⁶
- **Եգիպտոսում** ընտրողների գրանցումը կախված է ազգային ինքնության տվյալների բազայում առկա տեղեկատվությունից: 18 տարին լրացած քաղաքա-

Ինտրի մյուս կողմերի լուծմանն ուղղված գործողությունների մի քանի օրինակներ բերված են ստրոն.

Աֆղանստան. Կանանց համար պարտադիր պահանջ է ընտրողների գրանցման քարտերի վրա լուսանկարի առկայությունը: Փոխարենը նրանք կարող են ընտրել նույնականացման քարտերի վրա մատնահետքի առկայության տարբերակը (թեև մատնահետքը տեսողական ճանաչման ոչ մի նպատակ չի հետապնդում):¹¹⁴

- **Ավստրալիան և Մեծ Բրիտանիան** չեն պահանջում ընտրողներից լուսանկարով նույնականացման փաստաթուղթի ներկայացում կամ քվեարկության ժամանակ դեմքի ցուցադրում: Գրանցվելիս ընտրողները պետք է նշեն նույնականացման քարտի համարը (որը սովորաբար լուսանկարով է), բայց նույնականացման քարտը գրանցող մասնագետին փաստացի ցույց տալու պահանջ չկա: Նման իրավիճակներում խարդախության փորձերը կանխարգելելու նպատակով կարող են օգտագործվել պայմանական քվեաթերթիկներ:¹¹⁵
- **Բանգլադեշ.** Ընտրական մարմինն ապահովում է, որ ընտրողների ցուցակների թարմացումն իրականացնող կենտրոններում լինեն առանձնացված տարածքներ, որտեղ կանայք կարող են իրենց գլխաշորերը/հիջաբները հանել՝ ընտրողների ցուցակների համար լուսանկարնվելու համար:¹¹⁶



© ՄԱԿ-ի նկար / Մարտին Պերն

ցիները ինքնաբերաբար ստանում են ազգային նույնականացման քարտ և դառնում են գրանցված ընտրողներ՝ առանց գրանցման համար պահանջվող այլ ընթացակարգային քայլերի: Չնայած այս դրույթին, նկատվել է, որ գյուղական համայնքների կանայք միշտ չէ, որ պահանջում են իրենց նույնականացման քարտերը և աջակցության կարիք ունեն այս դրույթի մասին տեղեկանալու և դրա ուղղությամբ համապատասխան քայլեր ձեռնարկելու համար:¹⁰⁷

Թեև այս ամենը կարող է նպաստել նախանշված մարտահրավերների մեղմացմանը, ռեգիստրները, որոնք հիմնված են ոչ բոլոր կանանց ներառող կամ կանանց որպես տղամարդկանց առընթեր խումբ ընդգրկող տվյալների վրա, թերի են համարվում. օրինակ՝ ընտանեկան կամ տնային տնտեսությունների ղեկավարների տվյալների հիման վրա կազմված ռեգիստրները:

Տեղահանված անձանց գրանցումն ապահովելու համար ճկունության դրսևորման որոշ օրինակներ բերված են ստորև.

- **Բոսնիա և Հերցեգովինա.** 1996 թվականին՝ հետպատերազմյան ժամանակահատվածում, ընտրողների գրանցման առաջին փորձն իրականացվեց, որի շրջանակներում անհրաժեշտ փաստաթղթեր չունեցող անձինք կարող էին ներկայացնել հայտարարագիր իրենց անվան և ազգանվան, 1991 թվականի հասցեի, նույնականացման քարտի համարի (եթե հայտնի է) և ներկայիս հասցեի նշմամբ: Հայտարարագիրը պետք է գրված լիներ մագիստրատի, կրոնական առաջնորդի, քաղաքային իշխանության կամ երկու հեղինակավոր անձանց ներկայությամբ, որոնց անուններն առկա էին ընտրողների պայմանական ցուցակում: 1991 թվականին Հարավսլավիայի հանրապետություն իրականացված մարդահամարի տվյալների հիման վրա ստուգվում էր անհատների քվեարկելու իրավասությունը:¹¹⁷
- **Բուրունդի.** Ըստ գնահատման արդյունքների՝ 2010 թվականին Բուրունդիի կանայք ավելի մեծ ռիսկայնի գոտում էին ընտրողների գրանցման ցածր ցուցանիշով, քանի որ տղամարդկանց համեմատությամբ ավելի շատ կանայք չունենին նույնականացման քարտեր: Ի պատասխան, ՄԱԶԾ-ն ԲՀԿ-ների հետ համագործակցության արդյունքում աջակցություն ցուցաբերեց ընտրական մարմնին և Բուրունդիի կառավարությանը՝ մեկնարկելով լայնածավալ իրազեկման արշավ, որը խրախուսում էր բոլոր բուրունդացիներին, հատկապես՝ կանանց, որպես քվեարկությանը մասնակցելու նախապայման ստանալ իրենց հասանելի ազգությունը

Տվյալների բազաների լայն շրջանակի օգտագործումը կարևոր է, որպեսզի քվեարկելու իրավունք ունեցող բոլոր կանայք գրանցվեն:

Լուսանկարով նույնականացման քարտեր

Ընտրողի քարտի վրա լուսանկարի առկայությունը կամ ընտրողներից լուսանկարով նույնականացման փաստաթուղթ պահանջելը նոր ժողովրդավարություններում տարածված գործելակերպ է և հաճախ ներկայացվում է որպես այլ անձի փոխարեն քվեարկությունը կանխելու միջոց: Այնուամենայնիվ, լուսանկարի առկայությունը խնդրի դեմ պայքարի միակ միջոցը չէ, և նույնականացման այլ ձևեր կարող են կիրառվել տարբեր համատեքստերում: Բոլոր տարբերակները պետք է դիտարկել նաև գենդերային հավասարության տեսանկյունից, որպեսզի ապահովվի ընտրողների համընդգրկուն ցուցակ և լինեն խարդախ քվեարկության դեմ պայքարի երաշխիքներ:

հաստատող նույնականացման քարտերը: Հարցի կարևորության շեշտադրման և դոնորների կողմից նյութական աջակցության ավելացման շնորհիվ Բուրունդիի կառավարությանը հաջողվեց շուրջ 1 միլիոն նույնականացման քարտեր տրամադրել ընտրողներին, որից 58%-ը՝ բուրունդացի կանանց:¹¹⁸

- **Կոսովո.** Հակամարտությունից հետո ընտրողների ցուցակը և քնակչության ցուցակը ստեղծվեցին միաժամանակ: Անձը հաստատող փաստաթղթեր չունեցող անհատները կարող էին դիմել նույն մեթոդին, որը կիրառվել էր Բոսնիա և Հերցեգովինայում (վերոնշյալ): Ընտրական մարմինը նաև ստեղծեց հետաքննության բաժին, որը վերանայում էր մերժված հայտերը և հնարավորություն էր տալիս վերահաստատել դիմումատուի կարգավիճակը: Քննվող գործերի վերլուծությունը ցույց տվեց, որ «ղեկների մոտավորապես 70%-ը վերաբերել է կանանց, մեծամասամբ՝ երիտասարդ կանանց»:¹¹⁹
- **Սիերա Լեոնե.** «Տեղափոխելի քվեարկության» (որը թույլ է տալիս ընտրողներին մեկ վայրում գրանցվել և քվեարկել մեկ այլ վայրում) իրավունք ստանալու համար հայցադիմումների ընդունման վերջնաժամկետը երկարացվել էր մինչև 2002 թվականի ընտրություններից 9 օր առաջ՝ օժանդակելու նրանց, ովքեր բնությունից խույս տալով վերադարձել էին իրենց բնակության վայրեր: Բացի այդ, հատուկ գրանցման կենտրոններ էին ստեղծվել այն փախստականների համար, ովքեր պետք է ներկայացնեին փաստաթղթեր առ այն, որ իրենք վերադարձել են ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի հովանու ներքո:¹²⁰

Այն մշակույթներում, որտեղ կանայք գլխաշոր են կրում, նույնականացման քարտի վրա լուսանկար ունենալու պահանջը կարող է խոչընդոտ հանդիսանալ ընտրություններին կանանց մասնակցության համար: Եթե այդ խնդիրները չեն լուծվում, ապա կանայք կարող են ընտրել չգրանցվելու տարբերակը, քանի որ նրանց համար ընդունելի չէ լուսանկարով նույնականացման քարտ ունենալը: Օրինակ՝ անհանգստություն կարող է առաջացնել լուսանկարվելու ժամանակ կամ տեղամասային կենտրոնում ինքնությունը ստուգելու նպատակով գլխաշորը հանելու պահանջը: Ոմանց կարող է անհանգստացնել լուսանկարով նույնականացման քարտի առկայությանը, որը կարող են տեսնել օտար անձինք: Խնդրահարույց են նաև այն դեպքերը, երբ լուսանկարի պատճենը պահվում է և կրկին դիտվում է կամ արտատպվում տվյալների բազա մուտք ունեցող օտար անձանց կողմից: Բացի այդ, որոշ երկրներում ընտրողների գրանցման ցուցակները հրապարակվում են՝ խրախուսելով ընտրողներին հաստատել և, անհրաժեշտության դեպքում, ուղղել իրենց գրանցման կարգավիճակի մասին տվյալները: Կանայք կարող են հատկապես զգայուն լինել իրենց նկարների հրապարակման հարցում՝ կրոնական, մշակութային կամ սոցիալական պատճառներից ելնելով:

Եթե նույնականացման համար լուսանկարի օգտագործումն ամրագրվել է օրենքով, ապա կարելի է կիրառել այնպիսի մոտեցումներ, որոնք ավելի կոյուրացնեն գլխաշոր կրող կանանց մասնակցությունը: Միայն կանանց գրանցող խմբերի (տե՛ս ստորև) առկայությունը լուծում է խնդրի մի մասը:

Կանանց հատուկ կարիքները հասցեագրող մոտեցումներ կոնֆլիկտային և հետկոնֆլիկտային իրավիճակներում

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 2012 թվականի 66/130 բանաձևը կոչ է անում բոլոր երկրներին բարձրացնել կանանց քաղաքական մասնակցությունը տղամարդկանց հետ հավասար պայմաններում՝ հաշվի առնելով քաղաքական անցումային իրավիճակները, ընտրությունների և հանրաքվեների ժամանակ քվեարկելը, և ընտրովի մարմինների ընտրությանն անհատապես լուծելու իրավունքը: Ինքնությունը հաստատող փաստաթղթերի առկայությունը հետկոնֆլիկտային համատեքստերում խնդրո առարկա է: Ենթադրվում է, որ կոնֆլիկտային իրավիճակում տեղահանված անձանց շուրջ երեք քառորդը կանայք են, հետևաբար սա կարող է որպես լուծման ենթակա լուրջ խնդիր դիտարկվել գենդերային հավասարության տեսանկյունից: Միավորված ազգերի կազմակերպության «Ներքին տեղահանման վերաբերյալ ուղեկիրներ»-ը (1998) ներառում է տեղե-



© Փայլին Բարոս

կություն ներքին տեղահանված անձանց քվեարկության իրավունքի և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ միջոցների մատչելիության վերաբերյալ: Ներքին տեղահանված անձանց համար առաջնային խոչընդոտն են հանդիսանում դժվարին կենսապայմանները և ինքնությունը հաստատող փաստաթղթերի բացակայությունը, որոնք նրանք շտապողականության արդյունքում գուցե թողել են իրենց տներում կամ կորցրել են: Սահմանը հատած փախստականները նույնպես կարող են նմանատիպ խոչընդոտների բախվել: Գրանցման ժամանակ կարող է առաջանալ անբավարար տեղեկատվության կամ համապատասխան լեզուներով ու բարբառներով թարգմանության բացակայության խնդիր: Անվտանգությունը և խոշտանգումների ենթարկվելու վախը, բռնությունն ու խտրականությունը նույնպես կարող են մեծ խոչընդոտ լինել ընտրողների ցուցակում տեղահանված անձանց գրանցման համար, հատկապես, եթե նրանք ստիպված են գրանցվելու նպատակով վերադառնալ լքված տարածքներ: Տեղահանված անձանց գրանցմանն առնչվող կանոնակարգերն ու գործընթացները պետք է հաշվի առվեն նախընտրական շրջանում կամ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Այնուամենայնիվ, եթե տեղահանումը տեղի է ունենում ընտրություններից անմիջապես առաջ կամ ընտրությունների ընթացքում, ապա անհրաժեշտ է կիրառել հատուկ միջոցներ:

9.2. Գենդերային ուղղվածության միջամտություններ ընտրողների գրանցման ժամանակ

Ի լրումն այն գործառնությունի ապահովմանը, որ գրանցման սովորական գործընթացը բացասաբար չանդրադառնա կանանց վրա, ընտրական մարմինները նաև կիրառում են թիրախային ռազմավարություններ՝ կանանց մասնակցությունը նյութապահելու և խթանելու նպատակով. օրինակ՝ միայն կանանց գրանցող խմբեր, շրջիկ գրանցում, կին ընտրողների իրազեկում և գրանցման վերաբերյալ գենդերային ուղղվածությամբ դասընթացներ:

Միայն կանանց գրանցող խմբեր

Այն երկրներում, որտեղ մշակութային նորմերը սահմանում են, որ կանայք չեն կարող միևնույն վայրում գտնվել ընտանիքի անդամ չհանդիսացող տղամարդկանց հետ, կանանց գրանցումը պետք է իրականացվի միայն կանանց գրանցող խմբերի կողմից՝ նրանց մասնակցությունը առավելագույնի հասցնելու համար: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ միայն Աֆղանստանն ու Մոզամբիկն էին նշել, որ նախատեսել են «միայն կանանց գրանցող խմբեր», մինչդեռ միայն Աֆղանստանը, Իրաքը և Պակիստանն են «գրանցման կենտրոններում առանձին հերթեր սահմանել տղամարդկանց և կանանց համար» կամ «հատուկ միջոցներ են նախատեսել բռնության նվազեցման և/կամ կանանց գրանցումն ու անվտանգությանը ապահովելու համար»:

Միայն կանանց գրանցող խմբերի առկայության մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Աֆղանստան.** Կանայք գրանցվում են կին աշխատակիցներից բաղկացած խմբերի կողմից: Այնուամենայնիվ, ընտրական մարմինը չկարողացավ ապահովել այդպիսի խմբերի անհրաժեշտ քանակություն գրագետ կանանց ցածր թվաքանակի պատճառով, քանի որ նախորդ տասնամյակների ընթացքում կանայք դպրոց չէին հաճախում:¹⁰⁸
- **Եմեն.** Առկա է հատուկ գործառնական հանձնաժողով, որը ապահովում և վերահսկում է կանանց մասնակցությունը ընտրություններին: Յուրաքանչյուր գրանցման կենտրոն ունի կանանց և տղամարդկանց համար առանձին սենյակներ: Կանանց գրանցումն իրականացվում է կին աշխատակիցների կողմից:¹⁰⁹

Անվտանգության ապահովման հարցը կարող է մտահոգություն առաջացնել ընտրողների գրանցման ընթացքում և հանգեցնել կին անվտանգության աշխատակիցների ներկայության անհրաժեշտությանը: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 11-ը (31%-ը) նշել են, որ գրանցման գործընթացի համար «ապահովել են կին դիտորդների և անվտանգության աշխատակիցների ներկայություն»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կոստա Ռիկան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Իրաքը, Դոմինիկյան Հանրապետությունը, Մալդիվները, Պակիստանը, Հարավային Աֆրիկան և Ուգանդան:

Գրանցումը մարդկանց «մոտեցնելու» մեն այլ տարբերակ կարող էլ լինել ընտրական մարմնի կողմից դժնեղուժ հարցման միջոցով լրիվ կամ մասնակի հաշվառման իրականացումը ընտրողների ցուցակ կազմելու նպատակով:¹²¹

- **Բանգլադեշում** գրանցում իրականացնող խմբերը շրջիկ պարագաներով գնում են դժնեղուժ նույնականացման քարտերը լուսանկարելու և անհրաժեշտ տեղեկատվությունը հավաքագրելու նպատակով:¹²²
- **Մավրիկիոսում** ամեն տարի իրականացվում է ընտրողների շրջիկ գրանցման գործընթացը: Այց է կատարվում բոլորի տներ և գրանցվում են ընտանիքի բոլոր իրավասու անդամները՝ անկախ սեռից:
- **Նեպալում** շուրջ 28,000 տվյալներ հաշվառողներ, որոնց մեծ մասը համայնքային դպրոցների ուսուցիչներ էին, ներգրավված են եղել 2011 թվականի ընտրողների գրանցման համապետական ծրագրում: Խնդիր էր դրված 50%-ոց թիրախ սահմանվել կանանց՝ որպես հաշվառողներ և մասնակավարժներ, ինչպես նաև այլ պաշտոններում ներգրավելու համար:¹²³
- **Պակիստանի** ընտրական հանձնաժողովը Ազգային տվյալների գրանցման լիազոր մարմնի (ԱՏԳԼՍ) հետ համակարգում էր էլեկտրոնային նույնականացման քարտեր (ԷՆՔ) ստանալու գործընթացի խթանումը, որպեսզի կանայք կարողանան գրանցվել որպես ընտրողներ: Տնային այցերի միջոցով հաշվառում էր կատարվում էլեկտրոնային նույնականացման քարտեր (ԷՆՔ) ունեցողներին ցուցակի մեջ ավելացնելու նպատակով: ԶՅԿ-ների նույնպես խրախուսվում էր խթանել կանանց՝ էլեկտրոնային նույնականացման քարտեր (ԷՆՔ) ստանալու համար գրանցումը:¹²⁴
- **Արևելյան Թիմոր.** 2001 թվականից ի վեր անցկացվող ընտրություններում ապահովվել է ընտրողների գրանցման և քվեարկության օրվա համար շրջիկ արկղի հասանելիությունը: Շրջիկ արկղով իրականացնում են այցեր դեպի հիվանդանոցներ, բանտեր, զորամասեր և այլ հեռավոր վայրեր:



Չիմբաբվե. Ձգտելով հասնել գեներային հիմնահարցերը հասցեագրող ընտրողների գրանցման

2013 թվականի հուլիսին Չիմբաբվեում քաղաքական դաշտի ողջ շրջանակը ներկայացնող կանայք խաղաղ երթ անցկացրեցին և ներկայացրեցին միջնորդություն՝ պահանջելով ընտրողների գրանցման գեներային զգայուն գործընթացի կազմակերպում:

Կանանց հարցերով զբաղվող մի քանի կազմակերպությունների կողմից անցկացված հետազոտությունը ցույց էր տվել, որ ընտրողների գրանցման ընթացակարգը թերացել էր հաշվի առնել կանանց հատուկ կարիքները՝ դրանց չարձագանքելու փաստը պայմանավորելով կանանց ստանձնած գեներային դերերով որպես մայրեր և խնամակալներ: Նշվում էր, որ տարեցները, հաշմանդամություն ունեցող կանայք և հղի կանայք հատուկ ուշադրության չէին արժանացել որոշ գրանցման կենտրոնների անմատչելիության միջավայրում, և որոշ պաշտոնյաներ հրաժարվել էին հաշվի առնել պոտենցիալ ընտրողների հատուկ կարիքները:

Հայքը ներկայացվեց Ռեգիստրի գլխավոր գրասենյակին, Չիմբաբվեի ընտրական հանձնաժողովին, Ֆինանսների նախարարությանը և Համատեղ մոնիտորինգի և իրականացման հանձնաժողովին:¹²⁵

Շրջիկ գրանցում

Ընտրողների գրանցման վայր հասնելու համար բավարար ժամանակ և ռեսուրսներ չունենալու հետ կապված խնդիրներից ընտրագանգվածին հնարավորինս զերծ պահելու նպատակով՝ ընտրական մարմինը կարող է գրանցման գործընթացը «մոտեցնել» մարդկանց: Եթե շրջիկ գրանցման տարբերակը հասանելի է, ապա շատ կարևոր է, որ ընտրողները տեղեկություն ստանան իրենց տարածքում գրանցման վայրի և ժամանակացույցի վերաբերյալ:

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 12-ը (34%-ը) նշել են, որ «ցյուղական վայրերում շրջիկ գրանցման կենտրոնների առկայություն են ապահովել, որպեսզի քաղաքացիները խուսափեն հեռավորության հետ կապված խնդիրներից»: Այդ երկրներն են՝ Բենինը, Կանադան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Վրաստանը, Իրաքը, Ղազախստանը, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Հարավային Աֆրիկան, Թունիսը և Ուգանդան: Նման կենտրոններ սովորաբար ստեղծվում են այն շրջաններում և ընտրատարածքներում, որոնք աշխարհագրորեն մեծ են ու հեռավոր, և կա երկար հեռավորություններ անցնելու անհրաժեշտություն: Ի լրումն այս դեպքերի, փոստով գրանցվելու տարբերակը հասանելի է որոշ երկրներում (Ավստրալիա, Բոսնիա և Հերցեգովինին, Կանադա, Գերմանիա, Իռլանդիա, Միացյալ Թագավորություն), իսկ առավել սակավաթիվ դեպքերում հասանելի է նաև առցանց գրանցվելու տարբերակը (Ավստրալիա, Կանադա, Դանիա):¹¹⁰

Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ շրջիկ գրանցումը և հաշվառումը կարող են թանկ արժենալ, բայց շատ դեպքերում դա կարող է լինել հեռավոր վայրերում ընտրողներին հասնելու միակ ուղին:

Ընտրողներին գրանցման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում

Ընտրողներին անհրաժեշտ է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես և որտեղ է պետք գրանցվել և երբ են գրանցման կենտրոնները բաց: Կանանց պետք է խրախուսել, որպեսզի գրանցվեն հատկապես այն դեպքերում, երբ մշակութային նորմերը ենթադրում են, որ ընտրությունները միայն տղամարդկանց համար են, ինչպես նաև գրագիտության ցածր մակարդակ ունեցող հասարակություններում կամ լայնատարած քաղաքական անտարբերության մթնոլորտում: Գրագիտության ցածր մակարդակ ունեցող երկրներում կանայք կազմում են ոչ գրագետ ընտրողների ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող զանգվածը: Որոշ համատեքստերում անհրաժեշտ է նաև ապահովել, որ տեղեկատվությունը տրամադրվի տարբեր լեզուներով:¹¹¹

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 22-ը (63%-ը) նշել են, որ իրենք «ՀԿ-ների և կանանց հարցերով զբաղվող ներպետական կազմակերպությունների հետ համատեղ իրականացրել են իրազեկվածության բարձրացման միջոցառումներ՝ խրախուսելով կանանց գրանցումը»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Բելառուսը, Բենինը, Բոսնիա և Հերցեգովինան, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Մադագասկարը, Մալավին, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Պակիստանը, Կոնգոյի Հանրապետությունը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան, Թունիսը և Ուգանդան:

Իրազեկման միջոցառումների մի շարք օրինակներ բերված են ստորև.

- Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն. Իրազեկման արշավներ են իրականացվել 2009 և 2010 թվականներին՝ ընտրողների ցուցակներում կանանց թվաքանակի ավելացման ուղղությամբ, այդ թվում՝ հեռավոր մարզերում կին ընտրողների գրանցման թիրախային արշավների տեսքով:¹¹²
- Սուդան. 2009 թվականին ՄԱԶԾ-ն տրամադրեց ավելի քան 1,2 մլն ԱՄՆ դոլարի փոքր դրամաշնորհներ 41 ԹՀԿ-ների: Դրամաշնորհառուները վերապատրաստվեցին գրանցման գործընթացի վերաբերյալ ընտրողների կրթելու մեթոդաբանության թեմայով, որը ներառում էր նաև կանանց իրազեկման բաղադրիչը:³⁵

Հարավային Սուդան. ՄԱԿ-ի Կանայք և UNMIS ընտրությունների աջակցման թիմի գեներալային հարցերը համակարգող բաժինը օժանդակեցին Հարավային Սուդանի բոլոր 79 շրջաններում գրանցման գործընթացի վերաբերյալ դասընթացավարների ուսուցման կազմակերպմանը: «Դու պետք է գրանցվես» խորագրով պատաստները և քաղաքացիական կրթության ձեռնարկը լայն տարածում գտան:

Գեներալային ուղղվածությամբ դասընթացներ գրանցող անձնակազմի համար

Գեներալային զգայուն ընթացակարգերի և կանոնների

ներառումը կարող է բավարար չլինել գեներալային բաղադրիչով պայմանավորված ընտրողների գրանցման համար: Նույնիսկ եթե գրանցող խմբերը վերապատրաստվում են, որոշ գործողություններ կարող են սահմանված չլինել աշխատանքի բնութագրերում կամ գործնականում չիրականացվել: Գեներալային հավասարության վերաբերյալ նկատառումները կարող են մոռցվել կամ գործնականում փոխարինվել այլ պահանջներով:


Ընթացակարգերի կիրառմանը հետևողական լինելը պահանջում է, որպեսզի դրանք հրահանգների, ստուգանքների և բնութագրերի տեսքով ամեն օր օգտագործվեն գրանցում իրականացնող մասնագետների կողմից: Աֆղանստանում քարտերի տրամադրման համար պատասխանատու աշխատակցի հստակորեն սահմանված պարտականությունն է «ապահովել լուսանկարվող կանանց գաղտնիությունը» և հիշեցնել կանանց, որ նրանք կարող են ընտրել մատնահետք հանձնելու տարբերակը լուսանկարվելու փոխարեն: Գրանցում իրականացնող աշխատողների վերապատրաստումը ներառում է անդրադարձ այն գործողություններին, որոնք սահմանափակում են ամուսնու՝ կնոջ անունից գրանցման հնարավորությունը, և ապահովում են, որ կինը կարողանա ընտրել մատնահետք հանձնելու տարբերակը լուսանկարվելու փոխարեն:¹¹³



© ՄԱԿ-ի նկար / Բերնանդինո Սոարես

ԱՄՓՈՓՈՒՄ

- Որպես քվեարկությանը մասնակցելու նախապայման, գրանցման գործընթացը պահանջում է հատուկ ուշադրություն գեներալային հավասարության տեսանկյունից:
- Գործող գրանցման մեթոդները, այդ թվում՝ անձը հաստատող փաստաթղթեր ունենալու պահանջը, երբ կանայք պետական մարմինների կողմից դրանք չեն ստացել, կարող են սկամայից ազդել կանանց մասնակցության վրա:
- Գրանցման գործընթացի գեներալային վերլուծությունը կարող է օգտակար լինել մատնանշելու համար հնարավոր բարեփոխումները, որոնց իրականացումը կարող է ավելացնել կանանց գրանցման ցուցանիշները:
- Ընտրական մարմինները կարող են դիտարկել կանանց թիրախավորող հատուկ նախաձեռնություններ, ինչպիսիք են՝ միայն կանանց համար նախատեսված գրանցման կենտրոնները կամ հերթերը, շրջիկ գրանցումը, գրանցման պահանջի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և գրանցող անձնակազմի համար գեներալային բաղադրիչով պայմանավորված դասընթացների կազմակերպումը:



10 Թեկնածուների և քաղաքական կուսակցությունների առաջադրումն ու գրանցումը

Ընտրական մարմինները պատասխանատու են գործունեությունների լայն շրջանակի համար, այդ թվում՝ թեկնածուների և քաղաքական կուսակցությունների առաջադրումների ընդունման և վավերացման առանցքային գործառնությունների, ընտրողների գրանցման, քվեարկության կազմակերպման, հաշվարկի, տվյալների ամփոփման և արդյունքների հրապարակման համար:¹²⁶ Ընտրական մարմինները կարող են ստանալ պետական ֆինանսավորում և վերահսկել քարոզչության համար կատարված ծախսերը, թեև այս գործառնությունը կարող են լինել նաև այլ նախարարությունների (օրինակ՝ ներքին գործերի կամ արդարադատության նախարարությունների), քաղաքական կուսակցություններին գրանցող կամ այլ մարմինների պատասխանատվության ներքո:¹²⁷ Ընտրական մարմինը պետք է համակարգի կուսակցությունների և թեկնածուների գրանցման համար պահանջվող ընթացակարգերը և ապահովի, որ բոլոր համապատասխան օրենքները կիրառվեն անկողմնակալության սկզբունքով:

Թեկնածուների առաջադրման ընթացակարգերը սահմանում են քվեաթերթիկում ընդգրկվելու թեկնածուների իրավասությունը:¹²⁸ Շատ երկրներում թեկնածուները գրանցվում են քաղաքական կուսակցության աջակցությամբ (կամ որպես կուսակցության կամ խմբավորման անդամ), հատկապես համամասնական ընտրական համակարգի դեպքում, մինչդեռ որոշ համակարգեր թույլ են տալիս անկախ թեկնածուների առաջադրումը: Ըստ ամենայնի, օրենսդրորեն սահմանվում է գրանցման հայտերի ժամանակացույցը և ապահովվում է, որ բոլոր կուսակցություններն ու թեկնածուները արժանանան հավասար վերաբերմունքի:¹²⁹ Կուսակցության կամ թեկնածուի առաջադրումը հաստատելու համար որակավորման պահանջները ներառում են տարիքը, ազգությունը, ֆինանսական ապահովվածությունը, ընտրողների կողմից աջակցության մակարդակը և քրեական կամ ընտրական հանցագործությունների համար դատապարտված չլինելու հանգամանքը:¹³⁰ Առաջադրումը հաճախ ենթադրում է ընտրագրավի վճարում: Ընտրական մարմինը կարող է հրապարակել թեկնածուների առաջադրման կանոնները տարբեր լրատվամիջոցների միջոցով, որպեսզի տեղեկատվությունը հասանելի լինի նաև կանանց, իսկ ժամկետները և առաջադրումների ներկայացման համար սահմանված վայրերը մատչելի

լինեն բոլոր քաղաքացիներին:

Չնայած որակավորման պահանջները տարբերվում են ըստ երկիրների, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե որքանով են դրանք կանանց նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն խտրական: Օրինակ, եթե թեկնածուի համար սահմանված ընտրագրավը չափազանց բարձր է, ապա ավելի աղքատ խավին պատկանող թեկնածուները կարող են հուսահատվել և չգրանցվել: Քանի որ շատ երկրներում աղքատ բնակչության մեծ մասը կանայք են, ապա այս պահանջը կարող է անուղղակիորեն խոչընդոտել կին թեկնածուների առաջադրմանը: Պետք է հաշվի առնել նաև այն օրենքները, որոնք ազդում են թեկնածուի և քաղաքական կուսակցության գրանցման վրա, մասնավորապես օրենքները, որոնք պահանջում են, որ առաջադրվող թեկնածուների որոշակի համամասնությունը կազմեն կանայք կամ այլ թերներկայացված խմբեր, ինչպես նաև օրենքները, որոնք պահանջում են քարոզարշավի համար ֆինանսական հատկացումների ծավալի կրճատում, եթե թեկնածուների մեջ չկան որոշակի համամասնությամբ ներկայացված կանայք: Երբեմն բոլոր պահանջների բավարարման մասին որոշումը կայացնում է դատարանը կամ վերջնական որոշումներ

կայացնելու լիազորություն ունեցող ընտրական վարչա-
րարություն իրականացնող մարմինը:¹³¹

10.1. Թեկնածուների առաջադրման կանոն- ների կիրառումն ըստ քվտայի

Ավելի քան 80 երկրներ օրենսդրական կարգով սահմա-
նել են ժամանակավոր հատուկ միջոցներ (ԺՀՄ) գենդե-
րային քվտաների տեսքով, որոնք ուղղված են որոշում
կայացնող մարմիններում, մասնավորապես՝ խորհրդա-
րաններում, կանանց թվի ավելացմանը: Այդ օրենքնե-
րը պետք է գործնականում կիրառվեն թեկնածուների և
կուսակցությունների գրանցման ժամանակ: Շատ երկր-
ներում գենդերային քվտաների համապատասխա-
նությունը վերահսկելու և կիրառելու լիազորությունը
պատկանում է թեկնածուների առաջադրման համար
պատասխանատու իշխանական մարմին, որը հաճախ
հենց ընտրական մարմինն է: Ընտրական մարմինները
կարող են ունենալ իրավասություն պահանջելու քաղա-
քական կուսակցություններից թեկնածուների ցու-
ցակները վերակազմել կամ վերանայել քվտայի պա-
հանջներին համապատասխան կամ կարող են պատժել
գենդերային քվտայի պահանջները չբավարարող կու-
սակցություններին՝ կիրառելով ֆինանսական տույժեր,
ինչպես նաև որակագրկել՝ թույլ չտալով մասնակցել
ընտրապայքարին: Ընտրական մարմինների՝ օրենսդ-
րությամբ սահմանված քվտան վերահսկելու և կիրա-
ռելու պարտականությունները արտացոլված են ստորև
բերված օրինակներում:

Շատ երկրներում քաղաքական կուսակցությունները,
որոնք չեն համապատասխանում քվտայի օրենքների
պահանջներին, ենթարկվում են պատժամիջոցների:
Քվտաներին անհամապատասխանության դեպքում
քաղաքական կուսակցությունները կարող են ենթարկ-
վել հետևյալ պատժամիջոցներին.

- Թեկնածուների առաջադրման քվտային չհամա-
պատասխանող ընտրական ցուցակների մերժում
կամ անվավեր ճանաչում (Էկվադոր, Պարագվայ,
Արգենտինա, Մենեգալ)
- Իրավական պատժամիջոցներ (Ռուանդա, Քենիա
(եթե խորհրդարանի կազմը չի համապատասխա-
նում սահմանված քվտային, ապա այն համարվում
է հակասահմանադրական) Արգենտինա, Նեպալ,
Բուրունդի, Տանզանիա, Բելգիա, Կոստա-Ռիկա և
Մենեգալ)
- Քաղաքական խոչընդոտներ (Բելգիայում և Բրազի-
լիայում կանանց կողմից չգրադեցրած պաշտոնները

**Թեկնածուների առաջադրման համար օրեն-
քով սահմանված քվտաների օրինակներ,
որոնք պետք է վերահսկվեն ընտրական
մարմինների կողմից Խորհրդարանի ստո-
րին պալատ**

Հայաստան

- Համամասնական ընտրակարգով ընտրական ցու-
ցակի 2-րդ համարից սկսած ցանկացած ամբողջ
թվով հնգյակներում յուրաքանչյուր սեռի ներկա-
յացուցիչների թիվը չպետք է գերազանցի 80 տո-
կոսը: (2011 թվականին ընդունված ՀՀ ընտրական
օրենսգրքի 108-րդ հոդվածի 2-րդ կետ)
- Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մեր-
ժում է կուսակցության, կուսակցությունների դաշին-
քի ընտրական ցուցակի գրանցումը, եթե ընտրական
ցուցակը չի համապատասխանում սույն օրենսգրքի
108-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջ-
ներին, այդ թվում՝ օրենքով սահմանված թեկնա-
ծուների քվտան: (2011 թվականին ընդունված ՀՀ
ընտրական օրենսգրքի 110-րդ հոդված):

Փոսնիա և Ջեյքեգովինա

- Յուրաքանչյուր ընտրական ցուցակ ներառում է
կին և տղամարդ թեկնածուներ, ովքեր հավասա-
րապես ներկայացված են: Հավասար ներկայաց-
վածություն գրանցվում է այն դեպքում, երբ յուրա-
քանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը կազմում
է ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուներ
ի ընդհանուր թվի առնվազն 40 տոկոսը: (Հոդված
4.19 [4]):
- Առավել քիչ ներկայացված սեռը պետք է բաշխվի
թեկնածուների ցուցակում հետևյալ սկզբունքով.
Առաջին երկու (2) թեկնածուների մեջ առնվազն մեկ
(1) փոքրամասնություն կազմող սեռի ներկայացու-
ցիչ, առաջին հինգ (5) թեկնածուների մեջ երկու (2)
փոքրամասնություն կազմող սեռի ներկայացուցիչ և
առաջին ութ (8) թեկնածուների մեջ երեք (3) փոքրա-
մասնություն կազմող սեռի ներկայացուցիչ և այլն
(Հոդված 4.19 [4]): Եթե ցուցակում առկա է անհամա-
պատասխանություն, ապա Կենտրոնական ընտրա-
կան հանձնաժողովն ընդունում է ցուցակի միայն մի
մասը մինչև այն համարը, որը համապատասխա-
նում է օրենքի պահանջներին (Հոդված 4.19 [8]):

Էկվադոր

- 2009 և 2012 թվականների ընտրական օրենսգրքի 99-րդ հոդվածի համաձայն՝ տղամարդ և կին թեկնածուների անունները համամասնական ընտրակարգով ընտրություններին ներկայացվում են հաջորդաբար մինչև ցուցակի ավարտը:
- Ընտրական ցուցակները մերժվում են ընտրական հանձնաժողովի կողմից, եթե դրանք չեն համապատասխանում Սահմանադրությանը և Ընտրական օրենսգրքով սահմանված գեներացիային հավասարության դրույթներին: (Ընտրական իրավունք 2009/2012, հոդված 105):

Գայանա

- Յուրաքանչյուր կուսակցության ընտրական ցուցակում թեկնածուների մեկ երրորդը պետք է լինեն կանայք («Ժողովրդի ներկայացուցչության մասին» օրենք, Բաժին 11Բ):
- Եթե ցուցակը չի համապատասխանում քվոտային, ապա Հանձնաժողովը պետք է այդ մասին տեղեկացնի և թույլ տա կուսակցությանը ուղղել այն: Միայն Հանձնաժողովի կողմից ճիշտ համարվելու դեպքում ցուցակը կարող է հաստատվել («Ժողովրդի ներկայացուցչության մասին» օրենք, բաժիններ 14 և 17):

Ղրղզստան

- 2011 թվականին փոփոխված Ընտրական օրենսգրքը սահմանում է ընտրական ցուցակներում յուրաքանչյուր սեռի համար նվազագույնը 30% քվոտա (Ընտրական օրենսգրք, հոդված 60 [3]):
- Ընտրական ցուցակները, որոնք չեն համապատասխանում քվոտայի պահանջներին, մերժվում են Ընտրական հանձնաժողովի կողմից (Ընտրական օրենսգրքի 2011 թվական, Հոդված 61 [3]): Ընտրական ցուցակում կարող են ներկայացված լինել իրար հաջորդող և նույն սեռին պատկանող երեք կամ պակաս թեկնածուներ (Ընտրական օրենսգրք 2011, հոդված 60 [3]):

Մոնղոլիա

- 2011 թվականին Մոնղոլիայի ընտրական օրենսդրության մեջ ավելացվեց օրենսդրորեն սահմանված թեկնածուական քվոտայի մասին դրույթը, որը պահանջում էր, որ երկու ընտրակարգերի (մեծամասնական և համամասնական) պարագայում կուսակցությունների կողմից ընտրական ցուցակներում ներկայացված

թեկնածուների առնվազն 20%-ը լինեն կանայք (հոդված 27.1, Խորհրդարանական ընտրություններ, (Մեծ Պետական Խորհուրդ), 2011 թվականի դեկտեմբերի 15):

- Ընդհանուր ընտրական հանձնաժողովը կամ տարածքային հանձնաժողովը մերժում է ընտրական ցուցակը, եթե այն չի համապատասխանում 27-րդ հոդվածի դրույթներին, այդ թվում՝ օրենքով սահմանված թեկնածուական քվոտաների պահանջին:

Պարագվայ

- Կուսակցություններից պահանջվում է ունենալ ներքին կուսակցական մեխանիզմներ, որոնք ապահովում են ընտրովի պաշտոններում կանանց առնվազն 20% մասնակցություն (Ընտրական օրենսգիրք, հոդված 32 [ո] [1]): Ընտրական ցուցակներում յուրաքանչյուր հինգերորդը պետք է լինի կին թեկնածու (Ընտրական օրենսգիրք, հոդված 32 [ո] [2]):
- Կուսակցական ցուցակները, որոնք չեն համապատասխանում քվոտային, չեն հաստատվում Ընտրական հանձնաժողովի կողմից (Ընտրական օրենսգիրք, հոդված 32 [ո] [3]):

Աղբյուրը՝ ԺԸԱԻ, ՄԽՄ և Ստոկհոլմի համալսարան, Կանանց քվոտաների համընդհանուր տվյալների բազա, www.quotaproject.org



© Քուոթա Քալիբրեյթ

թավուր են մնում)

- Ֆինանսական տույժեր այն կուսակցություններին, որոնք չեն համապատասխանում կին թեկնածուների համար սահմանված քվոտայի պահանջին (Բոլիվիա, Բուրկինա Ֆասո, Կարո Վերդե, Կոլումբիա, Խորվաթիա, Ֆրանսիա, Վրաստան, Իդանդիա, Քենիա, Նիգեր, Պորտուգալիա և Կոբեայի Հանրապետություն)
- Արգելանք կամ պատիժ պետական վերահսկողական մեխանիզմների կողմից (Հավասարության կամ հավասար հնարավորությունների հանձնաժողովի կամ այլ լիազոր մարմինների կողմից)
- Քաղաքական կուսակցությունների որակագրկում ընտրություններին մասնակցելու հետագա պայքարից՝ օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով (Ղրղզստան)

Ընտրական մարմինները կարող են նաև տարբեր գործողություններ իրականացնել՝ խրախուսելու քվոտաների դրույթին համապատասխանությունն առանց իրավական մեխանիզմների կիրառման.

- Աֆղանստանում 2014 թվականի ընտրություններից առաջ Անկախ ընտրական հանձնաժողովն (ԱՀՀ) իրականացրեց մի շարք միջոցառումներ՝ կին թեկնածուների առաջադրումը խթանելու նպատակով: Ի պատասխան կանանց առաջադրման ցածր մակարդակի, Անկախ ընտրական հանձնաժողովը (ԱՀՀ) փորձում էր անդրադառնալ կին թեկնածուների առջև ծառայած ֆինանսական խոչընդոտներին: Որոշում կայացվեց փոխհատուցել Մարգային խորհրդի կին թեկնածուների կողմից վաճարված ընտրագրաժետերը և աջակցություն ցուցաբերել պատասխանների պատ-

Թեկնածուների առաջադրման քվոտաների կիրառումը Լատինական Ամերիկայում

Ընտրական մարմինն վերապահված է ընտրական օրենքի անաչառ կիրառումն ապահովելու կարևոր գործառնությունը, սակայն երբեմն ընտրական մարմինը կարող է ստանձնել քվազի-օրենսդրական դեր կանոնակարգերի հրապարակման հարցում, իսկ որոշ դեպքերում՝ ընտրական բողոքների վերաբերյալ որոշումներ կայացնելիս, քվազի-դատական դեր:¹³⁶ Լատինական Ամերիկայի շատ երկրներում գոյություն ունեն ընտրական տրիբունալներ, որոնք համարվում են ընտրական հարցերում բարձրագույն իշխանական մարմիններ և դաշնային դատական համակարգի մասնագիտացված միավորներ:¹³⁷ Ընտրական տրիբունալը պարտավոր է ապահովել, որ ընտրական մարմինների կողմից իրականացված բոլոր գործողությունները և սահմանված որոշումները համապատասխանեն Սահմանադրությանը և դրանից բխող օրենքներին:¹³⁸

Հետաքրքիր միտում է զարգանում Լատինական Ամերիկայում, որտեղ ընտրական տրիբունալները ուսումնասիրում են օրենսդրությունը՝ քաղաքական կուսակցությունների համապատասխանությունը քվոտաների օրենսդրական պահանջին ապահովելու նպատակով: Ընտրական տրիբունալների կայացրած որոշումների համեմատական ուսումնասիրության ժամանակ¹³⁹ Արգենտինայի և Կոստա Ռիկայի տրիբունալների նախագահները նշել էին, որ տարածաշրջանում քվոտայի մասին օրենքի աուկայությունը «վերահիմաստավորել է պետության դերը»՝ ապահովելով քաղաքական դաշտի զարգացումներին հավասարապես մասնակցելու բոլոր քաղաքացիների՝ տղամարդ և կին, հիմնարար իրավունքը:¹⁴⁰ Նրանք պնդում էին, որ պետությունն այժմ ընկալվում է որպես ավելի ակտիվ դերակատար կանանց քաղաքական իրավունքների իրացման համար առկա խոչընդոտները վերացնելու ուղղությամբ կատարվող աշխատանքներում, հասկանալով, որ գենդերային քվոտաների լոկ ընդունումը «մասնակի համապատասխանություն» է Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիային (CEDAW): Այս համատեքստում ընտրական տրիբունալները ապահովում են քվոտաների մասին օրենքների կիրառումը: Հետևյալ որոշումներն արտացոլում են Լատինական Ամերիկայում քվոտաների մասին օրենքների կիրառումը.

- **Արգենտինայում** Ազգային ընտրական հանձնաժողովի 1995 թվականի ապրիլի 21-ի թիվ 1864/95 որոշումը ցույց տվեց, որ նույնիսկ այն դեպքում, երբ կուսակցության անդամների մեծամասնու-



© ՄԱԿ-ի նկար / Ռիք Բախտրասս

թյունը դեմ է քվեարկում քվոտաների ներդրմանը, նման քվեարկությունը չի կարող արդարացնել կուսակցության կողմից քվոտայի մասին օրենսդրությամբ սահմանված պահանջը չկատարելու հանգամանքը: Հաջորդիվ, Ազգային ընտրական հանձնաժողովը որոշում ընդունեց առ այն, որ քվոտաները պետք է կիրառել կուսակցության ցուցակի «իրական», այսինքն՝ «հաղթահարելի» կետերի մասով, և այս որոշումը վերահաստատվեց նաև հետագա որոշումներում (1866-95, 2951-01, 3507-05):¹⁴¹

- **Կոստա Ռիկայում**, որտեղ 1998 թվականի ընտրություններում կիրառվել էր 40% քվոտայի շեմը, ընտրական մարմինները չէին մերժել քվոտայի պահանջներին չհամապատասխանող ցուցակները: Գերագույն ընտրական տրիբունալը 1999 թվականին որոշում կայացրեց, որ քվոտայի մասին օրենքը պետք է մեկնաբանել հետևյալ կերպ. ընտրական ցուցակները պետք է յուրաքանչյուր սեռի առնվազն 40% ներկայացուցչություն, և կանայք պետք է ներկայացնեն ընտրովի պաշտոնների 40%-ը, ինչը ընկալվել էր որպես նախորդ ընտրություններում կուսակցությունների ստացած տեղերի քանակ:¹⁴²
- **Մեքսիկայում** Դաշնային ընտրական տրիբունալը հրաժարվեց ընդունել 2012 թվականի ընտրություններին մասնակցող 5 տարբեր կուսակցությունների և երկու կոալիցիաների ընտրական ցուցակները, որոնք չէին բավարարում 40% քվոտայի պահանջը: Նախքան Տրիբունալի 2011 թվականի որոշումը, կանայք ներկայացնում էին մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների 28%-ը և համամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների 40,2%-ը: Տրիբունալի որոշման համաձայն՝ 2012 թվականին այդ տոկոսները աճեցին՝ հասնելով համապատասխանաբար 41.5%-ի և 49.5%-ի:¹⁴³
- **Պերուում** Ազգային ընտրական տրիբունալը որոշեց (2010 թվականի հուլիսի 26-ի որոշում 721-2010), որ կուսակցությունների ընտրացուցակում կանանց տոկոսը կարող է կլորացվել մինչև հաջորդ ամբողջ թիվը: Օրինակ, եթե կուսակցությունն առաջադրում է 29.6% կին թեկնածուներ, ապա հաշվարկվում է 30%: Տրիբունալը նաև որոշում կայացրեց (2010 թվականի հուլիսի 23-ի որոշում 670-2010), որ կուսակցությունների ցուցակը անվավեր է ճանաչվելու, եթե որոշ թեկնածուներ որոշեն իրենց թեկնածությունը հանել նույնիսկ ցանկի հաստատումից հետո:¹⁴⁴

րաստման հարցում (տղամարդ և կին մարզային թեկնածուների համար): Այս միջոցառումները նպաստեցին կին թեկնածուների թվաքանակի ավելացմանը և քվոտայի պահանջի բավարարմանը: 2009 թվականի Մարզային խորհրդի և 2010 թվականի Ստորին պալատի ընտրությունների ժամանակ մի քանի մարզեր չունեին բավարար թվով կին թեկնածուներ՝ հատկացված տեղերը լրացնելու համար: Թեկնածուների առաջադրման վերջնաժամկետից երեք-չորս օր առաջ ԱԸՀ-ն քննարկումների շարք ծավալեց կանանց խորհուրդների և կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ների հետ և արդյունքում կարողացավ նպաստել լրացուցիչ կին թեկնածուների առաջադրմանը նախքան վերջնաժամկետը:

- Թունիսում 2011 թվականին ընտրական մարմինը մշակեց համաձայնագրեր՝ օրինախախտ կուսակցությունների գործունեությունը օրենքին համապատասխանեցնելու համար:¹³²

10.2. Քարոզարշավի ֆինանսավորման կանոնների կիրառումը

Վերջին հինգ տարիների ընթացքում քաղաքական դաշտի ֆինանսավորման ոլորտի բարեփոխումներ են իրականացվել 27 երկրներում, որոնք ակնհայտորեն նպատակ ունեն գենդերային անհավասարության դեմ պայքարել պետական ֆինանսավորման համակարգի միջոցով: Այս բարեփոխումները հիմնականում

ուղղված են քաղաքական կուսակցությունների կողմից առաջադրվող կանանց թեկնածությանը, որտեղ պետական ֆինանսավորումը օգտագործվում է որպես խրախուսման կամ տուգանքի միջոց օրենքով սահմանված քվոտայի պահանջը բավարարելու կամ չբավարարելու համար. դրամական միջոցների մի մասը հատկացվում կամ կրճատվում է՝ համաձայն քվոտայի մասին օրենքի: Պետական ֆինանսավորումը կուսակցությունների համար ծառայում է որպես ֆինանսական խթան քվոտայի

Պետական ֆինանսավորման և կին թեկնածուների համամասնության վերաբերյալ օրենսդրության օրինակներ

Ալբանիա

- Բոլոր ընտրատարածքների համար բազմանուն ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի 30%-ից և/կամ բազմանուն ցուցակի առաջին երեք անունների մեջ պետք է լինեն երկու սեռի ներկայացուցիչներ (թիվ 74/2012 օրենքով փոփոխված թիվ 10 012, 2008 օրենքի 67-րդ հոդվածի 6-րդ կետ):
- Օրենքի խախտումը պատժվում է 1 միլիոն լեկ (7,120 եվրո) տուգանքով Ազգային Ժողովի ընտրություններում և 50,000 լեկ (346 եվրո) տուգանքով տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ:

Բուրկինա Ֆասո

- Ընտրական ցուցակում յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչների թիվը չպետք է պակաս լինի 30%-ից (Քվոտաների մասին օրենք, հոդված 3):
- Եթե կուսակցությունը հասնում կամ գերազանցում է 30% քվոտան, ապա ստանում է լրացուցիչ ֆինանսավորում (Քվոտաների մասին օրենք, հոդված 5 և 6):
- Եթե քաղաքական կուսակցությունը չի բավարարում քվոտայի դրույթը, ապա նախընտրական քարոզարշավի համար պետական ֆինանսավորումը կրճատվում է 50%-ով: (Քվոտաների մասին օրենք, հոդված 5 և 6):

Իռլանդիա

- Համաձայն 1997 թվականի ընտրական օրենսգրքի 17-րդ մասի, որը փոփոխվել է 2012 թվականի «Քաղաքական ֆինանսավորման մասին» օրենքի 42-րդ մասով, օրենքի կիրառումից հետո քաղաքական կու-

սակցությունները համապետական ընտրություններում կկորցնեն պետական ֆինանսավորման 50%-ը, եթե նրանց թեկնածուների առնվազն 30%-ը կանայք և առնվազն 30%-ը տղամարդիկ չլինեն: Յոթ տարիների ընթացքում քաղաքական կուսակցությունները պետք է ունենան 40% գենդերային քվոտա իրենց ընտրական ցուցակներում, որպեսզի ստանան լիարժեք պետական ֆինանսավորում:

Պանամա

- 2012 թվականի ընտրական օրենսդրության թիվ 54-րդ կետով սահմանվում է, որ կուսակցությունների համար նախատեսված պետական ֆինանսավորման 50% պետք է հատկացվի կուսակցությունների անդամների վերապատրաստմանը, և որից 10%-ը պետք է օգտագործվի մասնավորապես կանանց վերապատրաստման համար:

Պորտուգալիա

- Ազգային Ժողովի, Եվրոպական խորհրդարանի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների համար ընտրական ցուցակները կազմվում են այնպես, որպեսզի խթանեն յուրաքանչյուր սեռի առնվազն 33% ներկայացվածությունը (2006 թվականի 72-րդ որոշում):
- Եթե ցուցակը չի համապատասխանում քվոտայի մասին օրենքին, ապա այն հրապարկվում է, և կախված ցուցակում առկա անհավասարության մակարդակից՝ կիրառվում են ֆինանսական պատժամիջոցներ (72-րդ որոշում, հոդված 7):

Աղբյուրը՝ Միջազգային ԺԸԱԻ, Քաղաքական ֆինանսավորման տվյալների բազա, <http://www.idea.int/political-finance> և ԺԻԱԻ, ՄԻՄՄ և Ստոկհոլմի համալսարան, Կանանց քվոտաների համընդհանուր տվյալների բազա, www.quotaproject.org

պահանջները բավարարելու համար կամ հանդիսանում է պատժամիջոց, եթե չի ապահովվում առաջադրված կամ ընտրված կին թեկնածուների համաձայնեցված համամասնությունը:¹³³

Եթե նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման վերահսկման համար պատասխանատու են ընտրական մարմինները, ապա նրանք նաև պատասխանատվություն են կրում այդ օրենքները գործնականում կիրառելու համար: **Այրանիայում** 2013 թվականի ընտրություններում յուրաքանչյուր ընտրական ցուցակ պետք է ունենար առնվազն մեկ արական և մեկ իգական սեռի ներկայացուցիչ առաջին երեք թեկնածուների շարքում, և առհասարակ, ցուցակը պետք է պարունակեր յուրաքանչյուր սեռի առնվազն 30% ներկայացվածություն: Քվոտայի պահանջը բավարարելու համար շատ կուսակցություններ կանանց ընդգրկեցին ցուցակների վերջում՝ հատկացնելով ոչ անցողիկ տեղեր: Քանի որ չհամապատասխանող ցուցակները մերժելու դրույթը 2012 թվականին ուժը կորցրած էր ճանաչվել, փոխարենը ընտրական մարմինը տուգանեց երեք խոշոր խորհրդարանական կուսակցությունների՝ մի շարք մարզերում գեներային քվոտաների պահանջը չբավարարելու համար: Սոցիալիստական կուսակցությունը տուգանվեց վեց ընտրատարածքներում, Հանուն ինտեգրման սոցիալիստական շարժումը տուգանվեց չորս ընտրատարածքներում, Դեմոկրատական կուսակցությանը

տուգանվեց չորս ընտրատարածքներում, իսկ տուգանքի ընդհանուր գումարը կազմեց 14,000,000.00 արբանական լեկ: Այս տուգանքները վճարվեցին քաղաքական կուսակցություններին հատկացվող բյուջեից:¹³⁴


Վրաստանում քաղաքական կուսակցությունների մասին օրենքի համաձայն՝ թեկնածուների ցուցակներում սեռերից մեկի առնվազն 20 տոկոս ներկայացվածություն ունեցող կուսակցությունները ստանում են լրացուցիչ 10 տոկոս պետական ֆինանսավորում: 2012 թվականի ընտրություններում, այնուամենայնիվ, ֆինանսական խթանը ցանկալի ազդեցություն չունեցավ: Մինչ մի քանի կուսակցություններ հետևեցին օրենքին և ստացան լրացուցիչ ֆինանսավորում, խորհրդարանում տեղ զբաղեցրած երկու կուսակցությունները չկարողացան բավարարել քվոտայի պահանջը: 2013 թվականի հուլիսին Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առաջարկեց փոփոխություններ մտցնել քաղաքական կուսակցությունների ֆինանսական խթանները կարգավորող օրենքի մեջ (Վրաստանի քաղաքացիների քաղաքական միությունների վերաբերյալ օրգանական օրենք), որպեսզի կողմերը պետական բյուջեից ստանան 30% հավելավճար (նախկին 10%-ի փոխարեն), եթե թեկնածուների առաջադրման համար ընտրական ցուցակներում ընդգրկված 10 թեկնածուներից բաղկացած ամեն խմբի համար յուրաքանչյուր սեռի ներկայացվածությունը լինի առնվազն 30% (նախկին 20%-ի փոխարեն):¹³⁵



© ՄԱԿ-ի նկար / Թիմ Մքլոյկա

ԱՄՓՈՓՈՒՄ

- Ընտրական մարմինների պարտականությունները ներառում են թեկնածուների և քաղաքական կուսակցությունների առաջադրումների ընդունումն ու վավերացումը և նախընտրական քարոզարշավի ֆինանսավորումը:
- Կուսակցության կամ թեկնածուի հաստատման համար ներկայացվող որակավորման պահանջները սահմանվում են օրենքներով և կանոնակարգերով: Չնայած որակավորման պահանջները տարբերվում են ըստ երկրների, պետք է հաշվի առնել այն հանգամանքը, թե որքանով են դրանք կանանց նկատմամբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն խտրական:
- Ավելի քան 80 երկրներ օրենսդրական կարգով սահմանել են ժամանակավոր հատուկ միջոցներ (ԺՀՄ) գենդերային քվոտաների տեսքով, որոնք ընտրական և այլ մարմինները կիրառում են: Ընտրական մարմինները կարող են վերանայել կանոնակարգերն ըստ քվոտայի պահանջների կամ կարող են պատժել գենդերային քվոտայի պահանջները չբավարարող կուսակցություններին՝ կիրառելով ֆինանսական տույժեր կամ թույլ չտալով մասնակցել ընտրապայքարին:
- Եթե նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման վերահսկման համար պատասխանատու են ընտրական մարմինները, ապա շատ երկրներում նրանք նաև պատասխանատվություն են կրում այդ օրենքների գործնական կիրառման ապահովելու համար, ինչը կուսակցությունների համար ծառայում են որպես ֆինանսական խթան քվոտայի պահանջները բավարարելու համար կամ որպես պատժամիջոց, եթե չի ապահովվում առաջադրված կամ ընտրված կին թեկնածուների համաձայնեցված նվազագույն համամասնությունը:



11 Քվեարկությունը

Համաձայն միջազգային պայմանագրերի և պետությունների կողմից ստանձնած պարտավորությունների՝ բոլոր քաղաքացիներն ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք արդար և պարբերաբար կազմակերպվող ընտրություններում, որտեղ երաշխավորվում է քվեարկության գաղտնիությունը: Որպես ընտրությունների և քվեարկության կազմակերպման համար պատասխանատու մարմիններ՝ ընտրական մարմինները միտված են ապահովելու, որ ընտրությունների անցկացումը համապատասխանի օրենքին և սովյալ երկրի կողմից ստանձնած միջազգային պարտավորություններին:

Այս առումով ընտրական մարմինները պարտավոր են հաշվի առնել այնպիսի մարտահրավերներ, որոնց կանայք կարող են առերեսվել քվեարկության ժամանակ և հատուկ միջոցներ ձեռնարկել դրանց դեմ պայքարելու համար: Կան բազմաթիվ պոտենցիալ խնդիրներ, որոնց պատճառով կանայք կարող են անհարմար իրավիճակում հայտնվել քվեարկության ժամանակ: Կանայք քվեարկելու իրավունքը կարող է ոտնահարվել մշակութային նորմերի պատճառով, հնարավոր է չխրախուսվի նրանց քվեարկելն ըստ սեփական կամքի և նախընտ-

րության, կանայք կարող են չունենան անհրաժեշտ տեղեկատվությունն ու վստահությունը քվեարկելու համար, կամ տեղամասային կենտրոնը կարող է հասանելի չլինել: Արժանահավատության տեսանկյունից բոլոր գրանցված ընտրողները պետք է ունենան գաղտնի քվեարկելու հնարավորություն՝ զերծ ահաբեկումից, և բոլորի քվեները պետք է համարվեն պաշտոնական ընտրության արդյունք: Շատ երկրներում քվեարկությունը տեղի է ունենում մեկ օրվա ընթացքում՝ ընտրությունները դարձնելով խաղաղության պայմաններում

Կին ընտրողների մասնակցությունը խոչընդոտող մարտահրավերներից են՝

- Կանխակալ մշակութային նորմերը, որոնք սահմանում են, որ կանայք չպետք է զբաղվեն քաղաքականությամբ, և որ քաղաքականությունը միայն տղամարդկանց համար է:
- Ընտանեկան ավանդույթները կամ լիազորված անձի միջոցով պարտադրված քվեարկությունը գրկում են կանանց ազատ կամարտահայտման և ընտրության իրավունքից:
- Մշակութային կամ կրոնական նորմերը, որոնք արգելում են կանանց շփվել ազգական չհանդիսացող տղամարդկանց հետ, այդ թվում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և այլ ընտրողների հետ:
- Տեղամասային կենտրոն հասնելու հետ կապված խնդիրները՝ կախված հեռավորության, ճանապարհի դժվարամատչելիության, տևից կամ աշխատավայրից բացակայելու ժամանակային սահմանափակման և խնամակալի պարտականությունների պատճառով, ինչը կարող է վերաբերել նաև տղամարդկանց:
- Մտահոգությունները կապված տեղամասային կենտրոն տանող ճանապարհի ապահովության և քվեարկության կենտրոնի անվտանգության հետ:
- Տեղամասային կենտրոն հասնելու հետ կապված դժվարությունները, երբ ընտրողը չի բնակվում այն տարածքում, որտեղ պետք է քվեարկի: Ընտրողները կարող են հեռու գտնվել իրենց «հարազատ տեղամասային կենտրոնից» աշխատանքի կամ ուսումնառության շարժառիթով տեղափոխման պատճառով, ինչպես նաև պատերազմի կամ բնական աղետի հետևանքով տեղահանված լինելու պատճառով, ինչը կարող է վերաբերել նաև տղամարդկանց:
- Կանանց շրջանում գրագիտության անհամաչափորեն ցածր մակարդակը, հատկապես այն կանանց շրջանում, ովքեր տեղափոխվել են այլ լեզվական տարածաշրջան, իսկ նոր լեզու սովորելու հավանականությունը քիչ է:



իրականացված ամենամեծ իրադարձությունը լոգիստիկայի տեսանկյունից: Ընտրողների մեծ մասը քվեարկում է տեղամասային կենտրոններում, որոնք պետք է ընտրողների համար ապահովեն առանձին և գաղտնի քվեարկության պայմաններ:

Ընտրական գործընթացների գեղեցիկ գնահատումը կարող է դիտարկել այս և այլ հարցեր: Համընդգրկուն ընտրությունների ապահովման համար պետք է հաշվի առնել խոչընդոտները և անհրաժեշտ քայլեր ձեռնարկել դրանք վերացնելու համար՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով կանանց քվեի գաղտնիության ապահովմանը: Հնարավոր գործողությունները կարող են ուղղված լինել տեղամասային կենտրոնի լոգիստիկայի հարցերին, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների ուսուցման կազմակերպմանը:

11.1. Կանանց քվեի գաղտնիության իրավունքի ապահովումը

Միջազգային պարտավորությունները սահմանում են, որ բոլոր ընտրողներն ունեն գաղտնի քվեարկելու իրավունք: Քվեարկության գաղտնիության պահպանումը վերաբերում է բոլոր քաղաքացիներին՝ անկախ սեռից: Այնուամենայնիվ, եթե ըստ ավանդույթի տղամարդը քվեարկում է «իր ընտանիքի անունից», ապա անհրաժեշտ է այնպիսի ներպետական օրենք, որն ընտրական մարմինն թույլ կտա պաշտպանել կանանց քվեարկության գաղտնիության իրավունքը: Կարելի է ընտանեկան քվեարկության և/կամ ընտրողի քվեի գաղտնիության ու կամքի ազատ արտահայտման խախտումների դեմ նպատակաուղղված միջոցներ ձեռնարկել: Ուժեղ օրենսդրական և կանոնակարգող դաշտը, օրինախախտների համար խիստ պատիժները, ինչպես նաև ոստիկանության և դատական

համակարգի՝ քրեական հետապնդում իրականացնելու պատրաստակամությունն ավելի են հեշտացնում ընտրական և այլ մարմինների կողմից օրենքը կիրառելու հավանականությունը:

Ընտրական մարմնի կողմից մշակված և կանանց գաղտնի քվեարկելու իրավունքը հստակ սահմանող շրջաբերականները կարող են հանդիսանալ առաջին կարևորագույն քայլը այդ ոլորտում ընտրական մարմնի դիրքերի ամրապնդման համար: Ընտրական մարմինը պետք է հետամուտ լինի իր հրապարակային խոստումներին և լուրջ վերաբերի ստանձնած հանձնառություններին:

Քվեարկություն և լիազորված անձի միջոցով

Որոշ երկրներում օրենքը սահմանում է, որ քվեարկության օրը ընտրություններին մասնակցել չկարողացող արական և իգական սեռի ընտրողները կարող են վաղաժամ քվեարկել, իսկ երկրից դուրս գտնվողները կարող են քվեարկել արտերկրում: Որոշ տեղերում այս ընտրողները լիազորում են մեկ այլ գրանցված ընտրողի իրենց անունից քվեարկել: Նմանօրինակ միջոցների ձեռնարկումը միտված է, որպեսզի հնարավորինս շատ մարդիկ մասնակցեն ընտրություններին և հայտնի է որպես «լիազորված անձի միջոցով քվեարկություն»: Լիազորված անձի միջոցով քվեարկությունը շատ երկրներում օրենքով սահմանված է և դիտվում է որպես գործիք՝ օրինական կերպով պաշտպանելու սահմանափակ շարժողունակությամբ անձանց՝ ընտրություններին մասնակցելու իրավունքը:¹⁴⁵

Ուղղորդված (ընտանեկան) քվեարկություն և/կամ լիազորված անձի միջոցով պարտադրված քվեարկություն

Այլ երևույթ է «ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը» և/կամ լիազորված անձի միջոցով պարտադրված քվեարկությունը, որը հաճախ շփոթվում է լիազորված անձի միջոցով օրինական քվեարկության հետ: Ընդհանուր առմամբ ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը վերաբերում է այն իրավիճակին, երբ ընտանիքի ղեկավարները (հաճախ ընտանիքի տղամարդիկ) ազդում են ընտանիքի այլ անդամների վրա՝ ստիպելով նրանց քվեարկել ըստ իրենց պահանջի: Այս երևույթը սովորաբար կիրառվում է այն վարչատարածքային շրջաններում, որտեղ պահպանվել է մեծ ընտանիքների ավանդույթը, երբ ընտանիքի գերիշխող անդամը ընտանիքին վերաբերող կարևոր որոշումներ է կայացնում կամ կարևոր գործարքներ է իրականացնում: Ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը կարող է դիտարկվել որպես լուրջ խախտում, հատկապես կանխատեսված լինելու պարագայում, երբ իրականացվում է ընտրողի ազատության վրա ազդելու կամ ընտրելու իրավունքը սահմանափակելու մտադրությամբ:¹⁴⁶ Այս դեպքերում ուղղորդված (ընտանեկան) քվե-



© ՄԱԿ-ի նկար / Նայան Թաքու

արկությունը խախտում է քվեարկության գաղտնիության առանցքային սկզբունքը:

Ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը հաճախ խոչընդոտում է կանանց ազատ կամարտահայտմանը: Շատ դեպքերում, անգամ երբ կինը ֆիզիկապես մասնակցում է քվեարկությանը, նա գտնվում է մշակութային ակնկալիքներով պայմանավորված ուժեղ ճնշման տակ՝ ենթարկվելու իր ամուսնուն կամ հորը և քվեարկելու նրանց կողմից կարգադրված թեկնածուի կամ կուսակցության օգտին: Ազդեցությունը կարող է տարածվել ընդհուպ մինչև ընտանիքի կին անդամներին քվեարկության կենտրոն ուղեկցելը՝ քվեարկությունը վերահսկելու նպատակով (խմբային քվեարկություն), կամ ընտանիքի տղամարդ անդամի կողմից կնոջ անունից քվեաթերթիկ ստանալը (լիազորված անձի կողմից պարտադրված քվեարկություն):¹⁴⁷

Ուղղորդված (ընտանեկան), ցեղային կամ գյուղական քվեարկությունը կարող է նաև բխել այն իրավիճակից, երբ խմբի ղեկավարները, հաշվի առնելով որոշակի թեկնածուի հաղթանակի սպառնալիքը կամ օգուտները, հանձնարարում են «իրենց» ժողովրդին քվեարկել հանուն խմբի շահի: Օգուտների թվին կարող է դասվել թեկնածուի կողմից խոստացված կաշառքը կամ այն թեկնածուի հաղթանակը, ով «կպաշտպանի խմբի շահերը»: Կարող է կիրառվել նաև հարկադրանք և ահաբեկում, այդ թվում՝ ամուսնալուծության սպառնալիք կանանց, եթե նրանք չհետևեն իրենց ընտանիքի, ցեղի կամ կլանի կողմից ստացված հրահանգներին:¹⁴⁸ Թեև այս ամենը խախտում է ամբողջ գյուղի կամ ցեղի՝ սեփական ընտրությամբ քվեարկելու իրավունքը, այն անհամաչափ ազդեցություն է ունենում կանանց վրա՝ դուրս թողնելով նրանց կարևոր որոշումներ կայացնելու դաշտից:

Ուղղորդված (ընտանեկան) քվեարկության մեկ այլ իրավիճակ ձևավորվում է այն մշակույթներում, որտեղ կա համոզմունք, որ եթե կինը չքվեարկի տղամարդու կողմից հավանության արժանացած թեկնածուի օգտին, ապա դա ամոթալի է: Որոշ դեպքերում կանայք իրենք են զգում ընտանիքի անդամների թույլտվության կարիքը գրանցվելու և քվեարկելու համար, ինչպես նաև ընդունում են հրահանգներ: Լինում են նաև այնպիսի դեպքեր, երբ կանանց տեղեկացում են, որ նման հրահանգներին դեմ գնալը մեղք է համարվում կամ կարող է հիմք հանդիսանալ մարմնական պատժի, ամուսնալուծության, սոցիալական բացառման և ծտողական իրավունքներից զրկելու համար:¹⁴⁹

Ինչպե՞ս կրճատել ուղղորդված (ընտանեկան) քվեարկության դեպքերը

Ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը մշակութային նորմ է, և ընտրական մարմինը պետք է հաշվի առնի այն

հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները նույնպես կարող են մշակութային ճնշման տակ թույլ տալ ուղղորդված (ընտանեկան) քվեարկություն կամ կարող են մտահոգվել կանանց համար բացասական հետևանքներով, եթե թույլ չտան ընտանիքին վերահսկելու նրանց քվե: Հաջորդիվ ներկայացված են քվեարկությանն առնչվող գործողությունների մի շարք օրինակներ, որոնք կարող են իրականացվել տարբեր երկրներում կախված տեղական համատեքստից:

- Խստացնել ընտրական օրենսգիրքն ընտրություններից առաջ կամ հստակ գործառնական հրահանգներ ներառել քվեարկության գաղտնիությունն ապահովելու համար, այդ թվում՝ տեղամասային կենտրոնում կարգապահ աշխատանք իրականացնելու համար հատուկ միջոցներ սահմանել, տեղամասային կենտրոններում բավարար տարածություն և քվեարկության խցիկներ ունենալ, միայն մեկ ընտրողի թույլ տալ ներկա գտնվել քվեարկության խցիկում և մեկական քվեաթերթիկ տալ յուրաքանչյուր:
- Առաջնահերթ համարել տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վերապատրաստումը՝ անդրադառնալով գաղտնիության դրոյթներին համապատասխանության ապահովմանը:
- Նպատակաուղղված իրազեկման միջոցով կրթել ընտրողների հատկապես խոցելի խմբերին, ինչպիսիք են՝ կանայք և ոչ գրագետ ընտրողները, քվեարկության գաղտնիության իրենց իրավունքի վերաբերյալ:
- Խթանել վստահությունն ու թափանցիկությունը՝ ապահովելով յուրաքանչյուր ընտրողի քվեի գաղտնիությունը:

Մակեդոնիայի Պետական ընտրական հանձնաժողովը մշակել է ռազմավարություն և միջոցներ է ձեռնարկել ուղղորդված (ընտանեկան) քվեարկության դեպքերը կրճատելու ուղղությամբ: Ընտանեկան քվեարկության կանխարգելման ծրագրի շրջանակներում Պետական ընտրական հանձնաժողովը որչափ առավելագույնի հասցեագրված շրջաբերականում նշում էր, որ ընտանեկան և լիազորված անձանց միջոցով քվեարկության կանխարգելումը կարևոր է:¹⁵⁰ Այն նաև հրապարակել է ընդդեմ ընտանեկան և լիազորված անձանց միջոցով քվեարկության ռազմավարություն՝ նպատակ ունենալով միասնական շրջանակ ստեղծել կառավարության և դոնորների կողմից իրականացվող բոլոր ծրագրերի համար, որոնք ուղղված են խնդրի լուծմանը:¹⁵¹

11.2. Գենդերային հավասարության ապահովումն ընտրական գործընթացում

Տեղամասային կենտրոնների գտնվելու վայրը

Տեղամասային կենտրոնների տեղակայման վայրի հետ կապված մի քանի գործոններ կարող են բացասական ազդեցություն ունենալ քվեարկել ցանկացող կանանց վրա: Այդ գործոնների թվին են պատկանում՝ հեռավորությունը, որը պետք է անցնել տեղամասային կենտրոն հասնելու համար, հասարակական տրանսպորտի առկայությունը և տարածքի անվտանգությունը: Կանայք ավելի հակված են քվեարկելու, եթե տեղամասային կենտրոնը գտնվում է նրանց կողմից հաճախակի այցելվող վայրերի մոտակայքում, ինչպիսինք են՝ շուկան, դպրոցները կամ կլինիկաները: Ցեղերի կամ կլանների դեպքում և այն վայրերում, որտեղ եղել է էթնիկ, կրոնական կամ գենդերային բռնություն, ընտրողները կարող են հարմարավետ չգրգա, եթե նրանք ստիպված լինեն շրջել վերահսկվող տարածքներում:

Որպես տեղամասային կենտրոն օգտագործվող փաստացի շինությունը նույնպես կարող է ազդեցություն ունենալ կանանց մասնակցության վրա: Պետք է հաշվի առնել աստիճանների առկայությունը, մուտքի մոտ հանդիպող ֆիզիկական խոչընդոտները, անվտանգությանն առնչվող խնդիրները և շենքի նպատակային օգտագործումը, օրինակ՝ որպես դպրոց կամ կրոնական հաստատություն: Տեղամասային կենտրոնի ընտրության ժամանակ կարևոր է մտածել հեթոթում գտնվողների հարմարավետության և կանանց համար նախատեսված սանհանգույցների առկայության մասին: Տեղամասային կենտրոնները պետք է նաև բավականին ընդարձակ լինեն, որպեսզի որոշ երկրներում կին ընտրողները ֆիզիկապես չհպվեն տղամարդկանց տեղամասային կենտրոնի կամ դրա շրջակայքի անբարենպաստ պայմանների պատճառով: Անվտանգությունը նույնպես առաջնահերթ խնդիր է:

Այս գործոնները կարող են ներառվել տեղամասային կենտրոնի ընտրության ժամանակ օգտագործվող չափանիշների կամ ստուգացանկի մեջ և պիտանի լինել անհրաժեշտ տեղամասային կենտրոնների սահմանելիս: Օրինակ՝ Նեպալում, մատչելիության նկատառումից ելնելով, տեղամասային կենտրոնները շենքերի առաջին հարկում էին:¹⁵² Ուզբեկստանում բոլոր տեղամասային կենտրոններում մայրերի ու երեխաների համար հատուկ սենյակներ և առաջին օգնության կենտրոններ էին առանձնացվել:¹⁵³ Հորդանանում ընտրողներին հնարավորություն էին ընձեռել քվեարկել իրենց ընտրատարածքի ցանկացած տեղամասային կենտրո-

նում: Այս ճկունությունը օգտակար է շատ կին ընտրողների համար, ովքեր տեղաշարժման սահմանափակումների են առերեսվում:¹⁵⁴ Աֆղանստանում, հաշվի առնելով մշակութային համատեքստը, կին ընտրողների համար սահմանվել են կին աշխատակիցների կողմից սպասարկվող տեղամասային կենտրոններ:¹⁵⁵

Շրջիկ արկը

Որոշ երկրներում շրջիկ արկերն օգտագործվում են գյուղական վայրերում՝ օգնելու այն ընտրողներին, ովքեր հաշմանդամության, հիվանդության կամ տարիքի պատճառով չեն կարող երկար ճանապարհ անցնել: Տնային պարտականությունները, երեխաների և տարեցների խնամքը, ինչպես նաև հեռավոր վայրերից տեղամասային կենտրոններ հասնելու համար տրանսպորտային ծախսերը կարող են խոչընդոտել կանանց մասնակցությանը:¹⁵⁶ Շրջիկ արկերը կարող են նպաստել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց մասնակցության ավելացմանը հեռավոր վայրերում:

Շրջիկ արկով քվեարկություն կազմակերպելու դրույթը սովորաբար ընդգրկվում է քվեարկության օրվա վերաբերյալ օրենքի կամ կանոնակարգի մեջ, մինչդեռ իրականացման ընթացակարգերը պետք է հստակ մշակել և ձևակերպել: Անհրաժեշտ են հատուկ պարագաներ, վերապատրաստված անձնակազմ և շրջիկ արկերի տեղակայման վայրի մասին նախնական հայտարարություն: Քվեարկության գաղտնիությունը պետք է պահպանվի նաև շրջիկ արկով քվեարկության ժամանակ, և քայլեր պետք է ձեռնարկվեն, որպեսզի ընտրողները երկրորդ անգամ չքվեարկեն մեկ այլ տեղամասային կենտրոններում: Եթե շրջիկ արկին այցելում է որևէ ընտանիքի, գյուղ կամ ցեղային տարածք, ապա հանձնաժողովի անդամները պետք է հավաստիանան, որ յուրաքանչյուրը կատարի իր ընտրությունն առանց ընտանիքի անդամների ճնշման:

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 6-ը (17%-ը) նշել են, որ տրամադրել են «շրջիկ արկեր գյուղական վայրերում»: Այդ երկրներն են՝ Կանադան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մալավին, Նամիբիան և Հարավային Աֆրիկան: Հատուկ կարիքներ ունեցող ընտրողների համար Կանադան ապահովում է շրջիկ արկերը կամ ճկուն քվեարկության տարբերակներ: Թեև դրանք հատուկ չեն թիրախավորում կանանց, սակայն հանգեցնում են կանանց ավելի ակտիվ մասնակցությանը: Մասնավորապես, Կանադայի ընտրական հանձնաժողովը շրջիկ արկերը հասանելի է դրաձնում բոլոր ընտրողների համար, ովքեր ունեն դրա կարիքը: Այս ամենը, սակայն, չի թիրախավորում միայն կանանց: Ժամանակավոր կա-

Տեղահանված անձանց համար քվեարկելու պայմաններ ապահովելու մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Բոսնիա և Հերցեգովինա.** Առաջին հետկոնֆլիկտային ընտրություններում տեղահանված անձանց օժանդակելու նպատակով հստակ նախանշված տեղամասային կենտրոնում քվեարկելու պայման չկար, և ընտրողները կարող էին քվեարկել ցանկացած տեղամասային կենտրոնում՝ ըստ ընտրողների վերջնական ցուցակի:¹⁶⁶
- **Կոսովո.** Առաջին հետկոնֆլիկտային ընտրություններում ներքին տեղահանված անձինք կարող էին քվեարկել իրենց ներկայիս բնակության վայրի քաղաքապետարանում կամ այն տարածքի քաղաքապետարանում, որտեղ նրանք ի սկզբանե ապրում էին:¹⁶⁷
- **Սիերա Լեոնե.** Հատուկ կարգ էր սահմանվել «տեղափոխելի քվեարկության» համար, որը թույլ էր տալիս փախստականներին և ներքին տեղահանված անձանց գրանցվել մեկ վայրում և քվեարկել մեկ այլ վայրում՝ ճամբարներից դեպի վերաբնակեցման վայրեր տեղափոխվելը ընտրությունների ժամանակացույցին հարմարեցնելու համար:¹⁶⁸

ցարաններում բնակվող կանայք կարող են գրանցվել հատուկ քվեաթերթիկով քվեարկելու համար՝ առանց ապաստանի հասցեն բացահայտելու:¹⁵⁷

Հաշվի առնելով շրջիկ արկղով քվեարկության կազմակերպման ծախսերը՝ ընտրական մարմինները պետք է դիտարկեն, թե շրջիկ արկղերի օգտագործումը որքանով է հասցեագրում այն մարտահրավերները, որոնց կանայք առերեսվում են հատկապես գյուղական կամ հեռավոր վայրերում տեղամասային կենտրոններ հասնելիս: Անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել ընտրողների քվեարկության գաղտնիությունը ապահովելու համար: Նույն դիտարկումները վերաբերում են հեռահար քվեարկության այլ ձևերին, օրինակ՝ փոստով կամ առցանց քվեարկությանը, որոնք օգտագործվում են որոշ երկրներում:

Տեղահանված անձանց վերաբերող կանոնակարգեր

Ըստ վիճակագրական տվյալների՝ կոնֆլիկտային իրա-

վիճակների արդյունքում տեղահանված անձանց երեք քառորդը կանայք են: Բնական աղետից հետո տեղահանված անձանց առնվազն կեսը, ամենայն հավանականությամբ, կանայք են: Այսպիսով, փախստականների և ներքին տեղահանված անձանց խնդիրները նույնպես կարևոր են գեղեցիկ տեսանկյունից: ՄԱԿ-ի «Ներքին տեղահանման վերաբերյալ ուղեւնշային սկզբունքները» անդրադառնում են ներքին տեղահանված անձանց քվեարկելու իրավունքին և այդ իրավունքի իրացման համար անհրաժեշտ միջոցներին: Հեռահար քվեարկության վերաբերյալ դրույթները կարևոր են այն տեսանկյունից, որ ապահովեն ներքին տեղահանված անձանց քվեարկելու հնարավորությունը այն տարածքներում, որտեղ նրանք ապրում են: Փախստականների մեծ խմբերի համար արտերկրում քվեարկելու հնարավորության ապահովումը կարող է հանդիսանալ խաղաղ գործընթացի առանցքային տարր և ցանկացած քաղաքական իրավիճակի հանգուցալուծման պայման: Հստակ տեղեկատվություն պետք է տրամադրել համապատասխան լեզուներով: Տեղամասային կենտրոնի անվտանգությունը և զգայուն կոնֆլիկտային գոտիների հետ կապը նույնպես պետք է հաշվի առնել ներքին տեղահանված անձանց քվեարկությունը հասանելի դարձնելիս:



Գաղտնի Լեյվինո

Միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնների սպահովման մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Բահրեյն.** Յուրաքանչյուր տեղամասային կենտրոնում առկա է կանանց համար առանձնացված տարածք:¹⁶⁹
- **Չիլի.** Տղամարդկանց և կանանց համար սահմանվում են առանձին տեղամասային կենտրոններ: Մի քանի միասնական տեղամասային կենտրոններում տղամարդիկ և կանայք իրենց քվեաթերթիկները գցում են առանձին արկղերի մեջ:¹⁷⁰
- **Եգիպտոս.** Որոշ տարածքներում գործում են առանձնացված տեղամասային կենտրոններ: Առանձին հերթեր են սպասարկվում նաև միասնական տեղամասային կենտրոններում:¹⁷¹
- **Քուվեյթ.** Մահմանվել են տղամարդկանց և կանանց համար առանձնացված տեղամասային կենտրոններ:¹⁷²

- **Պակիստան.** Գործում են առանձնացված տեղամասային կենտրոններ կամ առանձին քվեարկության սենյակներ միասնական տեղամասային կենտրոններում: Միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնները սպասարկվում են կանանցից բաղկացած անձնակազմի կողմից: Ապահովվում է նաև կանանց քվեարկության անվտանգությունը:¹⁷³
- **Լիբանան, Եմեն և Հորդանան:** Գործում են առանձնացված տեղամասային կենտրոններ:
- **Պապուա Նոր Գվինեա:** 2012 թվականի ընտրություններին լեռնային շրջաններում կին ընտրողների անվտանգությունը երաշխավորելու համար փորձական ծրագրից հետո օգտագործվեցին առանձին քվեարկության խցիկներ:¹⁷⁴
- **Ուզբեկստան.** Բոլոր տեղամասային կենտրոններում մայրերի ու երեխաների համար հատուկ սենյակներ և առաջին օգնության կենտրոններ էին առանձնացվել:

11.3. Կանանց քվեարկությանը նպաստող գեղեցիկ ուղղվածությամբ միջոցառումներ

Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW) խրախուսում է ժամանակակից հատուկ միջոցների կիրառումը այնքան ժամանակ, մինչև կանայք կհասնեն *դե ֆակտո* հավասարության: Որոշ երկրներում դա կարող է նշանակել, որ պահանջվում է առանձին տեղամասային կենտրոնների տրամադրում՝ ողջ ընտրազանգվածի համար քվեարկության գաղտնիության տեսանկյունից հավասարություն ապահովելու համար: Նման դեպքերում առանձին տեղամասային կենտրոնների ապահովումը չի դիտարկվում որպես խտրական մոտեցում, այլ համարվում է հավասար ընտրական իրավունքի իրացման նախապայման:

Միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնները կամ սենյակները, կախված համատեքստից, կարող են օգտակար լինել: Որոշ երկրներում, որտեղ ընտանեկան կամ լիազորված անձի կողմից քվեարկությունը խնդիր է, միայն կանանց համար նախատեսված քվեարկության սենյակները կարող են զերծ պահել տղամարդկանց կոչ անունից քվեարկելու գայթակղությունից: Այնպիսի մշակույթներում, որտեղ

կանայք իրավունք չունեն շփվել ազգական չհանդիսացող տղամարդկանց հետ, տեղամասային ընտրական հանձնաժողովների կին աշխատակիցների համար առանձին տարածք ունենալը ավելացնում է ընտրական գործընթացի բոլոր բաղադրիչների հասանելիությունը կանանց համար: Երբ կանայք կրում են գլխաշոր և/կամ ձեռնոցներ և նրանց դեմքը ստուգվում է և/կամ մատնահետքերն են վերցվում քվեարկության օրը նույնականացման գործընթացի շրջանակներում, միայն իզական սեռի հանձնաժողովի անդամների ներկայությունը և սենյակը, որտեղ միայն կանայք են, նպաստում են ընտրություններին մասնակցության ավելացմանը:

Միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնների կամ սենյակների օգտագործման վերաբերյալ որոշումները կայացնելիս պետք է հաշվի առնել բոլոր առավելություններն ու թերությունները: Հնարավոր թերությունները կարող են ներառել՝ լրացուցիչ ծախսերն ու բարդությունները, առանձնացված տեղամասային կենտրոնների արդյունավետության հարցը և միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոնների բռնության ենթարկվելու հավանականությունը: Որոշ հետազոտություններ պարզել են, որ մի շարք երկրներում նման դեպքերը նպաստել են կանանց խոցելիության ավելացմանը: Եղել են դեպքեր, երբ միայն կանանց համար նախատեսված տեղամասային

կենտրոնները չեն էլ բացվել քվեարկության օրը՝ այդպիսով գրկելով այդ տեղամասային կենտրոններում գրանցված բոլոր կանանց ընտրություններին մասնակցելու իրավունքից: Այս ամենը լուրջ մտահոգության տեղիք է տալիս և առաջացնում է պաշտպանական միջոցների կիրառման անհրաժեշտություն՝ որոնք նախքան հաստատվելը, պետք է ուշադիր դիտարկվեն յուրաքանչյուր համատեքստում: Եթե առանձին տեղամասային կենտրոններ ունենալու մասին որոշում է կայացվում, ապա դա պետք է անել պլանավորման վաղ փուլում, որպեսզի հնարավոր լինի բավարար քանակությամբ տեղամասային կենտրոններ, կին աշխատակիցներ և համապատասխան բյուջե հայթհայթել: Կարող է ի հայտ գալ օրենքի փոփոխության անհրաժեշտություն՝ տղամարդկանց և կանանց համար առանձին տեղամասային կենտրոններ սահմանելու համար:

Առանձին հերթեր կանանց համար

Որոշ վայրերում տեղամասային կենտրոնները կարող են միասնական լինել, սակայն կանայք և տղամարդիկ սպասարկվեն առանձին հերթերով: Առանձին հերթերի հիմնական նպատակն է արձագանքել անվտանգության կամ մշակութային նորմերին և պաշտպանել կանանց տղամարդկանց հետ շփումից՝ արգելված մշակութային կամ կրոնական չափանիշներով: Այս բաժանումը կարող է տալ կանանց լրացուցիչ ժամանակ առանց ճնշման իրենց ընտրությունը կատարելու համար: Առանձին հերթերի վերաբերյալ դրույթը կարող է սահմանված լինել ընտրական օրենսդրությամբ, կանոնավոր կերպով ընդունվել կենտրոնական ընտրական մարմնի կողմից կամ ինքնաբերաբար իրականացվել տեղամասային կենտրոնների նախագահների հայեցողությամբ:

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 8-ը (23%-ը) նշել են, որ «տեղամասային կենտրոններում տղամարդկանց և կանանց համար առանձին հերթեր են սահմանվել»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Եգիպտոսը, Իրաքը, Ղրղզստանը, Լիբանանը, Մալավին, Պակիստանը և Թունիսը: Կանանց համար առանձին հերթեր են եղել նաև Սիերա Լեոնեում, որտեղ տղամարդիկ և կանայք ձևավորվել են առանձին հերթեր տեղամասային կենտրոններից դուրս:¹⁵⁸

Յերթից դուրս սպասարկում

Հաճախ ընտրողները, նախքան քվեաթերթիկ ստանալիս ու քվեարկելը, ստիպված են լինում միառժամանակ հերթում սպասել: Որոշ ընտրողների համար հերթերում երկար սպասելը դժվարություն է ներկայացնում, օրինակ՝ հղի կանանց, փոքր երեխաների հետ եկած ծնողների,

տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց:

Հերթում սպասելու ժամանակահատվածը կրճատող ցանկացած խթան ավելի է դյուրացնում ընտրողների մասնակցությունը: Այդուհանդերձ, հատուկ կարիքներ ունեցող ընտրողների համար հերթից դուրս սպասարկման հնարավորությունը կարող է որոշիչ լինել քվեարկությանը մասնակցելու տեսանկյունից: Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների վերապատրաստման ժամանակ և ստուգացանկերի մեջ պետք է ներառել հրահանգներ այն մասին, թե ում առաջնահերթ սպասարկել և ինչպես կառավարել հերթերը: Հերթից դուրս սպասարկման մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Նեպալ.** Հղի կանայք և երեխաների հետ եկած կանայք սպասարկվում են հերթից դուրս:¹⁵⁹
- **Կամերուն.** Հղի կանայք ստանում են արտոնյալ վերաբերմունք հերթերում:¹⁶⁰
- **Ուգանդա.** Մայրերին և տարեցներին նախապատվություն է տրվում տեղամասային կենտրոններում:¹⁶¹
- **Արևելյան Թիմոր.** Որոշ տեղամասային կենտրոններում կերակրող մայրերի և երեխաների հետ եկած կանանց համար իրականացվում է հերթից դուրս սպասարկում:¹⁶²
- **Տանզանիա.** Հղի կանայք, կերակրող մայրերը, հաշմանդամություն ունեցող կանայք և տարեց կանայք իրավունք ունեն նախապատվություն և աջակցություն ստանալ ընտրական վարչարարություն մարմիններից:¹⁶³

Ոչ գրագետ ընտրողներ

Գրագիտության ցածր մակարդակ ունեցող երկրներում կանայք սովորաբար մեծամասնություն են կազմում այն մարդկանց շրջանում, ովքեր չեն կարողանում կարդալ: Բոլոր նախաձեռնությունները, որոնք նպաստում են ոչ գրագետ քաղաքացիների համար ընտրական գործընթացն ավելի մատչելի դարձնելուն, դրական ազդեցություն կունենան կանանց մասնակցության վրա: Քվեարկության կարգի վերաբերյալ ցուցումները, ընտրողների կրթական նյութերը, տեղամասային կենտրոնում ցուցանշանները, լոգոների և/կամ լուսանկարների օգտագործումը, ինչպես նաև քվեաթերթիկի վրա անունների առկայությունը կարող են դասվել այդ նախաձեռնությունների շարքին: Տեղամասային կենտրոններում ցուցանշանների և քվեարկության կարգի վերաբերյալ ցուցումների տեղակայման հարցում պետք է հաշվի առնել գրագիտության մակարդակը: Քվեաթերթիկի ձևի, տեսքի և բովանդակության վերաբերյալ մանրա-

մասները հաճախ սահմանված են օրենքով, այդ թվում՝ թե ինչպես որոշել յուրաքանչյուր կուսակցության կամ թեկնածուի համար համապատասխան լոգոյի կամ լուսանկարների օգտագործումը: Հատկապես ցածր գրագիտության մակարդակ ունեցող երկրներում (ինչն առաջին հերթին ազդում է կանանց վրա) կարող է լինել հստակ դրույթներ սահմանելու անհրաժեշտություն առ այն, թե ինչ պետք է անել, եթե ընտրողը սխալմամբ փչացնում է քվեաթերթիկը նախքան քվեատուփի մեջ գցելը և խնդրում է փոխարինել նորով կամ ընձեռել քվեարկելու «երկրորդ հնարավորություն»:

Ստորև բերված են որոշ օրինակներ՝ ուղղված քվեարկությունն ավելի դյուրին դարձնելուն այն անձանց համար, ովքեր կարդալ չգիտեն:

- Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն.** 2006 թվականին քվեաթերթիկներում օգտագործվել են լուսանկարներ և նշաններ: Օրենսդիր մարմնի ընտրություններում մեծ թվով թեկնածուների առաջադրման պատճառով թեկնածուներին վաղօրոք տեղեկացվել էր իրենց համարը և անունը պարունակող քվեաթերթիկի համապատասխան էջը, որպեսզի թեկնածուները կարողանային այդ մասին իրազեկել իրենց աջակիցներին: Գրագիտության ցածր մակարդակի պատճառով ընտրական օրենքը թույլ էր տալիս որոշ ճկունություն քվեաթերթիկում նշում կատարելիս (այդ թվում՝ «x», «+», «✓», և այլն), եթե քվեաթերթիկում հստակ արտացոլված էր ընտրողի կամքը և չէր խախտվել քվեարկության գաղտնիությունը, այ-

լապես քվեաթերթիկն անվավեր էր ճանաչվում:

- Սիերա Լեոնե.** Քվեաթերթիկներում առկա էին քաղաքական կուսակցությունների լոգոները, որպեսզի գործընթացը հասանելի լիներ շուրջ 80 տոկոս ոչ գրագետ ընտրողների համար:¹⁶⁴

Մասնագիտական վերապատրաստում և գործիքներ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների համար

Կանոնների, ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքների ամրապնդման և վերապատրաստման դասընթացների կարիք կարող է լինել ողջ անձնակազմի համար, հատկապես ժամանակավոր աշխատակիցների կամ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների համար, ովքեր ամենաշատն են շփվում ընտրագանգվածի հետ: Չնայած տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների վերապատրաստումը կարող է ներառել գենդերային զգայունության թեման, սակայն եթե աշխատանքի բնութագրերում կամ ստուգացանկերում չլինեն հստակ գործողություններ, ապա դրանք կարող են մոռացվել ընտրությունների օրվա ընթացքում: Համոզված լինելու համար, որ ընթացակարգերը կիրառվում են, պետք է դրանք ձևակերպել և կիրառել հրահանգների, ստուգացանկերի և աշխատանքի բնութագրերի տեսքով: Օրինակ, Նեպալում տեղամասային կենտրոնի դիտարկման ստուգացանկը անդրադառնում էր մասնավորապես հղի կանանց տրամադրված օգնության մոնիտորինգը:¹⁶⁵




© ՄԱԿ-ի / Մարտին Պերե

ԱՄՓՈՓՈՒՄ

Աշխարհի շատ երկրներում կանայք քվեարկելիս դեռևս ամերեսվում են մշակութային և այլ խոչընդոտների՝ չնայած ընտրելու իրենց իրավունքին:

- Ընտրական մարմինները պետք է հնարավորության սահմաններում ապահովեն, որպեսզի ընտրական օրենսդրությունը և կանոնակարգերը, ինչպես նաև իրենց ներքին գործընթացները չհակասեն կամ չզրկեն կանանց ընտրություններին մասնակցելու իրավունքից:
- Ընտրական մարմինները կարող են դիտարկել տարբեր միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝ քվեարկությանը խոչընդոտող ցանկացած գործողության կամ արգելքի դեմ պայքարելու համար, օրինակ՝ այնպես կահավորել տեղամասային կենտրոնները, որպեսզի բոլոր քաղաքացիները հնարավորություն ունենան քվեարկել ազատ և գաղտնի, ապահովելով, որ տեղամասային կենտրոնները գտնվեն այնպիսի վայրերում, որոնք մատչելի են կանանց համար և, անհրաժեշտության դեպքում, սահմանել միայն կանանց համար նախատեսված տեղամասային կենտրոններ կամ հերթեր:



12 Անվտանգության ապահովումն ընտրական գործընթացում

Ընտրական մարմինը կարող է կարևոր դերակատարում ունենալ ընտրական գործընթացում կանանց նկատմամբ բռնությունների կանխարգելման և նվազեցման գործում: Ընտրություններում կանանց նկատմամբ բռնությունը (ԸԿՆԲ) կարող է սահմանվել որպես ցանկացած պատահական կամ դավադրաբար կանխամտածված գործողություն, որը խոչընդոտում, ճնշում կամ կանխում է կանանց ընտրական իրավունքի իրացումը որպես թեկնածուներ, կուսակցական աջակիցներ, ընտրական գործընթացի մասնակիցներ, դիտորդներ, լրագրողներ կամ պետական պաշտոնյաներ:¹⁷⁵

Կանանց նկատմամբ բռնություն կարող է գործադրվել ընտրությունների ընթացքի կամ արդյունքների վրա ազդելու համար, օրինակ՝ քաղաքական պաշտոն զբաղեցնելու մրցապայքարից կանանց դուրս թողնելու կամ քվեարկության կամ ընտրական շրջափուլի ընթացքում կանանց մասնակցությունը խոչընդոտելու միջոցով: Նման գործողությունները կարող են կրել հոգեբանական, ֆիզիկական, սեռական և/կամ տնտեսական բնույթ և ուղեկցվել կենսապահովման կորստով, ահաբեկմամբ, ֆիզիկական կամ սեռական բռնությամբ, բնակության վայրից տեղահանմամբ և սպանությամբ:¹⁷⁶ Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դրսևորումներ կարող են տեղի ունենալ ընտանիքի, համայնքի կամ պետության համատեքստում, հանրային կամ մասնավոր ոլորտներում, և ավելի ընդգծված արտահայտումներ ունենալ կոնֆլիկտային կամ ճգնաժամային իրավիճակներում: Այդ համատեքստերից յուրաքանչյուրում կանանց նկատմամբ բռնության դեպքերը դառնում են քաղաքական բռնության դեպքեր, եթե բացասաբար են ազդում ընտրական գործընթացում կանանց քաղաքական մասնակցության կամ արդարադատության մատչելիության վրա:¹⁷⁷

12.1. Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի գնահատում և մոնիտորինգ

Հասկանալու համար, թե արդյոք և ինչպես ընտրական մարմինը կարող է մեղմել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դրսևորումները, անհրա-

ժեշտ է իրականացնել քարտեզագրում կամ գնահատում: Ընտրական մարմինը կարող է քարտեզագրում կամ գնահատում նախաձեռնել՝ թե՛ կետերը հայտնաբերելու և համապատասխան մեղմացման ու մոնիտորինգի մեխանիզմներ մշակելու համար: Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) վերաբերյալ դիտարկումները կարող են նաև ընդգրկվել ընտրությունների անվտանգության ընդհանուր գնահատման մեջ, և/կամ կարող է իրականացվել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի հատուկ գնահատում: Միջազգային և տեղական կազմակերպությունները և ՔՀԿ-ները նույնպես կարող են ներգրավվել ընտրությունների անվտանգության գնահատման գործընթացում, իսկ ընտրական մարմինները կարող են ըստ անհրաժեշտության օգտագործել դրանք:

Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերը հայտնաբերելու նպատակով նորարարական մոտեցմամբ է հանդես եկել Հնդկաստանի ընտրական հանձնաժողովը (ՀԸՀ), որը Խոցելիության քարտեզագրման (ԽՔ) միջոցով փորձում է բացահայտել վտանգի տակ գտնվող անձանց և ռիսկային տարածքները, ինչպես նաև գնահատել «ցանկացած ընտրողի կամ ընտրողների խմբի զգայունությունը ընտրական իրավունքի ազատ և արդար կերպով իրացմանը խոչընդոտելու կամ ճնշելու հանդեպ՝ ահաբեկման և/կամ չափազանց մեծ ազդեցության կամ ցանկացած տեսակի ուժի կիրառման արդյունքում»: Քարտեզագրումը նպատակ ունի ստանալ և վերլուծել հետևյալ տվյալների հավաքախմբերը.

- Խոցելի տների/ընտանիքների ցուցակը
- Խոցելի/ահաբեկումից կանխված/ընտրողների վրա ներագրող անձանց ցուցակը
- Խոցելիության ամփոփում
- Խոցելիություն առաջացնող անձանց ցուցակը
- Խոցելիության բացահայտում և համապատասխան գործողություններ
- Հաշվետվություն խոցելիություն առաջացնող անձանց վերաբերյալ

Սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթի բովանդակությունն այնուհետև հավաստվում է ոլորտի պատասխանատուի կամ մագիստրատի կողմից և ստորագրվում է տարածքային ընտրական հանձնաժողովի ներկայացուցչի կողմից:¹⁷⁸ Բացահայտելով խոցելի անհատներին՝ կարելի է տեղեկություն ստանալ ընտրությունների ժամանակ ռիսկային գոտում գտնվող կանանց մասին և նրանց պաշտպանելու նպատակով ընտրական մարմինն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Նախնական գնահատականից բացի, ընտրական մարմինը կարող է նաև նախաձեռնել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի ընթացիկ մոնիտորինգ և հաշվետվությունների ներկայացում տարածաշրջանային ներկայացուցչության միջոցով: Տարածաշրջանային և տեղական ընտրական մարմինների կենտրոններին կարելի է կոչ անել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) միտումները բացահայտել և ներկայացնել, որպեսզի համապատասխան միջոցներ ձեռնարկվեն: Աֆղանստանում

տանում ընտրական մարմնի գենդերային հարցերը համակարգող բաժնի կողմից կազմակերպված կլոր-սեղան քննարկման ժամանակ առաջարկ եղավ, որ ընտրական մարմինը ստեղծի կին թեկնածուներին և ընտրողներին ուղղված սպառնալիքների մակրամասները հավաքագրելու և համադրելու մեխանիզմ:¹⁷⁹

Ընտրական մարմինները կարող են նաև համագործակցել միջազգային կամ հասարակական կազմակերպությունների հետ՝ ռիսկերի գնահատումը բարելավելու նպատակով: Օրինակ՝ Միջազգային ԺԸԱԻ-ն, համագործակցելով մի քանի ընտրական մարմինների հետ՝ Բոսնիա և Հերցեգովինայի, Նեպալի, Նիգերիայի և Քենիայի, մշակել է ընտրական ռիսկերի կառավարման գործիք: Ընտրական մարմիններն ընդունել են այդ գործիքը որպես ընտրություններում բռնության կանխարգելման ուղղված իրենց ռազմավարությունների բաղկացուցիչ մաս: Ընտրական ռիսկերի կառավարման գործիքը նպատակ ունի ընտրությունների հետ կապված բռնությունների դեպքերը հասկանալ, վերլուծել, կանխել և մեղմել՝ հնարավորություն ընձեռնելով ընտրական մարմնին արձագանքել ըստ անհրաժեշտության:¹⁸⁰ Նման գործիքները պետք է ապահովեն գենդերային հավասարության սկզբունքը և դիտարկեն բռնության այնպիսի տեսակներ, որոնց կանայք և տղամարդիկ կարող են անտերեսվել ընտրությունների ժամանակ:

Կարելի է նաև համագործակցել երկարաժամկետ միջազգային և/կամ տեղական դիտորդական առաքելությունների հետ՝ ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) վերաբերյալ տվյալներ հավաքագրելու հարցում՝ այնուհետ դրանց արձագանքելու նպատակով: Վերջին տարիներին շատ դիտորդական կազմա-

Մոնիտորինգի համատեղ մեխանիզմ. Կանանց իրավիճակային կենտրոն

Կանանց իրավիճակային կենտրոնը (ԿԻԿ) մոնիտորինգի գործընթացի մաս է, որը մոբիլիզացնում է կանանց և երիտասարդներին՝ հանուն խաղաղ և ժողովրդավարական ընտրական գործընթացներ ապահովման: ԿԻԿ-ը գործիք է, որի նպատակն է մեղմել ընտրություններում բռնության դրսևորումները՝ ընտրական գործընթացի բոլոր շահառուներին խաղաղ ջատագովության, միջամտության, միջնորդության, համակարգման, քաղաքական վերլուծության, դիտարկման և փաստաթղթավորման մեջ ներգրավելու միջոցով: Լիբերիայում 2011 թվականի նախագահական և օրենսդիր մարմնի ընտրությունների ժամանակ Լիբերիայի կին խաղաղարարները հայեցակարգ ներկայացրեցին: Ձևաչափը կրկնօրինակվեց 2012 թվականի սենեգալյան ընտրություններում, 2012 թվականի նոյեմբերին Սիերա Լեոնեում նախագահական, խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին նախապատրաստվելիս, ինչպես նաև Քենիայում 2013 թվականի ընտրություններում: ԿԻԿ-ի թեման՝ «Խաղաղությունը մեր ձեռքերում է», միտված է խթանելու քաղաքական շահառուների և պետական մարմինների միջև կոնսենսուսի ստեղծման համատեղ գործընթացը: ԿԻԿ-ի կողմից կիրառվող հիմնական ռազմավարությունը միտված է կանանց և երիտասարդների մոբիլիզացմանը հանուն խաղաղ ընտրությունների՝ կարողությունների զարգացման, երիտասարդների և դիտորդների վերապատրաստման, հուսալի մեդիա արշավների, ջատագովության և լոբբինգի շնորհիվ:¹⁸⁶



կերպություններ ավելի մեծ ուշադրություն են դարձնում գեղեցիկ անհավասարության հարցերին՝ ըստ սեռի տվյալների տարանջատման, քաղաքական միջավայրի վերաբերյալ տվյալների հավաքագրման համար երկարաժամկետ դիտորդների թվաքանակի ավելացման, գեղեցիկ անհավասարություններին նրպես հիմնական թմի անդամներ ներգրավելու և ընտրություններում կանանց քաղաքական մասնակցության մոնիտորինգի համար հատուկ ուղեկիշներ մշակելու միջոցով: Այս խմբերի հետ ակտիվորեն համագործակցելու և ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի վերաբերյալ անձագանքների հավաքագրման միջոցով ընտրական մարմինը կարող է այդ հետազոտություններում ներդրված ռեսուրսներն օգտագործել ընտրական շրջափուլի ընթացքում իր արդյունավետությունը բարելավելու նպատակով:

Այս ոլորտում առկա է համակարգման ավելի մեծ ներուժ՝ մոնիտորինգի գործիքների կիրառման ու որակի բարձրացման շտրիկով: Շատ տեխնոլոգիաներ լուծումներ են ներկայացվում ամբողջ աշխարհում, ինչպիսիք են HarassMap-ը (Եգիպտոս) և WomenUnderSeige-ը (Սիրիա), որոնք օգտագործում են հանրային լրատվամիջոցների և այլ աղբյուրների կողմից ստացվող տվյալները՝ սեռական ոտնձգության և գեղեցիկ անհավասարության դեպքերին արձանագրելու համար: Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) նույնպես կարող են լինել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) միջոց:¹⁸¹ Հետևաբար, կարևոր է ընդունել այնպիսի լուծումներ, որոնք կարձագանքեն վիրտուալ սպառնալիքներին և քաղաքականության մեջ կանանց վրա հարձակումներին (օրինակ՝ սոցիալական լրատվամիջոցների կողմից իրականացված ահաբեկման և գրպարտության դեպքերին):

12.2. Ընտրական մարմինների կողմից իրականացվող կանխարգելման և մեղմացման միջոցառումներ

Ընտրություններում կանանց նկատմամբ բռնությունը (ԸԿՆԲ) բազմակողմանի ազդեցություն է ունենում կանանց վրա, և ընտրական մարմինը պետք է բազմաբնույթ արձագանքներ մշակի: Ընտրական մարմինը պետք է բացահայտի գեղեցիկ անհավասարության և սպառնալիքների ձևերը ընտրական գործընթացներին մասնակցության բոլոր բնագավառներում և դրանց հասցեագրման հարցում ակտիվ քայլեր ձեռնարկի: Այս ամենը վերաբերում է ընտրողների և թեկնածուների գրանցմանը, նախընտրական քարոզչությանը, քվեարկության օրվան և տեղամասային կենտրոնների աշխատանքին, ինչպես նաև հետընտրական շրջանում ընտրական

մարմինների հստակ գործողություններին և ոլորտում բացահայտ առաջնությունները:¹⁸² Հարավային Ասիայում կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ ուսումնասիրություններից մեկը բացահայտել էր, որ ընտրական շրջափուլում կիրառվել են բռնության և ահաբեկման տարբեր ձևեր, ինչպիսիք են՝ կին թեկնածուների վարկաբեկմանն ուղղված մարտավարություն, նսեմացնող լեզվի և նկարների օգտագործում ընդդեմ կին թեկնածուների՝ հանրության առջև նրանց ծաղրելու նպատակով, ընտրողների ցուցակներում ընթացակարգային սխալներ, տեղամասային կենտրոններում ոտնձգություններ և քվեատուփերի կողոպուտ:¹⁸³

Ընտրողների գրանցում

Ընտրական գործընթացի սկզբում ընտրողների ռեգիստրի ստեղծման կամ թարմացման ժամանակ, ընտրական մարմինը պետք է գնահատի ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) ռիսկերը, որոնք կարող են խոչընդոտ հանդիսանալ կանանց գրանցման համար: Օրինակ՝ այն համատեքստում, երբ անհատները զգում են, որ գրանցման բացահայտ գործընթացն իրենց անհատական ռիսկի առաջ է կանգնեցնում պահանջվող տեղեկատվություն պատճառով, ապա մի շարք երկրներ թույլ են տալիս ընտրողների «անանուն» կամ «գաղտնի» գրանցում (նաև հայտնի որպես «գաղտնի» կամ «լուր» գրանցում), որը հաճախ կիրառվում է ընտանեկան բռնության դեպքերում: «Լուր» գրանցումը վերաբերում է «ընտրողների ցուցակում որոշ անձանց գրանցելու այնպիսի գործելակերպին, երբ նրանց անունները կամ այլ տվյալներ (օրինակ՝ հասցեներ) չեն հայտնվում ընտրական ցուցակների հրապարակված կամ շրջանառվող տարբերակներում»¹⁸⁴ (տե՛ս Բաժին 8.1-ը): Ընտրական մարմինը կարող է նաև աշխատել գրանցման կենտրոններում անվտանգության ապահովման ուղղությամբ, որպեսզի կանայք պաշտպանված զգան իրենց բնակության վայրից հեռու գտնվող վայրերում գրանցվելիս:

Թեկնածուների գրանցում

Նույն կերպ թեկնածուների առաջադրման և գրանցման ընթացակարգերը կարող են գնահատվել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) ցանկացած հնարավոր սպառնալիքի տեսանկյունից: Որոշ երկրներում, որտեղ կանանց համար պետական պաշտոն զբաղեցնելը դեռևս «ընդունելի չափանիշ» չէ, կին հավակնորդները և թեկնածուները կարող են հնարավոր ռիսկերի ենթարկվել ինչպես իրենց կուսակցության, այնպես էլ արտաքին հասարակության կողմից: Կանայք կարող են տեղյակ չլինել թեկնածուների առաջադրման ժամկետների մասին կամ այդ ժամկետները կարող են

կարճ լինել (ավելի քիչ ֆինանսական ռեսուրսներ ունեցող, սակավ շարժունակ և ճանապարհորդելու հետ կապված սահմանափակումներ ունեցող կանայք կարող են առերեսվել ռիսկերի, եթե գրանցման ժամկետները կարճ են): Բացի այդ, թեկնածուական փաստաթղթերի ամբողջական փաթեթի համար վարչական պահանջները և դրանք ընդունող կառույցի աշխարհագրական դիրքն ու աշխատանքային ժամերը կարող են կոնֆլիկտ հրահրել և անվտանգության վերաբերյալ մտահոգություններ առաջացնել կանանց շրջանում: Օրինակ՝ պահպանողական հասարակությունում կին հավակնորդը կարող է ահաբեկման ենթարկվել իր ընտանիքի կամ համայնքի կողմից, երբ առերեսվում է որպես թեկնածու առաջադրվելու համար սահմանված բարձր ընտրագրավի վճարման պահանջին, կամ եթե ստիպված է լինում երկար ճանապարհ անցնել ընտրական մարմնի գրասենյակ հասնելու և առաջադրվելու համար (երբ կանանց չի թույլատրվում մենակ ճամփորդել):¹⁸⁵ Ընտրական մարմինը կարող է օգնել նման խոչընդոտները վերացնելու հարցում:

Ընտրական մարմինը կարող է նաև խրախուսել այն կուսակցություններին, որոնք պայքարում են հանուն կանանց հզորացման, ինչպես նաև դրսևորում են ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի և օրինախախտների նկատմամբ հստակ դիրքորոշում: Օրինակ՝ **Լիբերիայի** Ազգային ընտրական հանձնաժողովը քաղաքական կուսակցությունների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակեց վարքագծի կանոններ: Նպատակներից մեկն էր խուսափել «բռնության, ահաբեկման և խարդախության միջոցով կանանց մարզինալացումից»: Կողմերը համաձայնության եկան «խտրականության և նվաստացուցիչ բառապաշարի բացառման սկզբունքի և սեռով կամ գենդերային հիմքով պայմանավորված քարոզչության անթույլատրելիության շուրջ»:¹⁸⁶

Նախընտրական քարոզարշավ

Որոշ երկրներում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի երեք քառորդը ուղղվում են ընդդեմ կին թեկնածուների կամ քաղաքական կուսակցության աջակիցների հենց նախընտրական քարոզարշավի ընթացքում: Քաղաքականության մեջ ակտիվ կանանց հանդեպ բռնության դեպքերին ուղղված արձագանքները կարող են ներառել քաղաքական կուսակցությունների ներսում բռնության թեժ կետերի թիրախավորումը: Իլյումն ընտրական գործընթացում բռնության մեղմացման միջոցառումների, ընտրական մարմինը կարող է տարբեր թիրախային գործողություններ նախանշել՝ քարոզարշավի ընթացքում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի կրճատելու նպատակով: Օրինակ՝

ընտրական մարմինը կարող է դիտարկել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) մեղավորների հանդեպ զրոյական հանդուրժողականության քաղաքականություն որդեգրելու հարցը, այդ թվում՝ խիստ և արագ գործողություններ ձեռնարկել ցանկացած կուսակցության կամ անհատի դեմ, որը ձգտում է սեռական հիմքի վրա ուժի կիրառմամբ խոչընդոտել կնոջ մասնակցությունը ընտրություններին: Գործողությունները կարող են ներառել բռնության դեպքերի նկատմամբ խիստ արձագանքները և կուսակցությունների հետ համատեղ կանանց մասնակցությունը խթանող հատուկ կառույցների ստեղծումը, ինչպես նաև ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի և դրանց առնչվող փաստաթղթերի վերանայումը:

Ընտրական մարմինները հաճախ ամենալավն են մատնանշում խախտումները և կարող են այդ դեպքերը հայտնել համապատասխան անվտանգության և արդարադատության մարմիններին և/կամ ապացույցներ ներկայացնել: Ոչ քրեական բնույթի գործերում, որտեղ ընտրական մարմինն ունի օրենքի պարտադրման իրավասություն, կարող են ուղղակի պատժամիջոցներ կիրառվել: Դրանք կարող են արտացոլել գենդերային քվոտաների խախտման դեպքերի համար կիրառվող պատժամիջոցները, ինչպիսիք են՝ ֆինանսական տույժերը, պարսավանքը և գրավոր/բանավոր պատժամիջոցները¹⁸⁷, թերի առաջադրման փաստաթղթերը կամ գրանցման համար անհրաժեշտ հավաստագրերի կամ ստորագրությունների անհամապատասխան քանակը:

Ընտրական մարմինները կարող են նաև ներկայացնել և կիրառել քարոզարշավի ֆինանսավորման կանոններ, որոնք կնպաստեն քաղաքականության մեջ հավասար հնարավորությունների մատչելիությանը և դրամի հակասական կողմերի ապաքաղաքականացմանը: Քարոզարշավի ֆինանսավորման վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «անձնական օգտագործման համար գումար խնդրելիս կանայք կարող են ավելի մեծ հոգեբանական խոչընդոտների առերեսվել, քան տղամարդիկ»¹⁸⁸ և նրանք կարող են նաև բախվել դիմակայության ու սպառնալիքների տանը՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման համար դրամական միջոցներ հայցելիս: Իրավիճակն ավելի է սրվում դրամահավաքի սեղմ ժամկետների պատճառով: Կուսակցության ներսում սահմանափակ ֆինանսավորման համար մրցակցությունը նույնպես կարող է շփոթության և ահաբեկման տեղիք տալ: Ընտրական մարմինը կարող է դիտարկել այս խնդիրների հասցեագրման մի շարք եղանակներ, այդ թվում՝ մատչելի առաջադրման վճարների սահմանում և/կամ կանանց համար խրա-

խուսական միջոցներ՝ ընտրագրավի չեղարկման կամ կրճատման տեսքով: Ընտրական մարմինները կարող են նաև աշխատել ԶԼՄ-ների հետ՝ առաջիկա ընտրությունների ժամանակ ընտրական գործընթացում թափանցիկությունը և գենդերային զգայունությունը խթանելու նպատակով և հատկապես կին թեկնածուներին լուսաբանման հարցում:

Մի շարք միջազգային կազմակերպություններ աշխատում են լրատվամիջոցների հետ՝ խթանելու գենդերային զգայուն լուսաբանումը: Օրինակ՝ Հորդանանում 2013 թվականի ընտրությունների ընթացքում Հորդանանի մեդիա ինստիտուտը (ՀՄԻ) ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ գենդերային զգայուն լուսաբանման թեմայով աշխատաժողով կազմակերպեց: Միջազգային ԺԸԱԻ-ն և ՄԱԿ-Կանայք կառույցը 2011 թվականին մշակեցին «Ընտրությունների լուսաբանումը գենդերային տեսանկյունից. մեդիա մոնիտորինգի ձեռնարկ»-ը, որը բացահայտում է, թե ինչպես են մոնիտորինգի գենդերային փոփոխականները ԶԼՄ-ների կողմից ընտրությունների լուսաբանման ժամանակ տեղեկություն տրամադրում ընտրական մարմինների աշխատանքի վերաբերյալ:¹⁸⁹ ԶԼՄ-ների դերը ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի կանխարգելման և հաղորդման մեխանիզմի մեջ կարող է ներառվել ընտրական թեմաներով վերապատրաստման դասընթաց-

ների մեջ, օրինակ՝ ընտրական վարչարարության մարմինների համար BRIDGE վերապատրաստման ծրագրի շրջանակներում:

Ընտրական մարմինը կարող է նաև համագործակցել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի բնույթի և հատկապես համայնքային մակարդակով դրանց կանխարգելման վերաբերյալ հանրությանը կրթելու հարցում: Այդ ամենը կարող է իրականացվել որպես քաղաքացիական և ընտրողների կրթմանն ուղղված ընթացիկ ծրագրերի բաղկացուցիչ մաս: Քաղաքացիական կրթությունը կարող է ընդգրկել քաղաքականության մեջ կանանց հիմնախնդիրների ընդհանուր զգայունության բարձրացումը կամ կարող է ուղղակիորեն միտված լինել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) խնդրի հասցեագրմանը, օրինակ՝ պաստառների կամ ռադիո ուղերձների օգտագործման միջոցով, որոնք բացատրում են, որ տանը կնոջ կամ դստեր հանդեպ սպառնալիքները կամ բռնությունը խախտում են նրանց քաղաքական իրավունքները:

Քվեարկության օրը

Որոշ համատեքստերում ընտրական մարմինները կարող են մեծ ազդեցություն ունենալ հենց քվեարկության օրը կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դրսևորումների վրա: Գործառնական որոշումները, կապված տեղամասային կենտրոնների գտնվելու վայրի, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կազմի և տեղամասային կենտրոնի կառավորման հետ, կարող են ազդել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) ռիսկերի ընկալման վրա: Որոշ ուսումնասիրություններ ցույց են տալիս, որ քվեարկության օրը ահաբեկման զոհ դառնալու հավանականությունը ավելի մեծ է կանանց շրջանում, և որ կանանց նկատմամբ բռնության դեպքերն ավելի հաճախ են գրանցվում գյուղական վայրերում:¹⁹⁰ Տեղամասային կենտրոնների տեղակայման հարցը կարող է հատկապես զգայուն թեմա լինել նման վայրերում, և պետք է փորձել խուսափել վտանգավոր գոտիներով անցնող հեռավոր տարածքներից կամ էթնիկ և կրոնական միավորումների առկայությամբ պայմանավորված քաղաքական առումով զգայուն վայրերից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և անվտանգության աշխատակիցների համար կազմակերպվող վերապատրաստումը և ուղղորդումը կարող է պաշտպանել խոցելի բնակչությանը հստակ սպառնալիքներից կամ խորացնել ընտրողների անվտանգության և մանիպուլյացիայի մթնոլորտը: Անվտանգության աշ-

2ամբիայում կոնֆլիկտների մեղմացման գործընթացում ընտրական մարմնի ներգրավման օրինակ

Զամբիայի ընտրական հանձնաժողովը (ԶԸՀ) լիազորված է ստեղծել ընտրական վեճերի և բողոքների լուծման համար Կոնֆլիկտների կառավարման կոմիտեներ: Կոնֆլիկտների կառավարման ազգային կոմիտեն բաղկացած է 24 տարբեր պետական և ոչ պետական շահագրգիռ կազմակերպություններից, այդ թվում՝ ոստիկանության, թմրամիջոցների դեմ պայքարի գործակալության և հակակոռուպցիոն հանձնաժողովի, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներից: Ղեկավար կազմը նշանակվում է ԶԸՀ-ի կողմից: Կոնֆլիկտների կառավարման ազգային կոմիտեն և հարակից կոնֆլիկտների կառավարման տարածաշրջանային կոմիտեները կարող են քննել կին թեկնածուների և ընտրողների բողոքները: Կոմիտեները իրավասու են տուգանքեր կիրառել, եթե տեղի են ունեցել խախտումներ:¹⁹⁷

խատակիցների վերապատրաստումը հատկապես կարևոր է քվեարկության օրը տեղամասային կենտրոններում տեղի ունեցող բռնությունները կանխելու և մեղմելու համար: Ընտրական մարմինների բոլոր մակարդակներում աշխատող անձնակազմի ուսուցումը ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) հատակ ձևերի և դրսևորումների ընկալման վերաբերյալ կարող է ձևավորել միջադեպերին առաջին ճիշտ արձագանքելու կորոդություն: Անհրաժեշտ է նաև վերահսկել, որպեսզի տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամները չդառնան ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) լուր վկաներ կամ նման դեպքերի անմիջական մասնակիցներ:

Ընտրական մարմինները կարող են նաև կոչ է անել կանանց հանդես գալ որպես քաղաքական կուսակցության գործակալներ տեղամասային կենտրոններում, հատկապես միայն կանանց համար նախատեսված կենտրոններում: Նրանք կարող են խրախուսել քաղաքացիական հասարակության մոնիտորինգ իրականացնող խմբերին գենդերային հիմնահարցերն իրենց դիտարկումների մեջ ներառելու հարցում և/կամ հավատարմագրեր տրամադրել այն կազմակերպություններին, որոնք քվեարկության օրը բացառապես գենդերային մոնիտորինգ են իրականացնում, ինչպես նաև ապահովել կանանց ներգրավումը որպես դիտորդներ:

Չեղնտրական շրջան

Բացի ընտրություններից առաջ և ընթացքում վերոհիշյալ մտահոգություններից, ընտրական մարմինը կարող է նաև դերակատարում ունենալ հեղինակական ժամանակահատվածում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի կանխարգելման և մեղմացման գործում: Ընտրական և այլ մարմինները կարող են իրենց լիազորությունների շրջանակներում հետաքննել և պատասխանատվության ենթարկել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) մեջ ներգրավված իրավախախտներին: Նրանք կարող են դիտարկել բռնության դրսևորումները, հավաքել ապացույցներ և փաստաթղթավորել իրավիճակը: Չնայած պաշտոնական դատավարությունը ղեկավարվում է դատական համակարգով, ընտրական մարմինը կարող է լուրջ լծակներ ունենալ կոնֆլիկտների կառավարման և ընտրական արդարադատության հարցերում: Ընտրական մարմինը կարող է օգտագործել հեղինակական շրջանը՝ ոլորտում կատարված աշխատանքները գնահատելու և հետագա բարվոխումները պլանավորելու նպատակով:

Ընտրական մարմինների կարևոր դերը

Ի վերջո, ընտրական մարմինը կարող է առաջնորդու-

թյուն ցուցաբերել կանանց մասնակցության հարցում՝ ներքին գործընթացներում գենդերային բաղադրիչի ներառման և բռնության, ահաբեկման կամ ոտնձգության վերաբերյալ իր որդեգրած քաղաքականություններին հավատարիվ մնալու միջոցով, եթե այդպիսիք գոյություն ունեն: Եթե այդպիսի քաղաքականություններ չկան, ապա ընտրական մարմինը կարող է ընդունել վարքագծի կանոններ, որոնք առնչվում են ընտրական մարմինների կողմից կիրառվող՝ կանանց նկատմամբ ոտնձգության և բռնության հետ կապված կոնկրետ հարցերի:

Բոլիվիայում կանանց նկատմամբ ոտնձգության և/կամ գենդերային հիմքով քաղաքական բռնության մասին օրենքը (Օրենք 243) սահմանում է անհատական կամ կոլեկտիվ գործողությունների կանխարգելման, քննման և դատապարտման մեխանիզմներ կանանց հանդեպ ոտնձգության և/կամ գենդերային հիմքով քաղաքական բռնության դեպքերի համար՝ կանանց քաղաքական իրավունքների լիարժեք իրացումը երաշխավորելու նպատակով (Հոդված 2): Այն սահմանում է «քաղաքական հետապնդում» և «քաղաքական բռնություն» տերմինները, պաշտպանում է բոլոր ընտրված կամ նշանակված կին թեկնածուներին իրենց հասարակական-քաղաքական գործառնությունների իրականացման գործում (Հոդված 5) և պահանջում է իշխանություններից և/կամ ընտրական մարմնի աշխատակիցներից, ովքեր տեղյակ են ոտնձգության և քաղաքական բռնությունների հստակ դրսևորումներից, որչ տեղեկատվությունը ներկայացնել դատախազին (Հոդված 26):

Ի լրումն ամրապնդված և առաջադեմ ներքին կանոնակարգերի և վարքագծի կանոնների, ընտրական մարմիններում նշանակված գենդերային հարցերով խորհրդատուները և/կամ գենդերային հարցերը համակարգող բաժինները կարող են կարևոր ներդրում ունենալ կրթական, կանխարգելման և արձագանքման գործողություններում: Նույն կերպ ընտրական մարմինը կարող է ապահովել համարժեք վերապատրաստում տեղամասային ընտրական հանձնաժողովների ժամանակավոր անդամների համար, ովքեր հաճախ լավագույն են կանխում ընտրողների նկատմամբ բռնության կամ ահաբեկման բազմաթիվ սպառնալիքները: Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) մեղմացմանն ուղղված այլ միջոցառումները դուրս են սույն ուղեցույցի շրջանակից: Քանի որ քաղաքական կուսակցությունները ընտրություններում կանանց նկատմամբ բռնության ամենատարածված իրավախախտներն են, նրանք կարևոր դեր են խաղում բռնության այս տեսակի նվազեցման և կանխարգելման գործում:¹⁹¹

12.3. Անվտանգության ոլորտի համակարգում

Ընտրական մարմինները կարևոր աջակցող դերակատարներ են ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերի համար անվտանգության և արձագանքման միջոցառումների մշակման գործում և պատասխանատվություն են կրում անվտանգության աշխատակիցների հետ իրենց գործողությունները համակարգելու շտրիկով բոլոր շահառուների համար ընտրությունների անվտանգ անցկացումը ապահովելու համար:¹⁹² Շահառուների թվին են դասվում տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները և ընտրողները: Ընտրական մարմինները կարող են խորհուրդ տալ և ղեկավարել գեներային զգայուն ռիսկերի գնահատումն ու քվեարկության օրվա պլանավորումը՝ քննարկելով զգայուն իրավիճակներ, որոնք կարող են պահանջել ոստիկանության միջամտությունը: Օրինակ՝ **Աֆղանստանում** ընտրական մարմինը հաստատեց տեղամասային կենտրոններում անհատական ստուգման անհրաժեշտությունը, և գենդերային զգայուն անվտանգության պլանավորումը դարձավ կարևորագույն խնդիր:

Կանանց անհատական ստուգում իրականացնելու նպատակով տեղամասային ընտրական հանձնաժողովի կին անդամների սակավության հարցը լուծվեց ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի, ընտրական մարմնի, մարզպետների և Ներքին գործերի նախարարության համագործակցության արդյունքում ավելի քան 11.000 կին աշխատակիցների ներգրավմամբ, ովքեր 2010 թվականին քվեարկության օրը ընտրողների անհատական ստուգումներ իրականացրեցին:¹⁹³ 2010 թվականին **Ղրղզստանում** ՄԱԶԾ-ն համագործակցեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հետ՝ քաղաքացիական հասարակության, իրավապահ մարմինների և ընտրական հանձնաժողովների միջև երկխոսության և գործընկերության հարթակ ստեղծելու նպատակով, ինչը նպաստեց ընտրական գործընթացում բռնությունների կանխարգելմանը:¹⁹⁴ 2010 թվականին **Նիգերում** ՄԱԶԾ-ն նպաստեց ազգային անվտանգության աշխատակիցների վերապատրաստմանն ու զգայունության բարձրացմանը՝ կենտրոնանալով քվեարկության ժամանակ գեներային և պաշտպանական խնդիրների ու գեներային բռնությանն առնչվող հարցերի վրա:¹⁹⁵




ԱՄՓՈՓՈՒՄ

- Ընտրություններում կանանց նկատմամբ բռնությունը (ԸԿՆԲ) բազմակողմանի ազդեցություն է ունենում կանանց վրա, և ընտրական մարմինները պետք է տեղյակ լինեն ընտրական գործընթացների բոլոր բնագավառներում առկա գեներային սպառնալիքների մասին, որոնք առնչվում են ընտրողների և թեկնածուների գրանցմանը, նախընտրական քարոզարշավին և քվեարկության օրվան:
- Ընտրություններում կանանց նկատմամբ բռնությունը գնալով ավելի ակնհայտ է դառնում, ինչը պահանջում է ընտրական մարմինների կողմից համակցված արձագանք՝ հաճախ որպես այլ շահառուների, այդ թվում՝ անվտանգության ոլորտի, քաղաքական կուսակցությունների և ԶԶ-ների հետ համագործակցության արգասիք:
- Կանանց նկատմամբ բռնության դեպքերի մոնիտորինգի և վերլուծության ոլորտում առաջավոր փորձի օրինակներն ձևավորվել են Նաև քաղաքացիական հասարակության կողմից իրականացված նախաձեռնությունների շնորհիվ:
- Ընտրական մարմինները կարող են հանդես գալ քվեարկության օրվա ընթացքում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) դեպքերը մեղմելու նախաձեռնությամբ: Գործառնական որոշումները, կապված տեղամասային կենտրոնների գտնվելու վայրի, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների կազմի և տեղամասային կենտրոնների կառավարման հետ, կարող են ազդել ընտրություններում կանանց նկատմամբ բռնության (ԸԿՆԲ) ռիսկերի ընկալման վրա: Քվեարկության օրը ահաբեկման զոհ դառնալու հավանականությունը ավելի մեծ է կանանց շրջանում, և կանանց նկատմամբ բռնության դեպքերն ավելի հաճախ են գրանցվում գյուղական վայրերում:

Կարող է ի հայտ գալ կանանց մասնակցության
խթանող հարուկ ուղերձների փարսաձման
անհրաժեշտություն, սրպեսզի թեկնածու և
ընտրող կանանց համար պարզ լինի, որ իրենք
ունեն ազատ ընտրության իրավունք:

”



13 Աշխատանք ընտրական գործընթացի շահառուների հետ

Ընտրական մարմինը պետք է ապահովի, որ բոլոր շահառուները հետևեն ընտրական օրենսգրքի դրույթներին, ինչպես նաև ստեղծի այնպիսի միջավայր, որը նպաստում է քաղաքական հայացքների փոխանակմանը և քաղաքականության մշակման գործում համագործակցությանը: Նման միջավայրին նպաստող լավ գործելակերպ է համարվում տարբեր գործընկերների և շահառուների հետ աշխատանքը, որոնց թվին են դասվում քաղաքական կուսակցությունները, զանգվածային լրատվության միջոցները (ՉԼՄ) և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:

Ընտրողներին հասանելի քարոզչության նյութերի զգալի մասը ստացվում են ՋԼՄ-ներից և մրցակցող քաղաքական կուսակցություններից ու թեկնածուներից: Քանի որ այս ոլորտում հիմնականում դոմինանտ են տղամարդիկ, օրինաչափ է նաև, որ թեկնածուների, կուսակցությունների ղեկավարների, լրագրողների և լրատվություն հաղորդողների շրջանում տղամարդիկ ավելի շատ են, քան կանայք: Ընտրությունների լուսաբանումը կարող է այնպիսի տպավորություն թողնել, որ գործընթացն իրականացվում է բացառապես տղամարդկանց կողմից: Չնայած ընտրական մարմիններն ունեն տարբեր մակարդակի վերահսկողության մեխանիզմներ լրատվամիջոցների և քարոզարշավների կանոնակարգման գործում, նրանք կարող են օգտագործել իրենց ազդեցությունը որպես հարգված և քաղաքական առումով անկախ կառույց՝ ոլորտում գենդերային հավասարակշռությունը խթանելու նպատակով: Որոշ դեպքերում ընտրական մարմինը կատարում է նաև ընտրությունների ընթացքում լրատվամիջոցների դաշտը կանոնակարգող մարմնի գործառույթ կամ մեղիա դաշտը կարգավորող առանձին մարմին է ստեղծում:

Օգտագործելով լավ գործելակերպի օրինակներն ու ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները՝ հաջորդ բաժինը ներկայացնում է ընտրական մարմինների կողմից քաղաքական կուսակցությունների, ՋԼՄ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ ձևավորված համագործակցությունը:

13.1. Աշխատանք քաղաքական կուսակցությունների հետ

Ընտրական մարմիններն ունեն մի շարք լծակներ, որոնք թույլ են տալիս առանց սեփական անկախությունը կամ քաղաքական չեզոքությունը գոհրերելու ներագդել քաղաքական կուսակցությունների վարքագծի վրա: Եթե ընտրական մարմինն ունի քաղաքական կուսակցությունների կամ թեկնածուների գրանցման կամ նրանց պետական ֆինանսավորումը վերահսկելու գործառույթ, ապա այն պետք է կապ հաստատի կուսակցական քարտուղարությունների հետ՝ օգտագործելով նրանց լավ վարքագիծ խրախուսելու գործում: Որոշ երկրներում քարոզարշավի ընթացքում գենդերային զգայունության ապահովման նպատակով քաղաքական կուսակցությունների համար մշակվել են վարքագծի կանոններ:

- **Նեպալում** քաղաքական կուսակցությունների վարքագծի կանոններում առկա է դրույթ այն մասին, որ նախընտրական քարոզարշավները չպետք է խրախուսեն գենդերային հիմքի վրա ատելությունը (այլ անձնական գործոնների մեջ): Այս կետը կարևոր է, քանի որ հեղինակությանը հասցվող վնասը սովորաբար նախընտրական քարոզարշավների բաղկացուցիչ մասն է կազմում, հատկապես կին թեկնածուների շրջանում:¹⁹⁸
- **Լիբերիայի** Ազգային ընտրական հանձնաժողովը քաղաքական կուսակցությունների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մշակեց վարքագծի կանոններ: Նպատակներից մեկն էր խուսափել «բռնության, ահաբեկման և խարդախության միջոցով կանանց մարգինալացումից»: Կողմերը համաձայնության եկան «խտրականության և նվաստացուցիչ

բառապաշարի բացատման սկզբունքի և սեռով կամ գենդերային հիմքով պայմանավորված քարոզչության անխթոյլատրելիության շուրջ»:¹⁹⁹

Ընտրական մարմինները կարող են մշակել քաղաքական կուսակցությունների գրանցման համակարգ և սահմանել այն պայմանները, որոնք կուսակցությունները պետք է բավարարեն գրանցվելու և գրանցված մնալու համար: Եթե այդպես է, ապա ընտրական մարմինը կարող է պահանջել, որպեսզի կուսակցությունները ձեռնպահ մնան քարոզարշավի ընթացքում ատելության խոսքի օգտագործումից կամ կանանց գրպարտելուց: Այս չափանիշին չհամապատասխանող կուսակցությունները կարող են ենթարկվել պատժամիջոցների, ինչպիսիք են՝ ապագրանցումը կամ այլ տույժերը, եթե ընտրական մարմինն է վերահսկում գրանցումը:

Ընտրական մարմինը կարող է նաև պատասխանատու լինել քաղաքական կուսակցությունների նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու համար, եթե նրանք չեն գործում օրենքին համապատասխան: Օրինակ՝ պետական ֆինանսավորման կրճատման տեսքով պատժամիջոց կարող է կիրառվել քաղաքական կուսակցությունների նկատմամբ, եթե նրանք խախտել են թեկնածուների գրանցման չափանիշները (տե՛ս Բաժին 9-ը): Թեև այս պատժամիջոցների մեծ մասը հիմնավորված է իրավական դաշտում, շատ երկրներում օրենքի խախտումների մոնիտորինգի, փաստաթղթավորման և դատապարտման գործառույթը կատարում է ընտրական մարմինը: Հետևաբար, ընտրական մարմինը պետք է խրախուսի օրենսդրությանը համապատասխան գործելակերպ, ապահովելով, որ քաղաքական կուսակցությունները պատշաճ կերպով տեղեկացված լինեն ոլորտում իրենց պարտավորությունների մասին:

Որոշ ընտրական մարմիններ քաղաքական կուսակցություններին և թեկնածուներին իրազեկելու և տեղեկատվություն տրամադրելու պարտավորություն են ստանձնում: Աջակցության այս ձևը կարող է կենսական դեր խաղալ անհրաժեշտ տեղեկատվության միջոցով կին թեկնածուների մասնակցության խթանման հարցում: Օրինակ՝

- **Աֆղանստանում**, Անկախ ընտրական հանձնաժողովը կազմակերպում է ամենամսյա հանդիպումներ գենդերային հարցերի և ընտրությունների թեմայի շուրջ, որին մասնակցում են կառավարության և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանդիպումներն արդյունավետ են եղել տարբեր շահառուների, այդ թվում՝ կին թեկնածուների, ընտրական մարմնի աշխատակիցների և դիտորդների միջև տեղեկատվության փոխանակման ու ջանքերի համակարգման տեսանկյունից:²⁰⁰

- **Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության** Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստեղծեց համակարգող բաժին և երկխոսության շրջանակ կին քաղաքական գործիչների և թեկնածուների համար: Տեղեկատվության կանոնավոր փոխանակման և թեկնածուների մտահոգությունների հասցեագրման միջոցով ԿԸՀ-ն ձգտում է խթանել ընտրական ընթացակարգերի ընկալման մակարդակը: ԿԸՀ-ն նաև իրականացնում է կին թեկնածուների վերապատրաստում գենդերային հարցերը համակարգող բաժնի միջոցով:²⁰¹

Ընտրական մարմինը կարող է նաև աշխատել քաղաքական կուսակցությունների հետ քարոզարշավին չառնչվող հարցերի շուրջ: Ընտրական մարմինը կարող էր խորհուրդատվություն տրամադրել քաղաքական կուսակցություններին գենդերային աուդիտի ժամանակ և հետընտրական վերլուծություն իրականացնելիս: Շատ դեպքերում կուսակցությունները կարող են լրացուցիչ ապացույցներ տրամադրել նման քննարկումների ընթացքում և աջակցել լուծումների մշակման հարցում այն դեպքերի համար, որտեղ կանանց մասնակցությունը նվազագույնի է հասցվել կամ վտանգվել է: Ընտրական մարմինը կարող է նաև հիշեցնել կուսակցական կառույցներում կանանց ներկայացուցչության կարևորության մասին տարբեր դերերում:

Ընտրական մարմինը կենսական դեր է խաղում կանանց հզորացմանն աջակցելու հարցում իր աշխատակազմի ձևավորման և այն գործողությունների միջոցով, որոնք նպաստում են կանանց մասնակցության խթանմանը ընտրական գործընթացներում և գենդերային իրավահավասարության ջատագովմանը քաղաքական մասնակցության ավելի լայն ոլորտներում ու հանրային քննարկումներում: Այդ ոլորտները ներառում են ազգային երկխոսության խթանումը, կին թեկնածուներին ընտրական գործընթացի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և գենդերային անհավասարության վերաբերյալ քաղաքական կուսակցություններին ավելի լայնածավալ տեղեկատվության մատուցումը:

Այն երկրներում, որտեղ կանանց քաղաքական մասնակցությունը սահմանափակ է, ընտրական մարմինը և գործընկերները կարող են կարևոր դեր խաղալ ազգային քննարկումներում այդ խնդրի բարձրացման գործում: Նրանք կարող են այդ ամենն իրականացնել նաև սեփական նախաձեռնությունների կամ քաղաքական կուսակցություններին այլ խմբերի հետ ջանքերը մեկտեղելու միջոցով՝ ներառելով պետական գերատեսչությունների, խորհրդարանի և քաղաքացիական շահերի պաշտպանության խմբեր: Ղեկավարման այդ ձևը հատկապես կարևոր է օրենսդրական բարեփոխումներում:

Ստորև բերված են ՉԼՄ-ների հետ աշխատանքի օրինակներ կանանց մասնակցությունը խթանելու և գեղեցիկային զգայուն բովանդակություն տրամադրելու համար.

- **Հայաստանում** 2009 թվականին գեղեցիկային զգայունության բարձրացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել լրագրողների համար, որպեսզի նրանց հնարավորություն ընձեռվի ավելի լավ ներկայացնելու գեղեցիկային հիմնախնդիրները և մեղիա դաշտում ավելի արդյունավետ պայքարելու գեղեցիկային կարծրատիպերի դեմ: Որպես օժանդակ գործողություն, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը աջակցել է նաև «Գեղեցիկային հարցերը և լրագրությունը» դասագրքի հրատարակմանը համալսարանականների և դասախոսների համար:
- **Բոսնիա և Հերցեգովինայի** Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը հեռուստաընկերությունների հետ զրուցել է տղամարդկանց գերախոսող դերի մասին ընտրական բանավեճերում և կոչ է արել նրանց հեռուստատեսային բանավեճերում ընդգրկել նաև կին թեկնածուներին:²⁰⁸
- **Նեպալ.** ԶԼՄ-ների վարքագծի կանոնները արգելում են այնպիսի հաղորդումներ, որոնք կարող են «բացասական ազդեցություն ունենալ գեղեցիկային հավասարության և սոցիալական ներառման սկզբունքների վրա», այդ թվում՝ խտրական լեզվի օգտագործման և բռնություն հրահրող ուղերձները:²⁰⁹ Նաև կոչ է արվում ԶԼՄ-ներին ակտիվորեն խթանել կանանց (և այլ մարզիկնալացված խմբերի) մասնակցությունն ընտրություններին:²¹⁰
- **Պապուա Նոր Գվինեա.** ՄԱԿ-Կանայք կառույցը 2012 թվականի համընդհանուր ընտրություններից առաջ կազմակերպեց գեղեցիկային հարցերը և ընտրությունները թեմայով BRIDGE վերապատրաստման դասընթաց լրատվամիջոցների համար:
- **Եմեն.** ԵՀ-ՄԱԶԾ համատեղ ընտրական գործընթացների աջակցության ծրագիրը, համագործակցելով քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, 16 լրագրողների համար կազմակերպեց գեղեցիկային հիմնահարցերը հասցեագրող լուսաբանման վերաբերյալ վերապատրաստման դասընթաց: Դասընթացն անդրադառնում էր առկա օրենսդրությանը, լրատվամիջոցներում կանանց կարծրատիպավորմանը և կանանց քաղաքական մասնակցության կարևորությանը:
- **Անգոնայում, Բոտսվանայում, Մավրիկիոսում, Մալավիում, Մոզամբիկում, Նամիբիայում և Հարավային Աֆրիկայում** ներպետական մակարդակով «Գեղեցիկային հարցերը, ընտրությունները և լրատվամիջոցները» թեմայով աշխատաժողովներ և վերաապատրաստման դասընթացներ կազմակերպվեցին ԶԼՄ ներկայացուցիչների համար «GenderLinks» ՀԿ-ի աջակցությամբ:

րի ժամանակ: Օրինակ՝

- **Ալբանիայում** ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը և ՄԱԿ-Կանայք կառույցն աջակցություն են ցուցաբերել օրենսդրական բարեփոխումների վերաբերյալ քննարկումներում կուսակցություններին ներգրավելու գործում, մասնավորապես այն քննարկումներում, որոնք առնչվում են կանանց համար նախատեսված 30 տոկոսանոց քվոտայի ներդրմանը: 2013 թվականին ԿԸՀ-ն և գործընկերները մի շարք կյուր-սեղան քննարկումներ կազմակերպեցին ընտրական շահառուների հետ՝ ընտրովի մարմիններում գեղեցիկային ներկայացուցչության համապատասխանեցման մեխանիզմները բարելավելու նպատակով: Քննարկելով քվոտաների մասին օրենքը շրջանցելու քաղաքական կուսակցությունների միտումը՝ ԿԸՀ-ն ներկայիս համակարգում մատնանշեց խոցելի կետեր, որոնք պետք է ընդգրկվեին առաջիկա ընտրական բարեփոխումների օրակարգում:²⁰²
- 2011 թվականին **Կամբոջայում** ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը աջակցեց քաղաքական կուսակցություններին, Ազգային ընտրական հանձնաժողովի և Ներքին գործերի նախարարության միջև թվով յոթ բարձր մակարդակի երկխոսությունների կայացմանը: Այդ երկխոսությունները զգալի ազդեցություն ունեցան Կամբոջայում ընտրական բարեփոխումների բարելավման հարցում՝ ներառելով նաև կանանց մասնակցությունը խթանող բարեփոխումներ, ինչպիսիք են՝ նախքան 2012 թվականի համայնքային խորհրդի ընտրությունները ընտրական օրենսգրքում ընտրողների գրանցման ժամկետի երկարացումը՝ 30-ից դարձնելով 45 օր, և ժամկետանց նույնականացման քարտի վավերականության ժամկետը մինչև 2013 թվականի դեկտեմբեր ամսվա վերջ երկարացնելը:²⁰³

13.2. Աշխատանք զանգվածային լրատվության միջոցների (ՉԼՄ) հետ

Զանգվածային լրատվության միջոցները և լրագրողները կարևոր դերակատարում ունեն ընտրությունների ժամանակ, քանի որ հանդես են գալիս որպես ընտրողների համար տեղեկատվություն տրամադրողներ և հասարակական կարծիք ձևավորողներ: Ընտրական գործընթացի վերաբերյալ լիարժեք և ճշգրիտ տեղեկատվությունը կարևոր է ընտրողների մասնակցության համար, քանի որ թյուր տեղեկատվությունը կարող է շփոթմունքի և ընտրություններին մասնակցելու իրավունքի չիրացման պատճառ դառնալ: Թեև ընտրական մարմինները պետք է պահպանեն քաղաքական չեզոքություն, ընտրական գործընթացներում կանանց մասնակցության խթանման կարևորության մասին մամուլի փաթեթի մշակումը և լրատվամիջոցների համար ճե-

պագրույցները կարող են հիմք հանդիսանալ այս կարևոր հարցի լուսարանման համար:

Ընտրական մարմինները կարող են օգտագործել հաղորդակցման բազմապիսի ուղիներ՝ ընտրությունների ժամանակ գենդերային հիմնահարցերի մասին լրատվամիջոցներին տեղեկացնելու համար, և նրանց խրախուսել, որպեսզի միանան կանանց մասնակցության խթանման ուղղված ջանքերին: Գենդերային հիմնահարցերի թեմայով վերախառաստման դասընթացները կարող են հիրավի օգտակար լինել լրատվամիջոցների համար: Նման դասընթացների նպատակն է խթանել գենդերային հիմնահարցերի վերաբերյալ ԶԼՄ-ների իրազեկվածությունն ու հմտությունների զարգացումը, օգնել լրատվամիջոցներին հասկանալ, որ գենդերային հավասարությունը քաղաքացիության, ժողովրդավարության և խոսքի ազատության անբաժանելի մասն է, բացահայտել ընտրությունների ժամանակ կարևոր գենդերային հիմնահարցերը և ԶԼՄ-ներին աջակցել ընտրությունները գենդերային հայեցակետերի տեսանկյունից լուսարանելու հարցում:²⁰⁴ Բացի այդ, կարևոր է նաև ընտրությունները լուսարանող լրագրողների անվտանգության ապահովումը, որպեսզի տեղական կամ արտասահմանյան լրատվամիջոցների կին և տղամարդ լրագրողները ընտրությունների ընթացքում կարողանան աշխատել անվտանգ և հետապնդումից զերծ միջավայրում՝ համաձայն «Լրագրողների անվտանգության և անպատժելիության հարցի վերաբերյալ ՄԱԿ-ի գործողությունների ծրագրի»:²⁰⁵

13.3. Աշխատանք քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ԶՀԿ) հետ

Շատ երկրներում ընդունված գործելակերպ է, երբ քաղաքացիական հասարակության տարբեր կազմակերպություններ զբաղվում են ընտրությունների հետ կապված հարցերով: ՔՀԿ-ների մեծ մասը ակտիվորեն խթանում է կանանց մասնակցությանը և կարող է դառնալ առանցքային աջակից և գործընկեր ընտրական մարմնի համար, որն աշխատում է հանուն կանանց հավասար մասնակցության ընտրական գործընթացներին:

Իրազեկում

Շատ ՔՀԿ-ներ են ներգրավվում ընտրողների իրազեկմանն ու կրթմանն ուղղված նախաձեռնություններում: Թեև այս թեման ավելի հանգամանորեն քննարկվում է 13-րդ բաժնում, հարկ է նշել, որ ՔՀԿ-ներն առաջարկում են առավել թիրախավորված տեղեկատվական արշավներ, քան ընտրական մարմինները: ՔՀԿ-ները կարող են ծառայել որպես հիանալի միջոց ընտրողների կրթական նյութերը հատկապես հեռավոր համայնքներում տարածելու համար: Օրինակ՝ ազգային փոքրամասնու-

թյունների կանանց հիմնահարցերով զբաղվող ՔՀԿ-ն, հավանական է, որ ավելի հեշտությամբ հասցեատեղերին կհասցնի ընտրողների համար մշակված տեղեկատվական ուղերձները, քան ընտրական մարմինը: ՔՀԿ-ները կարող են լրացնել ընտրական մարմինների ջանքերը՝ անցկացնելով առանձին հանդիպումներ կամ դասընթացներ, ինչը հանդիսանում է կրթվողների մեծամասնության հետ աշխատելու արդյունավետ մեթոդ: Չնայած ընտրական մարմինը չի կարող առանձին դասընթացներ կազմակերպել ամբողջ ընտրական շրջանի համար, բնակչության որոշակի խմբերի համար թիրախային դասընթացների անցկացումը գործընկեր ՔՀԿ-ների հետ կարող է արդյունավետ լինել հատկապես այն վայրերում, որտեղ արձանագրվել են ընտրողների գրանցման և մասնակցության ցածր ցուցանիշներ կանանց շրջանում:

Գենդերային հիմնահարցերի ոլորտում փորձի ներդրում

Գենդերային հավասարության հիմնահարցերի մեջ մասնագիտացած ՔՀԿ-ները կարող են իրենց փորձը ներդնել ընտրական գործընթացում՝ տրամադրելով խորհրդատվություն, աջակցություն և հասանելի ցանցեր, ինչն ընտրական մարմինը կարող է չունենալ: Գենդերային առաջնություն վարում և հետընտրական վերլուծություն իրականացնող ընտրական մարմնի համար կարող է օգտակար լինել քաղաքացիական հասարակության գործընկերների ներգրավումն այդ գործերում: ՔՀԿ-ները կարող են այլընտրանքային տեսակետներ առաջարկել ընտրական գործընթացի կազմակերպման վերաբերյալ, ինչպես նաև օգտագործել տարբեր բնագավառների կանանց փորձն ու քաղաքական գրագիտությունը:

ՔՀԿ-ները կարող են նաև ուսումնասիրել կանանց մասնակցության որոշակի քաղաքական տարրեր, որոնց մասին հարցումն ընտրական մարմինների կողմից կարող է ոչ պատշաճ համարվել, օրինակ՝ ինչպես է կուսակցության քաղաքականությունն անդրադառնում կանանց վրա, կամ ինչպես են կին թեկնածուներն ընտրվում: ՔՀԿ-ների ներկայացուցիչները կարող են նաև ներգրավվել ընտրական գործընթացում որպես տեղական դիտորդներ կամ մասնակցել բռնության դեպքերի մոնիտորինգի ծրագրերին, և այդ դիտարկումների արդյունքների հիման վրա օգտակար առաջարկություններ ներկայացնել ընտրական մարմիններին: Օրինակ՝ Հարավային Աֆրիկայում ընտրական հանձնաժողովը աշխատում և համագործակցում է կանանց խմբերի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ, ինչպիսին է գենդերային հիմնահարցերի դիտարկմամբ զբաղվող Genderlinks-ը: Վերջինս

հավաքագրում է ընտրական ցուցակների վերաբերյալ տվյալներ, վերլուծում է լրատվամիջոցների կողմից կանանց և կուսակցությունների լուսաբանումը, կազմակերպում է աշխատաժողովներ կին թեկնածուների կամ հավակնորդների համար և հրապարակայնորեն դրվատանք (եթե արժանի են) կամ քննադատություն է հնչեցնում (եթե խախտվել են կանանց իրավունքները): Մեկ այլ օրինակ՝ Բուրունդիում 2010 թվականին մի շարք ՀԿ-ներ համագործակցեցին ընտրություններում բռնության դեպքերի մոնիտորինգի «Amatora Mu Mahoro» ծրագրի շրջանակներում: Ընտրություններում բռնության դեպքերի վերաբերյալ տվյալների տարանջատումն ըստ սեռի թույլ տվեց բացահայտել բուրունդյան կանանց շրջանում առավել հաճախ հանդիպող բռնության ձևերը:²⁰⁶

Վերջիվերջո, ԲՀԿ-ները կարող են արժեքավոր տեղեկատվություն և կարծիքներ ներկայացնել ընտրական մարմինն ընտրությունների պլանավորման, լոգիստիկայի և գործառնությունների հետ կապված հարցերում գեներալային հավասարության հայեցակետերը հաշվի առնելու վերաբերյալ: Ընտրական մարմինը կարող է ԲՀԿ-ների հետ երկխոսել՝ ընտրական գործընթա-

ցի հիմնական փուլերի մասին կարծիքներ ստանալու նպատակով, այդ թվում՝ ընտրողների գրանցման և քվեարկության օրվա կազմակերպման կամ ընտրողների իրազեկման նյութերի վերաբերյալ: Օրինակ՝ Թունիսում Ընտրությունների վերին անկախ ատյանը (ԸՎԱԱ), համագործակցելով կանանց կազմակերպությունների հետ, ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի աջակցությամբ 2011 թվականի հուլիսին քաղաքացիական հասարակության կազմակերպություններին հրավիրեց հանդիպման՝ ԲՀԿ-ների կողմից մշակված ընտրողների կրթման նյութերի բովանդակությունը վերանայելու և քաղաքացիական կրթության ընդհանուր հարթակ մշակելու նպատակով: Ներկայացված էին 21 միավորումներ և երեք ցանցեր, իսկ քննարկումները ծավալվեցին հավասարության, ընտրական իրավունքի և քվեարկության գաղտնիության վերաբերյալ ուղերձների շուրջ: Մասնակիցները վերահաստատեցին հասարակական կազմակերպությունների կարևոր դերը ընտրողների և քաղաքացիական կրթության ծրագրերում Ընտրությունների վերին անկախ ատյանին (ԸՎԱԱ) աջակցելու և օժանդակելու գործում:²⁰⁷




ԱՄՓՈՓՈՒՄ

- Ընտրական մարմինը պետք է ապահովի, որ բոլոր շահառուները հատկեն ընտրական օրենսգրքին, ինչպես նաև ստեղծի այնպիսի միջավայր, որը նպաստում է քաղաքական հայացքների փոխանակմանը և քաղաքականության մշակման գործում համագործակցությանը: Նման միջավայրին նպաստող լավ գործելակերպ է համարվում տարբեր գործընկերների և շահառուների հետ աշխատանքը, որոնց թվին են դասվում քաղաքական կուսակցությունները, զանգվածային լրատվության միջոցները (ՉԼՄ) և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները:
- Ընտրական մարմինը կարող է նաև մի շարք շահառուների մեկտեղել՝ կազմակերպելով համատեղ հանդիպումներ քաղաքական կուսակցությունների, ԶԻԿ-ների և համապատասխան պետական գերատեսչությունների մասնակցությամբ:
- Ընտրական մարմինները կարող են ներազդել ՉԼՄ-ների զգայունություն վրա՝ ընտրությունների ընթացքում գեներալային հինահարցերի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:
- Քաղաքացիական հասարակության հետ աշխատանքը նպաստել է կանանց ավելի լայն ցանցերի հաստատմանը և գեներալային հիմնահարցերի ոլորտում փորձն ընտրական մարմինների ուշադրության տիրույթ բերելուն:

Ընտրական մարմինները կարևոր դերակատարում ունեն
կանանց ընտրական և քաղաքական մասնակցության
գործում: Ընտրական մարմինը կարող է ներքին
կառուցվածքը և կազմակերպական ընթացակարգերը
ներդաշնակեցնել, որպեսզի ընտրությունների
անցկացման և առօրյա աշխատանքների ընթացքում այն
ունենա անհրաժեշտ կարողությունները և ռեսուրսները
իր գործունեության բոլոր փուլերում գեներային
քաղաքիչի ներառումն ապահովելու համար:

”



14 Ընտրողների իրազեկումը

Բացի ընտրությունների կազմակերպումից, ընտրական մարմիններին հաճախ վստահվում է ընտրական գործընթացն ընտրազանգվածին անկողմնակալորեն բացատրելու կարևոր գործն ու պատասխանատվությունը: Նրանց դերը կայանում է ոչ թե տարբեր քաղաքական կուսակցությունների և անկախ թեկնածուների գործողությունները, դրսևորումները կամ ծրագրերը բացատրելու կամ պաշտպանելու մեջ, այլ հասարակությանը կրթելու մեջ առ այն, թե ինչպես գրանցել, ինչպես ճիշտ լրացնել քվեաթերթիկը և ինչու է այս ժողովրդավարական գործընթացին մասնակցելը կարևոր:

Նման կրթական գործընթացը, որը հայտնի է որպես ընտրողների իրազեկում, կարելի է բաժանել երկու հիմնական տեսակի.²¹¹

- **Ընտրողների կրթումը** սովորաբար վերաբերում է ընտրողների շահագրգռվածությանն ու ընտրություններին լիարժեք մասնակցելու պատրաստակամությանը: Այն ներառում է ընտրություններին մասնակցելու համար ընտրողներին անհրաժեշտ հիմնական տեղեկատվության տրամադրումը՝ ներառյալ ընտրության օրը, ժամը և վայրը, ընտրությունների տեսակը, քվեարկության իրավունքի հաստատման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, գրանցման պահանջները և քվեարկության կարգը:
- **Քաղաքացիական կրթությունն** առնչվում է ժողովրդավարական հասարակության ամրապնդմանն ուղղված ավելի լայն հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ քաղաքացիների, կառավարության, քաղաքական և հատուկ շահերի, զանգվածային լրատվության միջոցների, բիզնեսի և շահույթ չհետապնդող ոլորտների համապատասխան դերերն ու պարտականությունները, ինչպես նաև կանոնավոր և մրցակցային ընտրությունների կարևորությունը: Իդեալական պայմաններում այն պետք է իրականացվի շարունակական կամ երկարաժամկետ հեռանկարով:

Թեև ընտրողների իրազեկման ծրագրերն, ընդհանուր առմամբ, հասցեագրվում են պոտենցիալ ընտրողներին, բազմաթիվ երկրներում մշակվում և իրականացվում են թիրախավորված ծրագրեր որոշակի խմբերի համար, ինչպիսիք են՝ երիտասարդ կանայք և բնիկ ժո-

ղովուրդները:

Ընտրողների իրազեկման բոլոր ծրագրերի պլանավորումը և մշակումը տեղի է ունենում նախընտրական շրջանում կամ որոշ դեպքերում ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում, հատկապես, եթե անհրաժեշտ է թարմացնել ընտրողների ցուցակները: Որոշակի գործընթացին մասնակցելու վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպիսին է գրանցումը կամ գրանցման վայրը փոխելը, պետք է տրամադրվի բուն իրադարձությունից մի քանի շաբաթ առաջ: Մյուս կողմից, ավելի լայնածավալ և մանրամասն տեղեկվությամբ քաղաքացիական կրթությունը պետք է հասանելի դարձնել ավելի երկարաժամկետ ձևաչափով՝ սովորաբար ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում:

Այս բաժինն անդրադառնում է կանանց մասնակցությունը խթանող ընտրողների իրազեկման ծրագրերի իրականացման գործում ընտրական մարմինների առաջավոր փորձին: Որպես հիմք կարող է ծառայել ռազմավարությունը կամ հաղորդակցության քաղաքականությունը, որտեղ նշվում են հետևողականորեն տարածման ենթակա հիմնական ուղերձները, և որը թիրախավորում է համապատասխան միջոցառումներն՝ ուղղված հատուկ խմբերին, ինչպիսիք են՝ կանայք, երիտասարդները և տղամարդիկ:

14.1. Իրազեկման ռազմավարությունն ու քաղաքականությունը

Ընտրական մարմնի որդեգրած քաղաքականությունը կամ ռազմավարական պլանը կարող է ներառել ընտրողների իրազեկման ծրագրի ընդհանուր նպատակնե-

րը: Ավելի մանրամասն պլանավորվող նպատակները կարող են տեղ գտնել հաղորդակցության կամ իրազեկման քաղաքականության մեջ: Եթե նախատեսվում են բազմակի տեղեկատվական կամ կրթական արշավներ, օրինակ՝ գրանցման և քվեարկության կարգի կամ կանանց և երիտասարդների մասնակցության խթանման վերաբերյալ, ապա լավ գործելակերպ կարող է համարվել ընդհանուր հաղորդակցության ռազմավարություն ստեղծումը, որը թույլ կտա ապահովել տարբեր արշավների փոխլրացնող բնույթը:

Կանանց՝ որպես ընտրողների ուղղված իրազեկման ծրագրերի և քաղաքականությունների մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Մալավի.** 2009 թվականի ընտրությունների երկարամյակ տպագրված պլանավորումն ընդգրկում էր ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում քաղաքացիական և ընտրողների կրթման ծրագիրը, որը միտված էր ընտրողներին իրազեկել և շահագրգռել ընտրություններին ինքնակամ մասնակցելու հարցում: Ծրագրի նպատակն էր ստեղծել ժողովրդավարական ընտրությունների սկզբունքներին ու գործելակերպին աջակցելու մշակույթ: Նպատակներից էր նաև կանանց և երիտասարդներին որպես թիրախային խմբեր դիտարկելն էր:²³³
- **Նեպալ:** 2007 և 2013 թվականների ընտրողների կրթման քաղաքականության մեջ նշվում էր, որ «ընտրողների կրթման ծրագիրը մշակելիս պետք է հաշվի առնել մարգինալացված խմբերի թիրախավորումը»: Այն նաև պարունակում էր մի շարք դրույթներ գենդերային հավասարության և սոցիալական ներառման վերաբերյալ, ինչպիսիք են՝ մշակել և ընտրողների կրթման ծրագրում ներառնել համապատասխանեցված ուղերձներ ըստ լսարանի տեսակի, ինչպես նաև հավաքագրել աշխատուժ տարբեր ոլորտներից՝ գենդերային և սոցիալական հիմնահարցերին արձագանքելու զգայունությունը բարձրացնելու նպատակով: Նեպալի Ընտրական հանձնաժողովը առանձնահատուկ կարևորության է արժանացրել ընտրողների կրթման այն միջոցառումները, որոնք ուղղված են կանանց մասնակցության և տեղեկացվածության խթանմանը: Այս ջանքերի շնորհիվ, 2013 թվականի ընտրություններում կանանց՝ որպես ընտրողների մասնակցությունը բարձր էր:²³⁴
- **Պակիստան:** Ընտրողների կրթման վերաբերյալ գործողությունների ծրագիրը ներառում է նախ-

Գործընկերություն և շահառուների հետ

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները, քաղաքական կուսակցությունները և ԶԼՄ-ներն իրենց մասնակցությունն են ունենում ընտրողների իրազեկման տարատեսակ ձևերին: Այս խմբերից շատերը լավ ծանոթ են կանանց և համայնքներին երկրի մասշտաբով: Ընտրական մարմինները կարող են սերտորեն համագործակցել այդ կազմակերպությունների հետ, որպեսզի ճիշտ ուղերձներ հաղորդվեն ընտրազանգվածին: Ընտրողների ընդհանուր իրազեկման ծրագիրը նույն-

- նական հետազոտության իրականացում՝ «ընտրություններին մասնակցության ցուցանիշները պարզելու համար», այդ թվում՝ կանանց մասնակցության, ինչպես նաև «մասնակցության և ընտրական գործընթացի վերաբերյալ գիտելիքների վրա ազդող գործոնները բացահայտելու նպատակով»: Արդյունքները կօգտագործվեն ընտրողների կրթման ռազմավարության մշակման համար:²³⁵
- **Հարավային Աֆրիկա.** 2009 թվականի ընտրություններին ընդառաջ քաղաքացիական և ընտրողների կրթման քաղաքականությունը ստացավ թիրախային ձևաչափ, որպեսզի ընդհանուր կրթական ծրագրերից հաճախ դուրս մնացող խմբերը նույնպես ներառվեն: Թիրախային խմբերից մեկը կանայք էին:²³⁶
- **Թունիս.** Ընտրական մարմինը մեծ ուշադրություն էր դարձնում գենդերային բաղադրիչի ներառման արտաքին շահառուների իրազեկման գործընթացներում, որոնք ուղղված էին ընտրություններում ավելի մեծ քաղաքացիական ներգրավվածության ապահովմանը գենդերային հավասարության տեսանկյունից: Առաջնային նպատակն էր բարձրացնել ԲՀԿ-ներից ստացվող տեղեկատվության մատչելիությունը Ընտրությունների վերին անկախ ատյանի (ԸՎԱԱ) սահմանած ընթացակարգերի վերաբերյալ՝ ներդաշնակեցնելով իրազեկման գործիքների բովանդակությունը և ապահովելով դրանց համապատասխանությունը ԸՎԱԱ-ի կողմից սահմանված ընթացակարգերին և, վերջապես, բարձրացնելով ԲՀԿ-ների տեղեկացվածությունն ընտրողների իրազեկելու իրենց դերի մասին:²³⁷
- **Արևելյան Թիմոր.** Ընտրական մարմինները կազմակերպում և իրականացնում են համապարփակ ու լայնածավալ ընտրողների կրթության, քաղաքացիական կրթության և իրազեկման արշավներ՝ ուղղված կանանց մասնակցության և տեղեկացվածության խթանմանը:²³⁸

պես լավ գործելակերպ է ՔՀԿ-ների հետ համագործակցելիս, քանի որ այն ծառայում է որպես գլխավոր պլան և բոլոր գործողությունների, դրանց բովանդակության, աշխարհագրական ծածկույթի և փմյանց հետ փոխադարձ կապի քարտեզագրման գործիք:

ՔՀԿ-ները կարող են օգտվել ընտրական մարմնի ստեղծած նյութերից կամ, ընտրական մարմնի հետ սերտորեն համագործակցելով, ինքնուրույն մշակել կրթական նյութեր: Որոշ դեպքերում, երբ հնուտ քաղաքացիական հասարակության խմբերը մասնագիտանում են հանրության լայն զանգվածի կրթման հարցում, ընտրական մարմինը կարող է համատեղ աշխատել նյութերի ստեղծման վրա կամ ՔՀԿ-ի կողմից մշակված նյութերն օգտագործել: Այլ կազմակերպությունների կողմից ստեղծած նյութերի ճշգրտությունը ստուգելով և հիմնական գրաֆիկական լուծումներով ու նկարագրություններով փոխանակվելով՝ ընտրական մարմինը կարող է օգնել, որպեսզի ընտրողներին տրամադրվի հետևողական, ճշգրիտ տեղեկատվություն:

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 27-ը (77%-ը) նշել են, որ իրականացրել են «իրազեկման արշավներ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բելառուսը, Բենինը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կոստա Ռիկան, Մոնղոլիան, Մալթան, Նամիբիան, Պաղեստինը, Պակիստանը, Կոնգոյի Հանրապետությունը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան և Ուգանդան:

14.2. Ուղերձների ձևակերպումը

Ընտրողների իրազեկման արդյունավետ արշավն ունենում է շատ հստակ ուղերձ, որը հետևողականորեն մատուցվում է տարբեր ձևերով: Ընտրական շրջանում ընտրողներին հասցեագրված ուղերձները պետք է բացատրեն քվեարկության կարգը և խրախուսեն ընտրողներին, որպեսզի նրանք գնան ու քվեարկեն: Ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում իրազեկող ուղերձները կարող են կենտրոնանալ ավելի լայնիմաստ ուղերձների վրա, որոնք վերաբերում են ժողովրդավարական գործընթացներին, ընտրություններին որպես ընտրողներ և թեկնածուներ մասնակցությանը և կանանց քաղաքական մասնակցության խթանմանը:

Ընտրողների համար տեղեկատվական և կրթական նյութեր ստեղծելիս պետք է խուսափել ենթագիտակցական ուղերձներից: Օրինակ՝ միայն արական սեռի ներկայացուցիչներ պատկերող պատկերը կարող է ուղերձ հղել, որ միայն տղամարդիկ են իրավասու քվեարկել: Տեղեկատվական և կրթական նյութերը պետք է պատ-

կերեն բոլոր տարիքի կանանց, ովքեր հանդես են գալիս տարբեր դերերում՝ որպես գրանցող անձնակազմ և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ, որպես դիտորդներ և անվտանգության աշխատակիցներ, որպես լիազոր ներկայացուցիչներ և ընտրողներ: Վատ կամ ոչ պատշաճ կազմված պատասխանները, որոնք միտված են տեղամասային կենտրոնների շուրջ անվտանգության վերաբերյալ ուղերձ հաղորդելուն, կարող են հակառակ ազդեցությունն ունենալ և հիասթափեցնել ընտրողներին, ովքեր վախենում են բռնությունից: Ծանրաբեռնված և բարդ բառապաշարով արտահայտված կարգախոսները գանգվածային մասնակցություն հրահրելու փոխարեն կարող են վախեցնել ընտրողներին, ում համար գործընթացը շատ բարդ կարող է թվալ: Ընտրողների կրթումը բազմալեզու և բազմամշակութային հասարակություններում պետք է արտացոլի ազգային բազմազանությունը և չխոչընդոտի այս կամ այն խմբի մասնակցությանը: Անցանկալի ուղերձների հաղորդումից խուսափելու նպատակով ընտրողների իրազեկման համար օգտագործվող լեզուն և պատկերները հաճախ ստուգվում են փորձնական ծրագրերի միջոցով և վերանայվում են նախքան ազգաբնակչությանը ներկայացվելը:

Գեներային իրավահավասարության տեսանկյունից կան երկու կարևորագույն ուղերձներ, որոնք պետք է հաղորդվեն. առաջինն այն է, որ կանայք իրավունք ունեն քվեարկելու և մասնակցելու ընտրություններին, և որ նրանց մասնակցությունը հաճախ ունի խրախուսման կարիք, և երկրորդը՝ քվեարկությունը գաղտնի է, և ոչ ոք չպետք է իմանա, թե ում օգտին է քվեարկվել ընտրողը:

Կանանց մասնակցության իրավունքը

Կանանց և յուրաքանչյուր քաղաքացու մասնակցության խթանումը կարևոր ուղերձ է բոլոր առումներով: Մի շարք կայացած ժողովրդավարական հասարակարգերում ընտրություններին մասնակցության ցուցանիշները նվազում են, և շատ ընտրական մարմիններ իրականացնում են ընտրողների իրազեկման ծրագրեր՝ ուղղված մասնակցության խթանմանը: Ավելի նոր ժողովրդավարական հասարակարգերում որոշ խմբերին հարկավոր է հիշեցնել, որ իրենք կարող են մասնակցել ընտրություններին կամ իրենց դիրքորոշումն արտահայտել: Բոլոր համատեքստերում քարոզարշավի ընթացքում օգտագործվող ուղերձները կարող են մշակվել այնպես, որ հստակորեն հասցեագրեն կանանց հիմնահարցերը: Ընտրական մարմնի և ՔՀԿ-ի համատեղ նախաձեռնությունների մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Բենին.** Ընտրական մարմինը տարածեց ուղերձներ՝ ուղղված կանանց մասնակցության ակտիվացմանը. «Կանայք խորհրդարանում»: Կանայք համայնքային խորհուրդներում: Վեր կացեք, Բենինի կանայք, ձեր ժամանակն է եկել: Դուք պետք եք ազգին»:

- **Բուրունդի.** «Քվեարկե՛ք և ընտրվե՛ք» քարոզարշավի շրջանակում շուրջ 260 կին ամբողջ երկրի մասշտաբով աշխատում և այլ կանանց ուսուցանում էին գրանցման և քվեարկության կարգը, ինչպես նաև աջակցում էին կին թեկնածուներին իրենց քարոզարշավները մշակելու հարցում:²¹²
- **Լիբանան.** «Օգտագործե՛ք ձեր ձայնը» համազգային մեդիա արշավի նպատակն էր խթանել կանանց մասնակցությանն ընտրական գործընթացին: Արշավում ներգրավված էին հինգ հեղինակավոր լիբանանցի կանայք, ովքեր հայտնվում էին հեռուստատեսությամբ, ռադիոյով, հասարակական տրանսպորտի և վահանակներ վրա արտապատկերվող գովազդներում»: Ակցիան կազմակերպել էր Ազգային ժողովրդավարական ինստիտուտը և Լիբանանի՝ Ժողովրդավարական ընտրությունների ասոցիացիան:²¹³
- **Մարշայան կղզիներ.** Մարշայան կղզիներում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպությունը՝ «Միավորված կանայք Մարշայան կղզիներում», իրականացրեց ընտրողների կրթական ծրագիր, որը միավորվեց քաղաքական հզորացմանը: Աշխատաժողովների ընթացքում անդրադարձ կատարվեց ժողովրդավարության և ներկայացուցչական կառավարության հայեցակարգերին, ինչպես նաև գրանցման կարգին և քվեարկության գաղտնիությունը:²¹⁴

Թիրախավորված ուղերձները՝ ուղղված կին ընտրողներին, արդյունավետ են եղել տարբեր համատեքստերում:

Նեպալում ընտրողների գրանցման գործընթացը պատկերող տեղեկատվական նյութեր:



Նկարը սրբանադրվել է Նեպալի Ընտրական հանձնաժողովի կողմից:

րում: 2009 թվականին Ինդոնեզիայում նման ուղերձների միջոցով ավելի քան 2 միլիոն նոր ընտրող կանայք իրագրեցվեցին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, իսկ 2011 թվականին, այս հաջողությունից ոգեշնչված, քաղաքացիական կրթության բյուջեի 50%-ը հատկացվեց կանանց թիախավորող ուղերձների մշակմանն ու հաղորդմանը: 2009 թվականին Իրաքում թիրախավորված ուղերձները նպաստեցին կանանց մասնակցության ավելացմանը՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում այդ ցուցանիշը հասցնելով մինչև 45%-ի:

Կանայք ակտիվ դերերում պատկերված

Իրագրեցման ուղերձներում և նկարներում հատկանշական է, որ կանայք պատկերվեն ակտիվ դերերում որպես ընտրողներ, թեկնածուներ և ընտրական անձնակազմ: Նուրբ մանրամասները կարող են կարևոր լինել. օրինակ՝ տղամարդկանց հետևում կանգնած կանանց պատկերելը կարող է տպավորություն ստեղծել, թե կանայք հետևում են տղամարդկանց, այլ ոչ թե ակտիվորեն և ինքնակամ քվեարկում են: Ընտրողների իրագրեցման որոշ օրինակներ, որոնք դրսևորում են կանանց դրական տեսանկյունից և ակտիվ դերերում, բերված են ստորև.

- **Քենիա.** Ընտրողների տեղեկատվական պաստառները պատկերում են կին ընտրողի և տեղամասային ընտրական հանձնաժողովի կին անդամի: Որոշ պաստառներ ընտրողների հեղթում պատկերում են երեխայի հետ մի կնոջ և տարբեր տեսակի ազգային

զգեստներով կանանց, այդ թվում՝ գլխաշորով կանանց:²¹⁵

- **Նեպալ:** ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) աջակցությամբ՝ Նեպալի Ընտրական հանձնաժողովի կողմից ստեղծված ընտրողների իրազեկման նյութերը գրանցման գործընթացում կանանց պատկերում են ակտիվ դերերում: Ընտրական համակարգերի միջազգային հաստատությունը և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը աջակցություն են ցուցաբերել Նեպալի Ընտրական հանձնաժողովին, որպեսզի ապահովվի նոր իրազեկման նյութերի գենդերային զգայունությունը:
- **Արևելյան Թիմոր.** 2009-2012 թվականների ընթացքում անցկացված վերջին չորս ընտրություններում

կանանց մասնակցությունը խթանելու նպատակով ստեղծվել են հատուկ տեղեկատվական նյութեր և կազմակերպվել են տարբեր միջոցառումներ: Ինչպես նաև, Ընտրությունների կազմակերպման տեխնիկական քարտուղարությունը (ԸԿՏՔ) և ՄԱԿ-ի ընտրական գործընթացների աջակցության թիմը (ԸԳԱԹ) նախաձեռնել են արշավ՝ ընդգծելով կանանց դերը որպես ոգեշնչման օրինակներ:²¹⁶

Քվեի գաղտնիությունը

Կարևոր է հստակ ուղերձներ հասցնել կանանց և տղամարդկանց այն մասին, որ կանայք ունեն քվեարկության ժամանակ սեփական կամքը դրսևորելու իրավունք և ընդգծել քվեարկության գաղտնիության իրավունքը հատկապես այն դեպքում, երբ ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը տարածված բնույթ է կրում: (տե՛ս

Ընտրողների իրազեկման որոշ օրինակներ, որոնք միտված են մշակութային փոփոխություններին և ուղղորդված (ընտանեկան) քվեարկության դեմ պայքարին, բերված են ստորև.

- Ալբանիա. Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և Կանանց ազգային հարթակի կողմից մշակված ուղերձներն այն մասին, որ կանայք իրավունք ունեն քվեարկելու իրենց նախընտրած թեկնածուի օգտին, հաղորդվում էին հումորային հեռուստատեսային գովազդների տեսքով:²¹⁹ ԿԸՀ-ն մի շարք միջոցներ է ձեռնարկել ուղղորդված (ընտանեկան) քվեարկության կանխարգելման համար: Հատկապես գյուղական վայրերում նկատվում է կանանց իրավունքների, գենդերային հավասարության և կանանց քաղաքական իրավունքների մասին իրազեկվածության բարձրացման կարիք: Ընտրողների կրթական արշավները, որոնք կանանց համար հստակ ուղերձներ են պարունակում, իրականացվում են ԿԸՀ-ի կողմից ԶԼՄ-ների միջոցով (հեռուստատեսություն և թերթեր):²⁴⁰
- **Մոլդովա.** 2011 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում ԿԸՀ-ն նպատակ ուներ խթանելու կանանց մասնակցությունը որպես ընտրողներ և թեկնածուներ՝ ընդգծելով, որ ոչ հեռու անցյալում կանայք չունեին քվեարկելու կամ ընտրվելու իրավունք և, հետևաբար, Մոլդովացի կանանց քաղաքական իրավունքների արժեքը չպետք է թերագնահատել: Պատրաստվեց տեսահոլովակ, որը հիշեցնում էր ունկնդիրներին այլ երկրներում տեղի ունեցած մշակութային փոփոխության գործըն-

թացի մասին. «Արդյո՞ք գիտեք, որ Նոր Զելանդիան աշխարհում առաջին երկիրն է, որը 1893 թվականին կանանց քվեարկելու իրավունք տվեց» և «Արդյո՞ք գիտեք, որ առաջին կին քաղաքապետն ընտրվել է 1887 թվականին ԱՄՆ-ում»:

- **Նախկինում Հարավսլավական համադաշնության մաս կազմող Մակեդոնիայի Հանրապետություն.** Խորհրդարանական ընտրություններին ընդառաջ իրականացվեցին ընտանեկան քվեարկության դեմ պայքարի կրթական ծրագրեր՝ «Մեկ ընտրող, մեկ ձայն» և «Ես իրավունք ունեմ քվեարկելու»: ՄԱԶԾ-ի կողմից իրականացվող այս ծրագրերն ուղղված էին ուղղորդված (ընտանեկան) քվեարկության հարցը քաղաքական օրակարգ մտցնելուն և խնդրի վերաբերյալ ընտրողների իրազեկվածությունը բարձրացնելուն:²⁴¹
- **Հարավային Աֆրիկա.** «Black Sash» կազմակերպությունն իրականացրեց միայն կանանց համար նախատեսված աշխտաժողովներ, որոնք ընդգրկում էին քննարկումներ «քվեարկության ժամանակ տղամարդկանց կողմից կանանց վրա ազդելու նպատակով կիրառվող ահաբեկման մեթոդների վերաբերյալ», որպեսզի հետագայում կանայք զերծ մնան նման ահաբեկումից:²⁴²
- **Վանուատու:** Շատ կանայք, ովքեր մասնակցություն ունեցան աշխատաժողովներին, նշում էին, որ «նախկինում չեն գիտակցել, որ կարող են քվեարկել իրենց ամուսնու և ղեկավարի ուղղորդումից անկախ, կամ որ իրենց ձայնը գաղտնի է»:²⁴³ Համապատասխանաբար մշակվել էր ընտրողների կրթման ծրագիր:

10-րդ բաժինը)

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 28-ը (80%-ը) նշել են, որ նրանք «կրթել են հանրությանը քվեի գաղտնիության և ընտանեկան քվեարկության դեմ պայքարի վերաբերյալ»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բելառուսը, Բենինը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կոնգոն, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Եգիպտոսը, Եթովպիան, Իրաքը, Ղազախստանը, Ղրղզստանը, Լիբանանը, Լետտոն, Մադագասկարը, Մալդիվները, Մոլդովան, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Պակիստանը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան, Ուգանդան և Ուզբեկստանը:

Մշակութային նորմերը կարող են առաջ քաշել որոշակի առասպելներ, որոնք օգտագործվում են քվեարկությունից կանանց հետ պահելու նպատակով: Եթե ընտրական մարմինն այդ մասին տեղյակ է լինում, ապա կարևոր է հակազդել առասպելներին ճշգրիտ տեղեկատվության տարածմամբ և խթանել կանանց մասնակցությունը: Դրական է Գանայի օրինակը, որտեղ ընտրողներին ուղղված տեղեկատվական ուղերձները ցրեցին քվեարկության գործընթացի մասին հայտնի առասպելը: Շատերը կարծում էին, որ կարդալու և գրելու կարողությունը քվեարկության իրավունք ստանալու պահանջ էր: Այդ համոզմունքը փոխելու նպատակով նախաձեռնված ընտրողների իրազեկման արշավը հստակորեն սահմանում էր, որ գրանցման համար պատասխանատու անձնակազմը համապատասխան հարցադրումներից հետո կլրացնի ձևը ոչ գրագետ ընտրողների համար:²¹⁷

14.3. Թիրախային լսարանները

Ընտրողների իրազեկումը կարող է թիրախավորել քվեարկելու իրավասու բնակչության մեծ մասին կամ հարմարեցվել որոշակի խմբերի: Երբ ընտրողների իրազեկման ծրագիրն, ընդհանուր առմամբ, ուղղված է բնակչությանը, կարևոր է, որպեսզի գենդերային հավասարությանն առնչվող նկատառումները ներառվեն ուղերձների և դրանց տարածման գործընթացի մեջ: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ հարցվողների միայն կեսն է նշել, որ «ներառել է գենդերային բաղադրիչն ընտրողներին ուղղված տեղեկատվության մեջ»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Գանան, Իրաքը, Ղազախստանը, Լետտոն, Մադագասկարը, Մալավին, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Պակիստանը, Հարավային Աֆրիկան և Տանզանիան:

Երբ ընտրողների իրազեկումը հասցեագրված է կանանց, ապա որպես թիրախ կարող են դիտարկվել քվեարկության տարիքը բոլորած բոլոր կանայք կամ կանանց որևէ խումբ, որը սահմանվում է ըստ գտնվելու վայրի, տարիքի կամ այլ հանգամանքների, ինչպիսիք են՝ գյուղական շրջաններում ապրող կանայք կամ երիտասարդ կանայք: Որոշ խնդիրների պարագայում, օրինակ, երբ կանայք չպետք է քվեարկեն կամ ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը ընդունելի գործելակերպ է, ուղերձները պետք է ուղղված լինեն ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց: Ընտրողների իրազեկումը կարող է ուղղված լինել նաև առաջին անգամ ընտրողների և «ապագա» ընտրողների կրթմանը՝ թիրախավորելով կրթական հաստատությունները: Իրազեկման այս ձևը կարող է միտված լինել առաջին անգամ ընտրողներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կրթելուն, գործընթացը բացատրելուն կամ նրանց գրանցմանն աջակցելուն: Երիտասարդների իրազեկումը նպատակ ունի բարձրացնելու երեխաների և դեռահասների զգայունությունը ժողովրդավարության մասնակցային հիմունքների վերաբերյալ, որպեսզի նպաստի նրանց հետագա ակտիվ մասնակցությանը ընտրական գործընթացներին:

Կանայք որպես թիրախային խումբ

Երբ նպատակն ավելի մեծ թվով կանանց մասնակցության խթանումն է, ապա ընտրողների իրազեկման թիրախում բացառապես կանայք են, և ուղերձները նույնպես հասցեագրված են նրանց: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 19-ը (54%-ը) նշել են, որ իրականացրել են «կին ընտրողներին ուղղված կրթական արշավ»: Այդ երկրներն են՝ Հայաստանը, Բենինը, Բոսնիա և Հերցեգովինան, Կենտրոնական Աֆրիկան, Դեմոկրատական Հանրապետությունը, Եգիպտոսը, Գանան, Իրաքը, Լիբանանը, Լետտոն, Մադագասկարը, Մալավին, Մոլդովան, Մոզամբիկը, Պաղեստինը, Պակիստանը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան և Ուգանդան: Պապուա Նոր Գվինեայում 2012 թվականի ընտրություններից առաջ կազմակերպվել էին ընտրողների իրազեկվածության բարձրացմանն ուղղված առանձին ֆոկուս խմբային քննարկումներ կանանց և տղամարդկանց համար:²¹⁸

Միջազգային գործընկերներն ու ԲՀԿ-ները նույնպես իրականացրել են կանանց թիրախավորող իրազեկման միջոցառումներ:

- **Տանզանիա.** ՄԱԶԾ-ի՝ ընտրողների կրթման ծրագրի բաղադրիչներից էր կանանց գրանցման խթանումը ուղիղ ուղերձների, թերթերում գովազդների և թոռցիկների միջոցով: «Կանայք և ընտրությունները 2010» գրքույկը խրախուսում էր կանանց մասնակցու-

Քաղաքացիական կրթությունը ուսումնական հաստատություններում

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 22-ը (63%-ը) նշել են, որ ձեռնամուխ են եղել «քաղաքացիական կրթության իրականացմանը ուսումնական հաստատություններում»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բելառուսը, Բոսնիա և Հերցեգովինան, Կանադան, Կենտրոնաֆրիկյան Հանրապետությունը, Կոստա Ռիկան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Եթովպիան, Վրաստանը, Գանան, Ղազախստանը, Ղրղզստանը, Մալավին, Մալդիվները, Մոլդովան, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Ռումինիան, Հարավային Աֆրիկան և Ուգանդան:

Մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Բոսնիա և Հերցեգովինա.** 2010 թվականի ընտրություններին ընդառաջ Հանձնաժողովն առաջին անգամ դպրոցներում ներկայացրեց քաղաքացիական կրթությունը: (այց կատարվեց շուրջ 40 դպրոցներ քվեարկության կարևորության մասին իրազեկվածության բարձրացման ծրագրի շրջանակներում): Ծրագիրն իրականացվել էր Բոսնիա և Հերցեգովինայում ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմինների ասոցիացիայի հետ համագործակցությամբ:²⁴⁴
- **Կոստա Ռիկա.** Վերապատրաստման դասընթացները տեղի են ունենում դպրոցներում, քոլեջներում և համալսարաններում: Քաղաքացիական կրթությունը ներառում է ոչ միայն քվեարկությանը, այլև ժողովրդավարական արժեքներին, ակտիվ քաղաքացիությանը և ընտրողների մասնակցությանը վերաբերող թեմաներ:
- **Վրաստան.** Քաղաքացիական կրթության ծրագրի նպատակն էր «բարձրացնել ուսանողների իրազեկվածությունն ընտրությունների, իրանց քաղաքացիական իրավունքների և պարտականությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցել աշակերտներին դպրոցներում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ կազմակերպելու և անցկացնելու հարցում»:
- **Եթովպիա և Հարավային Աֆրիկա.** Քաղաքացիական կրթությունը ներմուծվել է դպրոցների ուսումնական ծրագիր:
- **Արևելյան Թիմոր.** 2012 թվականի համապետական ընտրությունների ժամանակ ընտրական մարմինը (ՄԱԿԸԳԱԹ-ի, ՄԱԶԾ-ի և ՅՈՒՆԻՍԵֆ-ի աջակցությամբ) մշակել է համազգային տեղեկատվական արշավներ՝ ուղղված երիտասարդների և առաջին անգամ ընտրողների շրջանում իրազեկվածության բարձրացմանը:²⁴⁵

թյունը որպես թեկնածուներ և ընտրողներ: Գրքույկը հիշեցնում էր կանանց իրենց նախընտրելի թեկնածուի օգտին քվեարկելու իրավունքի մասին: Գրքույկում նաև գետեղված էր տեղեկություն այն մասին, որ հղի կանայք, կերակրող մայրերը, հաշմանդամություն ունեցող կանայք և տարեցներն ընտրության օրը իրավասու են ստանալ արտոնյալ սպասարկում: Կանանց մասնակցությունը խթանող ուղերձները պարբերաբար տարածվում էին հեռուստատեսությամբ, ռադիոյով, թերթերի և պատաստների միջոցով:²⁴⁹

- **Սուդան.** 2010 թվականի ընտրությունների ժամանակ կանանց ակտիվ մասնակցությունն ապահովելու նպատակով մշակվել և իրականացվել են կանանց՝ որպես ընտրողներ և որպես թեկնածուներ թիրախավորող իրազեկման ծրագրեր: ՔՀԿ-ների և ՄԱԿ-Կանայք կառույցի համագործակցությունը նպատակ ուներ համայնքների կին ղեկավարներին գեներալային զգայուն ուղերձներ հղելու հնարավորություն ուսուցանել: Հաղորդակցության նախարարության աջակցությամբ կանանց ուղղված հատուկ մեդիա արշավ մեկնարկեց: Համագործակցելով ՄԱԿ-ի կանանց հետ՝ ՄԱԶԾ-ի ընտրական ծրագիրը նույնպես աջակցություն ցուցաբերեց քաղաքացիական կրթության մեդիա արշավին, որը թիրախավորում էր ապագա ընտրողներին և ուղղված էր կանանց առաջադրման խրախուսմանը:

Միայն կանանց համար նախատեսված դասերը կամ դասընթացները կարող են արդյունավետ լինել որոշակի համատեքստերում: Նման դասընթացների նպատակն է կանանց համար «անվտանգ տարածություն» ապահովելը, որտեղ նրանք կկարողանան բարձրաձայնել իրենց մտահոգությունները և հարցերն առանց բազմակազմ խմբերին բնորոշ ճնշումների ենթարկվելու: Նման դասընթացների ժամանակ կին դասընթացավարներ ունենալը կարող է նպաստել կրթական միջավայրի ստեղծմանը: Այն երկրներում, որտեղ գեներալային հիմնահարցերին առնչվող խախտումներն իսկապես խնդիր են համարվում, այդ թվում՝ ուղղորդված (ընտանեկան) քվեարկության բարձր մակարդակը կամ ընտրություններում կանանց նկատմամբ բռնությունը, կարող է նկատվել միայն կանանց համար նախատեսված դասընթացների անհրաժեշտություն:

Օրինակ, եթե ուղղորդված (ընտանեկան) քվեարկության դեպքերը հաճախակի բնույթ են կրում, ապա միայն կանանց մասնակցությամբ քննարկումների կազմակերպումը և կանանց՝ սեփական նախապատվությամբ քվեարկելու իրավունքի մասին տեղեկատվությունը, հավանաբար, ավելի արդյունավետ կլինեն: Ընտրողների իրազեկման դասընթացները, որոնք ուղղված են կանանց ձևավորված խմբերին կամավորական կազ-

մակերպությունների, ասոցիացիաների և ակումբների տեսքով, առանձին վերապատրաստման դասընթացներին չհաճախող մեծաքանակ կանանց տեղեկատվություն հասցնելու լավ միջոց են: Միայն կանանց համար նախատեսված դասընթացների մի քանի օրինակներ բերված են ստորև:

Ուսանողները որպես թիրախ

Շատ երկրներում ուսանողները թիրախավորվում են քաղաքացիական և ընտրողների կրթման ուսումնական ծրագրի մաս դարձնելու միջոցով: Բազմաթիվ երկրներում երիտասարդ ընտրողների թիվը ավելի քիչ է, քան մեծահասակ ընտրողներինը, և նրանց՝ ընտրություններին մասնակցելու հավանականությունն ավելի քիչ է: Ընտրողների իրազեկումը դպրոցներում երիտասարդ տարիքից քաղաքացիական ներգրավվածությունը խթանելու միջոցներից մեկն է:

Կանանց մասնակցության խթանման նպատակով տղամարդկանց թիրախավորում

Այն երկրներում, որտեղ առկա են կանանց մասնակցությանը խոչընդոտող մշակութային կամ հասարակական նորմեր, կարող է նկատվել տղամարդկանց և արական սեռի համայնքային ղեկավարներին թիրախավորելու անհրաժեշտություն: Եթե ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը խնդիր է, ապա գուցե պետք է տղամարդկանց իրազեկել կանանց՝ անկախ քաղաքական որոշումներ կայացնելու և սեփական ընտրությունը կատարելու իրավունքի մասին: Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 13-ը (37%-ը) նշել են, որ իրականացրել են գենդերային զգայուն «ընտրողների կրթման միջոցառումներ տղամարդկանց համար»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բենինը, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Եգիպտոսը, Եթովպիան, Մադագասկարը, Մոզամբիկը, Պաղեստինը, Պակիստանը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան և Ուգանդան:

Բացի այդ, արական սեռի դասընթացավարների հետ համագործակցելը և ուղերձների հիմնական բովանդակությունը հաղորդելը կարող է արդյունավետ լինել: Տղամարդկանց իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Աֆղանստան.** Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները տեղեկատվություն են տրամադրել ավագանու անդամներին և ցեղային առաջնորդներին մշակութային առումով զգայուն գրանցման և քվեարկության ընթացակարգերի մասին, ինչպես նաև ուղերձ են հղել այն մասին, որ կանայք պետք է մասնակցեն ընտրություններին և ինքնուրույն քվեարկեն: Միայն տղամարդկանց հա-

մար նախատեսված հանդիպումների ժամանակ ուղերձներ են տարածվել խնդրանքով, որ տղամարդիկ իրենց ընտանիքներում ապրող կանանց հաղորդեն դրանք:²²⁰ Այդ ուղերձները ներառում էին այնպիսի կարգախոսներ, ինչպիսիք են՝ «Եղբայրներ, քվեարկությանը մասնակցող կանայք Աֆղանստանի ապագայի համար նույնքան արժեքավոր են, որքան դուք» և «Կանայք մեր երկրի քաղաքացիներն են, և նրանք

Ռադիոյով ուղերձների տարածման մի քանի օրինակներ բերված են ստորև.

- **Հորդանան:** ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը աջակցել է Զաքրայում համայնքային ռադիոկայանի ստեղծմանը, որը պետք է օգտագործվեր երիտասարդների, հաշմանդամություն ունեցող անձանց և կանանց կողմից՝ կարևոր հարցերի վերաբերյալ իրենց մտահոգությունները բարձրաձայնելու նպատակով:
- **Նեպալ.** 2013 թվականի ընտրությունների ընթացքում տարբեր ԶԼՄ-ներ, ինչպիսիք են՝ հեռուստատեսությունը ու ռադիոն, թերթերի գովազդները, պատաստները և թռուցիկները, օգտագործվել են ընտրողների շրջանում գենդերային զգայուն ուղերձներ տարածելու համար: Բացի այդ, կիրառվել է նաև բջջային հեռախոսով հաղորդագրություններ ուղարկելու մեթոդը, ինչպես նաև Facebook և Twitter սոցիալական ցանցերը:²⁴⁶
- **Սիերա Լեոնե.** Բաց կառավարության նախաձեռնությունը ստեղծեց կանանց խնդիրները քննարկելու, ռադիոհաղորդումներ կազմակերպելու, քաղաքացիների հետ հանդիպումներ անցկացնելու համար համապատասխան հարթակ՝ միտված խրախուսելու կանանց մասնակցությունը և քննարկելու որոշակի թեմատիկ հարցեր գենդերային առանձնահատկությունների տեսանկյունից: Բացի այդ, BBC-ն, տեղական հեռուստաընկերություններն ու ռադիոկայանները, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպությունները ստեղծեցին և տարածեցին կանանց ու երիտասարդությանն ուղղված կրթական նյութեր:²⁴⁷
- **Տանզանիա:** Տանզանիայի ԶԼՄ-ների կանանց ասոցիացիան և ՄԱԿ-ի կանայք վերապատրաստեցին 125 համայնքային ռադիոկայանների և տրամադրեցին արեգակնային էներգիայով աշխատող 1500 ռադիոընդունիչներ սահմանված խմբերի համար: Դասընթացը թույլ տվեց տեղական խմբերին ձայնագրել և հեռարձակել իրենց ընտրական ծրագրերը հետևյալ թեմաներով՝ «Կանայք և նրանց մասնակցությունը ընտրություններին որպես ընտրողներ», «Լավ առաջնորդի որակները», «Ինչու՞ պետք է ընտրել կին թեկնածուներին», «Ինչպե՞ս կանխարգելել ընտրակաշառքի դեպքերը ընտրությունների ժամանակ» և «Ի՞նչ է անհրաժեշտ քվեարկելու համար»:²⁴⁸

ունեն ընտրելու կամ ընտրվելու իրավունք»:²²¹

- **Մալավի.** Հանձնաժողովը պարբերաբար հանդիպումներ ունեցավ ավանդական իշխանությունների հետ քաղաքացիական և ընտրողների կրթման մասին նրանց իրազեկելու նպատակով՝ ուղղված կանանց մասնակցության խթանմանը:²²²
- **Նախկինում Հարավսլավական համադաշնության մաս կազմող Մակեդոնիայի Հանրապետություն.** Ընտրական հանձնաժողովը ընտրությունների նախօրյակին կազմակերպեց և անցկացրեց ընտանեկան քվեարկության թեմայով աշխատաժողովների շարք:²²³
- **Եմեն.** Կրթության և կառավարման նախարարությունը մշակեց տղամարդկանց համար նախատեսված «կանանց քաղաքական իրավունքների պաշտպանության մասին» ուղեցույց:²²⁴

14.4. Տեղեկատվության տարածման մեթոդները

Տեղեկատվության տարածման մեթոդները կարևոր են թիրախային լսարանին հասնելու արդյունավետության, լսարանի՝ ուղերձները հեշտությամբ ընկալելու և տարածման մեթոդի ընդունման տեսանկյուններից: Գրագիտության մակարդակը և լրատվամիջոցների մատչելիությունը նույնպես կարևոր են: Գրագիտության ցածր մակարդակի առումով կանայք շարունակում են մնալ անհամաչափորեն խոցելի աշխարհի բոլոր երկրներում, իսկ որոշ շրջաններում աղջիկները զգալի դժվարությունների են բախվում են կարողալ և գրել սովորելիս:²²⁵ Մի քանի տարբեր մեթոդների օգտագործումը նույն ուղերձի հաղորդման համար ավելի մեծ ազդեցություն է ունենում, քան միայն մեկ տարածման մեթոդի կիրառումը: Տեղեկատվության տարածման մեթոդները տարբեր են նաև ծախսատարության տեսանկյունից, որը ներառում է պահանջվող նյութերն ու անձնակազմը: Այս բոլոր նկատառումները պետք է ներդաշնակեցված լինեն համակողմանի իրազեկման պլան մշակելիս:

Անհատական դասընթացներ

Անհատական դասընթացները համարվում են ուսուցման արդյունավետ մեթոդ շատերի համար: Չնայած ընտրական մարմինը չի կարող ապահովել ամբողջ ընտրազանգվածի հետ անհատական կրթական դասընթացների անցկացումը, բնակչության որոշակի խմբերի համար դրանց կազմակերպումը կարող է արդյունավետ լինել: Շատ երկրներում ԲՀԿ-ները կարող են լրացնել ընտրական մարմինների ջանքերը, հատկապես այն վայրերում, որտեղ կին ընտրողների գրանցման և մասնակցության ցուցանիշները ցածր են: Նման դասընթացները հատկապես օգտակար են գրագիտության ցածր մակարդակ ունեցող խմբերի համար կամ

ովքեր ավանդաբար մարզինալացված են ընտրական գործընթացներում: Աշխարհի տարբեր մասերում կանայք ներկայացնում են այդպիսի բնակչության մեծամասնությունը:

Ռադիո և այլ ձայնային ուղերձներ

Ռադիոն շարունակում է մնալ աշխարհում ամենատարածված մեդիա ձևաչափերից մեկը, և որպես այդպիսին հանրությանը տեղեկատվություն հասցնելու հիմնական աղբյուրներից, հատկապես գրագիտության ցածր մակարդակ ունեցող բնակչության համար: Տեղեկատվության տարածումից բացի, այն կարող է նաև տեղեկատվություն ստեղծել բանավեճերի և գանգերով ուղեկցվող ծրագրերի միջոցով, որտեղ ունկնդիրները կարող են հարցեր հղել: Ռադիոյի առավելություններից մեկն այն է, որ հնարավոր է մատուցել տարբեր լեզուներով և համեմատաբար ցածր գնով տեղեկատվություն: Առդիո տեսահոլովակները հեշտությամբ կարող են տարածվել կայքի միջոցով նյութի արտադրությունից անմիջապես հետո առանց հավելյալ արժեքի:

Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մեջ 35 երկրներից 22-ը (63%-ը) նշել են, որ իրականացրել են «գյուղական վայրերում բնակվող կանանց ուղղված հատուկ ռադիո և այլ մեդիա արշավներ»: Այդ երկրներն են՝ Աֆղանստանը, Հայաստանը, Բենին, Բոսնիա և Հերցեգովինին, Կոնգոն, Կոստա Ռիկան, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունը, Եգիպտոսը, Գանան, Իրաքը, Ղազախստանը, Ղրղզստանը, Լիբանանը, Մադագասկարը, Մալավին, Մոզամբիկը, Նամիբիան, Պաղեստինը, Պակիստանը, Հարավային Աֆրիկան, Տանզանիան և Ուգանդան:

Փորձական ընտրություններ կամ քվեարկության օրվա փորձ

Շատ ընտրողներ, այդ թվում՝ առաջին անգամ ընտրողները, կարող են տարակուսանքի մեջ լինել, երբ խոսքը վերաբերում է քվեաթերթիկի վրա թույլատրելի նշումներ կատարելուն և քվեարկության կենտրոններում ակնկալվող գործողություններին: Այն երկրներում, որտեղ ավանդույթները սահմանափակում են կանանց մասնակցությունը կամ ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը տարածված երևույթ է, կանայք կարող են չիմանալ քվեարկության կարգը: Նման հանգամանքներում փորձական ընտրությունների անցկացումը կարող է արդյունավետ գործիք լինել գործընթացի մեխանիզմին կանանց ծանոթացնելու համար: Օրինակ՝ Մալիում երիտասարդներին ընտրական գործընթացի վերաբերյալ պատմող հեռուստատեսային ծրագրում ցուցադրվեց թեկնածուների նկարներով և կուսակցությունների լոգոներով քվեաթերթիկի նմուշ, որպեսզի ընտրողները ծանոթ լինեն քվեաթերթիկին նախքան

տեղամասային կենտրոններ այցելելը: Հարավային Աֆրիկայում ՔՀԿ-ներն իրենց աշխատաժողովների ժամանակ օգտագործում էին քվեարկության գործընթացին առնչվող վարժանքներ և փորձեր՝ կանանց շրջանում վախերն ու մտավախությունները ցրելու նպատակով:²²⁶

Երգեր, ներկայացումներ և տեսահոլովակներ

Մի շարք մշակույթներում երգն ու թատրոնը կարևոր ուղերձներ հաղորդելու արդյունավետ ձևեր են: Հայտնի սերիալների մեջ տարածված ուղերձները նույն ազդեցությունն են ունենում: Երգերը և կարճ տեսահոլովակները նաև նոր տեխնոլոգիաների միջոցով երիտասարդներին իրազեկելու կարևոր միջոցներ են: Երգերի և ներկայացումների օգտագործման որոշ օրինակներ բերված են ստորև.

- **Լիբանան:** 2013 և 2014 թվականներին ընտրողների գրանցման ամենամյա թարմացումների մասով ՄԱԶԾ-ն և Ներքին գործերի նախարարությունը պատրաստեցին կարճ տեսահոլովակ, որը խրախուսում էր ընտրողներին ստուգել իրենց տվյալներն ընտրողների ռեգիստրում և ուղղել սույն սխալները: Տեսահոլովակում օգտագործված էր հումոր և ծանոթ կերպարներ՝ ներկայացնելու այն սխալները, որոնք կարող են խանգարել որևէ ընտրողի քվեարկությանը: Մեկ ամսվա ընթացքում տեսահոլովակը լայնորեն տարածվեց հեռուստատեսությամբ, ռադիոյով և ցուցադրվեց կինոթատրոններում:²²⁷

(Ահա ամբողջական հղումը՝ <https://www.youtube.com/watch?v=aXOsfK2ovuk>)

- **Նեպալ.** 2013 թվականի համապետական ընտրությունների ժամանակ Նեպալի Ընտրական հանձնաժողովը կազմակերպեց և ցուցադրեց 272 թեմատիկ փողոցային ներկայացումներ, որոնց թիրախում կանանց մասնակցության խթանումն էր, և որոնք ներկայացվեցին ամբողջ երկրով:²²⁸
- **Հարավային Աֆրիկա.** «Ֆիլմ նկարահանվեց գյուղական վայրերում բնակվող կանանց, նրանց առջև ծառայած խնդիրների և ընտրողների կրթումն այդ շրջաններում կազմակերպելու վերաբերյալ»: Ֆիլմը լայնորեն տարածվեց և ցուցադրվեց շարժական տեսասարքերի վրա նաև այն շրջաններում, որտեղ չկար հեռուստացույց:²²⁹
- **Թունիս.** ՄԱԶԾ-ն հովանավորեց երգի խոսքերը գրելու ու երգը ձայնագրելու գործընթացները՝ Enti Essout-ի (Իմ ժողովուրդ, դու ես ձայնը), որտեղ յուրաքանչյուր երգիչ նկարագրում էր իր անցյալ և ներկա հասարակական փորձը և ավելի լավ Թունիս ունենալու երազանքները: Երգը շատ լայն տարածում գտավ ռադիոյով, ինչպես նաև YouTube-ում:²³⁰

Ռեսուրսային կենտրոններ

Ընտրողների տեղեկատվական և ռեսուրսային կենտրոնները, որոնք տրամադրում են տեղեկություն և հանդիսանում են դասընթացների անցկացման համար վայր, կարող են կարևոր լինել ընտրողների կրթման գործընթացը տեսանելի և մատչելի դարձնելու տեսանկյունից: Ռեսուրսային կենտրոնները կարող են բաց լինել տեղական բնակչության կամ ամբողջ ազգաբնակչության համար, սակայն թիրախավորել կոնկրետ խմբերի, ինչպիսիք են՝ կանայք: Որոշ դեպքերում, օրինակ՝ Արևելյան Թիմոր, դրանք կարող են թիրախավորել լավ կրթված օգտատերերին՝ օրենսդրական օրակարգը առաջ տանելու նպատակով, սակայն հաճախ նման կենտրոններն ապահովում են տեղեկատվություն հասարակ բնակչության համար, ովքեր այլապես չեն ունենա լիարժեք քաղաքացիական կրթության մատչելիություն:

Ռեսուրսային կենտրոններ են ստեղծվել՝

- **Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն.** Ընտրական համարագրերի միջազգային հաստատությունն (IFES) աջակցել է երկրում վեց ժողովրդավարական ռեսուրսային կենտրոնների ստեղծմանը շուրջ 10 տարվա ընթացքում: Դրանք ամիսներ շարունակ ծառայում էին ավելի քան 2000 այցելուներին՝ առաջարկելով բազմազան գրականություն, համացանցի մատչելիություն և ընթացիկ կրթական միջոցառումների կազմակերպում: Թիրախավորված միջոցառումներ և կրթական նյութեր էին մշակվել երկրում խոսվող լեզվով և բարբառներով, որոնք նախատեսված էին ոչ գրագետ բնակչության համար: Ռեսուրսային կենտրոնները ծառայում էին որպես տարածաշրջանային հենքեր՝ հեռավոր վայրերում հասարակ քաղաքացիների համար շարունակական կրթություն ապահովելու համար:
- **Վրաստան.** 16 տարածաշրջանային ռեսուրսային կենտրոններ ստեղծվեցին՝ ընտրական գործընթացում հանրության ներգրավմանն աջակցելու, ընտրողների կրթական մակարդակը բարձրացնելու և ընտրական վարչակազմի ու մարզային շահառուների միջև կապերը բարելավելու նպատակով: Քաղաքացիները հնարավորություն ունեն հանդիպելու և օգտագործելու կենտրոնի հնարավորություններն ուսումնասիրության, կապերի հաստատման, քննարկումների և այլ համապատասխան նախաձեռնությունների համար: Առաջնային թիրախ են համարվում կանայք և երկրում բնակվող ազգային փոքրամասնությունների երիտասարդ սերունդները: Կենտրոններից մի քանիսը ստեղծվել են ազգային փոքրամասնությունների սովոր գանգվածով բնակեցված թիրախային աշխարհագրական գոտիներում:²³¹

- **Նեպալ.** ՄԱԶԾ-ն աջակցել է Նեպալի Ընտրական հանձնաժողովի շենքում Կրթական և տեղեկատվական կենտրոնի (ԿՏԿ), ինչպես նաև Մեդիա կենտրոնի ստեղծմանը: Կենտրոնն աջակցում է ընտրողների կրթմանը, հանրային հաղորդակցմանը, ԶԼՄ-ների ներգրավվածությանը և հանրության կողմից ընտրական համակարգերի և գործընթացների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովմանը:²³²

Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաներ

Աշխարհի տարբեր երկրներում գոյություն ունեն քաղաքացիական կրթության հանդեպ ստեղծարար մոտեցման բազմաթիվ օրինակներ, որոնք պայմանավորված են համացանցի և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ: Ընտրողների իրազեկվածությունը հայտնի սոցիալական մեդիա հարթակների միջոցով բարձրացնելը կարող է արդյունավետ լինել որոշ համատեքստերում: Համապատասխան ենթակառուցվածքի և մատչելիության առկայության դեպքում համացանցը հզոր գործիք է լայն լսարաններին հասնելու համար: Վրաստանում ԿԸՀ-ն քաջալերում էր ընտրողների հետ շփումը սոցիալական ցանցերի, վեբ-ֆորումների և լուսանկարչական մրցույթների միջոցով: 2011 թվականի մարտին ԿԸՀ-ն ձեռնամուխ եղավ «Ընտրիր» լուսանկարչական մրցույթի մեկնարկին՝ երիտասարդ ընտրողների ընտրական վարչարարության միջոցառումներին մասնակից դարձնելու նպատակով: Մրցույթն անցկացվեց Facebook սոցիալական ցանցի միջոցով մեկ ամսվա կտրվածքով: Մրցույթի արդյունքում ԿԸՀ-ն հայտարար

րեց երկու հաղթող և հենց իր շենքի ներսում կազմակերպեց մրցույթի շրջանակներում ընտրված լավագույն 50 լուսանկարների ցուցահանդես: 2013 թվականին Իրաքում սոցիալական մեդիան լայնորեն օգտագործվում էր ԱԲԸՀ-ի կողմից, այդ թվում՝ Yahoo- ի տեղական տարբերակով բաներային գովազդի ցուցադրում այնպիսի ընտրական ուղերձներով, որոնք ընդգծում էին կանանց մասնակցության կարևորությունը:

Ընտրական մարմնի կայքում տեղադրված տեղեկատվությունը կարևոր է, հետևաբար նկարները, գրավոր և աուդիո նյութերը կարող են լինել ներբեռման հնարավորությամբ: Ընտրական մարմինը կարող է նաև ընտրել սոցիալական ցանցերի միջոցով շփման տարբերակը, ինչպիսիք են՝ Facebook-ը և Twitter-ը: Պետք է ուշադրություն դարձնել, որ տեղեկատվության տարածման նոր ուղիներին զուգահեռ կիրառվեն նաև ժամանակավոր փորձարկված այնպիսի ձևեր, ինչպիսին է ուղիղ, որից կանայք միանշանակ օգտվում են:



ԱՄՓՈՓՈՒՄ

- Քանի որ ընտրական գործընթացը կարող է լինել բարդ և բյուրոկրատական, ընտրողների իրազեկումն ու կրթումը էական են, որպեսզի բոլոր քաղաքացիները հասկանան, թե ինչպես կարող են մասնակցել ընտրություններին և ինչու է իրենց մասնակցությունը կարևոր:
- Կարող է ի հայտ գալ կանանց մասնակցությունը խթանող հատուկ ուղերձների տարածման անհրաժեշտություն՝ կանայք որպես թեկնածուներ և որպես ընտրողներ, և պարզաբանման կարիք լինի առ այն, որ նրանցից յուրաքանչյուրը իր քվեի տերն է և ունի ազատ ընտրելու իրավունք:
- Այդ ուղերձները կարող են անմիջականորեն թիրախավորել կանանց, սակայն կարող են նաև ուղղված լինել երիտասարդներին և տղամարդկանց:
- Այդ ուղերձները կարող են տարածվել տարբեր մեթոդներով՝ հեռուստաընկերություններից, թերթերից և ռադիոկայաններից մինչև միայն կանանցից բաղկացած ֆոկլոր խմբային քննարկումների անցկացում և փորձնական ընտրությունների կազմակերպում:

© ՄԱԿ-ի նկար / Էրիկ Կանալսթեյն



ԵՂՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ընտրական մարմինները կանանց ընտրական և քաղաքական մասնակցության խթանման հիմնական դերակատարներն են: Համընդգրկուն ընտրական մարմիններն ապահովում են, որ իրենց ներքին համակարգերն ու գործընթացները բացառեն կանանց հանդեպ խտրականության բոլոր ճևերը և, անհրաժեշտության դեպքում, գենդերային ուղղվածություն ունեցող միջոցներ են ձեռնարկում՝ մեղմելու խտրական վերաբերմունքի նախկին դրսևորումները: Բացի այդ, համընդգրկուն ընտրական մարմիններն աշխատում են խթանել կանանց մասնակցությունը ընտրական գործընթացին՝ հաշվի առնելով գենդերային գործոնի ազդեցությունը գրանցման, քվեարկության և ընտրողների իրազեկման վրա:

Ամբողջ աշխարհում ընտրական մարմինները բախվում են նույնանման մարտահրավերների: Քաղաքական միջավայրում սեփական անկախությունը պահպանելը երկար ժամանակ ծառայում է մարտահրավեր է, սակայն վերջերս ընտրական մարմիններն առերեսվում են գենդերային ամանձնահատկություններով պայմանավորված ավելի մեծաքանակ խնդիրների, ինչպիսիք են՝ ըստ սեռի տարանջատված տվյալների մատչելիությունն ու տարածումը: Որոշ երկրներում կանանց անվտանգությունն ու ապահովությունը նույնպես մտահոգության շարժառիթ են հանդիսանում ընտրական մարմինների համար: Մարտահրավերները կարող են լինել նաև մշակութային և պահանջել մոտեցումներ, որոնք թույլ են տալիս սոցիալական և վերաբերմունքի փոփոխությունների հասնել: Համընդգրկուն ընտրական կառավարումը պահանջում է, որ ընտրական մարմինները քննադատաբար վերանայեն իրենց ներկա կառուցվածքները և անդրադառնան գենդերային բաղադրիչի ներառմանը տարբեր ոլորտներում: Գենդերային աուդիտը և քարտեզագրումը կարող են օգտակար լինել բարելավման կարիք ունեցող ոլորտների բացահայտման հարցում: Վերապատրաստման դասընթացներն ամանցքային կարևորություն են ներկայացնում ընտրական մարմինների աշխատակիցներին գենդերային զգայուն թեմաներին ծանոթացնելու հարցում, իսկ կին աշխատակիցների համար մասնագիտական կարողությունների զարգացման դասընթացների մատչելիության ապահովումը նպաստում է նրանց անձնական աճին:

Չնայած շարունակական մարտահրավերներին, ամբողջ աշխարհում ընտրական մարմիններն առաջընթաց են գրանցում ընտրական վարչարարության և քաղաքական մասնակցության գործընթացներում կանանց հզորացման հարցում: Ընտրական մարմինները հաճախ հանդես են գալիս որպես առաջդիմական փոփոխության առաջամարտիկներ և միշտ էլ կենսական դերակատարում են ունենում քաղաքական գործընթացներում գենդերային հավասարության ապահովման գործում: Ընտրական մարմինների նորամուծությունները և գրանցած հաջողությունները թույլ են տալիս պատկերացում կազմել կին ընտրողների, թեկնածուների և ամբողջ աշխարհում ընտրական վարչակազմի համար ավելի լայն հնարավորություններ ստեղծելու հեռանկարների մասին:

Հավելված Ա. Ընտրական մարմինների շրջանում անցկացված հետազոտության մասնակից կառույցների ցանկ

Աֆղանստան	Աֆղանստանի Անկախ ընտրական հանձնաժողով
Հայաստան	Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Բելառուս	Բելառուսի Հանրապետության Ընտրությունների և ազգային հանրաքվեների կենտրոնական հանձնաժողով
Բենին*	Անկախ ազգային ընտրական հանձնաժողով
Բոսնիա և Հերցեգովինա	Բոսնիա և Հերցեգովինայի Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Կանադա	Կանադայի ընտրական հանձնաժողով
Կենտրոնաֆրիկյան Հանրապետություն*	ՄԱԶԾ-ԿԱՅ
Կոստա Ռիկա	Ընտրական հարցերի բարձրագույն տրիբունալ
Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն*	ՄԱԶԾ-ԿԴՀ
Եգիպտոս	Բարձր ընտրական հանձնաժողով (ԲԸՀ)
Եթովպիա*	ՄԱԶԾ-Եթովպիա
Վրաստան	Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Գանա*	Գանայի Ընտրական հանձնաժողով
Իրաք	ԱԲԸՀ (Անկախ բարձրագույն ընտրական հանձնաժողով)
Ղազախստան	Ղազախստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Ղրղզստան	Ընտրությունների և հանրաքվեների կենտրոնական հանձնաժողով (ԿԸՀ)
Լիբանան	Ներքին գործերի և քաղաքապետարանների նախարարություն
Լեսոտո	Լեսոտոյի Անկախ ընտրական հանձնաժողով
Մադագասկար	Անկախ ազգային ընտրական հանձնաժողով (ԱԱԸՀ)
Մալավի	Մալավիի Ընտրական հանձնաժողով
Մալդիվներ	Մալդիվների Հանրապետության Ընտրական հանձնաժողով
Մավրիկիոս	Ընտրական վերահսկողական հանձնաժողով
Մոլդովա	Մոլդովայի Ընտրողական ընտրական հանձնաժողով
Մոզամբիկ	Ընտրությունների կազմակերպման տեխնիկական քարտուղարություն (ԸԿՏՔ)
Նամիբիա	Նամիբիայի Ընտրական հանձնաժողով
Պաղեստինի պետություն	Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Պակիստան*	Պակիստանի Ընտրական հանձնաժողով
Կոնգոյի Հանրապետություն	Ընտրական հարցերի ընդհանուր վարչություն (ԸՀԸՎ)
Ռումինիա	Ռումինիայի Մշտական ընտրական մարմինը (ՄԸՄ)
Հարավային Աֆրիկա	Հարավային Աֆրիկայի Ընտրական հանձնաժողով
Տանզանիա	Տանզանիայի Ազգային ընտրական հանձնաժողով
Թունիս	Ընտրությունների վերին անկախ ատյան (ԸՎԱԱ)
Ուգանդա	Ուգանդայի Ընտրական հանձնաժողով
Ուկրաինա	Ուկրաինայի Կենտրոնական ընտրական հանձնաժողով
Ուզբեկստան	Ուզբեկստանի ԿՍԵնտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)

Նշում. Հետազոտությունները կատարվել են 2011-2012 թվականներին

* Ընտրական մարմինի հետազոտությունը կատարվել է ՄԱԿ-ի գրասենյակի կողմից, ընտրական մարմնի անունից:

Հավելված Գ. Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրման շրջանակ



Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրում

Ընտրական գործընթացներում և հաստատություններում գեղեցիկ հավասարության կարգավիճակի գնահատման շրջանակ



Empowered lives. Resilient nations.

1. Ներածություն

Յուրաքանչյուր ընտրություն հնարավորություն է՝ կանանց քաղաքական մասնակցությունն ամրապնդելու և միջազգային բանաձևերով ստանձնած գեղեցիկ հավասարության սկզբունքների մասով առաջընթաց արձանագրելու համար: Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրումն արդյունավետ գործիք է կանանց՝ որպես ընտրողների, թեկնածուների և ընտրական մարմինների աշխատակիցների մասնակցության խթանման հնարավորությունների նախանշման համար: Ցանկացած նման քարտեզագրման միջոցով հնարավոր է ուսումնասիրել կանանց՝ որպես ընտրողների, թեկնածուների և կուսակցության անդամների ներկա իրավիճակը, ինչը կարևոր մեկնարկային քայլ է: Այնուամենայնիվ, համակողմանի ուսումնասիրության համար, քարտեզագրումը կարող է համակցվել ընտրությունների վարչարարությունն իրականացնող հաստատության, այսինքն՝ ընտրական մարմնի կամ համարժեք մարմնի (նախարարությունների) ներսում գեղեցիկ հավասարության իրավիճակի գնահատման հետ: Ուսումնասիրելով ընտրական մարմնի կազմը, կառուցվածքը և աշխատանքային գործելակերպերը, հնարավոր է առանձնացել բարեփոխման հավանական ուղղությունները, որոնք կարող են հետագայում դյուրացնել կանանց մասնակցությունն ընտրություններին:

Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրման այս նախագիծը մշակվել է Նեպալում, Միդդլայում, Լիբիայում և Լիբանանում համանման աշխատանքներ իրականացնելուց հետո և ՄԱԶԾ-ի «Ընտրական գործընթացների աջակցության ծրագրերի միջոցով գեղեցիկ հավասարության խթանում. Քաղված դասերը համեմատական տեսանկյունից» իրապարակման մեջ նկարագրված տարբեր երկրների գրասենյակներից քաղված դասերի հիման վրա: Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրման շրջանակն ուղղված է աջակցելու բոլոր համապատասխան շահառուներին կանանց հետագա ընտրական և քաղաքական մասնակցության մասով բացերի և հնարավորությունների հայտնաբերման հարցում, և որպես այդպիսին այն դիտարկում է ընտրական մարմինը ներսից և դրսից որպես ավելի լայն ընտրական միջավայր: Համապատասխան մեթոդի սահմանումը կախված կլինի կոնկրետ կառույցներից և ընտրությունների անցկացումը կանոնակարգող իրավական շրջանակից: Կարևոր է հիշել, որ գեղեցիկ գնահատումը փաստերի հավաքագրման գործընթաց է: Այն ուղղված է բացահայտելու հետագա աշխատանքների ուղղությունները և ծրագրման տարբերակները, սակայն այն չի տրամադրում լուծումներ:

2. Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրման շրջանակ

Ընտրությունների գեղեցիկ քարտեզագրման շրջանակի նպատակն է մեթոդաբանություն տրամադրել գեղեցիկ քարտեզագրում իրականացնող այլ շահառուներին: Այս ուսումնասիրությունը սկսում է գործող պրակտիկայի արձանագրումից և հնարավոր բարեփոխումների շուրջ քննարկումներից: Քարտեզագրման կառուցվածքը սահմանելով, սույն շրջանակը ծառայում է որպես առաջին քայլ գեղեցիկ հավասարության ուղղությամբ հնարավոր բարեփոխումները նախանշելու ուղղությամբ:

<p>ՔԱՅԼ 1: Ռեֆերենս խմբի Նախանշում</p>	<p>Այս խումբը պատասխանատու է գնահատման վերահսկողության համար: Այն սահմանում է շրջանակը, որին պետք է հետևել և ստուգում է տվյալների հավաքագրման և հարցազրույցների ճշգրտությունը և համապատասխանությունը: ՄԱԿ-Կանայք կառույցին և ՄԱԶԾ-ին (և/կամ ընտրական մարմինին, եթե գնահատումն իրականացվում է ընտրական մարմնի կողմից կամ նրա հետ համագործակցությամբ) գնահատման վերջնական նախագիծը պետք է համաձայնեցվի ռեֆերենս խմբի հետ: Ռեֆերենս խումբը պետք է բաղկացած լինի առնվազն երկու անդամներից, որոնք որպես կանոն լինում են ՄԱԿ-ի աշխատակիցներ/խորհրդատու, և կարող է նաև ընդգրկել առանցքային շահառու(ներ) ընտրական մարմնից և/կամ քաղաքացիական հասարակությունից: Թիմի անդամները պետք է լավ պատկերացնեն գեղեցիկի հավասարության և գեղեցիկի բաղադրիչի ներառման, ինչպես նաև ընտրական և քաղաքական գործընթացների հայեցակարգերը:</p>
<p>ՔԱՅԼ 2: Քարտեզագրման թիմի նշանակում</p>	<p>Այս թիմը պատասխանատու է գնահատման մանրամասն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ տվյալների հավաքագրման և հարցազրույցների գործընթացի համար: Այն նաև պատասխանատու է ռեֆերենս խմբի ուսումնասիրմանը և դիտարկմանը ներկայացվող հաշվետվության պատրաստման համար: Թիմը պետք է բաղկացած լինի երկուսից հինգ անդամներից, որոնք որպես կանոն լինում են ՄԱԿ-ի աշխատակիցներ/խորհրդատուներ և հնարավոր է նաև ընդգրկել ընտրական մարմնի և/կամ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Թիմի անդամները պետք է լավ պատկերացնեն գեղեցիկի հավասարության և գեղեցիկի բաղադրիչի ներառման, ինչպես նաև ընտրական և քաղաքական գործընթացների հայեցակարգերը, որպեսզի հնարավոր լինի ծածկել շրջանակի բոլոր ուղղությունները: Թիմի մեկ անդամ պատասխանատու է հաշվետվության մշակման կամ թիմի մյուս անդամների կողմից դրա մշակման աշխատանքների համակարգման համար:</p>
<p>ՔԱՅԼ 3: Շրջանակի սահմանում</p>	<p>Այս փուլում ռեֆերենս խումբը և քարտեզագրման թիմը պետք է սահմանեն ընտրությունների գեղեցիկի քարտեզագրման չափանիշները տեղական պայմաններին և հանգամանքներին համապատասխան: Պետք է լինեն քննարկումներ, որոշելու համար, թե հարցումների որ ոլորտներին է անհրաժեշտ հետևել: Այս փուլում պետք է իրականացվեն ավելի լայն քննարկումներ առաջարկվող շրջանակի վերաբերյալ ռեֆերենս խմբից և քարտեզագրման թիմից դուրս, այդ թվում՝ ընտրական մարմնի այլ անդամներից և աշխատակիցներից, ՅԿ-ներից, միջազգային գործընկերներից, կուսակցություններից և գեղեցիկի հավասարության ապահովման հարցերով զբաղվող տեղական մարմիններից հավանություն ստանալու համար:</p>
<p>ՔԱՅԼ 4: Տվյալների հավաքագրում երկրի ներսում</p>	<p>Կախված տվյալ երկրի ներքին հանգամանքներից տեղեկատվությունը կարող է հավաքագրվել հետազոտության, ուղղիկ հարցազրույցների և ավելի լայն քննարկումներ ենթադրող սեմինարների միջոցով: Այս գործիքակազմում կիրառվում են այն հարցերը, որոնք ձևավորում են քննարկումները մի շարք շահառուների հետ՝ հնարավորինս շատ տեղեկություններ հավաքագրելու նպատակով: Քննարկումները պետք է բերեն համաձայնեցված գերակայությունների սահմանման և այդ գերակայությունները հասցեագրելու համար անհրաժեշտ գործողությունների նախանշման: Գնահատման արդյունավետությունը պետք է որոշվել համեմատելով այն կանանց մասնակցության խթանման արդյունքների և ընտրական մարմինը գեղեցիկի զգայուն կառույց դարձնելու ուղղությամբ ձեռնարկվող գործողությունների հետ:</p>
<p>ՔԱՅԼ 5: Վերլուծություն, հաշվետվություն և առաջարկություններ</p>	<p>Այս առանցքային փուլի ընթացքում, քարտեզագրման թիմը հավաքագրված տվյալների հիման վրա կկատարի եզրակացություններ և կներկայացնի վերլուծություն և հետագա աշխատանքների համար առաջարկություններ: Գնահատման եզրակացությունների հիման վրա թիմը կկազմի հաշվետվություն, որն իհարկե կարող է քննարկել ընտրական մամիների, ՄԱԿ-ի տվյալ երկրի թիմի և այլ տեղական շահառուների հետ:</p>
<p>ՔԱՅԼ 6: Եզրակացությունների և գործողությունների ծրագրի հաստատում</p>	<p>Վերջնական գնահատման հաշվետվությունը պետք է հաստատվի թիմի, ընտրական մարմնի, ներգրավված այլ գործընկերների, ինչպես նաև այն շահառուների կողմից, ովքեր աշխատելու են առաջարկների կատարման ուղղությամբ: Երկրի թիմը պետք է ընտրությունների գեղեցիկի քարտեզագրման առաջարկությունները վերածի պաշտոնական ծրագրային գործողությունների և մշակի իրականացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց: Ի վերջո, քարտեզագրումը ընտրական գործընթացի շահառուներին հնարավորություն կտա քաղաքական գործընթացներում կանանց մասնակցության կարևորության մասին մտածելու հնարավորություն: Արդյունքների ամփոփումն առաջին քայլն է, որից հետո շահագրգիռ կողմերը կարող են մշակել և իրականացնել բարեփոխումների ճանապարհային քարտեզ՝ իրենց ազգային համատեքստին համապատասխանող հստակ սահմանված նպատակներով, գործողություններով և ժամանակացույցով, որոնք որպես կանոն ամրագրվում են պաշտոնական գործողությունների ծրագրում, որն իրականացվում է համապատասխան շահագրգիռ կողմերի, և մասնավորապես ընտրական մարմնի կողմից:</p>

Համակողմանի քարտեզագրումը ներառում է մի քանի առանձին փուլեր, կախված առկա կարիքներից և գնահատման ծավալներից: Անհրաժեշտ է դիտարկել, թե ինչպես է իրականացվելու ընտրությունների գենդերային քարտեզագրումը գործնականում: Մտանդարտ ընտրությունների գենդերային քարտեզագրումը ներառում է գոյություն ունեցող օրենսդրության և հաշվետվությունների ուսումնասիրություն, երկրի ներսում վերլուծության կամ շահառուների հետ հարցազրույցների անցկացում, երկրի ներսում հարցումների իրականացում և հաշվետվության պատրաստում:

2.1. Ընտրությունների գենդերային քարտեզագրման քայլերը և շրջանակը

Ընտրությունների գենդերային քարտեզագրումը ենթադրում է մի քանի քայլեր: Ոչ բոլոր փուլերն են ենթակա պարտադիր իրականացման, և անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել, թե որ փուլերն են ամենակարևորը յուրաքանչյուր երկրին բնորոշ ազգային համատեքստում:

2.2. Առանցքային մասնակիցները և շահագրգիռ կողմերը

Ընտրությունների քարտեզագրման թիմը հանդիպումներում և հարցազրույցներում կարող է ընդգրկել շահագրգիռ կողմերի լայն շրջանակ, այդ թվում՝

- Ընտրությունների կառավարում և վարչարարություն իրականացնող մասնագետներ (ներառյալ նախարարներ, ընտրական հանձնաժողովների անդամներ և աշխատակազմ)
- Պատգամավորներ
- Կուսակցությունների անդամներ և ընտրությանը մասնակցող թեկնածուներ
- Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և գենդերային հարցերով ակտիվիստներ.
- Գիտակրթական ոլորտի աշխատակիցներ, ովքեր իրականացնում են ընտրական մասնակցության մշտադիտարկում
- Ընտրությունների վերաբերյալ կարծիքների հետազոտություն իրականացնող կազմակերպություններ (օրինակ՝ Գալլոպ).
- Չանգվածային լրատվական միջոցների լրագրողներ և ընտրությունների այլ մեկնաբաններ, այդ թվում՝ սոցիալական կայքերից
- Միջազգային և տարածաշրջանային կազմակերպությունների ներկայացուցիչներ

Խնդիրներն ավելի լավ արտացոլող քննարկումներ ապահովելու համար հարկավոր է ներգրավել մասնակիցների լայն շրջանակ: Խմբում ներգրավված շահառուների բազմազանությունը կարող է ամրապնդել գնահատման գործընթացի լեգիտիմությունը և ապահովել բազմակարծության մթնոլորտ: Այնուամենայնիվ, հարկավոր է ապահովել այս գործընթացում գաղտնիության պահպանումը և հաշվի առնել բյուրոկրատական դասակարգման հնարավոր ազդեցությունը, օրինակ՝ այնպիսի իրավիճակներում, երբ կրտսեր աշխատակիցները կարող են կաշկանդվել բարձրաստիճան դեկավարների հետ նույն խմբում մասնակցությունից:

Քննարկումների մասնակցելու համար կարող են հրավիրվել նաև այլ դերակատարներ, ինչպես օրինակ՝ կուսակցությունները, գենդերային հարցերով փորձագետները, քաղաքացիական հասարակության և կանանց՝ ազգային մեխանիզմի ներկայացուցիչները, միջազգային դոնոր կազմակերպությունների և տեղական լրատվամիջոցների ներկայացուցիչները: Այս դերակատարները, որպես կանոն, քննարկումը լրացնում են արտաքին տեսակետներով:

2.3. Տվյալների աղբյուրներ

Թեև քարտեզագրման գործընթացը կարող է առաջնորդվել հաջորդ բաժնում ներկայացված հարցերով, տեղեկատվությունը պետք է հիմնավորվի տվյալների անկախ աղբյուրներով, մասնավորապես ընտրությունների, կանանց մինչ այդ պահին արձանագրված քաղաքական մասնակցության և երկրում կանանց ընդհանուր իրավիճակի հետ կապված իրավական կարգավորումների վերաբերյալ տեղեկատվությունները: Նման տեղեկատվություն հավաքագրելու համար օգտագործվող փաստաթղթերը և տվյալների աղբյուրները ներառում են՝

- Մարդու իրավունքների պայմանագրերի կարգավիճակի վավերացում (Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա/CEDAW, Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր/ICCPR)

- Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման կոմիտեի երկրի վերջին զեկույցը և Կոմիտեի եզրափակիչ դիտարկումները.
- Սահմանադրությունը
- Ընտրական օրենքները և դրանց առնչվող կանոնակարգերը
- Կուսակցությունների կանոնադրությունները և հռչակագրերը
- Խոշոր քաղաքական կուսակցություններում ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց և տղամարդկանց ցանկը.
- Իշխող և ընդդիմական կուսակցությունների գեներային հավասարության վերաբերյալ քաղաքականությունները և ծրագրերը
- Խորհրդարանի կողմից ընդունած գեներային հավասարությանը վերաբերող օրենքները.
- Ազգային վիճակագրություն կանանց կարգավիճակի, այդ թվում կանանց գրագիտության և կրթության, զբաղվածության, ունեցվածքի, ծնելիության, մայրական մահացության ցուցանիշների և այլնի վերաբերյալ.
- Կանանց համամասնությունը գործադիր իշխանությունում, որպես խորհրդարանի անդամներ և որպես տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ (ներկայումս և վերջին տարիներին)
- Կին թեկնածուներ համամասնությունը վերջին ընտրություններում, ըստ կուսակցության (այդ թվում՝ անկախ թեկնածուները).
- Վերջին ընտրություններում գրանցած և քվեարկած կանանց և տղամարդկանց թիվը
- Ընտրական մարմիններում աշխատող կանանց և տղամարդկանց ցանկը (ընտրական մարմնի խորհրդում կամ հանձնաժողովում, ղեկավարներ պաշտոններում, քարտուղարությունում և ժամանակավոր աշխատակազմում)
- Ընտրական մարմնի կորպորատիվ քաղաքականությունները, այդ թվում՝ ռազմավարական ծրագիրը, համալրման և առաջխաղացման քաղաքականությունները, վերապատրաստման և մասնագիտական զարգացման քաղաքականությունները, խտրականության դեմ քաղաքականությունները, հաղորդակցության քաղաքականությունները, մայրերին կամ հայրերին տրամադրվող երեխայի խնամի արձակուրդները.
- Տեղական և միջազգային ընտրական դիտորդական առաքելությունների զեկույցները
- Տվյալ երկրում կանանց քաղաքական մասնակցության վերաբերյալ ուսումնասիրությունները և զեկույցները

3. Ընտրությունների գեներային քարտեզագրման հարցեր

Ընտրությունների գեներային քարտեզագրման շրջանակը մասնավորապես նախանշում է ընտրական գործընթացների շահառուների և որոշումներ կայացնողների շրջանում քննարկման և գնահատման ոլորտները: Մեթոդը ենթադրում է համապատասխան ընտրական մարմնի քաղաքականության շրջանակի և կառուցվածքի վերաբերյալ հարցերին պատասխանելու գործընթաց: Հարցերը, խմբավորված են ըստ հետևյալ վեց թեմաների՝

1. Կանանց քաղաքական մասնակցության իրավական և քաղաքականության շրջանակը
2. Կանանց՝ որպես ընտրողների, թեկնածուների, առաջնորդների քաղաքական մասնակցության ընթացիկ կարգավիճակը
3. Ընտրությունների կառավարում. կազմակերպում, աշխատակազմ, կառուցվածքներ, աշխատանքային պրակտիկաներ
4. Ընտրական գործընթացներում կանանց՝ որպես ընտրողների և թեկնածուների, ինչպես նաև ընտրական քարտեզաշավներում մասնակցության խթանում
5. Ընտրական գործընթացների աջակցություն գեներային թիրախավորմամբ. ընտրողների տեղեկացում և կրթում, ապահով մասնակցություն:

Շրջանակը նախատեսված է որպես ռազմավարական կետ: Քարտեզագրման գործընթացի վաղ փուլերը պետք

է ուղղվեն շրջանակը տեղական իրավիճակին համապատասխանեցնելուն՝ ամենաարդյունավետ արդյունքներն ապահովելու համար: Ոչ բոլոր հարցերն են համապատասխան կամ կիրառելի բոլոր երկրների կամ բոլոր ընտրական համակարգերի համատեքստում:

1. Կանանց քաղաքական մասնակցության իրավական և քաղաքականության շրջանակները

Հետազոտության ոլորտը. Միջազգային կոնվենցիաներն ու գործիքները նորմատիվային հիմք են ստեղծել ընտրությունների և այլ օրենքների բարելոխման ջատագովման համար, որպեսզի ապահովի կանանց ներկայացվածությունը միջազգային թիրախներին համապատասխան որոշումների կայացման գործընթացում: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), Պեկինի հռչակագիրը և գործողությունների ծրագիրը և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 և 2122 բանաձևերը, ի թիվս այլոց, նորմատիվային հիմք են ծառայել կանանց դերակատարումը որպես քաղաքական որոշումներ կայացնող մարմին խթանելու իրավական բարեփոխումների և քանակական ներկայացվածության թիրախների սահմանման համար: Իրավահավասարության և բարեփոխումների վերաբերյալ օրենսդրության ընդունումը, օրինակ՝ ընտրական քվոտաների մասին, արդյունավետ են եղել ընտրովի հաստատություններում գենդերային հավասարակշռության բարձրացման գործում:

- 1.1 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հիմնական պայմանագրերից որին է անդամակցում երկիրը: Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա (CEDAW), թե՛ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ICCPR):
- 1.2 Արդյո՞ք երկիրը անդամակցում է տարածաշրջանային դաշնագրերին և կոնվենցիաներին, որոնք վերաբերում են գենդերային հավասարությանը: Եթե այո, ապա որո՞նք են դրանք:
- 1.3 Արդյո՞ք սահմանադրությունը երաշխավորում է տղամարդկանց և կանանց հավասար իրավունքները: Եթե այո, ապա ո՞ր դրույթներն են երաշխավորում նրանց հավասարությունը: Երբ են դրանք մտցվել սահմանադրության մեջ:
- 1.4 (Եթե կիրառելի է) Եղե՞լ է արդյոք հանրային քննարկում/խորհրդակցություն սահմանադրությունը գրելու ընթացքում: Ինչպե՞ս են կանայք կարողացել իրենց ներդրումն ունենալ բանակցություններում:
- 1.5 Կանն արդյոք ընտրություններին և քաղաքական կուսակցությունների գործունեության կարգավորմանն անմիջականորեն առնչվող օրենքներ, որոնք անդրառանում են կանանց և գենդերային հավասարությանը: Խնդրում ենք տրամադրել օրենքի անվանումը, ամսաթիվը և հիմնական դրույթները:
- 1.6 Ո՞ր ընտրական համակարգով է ընտրվում երկրի օրենսդիր մարմինը և/կամ պետության ղեկավարը: Ինչ հետևանքներ է ունենում այդ համակարգը կանանց ընտրվելու ցուցանիշների վրա:
- 1.7 Կանն արդյոք ժամանակավոր հատուկ միջոցներ կանանց մասնակցությունն ու ներկայացվածությունն ապահովելու համար, օրինակ՝ պահված տեղեր, օրենքով սահմանված թեկնածուական քվոտաներ, կամ ընտրական թեկնածուական քվոտաներ և քաղաքական կուսակցությունների համար կանանց ընտրովի պաշտոններում առաջադրելու խթաններ:

2. Կանանց քաղաքական մասնակցության իրավիճակը

Հետազոտության ոլորտը. Կանանց քաղաքական մասնակցությունը հնարավոր է դառնում մի շարք գործոնների, այդ թվում՝ քաղաքական կամքի, մշակութային և վարքագծային փոփոխությունների, աղջիկների և կանանց կրթության, գենդերային հավասարության ջատագով հանդիսացող տղամարդկանց ջանքերի և կանանց ցանցերի ներգրավման շնորհիվ, ինչպիսիք են՝ քաղաքացիական հասարակությունը, ակադեմիան, լրատվամիջոցները կամ մասնավոր հատվածի ներկայացուցիչները: Խոչընդոտները նույնպես շատ են և դրսևորվում են խտրական մշակութային նորմերի, վերաբերմունքի, խտրական իրավական և քաղաքականության շրջանակների, գենդերային հավասարության հիմնահարցերի մասով քաղաքական առաջնորդների՝ հանձնառություն ստանձնելու անպատրաստակամության և գենդերային հավասարության օգուտների թերընկալման տեսքով: Կանանց ներկայիս քաղաքական մասնակցությունը պայմանավորող

մշակության համատեքստը հասկանալն օգտակար է ներգրավվածության մակարդակը բարձրացնելու նպատակով համապատասխան առաջարկությունների մշակման համար:

- 2.1 Խնդրում ենք ներկայացնել ըստ սեռի տարանջատված տվյալներ ներկայիս և նախորդ խորհրդարանների և կառավարության համար:
- 2.2 Խնդրում ենք տրամադրել տվյալներ քվեարկությանը մասնակցելու նպատակով գրանցված կանանց թվաքանակի և վերջին ընտրություններին մասնակցության ընդհանուր ցուցանիշի վերաբերյալ:
- 2.3 Որքանով է ընդհանուր միջավայրը նպաստող կանանց քաղաքական ներգրավվածության համար: Կան արդյոք կանանց մասնակցության համար սոցիալական, տնտեսական, մշակութային, կրոնական կամ այլ խոչընդոտներ:
- 2.4 Արդյոք կանանց կարգավիճակը նույն է ողջ երկրում, թե՛ կան տարբեր միտումներ կանանց գտնվելու վայրի կամ էթնիկ պատկանելիության հետ կապված:
- 2.5 Արդյոք քաղաքացիական հասարակությունը, ակադեմիան և զանգվածային լրատվության միջոցները խթանում են կանանց ներգրավվածությունն ընտրական գործընթացում: Որքանով են այդ գործողություններն արդյունավետ:
- 2.6 Որքան է ակտիվ կին պատգամավոր թիվը: Արդյոք նրանք առաջնահերթ են համարում գենդերային հավասարությանն ուղղված ջանքերը: Ինչ առնչություն ունեն քաղաքացիական հասարակության հետ:

3. **Կանանց մասնակցությունը նախընտրական քարոզաշափներին և անդամակցումը քաղաքական կուսակցություններին**

Հետազոտման ոլորտը. Անհրաժեշտ է խորապես հասկանալ այն գործոնները, որոնք նպաստում և խոչընդոտում են կանանց՝ պաշտոններ զբաղեցնելուն: Անհրաժեշտ է նաև հասկանալ, թե որ գործոններն են եղել ավելի ազդեցիկ նախընտրական քարոզարշավի ընթացքում, մասնավորապես՝ քաղաքական կուսակցություններին և դրանց կազմակերպմանն առնչվող: Այս բաժինն ուսումնասիրում է այն ձեռքբերումներն ու մարտահրավերները, որոնք կանայք առերեսվում են որպես թեկնածուներ ընտրություններին մասնակցելիս (մասնավորապես՝ ընտրական համակարգը, ժամանակավոր հատուկ միջոցները/քվոտաները, վերապատրաստումը, ֆինանսական աջակցությունը, լրատվամիջոցների մատչելիությունը և այլն):

Հարցերն ուղղվում են կին պատգամավորներին, կին թեկնածուներին, քաղաքական կուսակցությունների անդամներին, ՔՀԿ-ներին, փորձագետներին:

Ընտրական միջավայր

- 3.1 Ինչ ընտրական համակարգ է օգտագործվում և ինչպե՞ս է այն ազդում ընտրված կանանց թվաքանակի վրա: Արդյոք առկա են սահմանված գենդերային քվոտաներ: Արդյոք կատարվել է որևէ հետազոտություն կին և տղամարդ թեկնածուների «ընտրվելու հավանականության» վերաբերյալ: Արդյոք ավելի շատ կին թեկնածուների առկայությունը ենթադրում է ընտրված կանանց ավելի մեծ թվաքանակ:
- 3.2 Արդյոք ընտրական մարմինը հավաքագրում է ըստ սեռի տարանջատված վիճակագրական տվյալներ: Եթե այո, ապա արդյոք այդ տվյալները հավաքագրվում են առաջադրման պահին և ինչպե՞ս են դրանք թարմացվում: Որտե՞ղ կամ ինչպե՞ս է ընտրական մարմինը հրապարակում ըստ սեռի տարանջատված տվյալները:
- 3.3 Եթե ոչ, ապա որո՞նք են հիմնական խոչընդոտները տվյալների հավաքագրման համար: Արդյոք առկա են իրավական խոչընդոտներ այդ տվյալների հավաքագրման և/կամ հրապարակման համար: Արդյոք տվյալների նման հավաքագրում նախատեսվում է ապագայում:
- 3.4 Որո՞նք են թեկնածուի «ընտրվելու հավանականությունը» պայմանավորող հիմնական գործոնները: Արդյոք սեռը հանդիսանում է խտրականության առանցքային հիմք: Արդյոք այլ գործոնները, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցությունների աջակցությունը, կլանային կամ քաղաքական ֆինանսավորումը, ավելի ազդեցիկ են:

- 3.5 Որքանով է ազդեցիկ փողը քաղաքականության մեջ: Կան արդյոք կանոնակարգեր, ըստ որոնց պետական ֆինանսավորում է հատկացվում այն քաղաքական կուսակցություններին, որոնք բավարարում են գենդերային հավասարության պահանջները (օրինակ՝ որոշումների կայացման գործում կանանց մասնակցության խթանումը):
- 3.6 Արդյոք ընտրական մարմինը կարգավորում է հասարակական քարոզչության ֆինանսավորման որևէ հայեցակետ, օրինակ՝ քաղաքական կուսակցությունների և/կամ թեկնածուների համար ծախսերի մասով արգելքներն ու սահմանափակումները, որոշակի աղբյուրներից, ինչպիսիք են՝ քաղաքական կուսակցություններին և/կամ թեկնածուներին աջակցող օտարերկրյա ֆինանսատուները, ներդրումներ ստանալու արգելքը, քարոզչության համար նախատեսված ժամանակահատվածի սահմանափակումը, կամ պահանջը, որ բոլոր ֆինանսական նվիրատվությունները քաղաքական կուսակցություններին և թեկնածուներին հրապարակվեն: Եթե այո, ապա արդյոք այդ տեղեկատվությունը հասանելի է հանրությանը և արդյոք տարանջատված է ըստ թեկնածուների սեռի:
- 3.7 Ինչ տարածում ունեն «կաշառքի» կամ «ընտանեկան քվեարկության» դեպքերը:
- 3.8 Կան արդյոք քարոզչության վերաբերյալ սահմանված վարքագծի կանոններ: Ինչպե՞ս են այդպիսի կանոնները արտացոլում գենդերային հավասարության հիմնահարցերը:
- 3.9 Արդյոք ընտրական մարմինն ունի հետընտրական գնահատումներին մասնակցելու հնարավորություն: Արդյոք կուտակվել է փորձ և քաղվել են դասեր նախորդ ընտրություններից, որոնք առնչվել են ընտրություններում կանանց մասնակցությանը որպես ընտրող և որպես թեկնածու:

Քաղաքական կուսակցություններ

- 3.10 Կան արդյոք վիճակագրական տվյալներ քաղաքական կուսակցությունների ընդհանուր գենդերային կազմի վերաբերյալ: Ղեկավարություն, անդամներ և այլն: Արդյոք քաղաքական կուսակցություններն ունեն կանանց ճուղավորումներ կամ խմբեր:
- 3.11 Որքանով են բաց քաղաքական կուսակցությունները կանանց տեսակետները, հետաքրքրությունները և կարիքները ներքին ընթացակարգերի, քաղաքականությունների և հոետորաբանության մեջ ներկայացնելու համար:
- 3.12 Արդյոք քաղաքական կուսակցությունները խթանում են կանանց մասնակցությունն ու ներկայացվածությունը, օրինակ՝ կին ընտրողների և թեկնածուների իրազեկման կամ այլ միջոցառումների շնորհիվ: Ինչպե՞ս են կանայք ներկայացված քաղաքական կուսակցության ղեկավար պաշտոններում:
- 3.13 Արդյոք քաղաքական կուսակցությունները քննարկում կամ իրականացնում են այլ ժամանակավոր հատուկ միջոցներ բացի քվոտաներից:
- 3.14 Ինչպե՞ս են քաղաքական կուսակցություններն ընտրում թեկնածուներին: Անցկացվո՞ւմ է արդյոք նախնական մրցույթ: Որքան կանայք են մասնակցում նախնական ընտրությանը և որքան են հաջողության հասնում: Կարո՞ղ են արդյոք կուսակցությունները թեկնածուների ընտրության/նախնական ընտրության ժամանակ միջոցներ ձեռնարկել կանանց թվաքանակն ավելացման համար:
- 3.15 Արդյոք քաղաքական կուսակցություններն ունեն գենդերային հավասարության խթանման հարթակներ: Եթե այո, ապա որո՞նք են դրանք: Կարո՞ղ են դրանք բարելավվել:
- 3.16 Արդյոք քաղաքական կուսակցություններն ունեն կին և տղամարդ խոսնակներ նախընտրական քարոզարշավի և հարցազրույցների համար:

Կանանց՝ որպես թեկնածուների մասնակցության մոնիտորինգ

- 3.17 Քաղաքացիական հասարակության կամ տեղական դիտորդական քանի՞ մոնիտորինգային խմբեր են դիտարկում ընտրությունները: Արդյոք որոշակի խմբեր հատուկ ուշադրություն են դարձրել գենդերային հավասարության հարցերին:

- 3.18 Արդյո՞ք իրականացվում է նախընտրական քարոզարշավի մոնիտորինգ գենդերային հավասարության տեսանկյունից: Արդյո՞ք անցկացվում է ՋԼՄ-ների կողմից լուսաբանվող նյութերի վերլուծություն՝ ըստ կին և տղամարդ թեկնածուների ցուցանիշի: Ինչպիսի՞ն է գենդերային հարաբերակցությունը լրատվական ծրագրեր վարողների և թղթակիցների շրջանում:
- 3.19 Կան արդյոք օրենքներ կամ կանոններ, որոնք առնչվում են գենդերային հիմքով ատելության խոսքի բացառմանը: Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից է ապահովվում դրանց կիրառումը:

Ընտրություններում կանանց նկատմամբ բռնության նվազեցումը

- 3.20 Արդյո՞ք կին թեկնածուները նախկինում ենթակվել են ահաբեկման կամ արժանացել են միջամտության իրենց նախընտրական քարոզչության գործերին: Արդյո՞ք այդ խնդիրները տարբերվում են այն խնդիրներից՝ որոնց հանդիպել են տղամարդիկ: Ո՞ւմ են սովորաբար հաղորդվում նման միջադեպերը:
- 3.21 Արդյո՞ք կին թեկնածուները նախկինում ենթակվել են ահաբեկման կամ քվեարկելիս բախվել են միջամտության փորձի: Ո՞ւմ են սովորաբար հաղորդվել նման միջադեպերը:
- 3.22 Արդյո՞ք ընտրական մարմինը կամ այլ պետական մարմին հավաքագրում է տեղեկություններ ընտրությունների հետ կապված բռնությունների մասին: Արդյո՞ք այդ տվյալները տարանջատված են ըստ սեռի, որպեսզի որոշակի տարբերակիչ ազդեցություն ունենան կին թեկնածուների կամ կին ընտրողների վրա:
- 3.23 Կան արդյոք քաղաքականություններ, ծրագրեր կամ նախաձեռնություններ, որոնք թույլ կտան ընտրությունների ժամանակ մեղմել բռնության դեպքերն ինչպես կին ընտրողների, այնպես էլ կին թեկնածուների նկատմամբ: Եթե այո, ապա ինչպե՞ս են դրանք գործնականում կիրառվում: Արդյո՞ք գնահատվել է այդ ծրագրերից որևէ մեկի արդյունավետությունը:
- 3.24 Ովքե՞ր են համարվում ընտրություններում՝ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման հիմնական գործընկերները: Ինչպե՞ս է այդ գործընկերությունը զարգանում և ամրապնդվում:

4. Կանայք որպես ընտրողներ. Գրանցում և քվեարկության կազմակերպում

Հետազոտության ոլորտը. Կանայք պետք է ունակ և հզորացված լինեն իրենց քաղաքացիական իրավունքները, մասնավորապես՝ ընտրություններում քվեարկելու իրավունքը իրացնելու համար: Գենդերային գզայուն ընտրական մարմինը պետք է ապահովի, որ կանանց և տղամարդկանց մտահոգություններն ու փորձը լիովին հաշվի առնվեն ընտրողների գրանցման և քվեարկության կազմակերպման գործընթացների մեջ: Կարելի է առանձնացնել աշխատանքային երեք ոլորտներ. 1) ապահովել բոլոր իրավասու կանանց գրանցումը, 2) ապահովել, որ բոլոր կանայք, ովքեր իրավասու են քվեարկելու, կարողանան իրենց իրավունքն իրացել (զաղտնի) և 3) ապահովել, որ բոլոր կանայք տեղեկացված լինեն քվեարկության մասին իրազեկման և ընտրողների կրթման միջոցով: Կարող են ներգրավված լինել նաև այլ շահառուներ:

Հարցերն ուղղվում են ընտրական կամ այլ մարմիններին, ովքեր զբաղվում են ընտրական վարչարարության հարցերով, նախարարություններին, ընտրողների կրթությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին:

Ընտրողների գրանցում

- 4.1 Արդյո՞ք ընտրական մարմինը հավաքագրում է ընտրողների գրանցման վերաբերյալ ըստ սեռի տարանջատված տվյալներ: Եթե այո, ապա երբ են այդ տվյալները հավաքագրվում և ինչպե՞ս են թարմացվում: Որտե՞ղ կամ ինչպե՞ս է ընտրական մարմինը հրապարակում ըստ սեռի տարանջատված տվյալները:
- 4.2 Եթե ոչ, ինչպիսի՞ խոչընդոտներ են առկա այդ վիճակագրական տվյալները հավաքագրելիս: Կ՞ան արդյոք այդ տվյալների հավաքագրման և/կամ զեկուցման համար օրենքով պայմանավորված խոչընդոտները:
- 4.3 Կան արդյոք ընտրողների գրանցման գործընթացում թերություններ կամ խոչընդոտներ, որոնք կանանց համար անբարենպաստ են: Եթե այո, ապա ինչպե՞ս է ընտրական մարմինը ձգտում հաղթահարել դրանք:
- 4.4 Կան արդյոք խնդիրներ կապված լուսանկարների, փաստաթղթերի և այլնի անհրաժեշտության հետ, ինչը

- կարող է ավելի շատ դժվարություններ առաջացնել պահանջներին համապատասխանելու տեսանկյունից:
- 4.5 Արդյո՞ք գրանցման ժամերն ու վայրերը որևէ խնդիր են ներկայացնում տղամարդկանց կամ կանանց հատուկ խմբերի համար: Կամ կանանց համար առանձին գրանցման վայրեր կամ առանձին մուտքեր սահմանելու անհրաժեշտություն: Եղև է արդյո՞ք նախադեպ, և ինչպիսի՞ արձագանք է ստացել կանանց և տղամարդկանց կողմից:
 - 4.6 Եթե ընտրողների ռեգիստրը կազմվում է այնպիսի տվյալների աղբյուրների հիման վրա, ինչպիսիք են՝ բնակչության կամ քաղաքացիական ռեգիստրներն ու գույքային ռեգիստրները, ապա արդյո՞ք կանանց ներկայացվածությունն այդ ռեգիստրներում լիարժեք է: Եթե ռեգիստրներում առկա են թերություններ, ապա արդյո՞ք ընտրական մարմինը լիազորված է քայլեր ձեռնարկել ընտրողների ռեգիստրում կանանց լիարժեք գրանցումն ապահովելու ուղղությամբ:
 - 4.7 Եթե կանանց համար ամուսնությունից հետո ազգանվան փոփոխությունն ընդունելի գործելակերպ է, ապա ինչպե՞ս են նրանք ապահովում իրենց տվյալների թարմությունն ու համապատասխանությունը նույնականացման կամ անձը հաստատող փաստաթղթին: Արդյո՞ք այս ամենն ինքնաբերաբար է արվում պետական մարմինների կողմից:
 - 4.8 Կան արդյո՞ք մշակութային ավանդույթներ, որոնք կարող են արգելել կանանց գրանցումը կամ մասնակցությունը: Արդյո՞ք լիազոր մարմինները միջոցներ են ձեռնարկում դրանք հաղթահարելու համար:
 - 4.9 Արդյո՞ք ընտրական մարմինը պատրաստում է կրթական նյութեր ընտրողների գրանցման անձնակազմի համար: Արդյո՞ք այդ նյութերը պարունակում են տեղեկատվություն տղամարդկանց և կանանց համար ընդգրկուն գրանցման գործընթացի ապահովման վերաբերյալ:

Արդյո՞ք ընտրական մարմինը հրապարակել է հանրային տեղեկատվական նյութեր ընտրողների գրանցման վերաբերյալ: Արդյո՞ք այդ նյութերը պարունակում են կանանց և տղամարդկանց գրանցվելու և քվեարկելու իրավունքների վերաբերյալ հիմնական ուղերձները:

Քվեարկության կազմակերպում

- 4.10 Արդյո՞ք ընտրական մարմինը հավաքագրում և զեկուցում է ընտրողների մասնակցության վերաբերյալ ըստ սեռի տարանջատված տվյալներ: Եթե այո, ապա նրք են հավաքագրվում այդ տվյալները: Որտե՞ղ է ընտրական մարմինը հրապարակում ըստ սեռի տարանջատված տվյալները:
- 4.11 Եթե ոչ, ապա արդյո՞ք տվյալների հավաքագրում նախատեսվում է առաջիկա ընտրությունների համար: Կան արդյո՞ք ընտրողների սեռի վերաբերյալ ընդհանրացված ձևաչափով տվյալներ հավաքագրելու և (կամ) զեկուցելու հետ կապված լոգիստիկ կամ իրավական խոչընդոտներ:
- 4.12 Ի՞նչ քայլեր է ձեռնարկել ընտրական մարմինը, որպեսզի նպաստավոր պայմաններ ապահովվեն կին ընտրողների համար:
- 4.13 Արդյո՞ք եղել են «ընտանեկան քվեարկություն» դեպքեր: Արդյո՞ք եղել են լիազորի միջոցով քվեարկության դեպքեր: Ի՞նչ քայլեր է ձեռնարկել ընտրական մարմինը:
- 4.14 Արդյո՞ք ընտրական մարմնի կողմից տեղամասային ընտրական հանջնաժողովի անդամներին տրված հրահանգները ներառում են տեղեկատվություն քվեարկության ընթացքում կանանց և տղամարդկանց համար հավասար մատչելիություն ապահովելու և բոլոր ընտրողներին իրենց քվեաթերթիկները անձամբ քվեատուփի մեջ գցելու հնարավորություն տալու վերաբերյալ:
- 4.15 Կամ արդյո՞ք կանանց համար առանձին քվեարկության վայրեր կամ առանձին մուտքեր սահմանելու անհրաժեշտություն: Եղև է արդյո՞ք նախադեպ և ինչպիսի՞ արձագանք է ստացել կանանց և տղամարդկանց կողմից:
- 4.16 Արդյո՞ք ընտրողներից պահանջում է նույնականացման կամ այլ փաստաթղթեր ներկայացնել քվեարկելու համար: Արդյո՞ք այս պահանջը հավասարապես է ազդում տղամարդկանց և կանանց վրա:

- 4.17 Որո՞նք են քվեարկության օրերն ու ժամերը: Արդյո՞ք այդ ժամերն ապահովում են տղամարդկանց և կանանց քավարար հնարավորություններ քվեարկելու համար:
- 4.18 Արդյո՞ք տեղամասային կենտրոնների տեղակայման վայրերը հայտնի են և արդյո՞ք ընտրողները նախապես տեղեկացվել են այդ մասին:
- 4.19 Արդյո՞ք կան քվեարկելու այլընտրանքային մեթոդներ նրանց համար, ովքեր չեն կարող այցելել տեղամասային կենտրոններ: Արդյո՞ք այդ մեթոդները տղամարդկանց և կանանց համար հավասարապես մատչելի են և արդյո՞ք ապահովում են բոլոր ընտրողների համար ահաբեկումից զերծ պայմաններ քվեարկության ընթացքում:
- 4.20 Եթե տեղամասային կենտրոններում ներկա են ոստիկանության կամ իրավապահ մարմինների աշխատակիցներ, ապա ինչպիսի՞ն է նրանց գենդերային բաշխվածությունը:

Ընտրողների իրազեկման ընթացքում կանանց մասնակցության խթանում

- 4.21 Ինչպե՞ս են գենդերային հավասարության հիմնահարցերը և, մասնավորապես, կանանց քաղաքական մասնակցությունը, լուսաբանվում ընտրական մարմնի տեղեկատվական և կրթական աշխատանքներում:
- 4.22 Կան արդյոք այլ մարմիններ կամ խմբեր, որոնք զբաղվում են ընտրությունների վերաբերյալ իրազեկման և ընտրողների կրթման հարցերով: Ինչպե՞ս են նրանք ուղղորդում գենդերային հավասարությունը:
- 4.23 Արդյո՞ք ընտրական մարմինը հետամուտ լինում է ընտրողների իրազեկման և կրթման հետ կապված աշխատանքներին հետազոտությունների կամ գնահատման այլ մեթոդների կիրառման միջոցով: Եթե այո, ապա արդյո՞ք այդ հետազոտության արդյունքները տարանջատվում են ըստ սեռի:
- 4.24 Արդյո՞ք ընտրողների իրազեկմանն ուղղված նախաձեռնությունները տղամարդկանց և կանանց շրջանում տարբեր կերպ են ընկալվել:
- 4.25 Արդյո՞ք ընտրական մարմինը մշակել է ռազմավարություն, որի նպատակն է ապահովել ընտրությունների վերաբերյալ տղամարդկանց և կանանց գիտելիքների հավասար մակարդակ: Օրինակ՝ մշակվել են արդյոք հատուկ կանանց նախատեսված տեղեկատվական և կրթական արշավներ, նյութեր կամ նախաձեռնություններ: Եթե այո, ապա որքանո՞վ են դրանք արդյունավետ եղել:
- 4.26 Եթե երկրում ուղղորդված (ընտանեկան) քվեարկությունը տարածված երևույթ է, ապա ինչպե՞ս է դրան անդրադարձ կատարվել իրազեկման և ընտրողների կրթման ընթացքում: Արդյո՞ք ընտրական մարմնի կողմից մշակված ընդդեմ ուղղորդված (ընտանեկան) քվեարկության ուղերձները հասցեագրում են և՛ տղամարդկանց, և՛ կանանց:
- 4.27 Կան արդյոք ընտրական մարմին կամ այլ դերակատարների կողմից պատրաստված նյութերում պասիվ և ակտիվ դերերում տղամարդկանց ու կանանց հավասար ներկայացվածություն: Հատկապես քվեարկության ընթացքին վերաբերող նյութերում արդյո՞ք կանայք հավասարապես պատկերված են որպես տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ, ընտրողներ, դիտորդներ և անվտանգության աշխատակիցներ:
- 4.28 Ինչ մեթոդներ են կիրառվում ընտրողներին կրթելու և իրազեկելու համար: Արդյո՞ք արշավի կամ նախաձեռնության ծրագիրը ներառում է հատուկ տարածման ուղիների կամ ժամկետների ու վայրերի միջոցով կանանց թիրախավորելու ռազմավարություն:
- 4.29 Կան արդյոք անմիջականորեն կանանց կամ միայն կանանցից բաղկացած խմբերին կրթելու և իրազեկելու անհրաժեշտություն: Եթե դա իրականացվել է, ապա ինչպե՞ս է այն աշխատել:

5. Գենդերային զգայուն ընտրական մարմիններ

Հետազոտության ոլորտը. Որպես ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմին, ընտրական մարմինները (և նրանց համարժեք կառույցները) կարևոր դերակատարում ունեն կանանց քաղաքական մասնակցության խթանման հարցում: Առաջին հերթին պետք է «կարգի բերել հենց ընտրական մարմինների տունը» և ապահովել, որ կանայք մասնակից լինեն որոշումների կայացմանը ընտ-

րությունների կազմակերպման և կառավարման բոլոր մակարդակներում: Գենդերային զգայուն ընտրական մարմինը պետք է ձգտի նվազեցնել կանանց մասնակցության բոլոր բացերը և աշխատի գենդերային հավասարությունը իր ռազմավարության, քաղաքականության և գործառնությունների անբաժանելի մաս դարձնելու ուղղությամբ, ինչպես նաև աշխատակիցների համար ապահովի աշխատանքի և կյանքի միջև հավասարակշռությունը:

Հարցերն ուղղվում են ընտրական կամ այլ մարմիններին, ովքեր զբաղվում են ընտրական վարչարարությամբ:

Ընտրությունների կազմակերպման կառուցվածքն ու անձնակազմը

- 5.1 Ինչպե՞ս են ընտրությունները կազմակերպվում: Կա՞մ արդյոք կենտրոնացված համակարգող մարմին, թե՛ կառավարումն իրականացվում է առանձին մարմինների կողմից: Ի՞նչ կառուցվածք ունեն այդ մարմինները և ինչպե՞ս են դրանք ստեղծվել կամ ձևավորվել:
- 5.2 Արդյո՞ք տվյալ մարմնի կամ մարմինների աշխատակազմը հավաքագրվել կամ նշանակվել է: Արդյո՞ք նրանք աշխատում են մշտապես զբաղվածությամբ, տրամադրվել են այլ պետական մարմինների կողմից կամ ներգրավված են ժամանակավորապես միայն ընտրությունների շրջանում:
- 5.3 Ինչպիսի՞ն է եղել ընտրական մարմիններին կանանց անդամակցության պատմական միտումները (որպես աշխատակից, խորհրդի անդամ, հանձնաժողովների կամ կոմիտեների անդամ կամ առանձին գործառու):
- 5.4 Արդյո՞ք կան թիրախներ կամ քվոտաներ, որոնք տարբեր մակարդակներում ապահովում են կանանց ներգրավվածությունն աշխատակազմում (օրինակ՝ կանայք ղեկավար պաշտոններում, կին նախագահներ կամ տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ):
- 5.5 Եթե ընտրական մարմնի աշխատակազմի ձևավորումն իրականացվում է հանրային ոլորտում աշխատանքի ընդունման/նշանակման, պաշտոնի բարձրացման ավելի ընդհանրական կանոններով, ապա արդյո՞ք այդ կանոնները ներառում են դրույթներ գենդերային իրավահավասարության և հավասար հնարավորությունների մասին:
- 5.6 Արդյո՞ք ընտրական մարմինը տեղեկատվություն է տրամադրում անձնակազմի զբաղեցրած պաշտոնների, գենդերային ցուցանիշների և ըստ սեռի տարանջատված այլ կորպորատիվ տվյալների վերաբերյալ տարեկան կամ այլ հաշվետվություններում:

Տարածքային ընտրական հանձնաժողովներ

- 5.7 Արդյո՞ք տարածքային ընտրական հանձնաժողովներ են կազմվում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացնելու համար (կամ ընտրողների գրանցումը կազմակերպելու համար): Ինչպե՞ս են այդ մարմինները ստեղծվում և համալրվում աշխատակիցներով:
- 5.8 Ինչպիսի՞ն է տարածքային ընտրական հանձնաժողովների գենդերային կազմն ըստ անդամների և ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց բաշխվածության: Եթե ընտրական մարմինը չունի այդ տեղեկությունները, ապա արդյո՞ք փորձ արվել է հավաքագրելու նման տեղեկատվություն:

Գրանցում և տեղամասային ընտրական հանձնաժողովներ

- 5.9 Արդյո՞ք ընտրական մարմինը սահմանում է գրանցման կամ տեղամասային ընտրական հանձնաժողովների նմանատիպ մարմիններ ընտրություններն անցկացնելու համար: Ինչպե՞ս են այդ հանձնաժողովների անդամները նշանակվում:
- 5.10 Ինչպիսի՞ն է այդ հանձնաժողովների գենդերային կազմն ըստ անդամների և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց բաշխվածության: Եթե ընտրական մարմինը չունի այդ տեղեկությունները, ապա արդյո՞ք փորձ արվել է հավաքագրելու նման տեղեկատվություն:
- 5.11 Եթե ընտրական մարմինը նշանակում է կարճաժամկետ աշխատակիցների ընտրությունների ընթացում

երկրի տարբեր շրջաններում աշխատելու համար (այդ թվում՝ գրանցման ժամանակ և տեղամասային կենտրոններում), ապա ինչպե՞ս է այդ անձնակազմը հավաքագրվում: Ո՞րն է այդ կարճաժամկետ աշխատակազմի գենդերային հարաբերակցությունը:

Գենդերային քաղաքականություններ և երթակառուցվածք

- 5.12 Արդյո՞ք ընտրական մարմինն ունի ռազմավարական ծրագիր և, եթե այո, ապա արդյո՞ք այն ներառում է գենդերային հավասարության վերաբերյալ նպատակներ:
- 5.13 Արդյո՞ք ընտրական մարմինն ունի գենդերային քաղաքականություն կամ գենդերային գործողությունների ծրագիր:
- 5.14 Արդյո՞ք որևէ մեխանիզմ է ստեղծվել գենդերային քաղաքական ներառման ռազմավարության իրականացման համար, ինչպիսիք են՝ գենդերային հարցերը համակարգող պատասխանատու անձինք կամ ներքին գենդերային հավասարության հանձնաժողովը:

Վերապատրաստման և զարգացման հնարավորությունների մատչելիություն

- 5.15 Արդյո՞ք ընտրական մարմինն ունի անձնակազմի վերապատրաստման և զարգացման համար մշակված քաղաքականություն: Ինչպե՞ս են կայացվում վերապատրաստմանը և նմանատիպ միջոցառումներին անձնակազմի անդամների մասնակցության վերաբերյալ որոշումները:
- 5.16 Արդյո՞ք ընտրական մարմինը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ գենդերային հավասարության թեմայով կամ անդրադառնում է գենդերային հավասարությանը ուսուցման այլ ծրագրերում: Արդյո՞ք ընտրական մարմինն իր անդամներին կամ աշխատակիցներին ուղարկել է միջազգային գործընկերների կողմից կազմակերպվող նմանատիպ դասընթացների: Կան արդյոք կանանց մասնագիտական զարգացումը խթանող հնարավորություններ, հատկապես դեկավար պաշտոնների դեպքում:
- 5.17 Արդյո՞ք ընտրական մարմինը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ գենդերային հարցերը համակարգող պատասխանատու անձանց կամ գենդերային քաղաքականության և գենդերային քաղաքական ներառման ռազմավարությունների մշակմամբ ու կիրառման խթանմամբ զբաղվող աշխատակիցների համար:
- 5.18 Եթե ընտրական մարմինն ունի մշտական դասընթացավարներ կամ BRIDGE թրեյնինգներ իրականացնող հավատարմագրված անձանց տվյալների բազա, ապա ինչպիսի՞ն է նրանց գենդերային բաշխվածությունը: Արդյո՞ք վերահսկվում է դասընթացավարների խմբի գենդերային կազմը:
- 5.19 Ինչ հաճախականությամբ է ընտրական մարմնի անձնակազմը վերջին երկու տարիների ընթացքում արտասահման մեկնել ընտրությունների դիտարկման, համաժողովներին կամ նմանատիպ այլ միջոցառումներին մասնակցելու նպատակով: Ինչպիսի՞ն էր այդ միջոցառումների մասնակից կանանց և տղամարդկանց տոկոսային հարաբերակցությունը: Արդյո՞ք այդ թիվն առնչվում է ընտրական մարմնի և նրա աշխատակիցների ընդհանուր գենդերային կազմի հետ կամ ընտրական մարմնի գենդերային կազմի և աշխատակազմում դեկավար պաշտոնյաների հետ:
- 5.20 Միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված (ՄԱԶԾ, IFES և այլն) քանի՞ ֆորմալ վերապատրաստման դասընթացների է մասնակցել ընտրական մարմինը վերջին երկու տարիների ընթացքում: Ինչպիսի՞ն էր այդ միջոցառումներին ընտրական մարմնի կողմից ներկայացած կին և տղամարդկանց մասնակիցների տոկոսային հարաբերակցությունը: Արդյո՞ք այդ թիվն առնչվում է ընտրական մարմնի և նրա աշխատակիցների ընդհանուր գենդերային կազմի հետ կամ ընտրական մարմնի գենդերային կազմի և աշխատակազմում դեկավար պաշտոնյաների հետ:
- 5.21 Կան արդյոք գործոններ, որոնք կարող են խոչընդոտել կանանց լիարժեք մասնակցությունը վերապատրաստման և զարգացման հնարավորություններին՝ անկախ ընտրական մարմնի կամ գործընկերների կողմից կազմակերպված լինելու հանգամանքից: (օրինակ՝ միջազգային վերապատրաստման դասընթացներ այն լեզուներով, որոնց կանայք չեն տիրապետում կամ կանանց համար խոչընդոտ հանդիսացող ժամերին

և վայրերում կազմակերպվող դասընթացներ):

Աշխատանքի և կյանքի միջև հավասարակշռություն

- 5.22 Արդյո՞ք ընտրական մարմնի գրասենյակը գտնվում է կանանց և տղամարդկանց համար ապահով վայրում ցանկացած ժամանակ մուտք գործելու համար:
- 5.23 Արդյո՞ք ընտրական մարմնի գրասենյակն ունի հավասար հարմարություններ տղամարդկանց և կանանց համար, այդ թվում՝ սանհանգույցներ, ընդմիջման սենյակների և, անհրաժեշտության դեպքում, աղոթարաններ:
- 5.24 Կան արդյո՞ք կերակրող կանանց համար հատուկ հարմարություններ: Գործում է արդյո՞ք երեխաների խնամքի կենտրոն շենքի ներսում կամ արդյո՞ք ընտրական մարմինը փոխհատուցում է իր աշխատակիցների երեխաների խնամքի ծախսերը:
- 5.25 Արդյո՞ք ընտրական մարմինն իր անձնակազմին տրամադրում է հղիության և ծննդաբերության/հայրության արձակուրդ կամ խնամակալի պարտականություններ կատարելու համար արձակուրդ: Արդյո՞ք ոլորտում առկա քաղաքականությունները վերաբերում են ընտրական մարմինն որպես պետական հատվածի մաս կազմող կառույց:
- 5.26 Ինչպիսի՞ ազդեցություն է ունենում աշխատակազմի և աշխատակիցների անհատական պարտավորությունների կատարման վրա ընտրությունների ժամանակահատվածը՝ երկար աշխատանքային ժամեր, շաբաթ և կիրակի օրերին աշխատանք, երկար ճամփորդություններ (օրինակ՝ ստանտո՞ւմ են արդյո՞ք աշխատակիցները լրացուցիչ արձակուրդ կամ ֆինանսական փոխհատուցում կատարված արտաժամյա աշխատանքի համար): Արդյո՞ք այդ ժամանակահատվածի ազդեցությունը տարբեր է տղամարդկանց և կանանց վրա:

6. Ընտրական գործընթացների աջակցության համակարգում

ՄԱԿ-ի և մյուս բոլոր ընտրական գործընթացների աջակցության ծրագրերի հետ համակարգված աշխատանքը մեծ հնարավորություններ է ստեղծում ռեսուրսների նորովի և ավելի արդյունավետ օգտագործման համար: Համատեղ պլանավորումը միջազգային աջակցություն տրամադրող կազմակերպությունների հետ թույլ է տալիս ավելի արդյունավետ կերպով ներառել գենդերային բաղադրիչը իրականացվող ծրագրերում: Դոնորների և գործընկերների քաղաքականությունը կարող է ունենալ ընդլայնված ազդեցություն ընտրական գործընթացների աջակցության շրջանակում գենդերային բաղադրիչի ներառմանն ուղղված որոշումներում: Նրանք կարող են ստանձնել հանձնառություններ, սահմանել չափանիշներ և գործիքներ, որոնք միտված կլինեն գենդերային հինմահարցերի ոլորտում բարելավված արդյունքների գրանցմանն ու հաշվետվողականության մեխանիզմների բարելավմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի գենդերային բաղադրիչի ներառման գործում ներդրումների ծավալի ավելացմանը և, ի վերջո, կյանքի կանանց մասնակցությունը:

- 6.1 Ո՞ր կառույցներն են տրամադրել ընտրական գործընթացների աջակցություն նախորդ ընտրությունների ընթացքում: Այդ աջակցության ո՞ր մասն է օգտագործվել կանանց մասնակցության խթանող թիրախավորված նախաձեռնությունների համար: Ո՞ր դոնորներն են աջակցություն տրամադրել:
- 6.2 Արդյո՞ք տրամադրվել է միջազգային աջակցություն՝ կենտրոնացած կանանց՝ որպես թեկնածուների կամ քաղաքական կուսակցությունների ներսում նրանց դերի վրա (օրինակ՝ հատուկ միջոցների, վերապատրաստման դասընթացների, ՔՀԿ-ի աջակցություն, մեղիա հասանելիություն):
- 6.3 Արդյո՞ք ընտրական մարմինը ստացել է աջակցություն միջազգային դոնորներից վերջին ընտրություննրում: Ո՞րն է եղել հիմնական միջամտությունը: Ինչպե՞ն է ստացվել աջակցությունը:
